


ԷԶՄԻԱԾԻՆ



Ա
2005



ԿԱ ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ



Յ ռ Ն ռ ռ ռ

2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պապզամը Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնության տոնին	3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով Հայկական հեռուստատեսությամբ	7
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների զահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը	9
Ս. Ծնունդը Մայր Աթոռում	13

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Սրբապառ Կոնդակը Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակի առիթով	14
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Աթոռորդ Գարակոչուն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	18
Հայրապետական գնահատություն	20
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Բանակի օրվա առիթով	21
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրապարակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբապառ Կոնդակը՝ նվիրված Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակին	22
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց հոգեհանգիստ՝ Նոսավոր Արևելքում գոհվածների համար	23
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշարակ Բաբկում 1990 թ. գոհված հայորդիների	24
ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Ս. Գրիգոր Լուսավորչի արձանի տեղադրումը Հոմի Ս. Պետրոսի Տաճարի արտաքին որմնախորշերից մեկում և գիտաժողով՝ նվիրված Ս. Գրիգոր Նարեկացուն	25

ՔԱՐՈՋԻՆՈՍԱԿԱՆ

Տ. Զավեն աբեղա Հակոբյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	27
Տ. Նարեկ աբեղա Ավագյանի քարոզը՝ խոսված	

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	30
S. Կորդիճ քահանա Դևեճյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	33
S. Հովակիմ աբեղա Մանուկյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	36
S. Մուշեղ աբեղա Բաբայանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Հիսուսի Անվանակոչության փոքիկ մատուցված Ս. Պատարագին	39
S. Փառեն եպիսկոպոս Անդրիքեանի քարոզը՝ խոստում Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցում Ս. Պատարագին	43
S. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	46

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԴՐ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԳՐԻԳՈՐԵԱՆ - Հայ Եկեղեցւոյ բարեկարգութիւնը եւ հայոց լեզուի հարցը	48
---	----

Հայսմավուրբային

ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Նախածերենցւան Հայսմավուրբային խմբագրությունները	52
--	----

ՊԵՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻՄԻՏՐԻ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ - Հայկական նոր դինաստիա Ուրարտուի դինաստիական կառուցվածքում	62
ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈՅԱՆ - Օձունի կոթողի պատկերների մեկնաբանման հարցի շուրջ	75
ՄԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - Գրաբարի բայական անդեմ նախադասությունների շարադասությունը	88
ԱՆՆԱ ԱՐԱՋՅԱՆ - Հայերենի հոլովական համակարգը ըստ Մխիթար Սեբաստացու	91
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ - Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը Պիեռ Քիյենտի գնահատմամբ	97
ԱԵԼԻՏԱ ԴՈՒՌԻՍԱՆՅԱՆ - Հայոց միջնադարյան առակները Ն. Մառի հեղափոխում	105
ՈՌԻՋԱՆՆԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ - Պարույր Սևակի «Անձրնային սոնետ»-ի երաժշտական կառուցվածքը	112

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ


ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ԳԻՐԾԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐԿԱԴԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՐԾԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՄՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ
ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԱՏՈՒՄԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ՏՕՆԻՆ

(Սուրբ Էջմիածին, 2005 թ. Յունուարի 6)

«Եւ ծանկջիք զճշմարտութիւնն եւ ճշմարտութիւնն ազատեացէ զձեզ»:

(Յովհ. Ը. 32)

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ.

Սուրբ Ծննդեան աւետիսով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ձեզ ի Հայաստան եւ ի Ափիւս եւ ձեզ հնար միասին փառաւորելով մեր Փրկիչ Տիրոջ Անունը՝ Իջման Սուրբ Մեղանի առջեւ հնչեցնում ենք Տէրութեան խօսքը. «Եւ կը ճանաչէք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը ձեզ կ'ազատի»:

Ճանաչել ճշմարտութիւնը: Որքան երկար է փնտրել մարդը այն՝ հին աշխարհից մինչ օրս իր փնտրութիւնը արտայայտելով իմաստասիրական մտածումներով, արտեսքի ու գրականութեան կերպաւորումներով, ընկերային կեանքի վերսփոխութիւնների ու բարեկարգութիւնների ծրագրերով: Մարդկութեան լաւագոյն մտքերը, ազնիւ ծգումներն ու ջանքերը ուղղուել են այդ փնտրութիւն՝ ո՞րն է ճշմարտութիւնը: Մարդը փնտրել ու փնտրում է ճշմարտութիւնն իր աշխարհում, բայց աստուածային բարձունքներից է ճշմարտութիւնը պարզւել մարդկութեանը՝ Բեթղեհէմի աստղալոյսով առաջնորդելով դէպի մտորի մէջ ծնունդ առած Փրկիչ Մանուկը: Մարդացեալ Աստուածորդին է ճշմարտութիւնը, որ վկայեց Աստուծոյ անբաւ Սէրը արարածներին հանդէպ: Աստուծոց հեռացած մարդը երբեք չպիտի յուսարդեսնելու կամ ճանաչելու ճշմարտութիւնը, բայց Յիսուսով ճշմարտութիւնն ինքը մեր մէջ է՝ աստուածայինը միաւորելու համար մարդկային մեր կեանքին: Իր Յայտնութեամբ Յիսուս ճշմարտութեան սահմանները դուրս բերեց մարդկային կեանքի սահմանափակումներից, մարդկային չափանիշներից եւ տարաւ դէպի յափտեանականը. «Եւ եւ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յովհ. ԺԴ. 6):

Այսօր մարգարէներն են խօսում, որ պարզամաքերը եղան փրկութեան մասին Աստուծոյ խոստումի եւ սպասեցին ու յուսացին Փրկչին. այսօր Մանուկ Փրկչին իրենց ընծաներն են մատուցում իմաստուն մոզերը, որ տեսան երկնքում պայծառ շողացող աստղը եւ ընթացան դէպի փրկութիւնն աշխարհի. այսօր հովիւները, երկնքի բացուած ողորմութեան առջեւ ձայնակից հրեշտակներին, օրհնաբոսնում են խանձարտրի մէջ մտորում դրուած Փրկիչ Մանկանը: Նրանք ճանաչեցին աշխարհ մտած Աստուծոյ շնորհը, որը ազատում է չարիքների ծնող մեղքից, հեռու պահում մտորութիւններից, պահպանում կործանարար ճանապարհներից: Ոչինչ այլ բան, մարդկային ոչ մի սպեղծագործութիւն, ծրագիր չի կարող նորոգել, վերափոխել մարդու հոգին, բայց միայն մարդկային կեանքում Աստուծոյ ներկայութեան

եաւարը, որով իրականանում է հոգեւոր վերածնութիւնը եւ բարոյական առաջադիմութիւնը մարդկութեան:

«Եւ կը ճանաչէք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը ձեզ կ'ազաւորի»՝ հնչում է շուրջ երկու հազար տարի, որ մարդկութեան հայեացքը վեր գնայ ու տեսնի փրկութեան լոյսը եւ հաւատարայ, որ Քրիստոսով ազաւոր է ինքը, հաւատարայ, որ Քրիստոսով բաց է ճանապարհը դէպի ճշմարտութեան, արդարութեան ու սիրոյ աշխարհը: Հաւատը անկարօր է ապացոյցներէի, բայց հաւաքի ապացոյցը վերանորոգուող հոգին է, ճշմարտութեամբ ազաւոր հոգին, որը ձգտում է վերափոխել աշխարհը, առաջնորդել դէպի բարին, դէպի ճշմարտիւրը:

Տագնապներ են տիրում այսօր աշխարհի տարբեր կողմերում, մարդկութեան առջեւ բարձրանում են պնդութիւնների ու ժողովուրդների հարաբերութիւնների հարցեր, հասարակական կեանքի վերափոխումների պահանջներ, բնական աղետներ եւ մարդկային գործունէութեան արդիւնքում ծնունդ առած արհաւիրքներ, ընկերային, բարոյական եւ բազմաթիւ այլ խնդիրներ, որոնց վճռման համար մարդիկ փնտրում են զոյնելու ճիշդ պարասխաններն ու ճիշդ ճանապարհները: Մարդկային ամեն որոշում, ամեն գործունէութիւն Աստուծոյ ներկայութեան հարաբերութեամբ է, որ հաստատուում է իր արժէքի մէջ՝ բարի է, թէ չար, ընդունելի, թէ մերժելի, ժամանակաւոր ու անցողիկ է, թէ յաւիտենական ու անկորնչելի՝ կեանքը դէպի բարօրութիւն ու երջանկութիւն առաջնորդող: Փրկչի հեւր է, որ մենք ճշմարտապէս ազաւոր ենք եւ մեր քայլերով ու որոշումներով կարող ենք աշխարհում հաստատել արդարութիւնը՝ հակառակ անիրատւութեան, սէրը՝ հակառակ արեւելութեան ու թշւամանքի, խաղաղութիւնը՝ հակառակ բռնութեան ու պատերազմի:

Միրելի ժողովուրդ,

Քրիստոսով մարդկութեանը յայտնուած ազատարար ու փրկարար ճշմարտութիւնը լուսաւորել է մեր ժողովրդի անցեալի ճանապարհն ու սլիտի լուսաւորի մեր ներկան ու զաւիբը: Դանաչեցինք ճշմարտութիւնը, որը կերտեց սրբեղծարար, հանճարածնունդ ոգին մեր մշակոյթի, կերտեց մեր պատմութիւնն առաջնորդող վերածննդի ոգին: Սրբեղծեցինք կեանքի սիրով, աւերելու հաւատով, աւերեցինք ու նահապտակեցինք Քրիստոսի ազաւոր ժողովուրդ ու երկիր լինելու ձգտումով: Ղոյմերից ետեւում ուր էլ սփռուեցինք, մեր հոգեւոր երկրներում բարձր ու անմար շողաց Բեթղեհեմի աստղալոյսով վառուած Լուսաւորչի Կանթեղը, որ անստուեր լոյսով պահպանեց մեզ միասնական ու ամբողջական, պահպանեց յոյսերը մեր ժողովրդի՝ խաղաղ ու հաշի աշխարհի եւ իր միացեալ կեանքի ու պայծառ զայլիքի:

Աստուածաբան ազաւոր հոգու շնորհներով են ծնունդ առել Մաշտոցեան ոսկեղէնիկ մեր գրերը, որոնց 1600-ամեակը պիտի փոխախմբենք այս տարի՝ ոգեկոչելով Աստուածաշունչ Մատենանի հայերէն թարգմանութեան ու Սանակ-Մարտապեան կրթութեան ու լուսաւորութեան սուրբ յիշատակները: 90-ամեայ տարելիցն ենք նշելու նաեւ Մեծ եղեռնի՝ հաստատուելու մեր հաւատարմութիւնն անթիւ մեր նահապտակների եաւարքին, հայոց նոր կեանքի նրանց տեսիլքին: Մեր անմեղ գոհերի յիշատակի ոգեկոչումով վերստին պիտի հնչեցնենք հրաւիրը Յեղատապանութեան ճանաչման՝ յանուն բռնութիւններից ազաւոր, արդար աշխարհի: Փառք Տիրոջը, Հայաստանի անկախութիւնը եւ Արցախի ազատագրութիւնը յոյսի դռներն են բացել արդարութեան յաղթանակի, հայրենի հողում մեր ժողովրդի ապաեով կեանքի:

քի ու արարումների, որոնք պիտի լինեն ի Բրիսպոս մեր հաւարի նոր վկայութիւններ: Հայաստանում, Արցախում եւ աշխարհի բոլոր կողմերում մեր ժողովուրդն այսօր զարթեալ հաւաքով մարմնաւորում է սրելով ձագործ կեանքի իր դարաւոր երազներն ու պիտի շարունակի իր աւանդը բերել պէտութիւնների ու ժողովուրդների խաղաղասէր ջանքերին:

Սիրելի ժողովուրդ հայոց, Բնթղեհէմի աստղն այսօր առաջնորդում է մեզ դէպի մտորը Փրկչի, ուր յափտնականը ծնունդ առաւ, անպարփակելի պարփակուեց, անիմանալին ազատարար ճանաչուեց: Չվարաննք ճշմարտութիւնը ճանաչելու, բարին գործելու, միմեանց ծառայելու, Բրիսպոսին ծառայելու: Մի կողմ թողնենք այն ամենը, ինչ պիտի խանգարի մեզ յարելու Նրա լոյս ընթացքին, Նրա ազատարար ընթացքին: Ազատութիւնն այն մեծագոյն շնորհն է, որի մէջ պիտի պարտւենք տան մեր լոյսերն ու ձգտումները՝ կառուցելու խաղաղ ու բարօր կեանք, ազատ հասարակութիւն: Մեր Հայրենիքի ազատութիւնը ոչ միայն պիտի պաշտպանենք, այլեւ ազատութիւն դարձնենք իւրաքանչիւրիս համար: Ազատութիւնը բարու մեր ընտրութիւնն է, որը նաեւ պայքար է չարի դէմ: Բրիսպոսասէր, ճշմարտասէր մեր գործերով պիտի մեր հողից վերացունեն աղքատութեան եւ օրինազանցութեան չարիքը, մեր իրականութիւնից դուրս մղուն անարարեւորութիւնն ու անհանդուրժողութիւնը եւ հաստատուն ճշմարիտ մարդասիրութեան բարիքները: Մեր եղբայրութեան մէջ, մեր արդարութեան մէջ, մեր սիրոյ մէջ է, որ պիտի յաջողուին մեր ծրագրերն ու գործերը՝ ուղղուած մեր Հայրենիքի շինութեանն ու գորացմանը, ընկերային կեանքի վերափոխութեանը, Սիւիտքում ազգային կեանքի պահպանութեանն ու զարթօնքին, մեր գաւալների կրթութեանը, մեր մշակոյթի զարգացմանը եւ մեր ժողովրդի բոլոր իղծերի իրականացմանը:

Փրկչի օրհնութիւնն է իջնում աշխարհին: Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնից, մեր Տիրոջ եւ Փրկչի Իջման Սուրբ Մեղանից Սուրբ Ծննդեան առօրին ենք յղում եւ Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը՝ ի Սփիւռս աշխարհի հաւաքաւոր համայն մեր ժողովրդին: Ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետութեան Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, Հայ Եկեղեցու ուխտապահ ու նուիրեալ ողջ հոգեւոր դասին:

Աստուածայայտութեան օրհներգութիւնը Մեր շուրթերին, սիրով ի Բրիսպոս՝ ողջունում ենք մեր քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ Տիրախնամ նրանց հօպին:

Հայրապետական օրհնութեամբ Սուրբ Ծննդեան Մեր բարեմաղթութիւններն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Բոչարեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին, հայոց ողջ պետական աւագանուն, Հայաստանում և արարարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու միջազգային կազմակերպութիւնների բոլոր ներկայացուցիչներին:

Ծունր դնենք Մանուկ Յիսուսի սնարի առջեւ եւ հապցենք, որ Աստուծոյ ներկայութեամբ վերանորոգուող հոգին նաեւ մերը լինի եւ դէպի բարին ու ճշմարիտ առաջնորդուող կեանքը նաեւ մեր կեանքը լինի Մայր Հայրենիքում եւ Սփիւռքում: Աղօթենք միասնաբար, որ Բարեգութն Աստուած Սուրբ Հոգու մխիթարութեամբ սփռվի Հոռատր Արեւելքի երկրներ-

րում բնական աղետից տուժած հազարատու մարդկանց սրտերը եւ իր անբաւ ողորմութեամբ հանգստութիւն շնորհի զոհուածներէ հոգիներին: Թող երկնաւայել խաղաղութիւնը հաստատուի համայն աշխարհում ի մասնաւորի՝ այսօր պատերազմի վտանգների մէջ ապրող ժողովուրդների կեանքում. եւ թող աստուածաւորես ճանապարհներն առաջնորդեն մարդկութեան ընթացքները դէպի հաշտութեան, արդարութեան ու եղբայրութեան եզերքներ. դէպի առեւի ու առեւի բարօր. առաջագնաց ու երջանիկ կեանք. դէպի փրկութիւն ու յսկիւնութիւն:

**Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ.
2եզ եւ Մեզ Մեծ Անւերիս**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐԶԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻՑՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՐ

(31 դեկտեմբերի 2004 թ.)

Միրևի բարեպաշտ ժողովուրդ.

Ամանորի տոնական այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմորեն ողջունում և Հայ-րապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ ի Հայրենիս և ի Սփյուռս աշխարհի:

Հուսալատ ու հոգեշաղախ զգացումներով են տրոփում այս օրերին մեր սրտերը: Քրիստոնյաներիս համար տարեմուտը հրաշագարդ է Սուրբ Ծննդյան խորհրդով, մարդկային մեր կյանքում փրկչի աստվածային հայտնության հոգևորաբարձությամբ: Ողջ քրիստոնյա աշխարհը սկիզբ առնող տարին ողջունում է երկնառաք խաղաղության հրավերով ու առանձնակի խնդությամբ:

Փառք և գոհություն Աստծո: Խաղաղ տարի պարզևեց մեզ հայրենի եզրերներում:

Անցնող տարին խաղաղության հեքի հուսադրող ձեռքերումներ բերեց մեր ժողովրդին: Հակառակ տեղ գրած անհանգստությունների ու դժվարությունների, Հայաստանում և Արցախում գործադրվեցին ջանքեր՝ ուղղված տնտեսական ու հասարակական կյանքի վերափոխումներին, մշակույթի զարգացմանը, գիտության ու կրթության առաջընթացին: Կյանք առան շինարար իրագործումներ, որոնց բազմապարկումով պիտի մոտենա հեռանկարն ապահով ու հզոր Հայրենիքի, որ տուն կանչի իր պանդուխտ գավակներին և միշտ լինի հույսի ապավենը համայն հայության: Մեր ժողովրդի այս լավատեսության ու վստահության արգասիքներն են Հայրենիքի և Սփյուռքի օրավուր աճող համագործակցությունը, համահայկական հավաքներն ու միջոցառումները:

Օրհնաբեր էր անցնող տարին եկեղեցական մեր կյանքում: Չեղնադրվեցին և ծառայության կոչվեցին տասնյակ եկեղեցականներ, Հայրենիքում և Սփյուռքի մեր թեմերում իրենց դոնորը բացեցին նոր ու նորոգված աղոթարներ, որոնք նոր աշխույժ են բերում գարթոնք ապրող մեր եկեղեցուն: Հոգու մեծ մխիթարությամբ ենք վերհիշում աշխարհասփյուռ մեր գավակների հեքի հանդիպումներն անցնող տարվա ընթացքում, որ նդան մեր ժողովրդի գորավոր հավատի, Սուրբ Էջմիածնի հանդեպ մեծ ու պայծառ սիրո վկայություններ:

Եկող տարում տոնախմբելու ենք մեր գոյության խորհուրդը կերտած սքանչելագործ Հայոց Գրերի 1600-ամյակը և ոգեկոչելու ենք 90-ամյա տարեիցը Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության համընդհանուր դատապարտման արդար օրվա հավատով: Երկու մեծ եիշարարություններ՝ մեկը կապված մեր պատմության խնդագին ու պանծալի, մյուսը՝ ողբերգական էջերի հեքի, սակայն երկուսն էլ վկայող մեր ժողովրդի հարապն հառնող ոգու և ազգային-հոգեւոր մեր ամբողջականության մասին: Մեր պատմության այս եիշարարություններն ավելի պիտի բյուրեղացնեն արդի հայ իրականությունը և գորացնեն հայոց միացյալ կյանքի, լուսաշող գալիքի մեր նորոգված հույսերը: Միրևիներ, այս նվիրատես հայացքով է, որ այսօր սպասում ենք փրկչական 2005 թվականին:

Տարեմուտի այս երեկո ուրախ ենք բոլորս նորի սպասումով: Նորի ակնկալությունը միշտ մաքուրն է. ավելի լավը: Եկող նոր տարվա հետ կապում ենք այն ամենը, ինչ կուզենայինք բարեփոխված տեսնել, ավելի լավն ու կատարյալը տեսնել: Դժվարություններ ու խնդիրներ ունենք բազմաթիվ. որոնք կուզենայինք, որ շուտով վճռվեն, արագորեն կարգավորվեն, ու մեր երկրում հաստատվի ցանկալին. ավելի բարեկարգը, և ամենուր ապաստով ու բարօր կյանքը լցվի ուրախությամբ: Մեզանով է, որ պիտի գա այդ նոր ժամանակը, տարին դառնա նոր ժամանակ: Ավելաբարան ասում է մեզ. «Նորոգվեցեք ձեր մարքով ու հոգով և հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծո՝ արդարությամբ ու ճշմարիտ սրբությամբ» (Եփես. Դ 23–24): Նորոգված հոգով դիմավորենք եկող ժամանակը. Աստծո հետ, մեր Հայրենիքի ու մեր ժողովրդի սրբազան տեսիլքներով: Աղոթում ենք, որ Աստված ում և կարողություն պարզևի մեզ բոլորիս, որպեսզի լրացնենք այն, ինչ թերի մնաց անցնող տարում, հաստատուն քայլերով ընթանանք դեպի հայրենի մեր երկրի ազատ կյանքի շինություն ու բարգավաճում, մեր ժողովրդի բարի հույսերի, ազնիվ ու արդար նպատակների մարմնավորում, և թող մեր սերունդները գնահատեն մեր ժամանակն իբրև գրո աղժանի գործերի ժամանակ:

Մեր աղոթքն է, որ Բարձրյալի օրհնությամբ խաղաղության մեջ առաջնորդվի 2005 թվականը բոլոր ժողովուրդների կյանքում, մեր Հայրենիքի և համայն հայոց կյանքում: Տարեմուտի մեր առաջին մաղթանքով լինենք նեղյալների ու կարողալանների հետ, պարտնադմական իրավիճակների դժվարությունները կրող մեր ազգի զավակների հետ, Հայրենիքի սահմանները պաշտպանող Հայոց բանակի մարտիկների հետ և բոլոր նրանց հետ, ովքեր այս պահին տարեմուտը դիմավորում են իրենց ծառայության մեջ: Թող Փրկիչ մեր Տերը խաղաղության իր շնորհով ամենքիս հետ լինի՝ պարզևելով առատ ու բարօր տարի, երջանիկ օրհնյալ օրեր:

Շնորհավոր Նոր տարի:

**ՓՐԿՉԻ ՆՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏԻ**

**ԵՎ ԶՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ**

**ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՆԵՐԻ ԳԱՀԱԿԱՆԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ**

ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ

**ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՀԵՌԱԳՐԵՐԸ**

Հոռմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ (Հոռմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղափի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՀԵՆՈՒԴԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱԲԶԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՌԻՆՈՍ (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պեպր. Նորին Սրբություն
ՔԱՄԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Բ (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք.
 Նորին Գերաշնորհություն
ԹԵՈԴՈՐՈՍ Բ (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք.
 Նորին Գերաշնորհություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Ջենթրերիի Արքեպիսկոպոս. Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
 Միտրոպոլիտ. Նորին Գերաշնորհություն
ՌՈՈՒՄՆ ՎԻԼՅԱՄՍ (Լոնդոն)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք. Նորին Գերաշնորհություն
ԻՐԵՆԻՈՍ (Երուսաղեմ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍ (Բուխարեստ)

Մերքիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք. Նորին Գերաշնորհություն
ՄԱՔՍԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՂՈՒԼՈՍ (Աթենք)

Վարշավայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՍԱՎՎԱ (Վարշավա)

Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ. Համայն Բելառուսի Պատրիարքական փոխանորդ.
 Նորին Գերաշնորհություն
ՅԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՅՈՒԿԿԱ ՊԱՍՐՄԱ (Նելսինկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Հոգևորականների Միության Նախագահ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱՂԵՅ ԳՐԱԲ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Հայոց Կաթողիկոս-Պատրիարք
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*
* *
*

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱԳԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՆԵՐԻՅ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Մուրք Օծություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պատրիարք, Նորին Ամենապապություն
ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Նորին Ամենապապություն
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Սկամբուլ)

**Հայոց Եկեղեցու Թեմակապ առաջնորդներից և Թեմական Հոգևորականներից
 ու համայնքներից:**

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել
 նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միաբնակություններից և
 մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպություն-
 ների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի վսեմաշուք

ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծափառ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂՎԱՍՏԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի մեծափառ

ՄՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահի մեծափառ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի վսեմաշուք

ԱՐԿԱՄԻ ԴՈՒԿԱՍՅԱՆ


Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի մեծափառ

ՄՆՈՒՇԱՎԱՆ ԴՄԻԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու փառքեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային փառքեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարազյոզյան հիմնադրությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան հրկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:

זעטלעכע ווערן אומגעקערט געווארן און אומגעקערט געווארן און אומגעקערט געווארן
 און אומגעקערט געווארן און אומגעקערט געווארן און אומגעקערט געווארן





Ս. ԾԱՆԿԱՆՆ Ե. ԴԱՅԱՐԱՆԳԻ ԸՆԴԱՄՑՈՒՄ



הרב משה יעקב שניידר, ראש ישיבת תומכי תמימים, מברך את הילד ביום המילה. הרב משה יעקב שניידר, ראש ישיבת תומכי תמימים, מברך את הילד ביום המילה.





Ա. ՀԱՅԵՐԴԻՆԻԱՆԻ ԵՄԵՐՈՍԻՆԻ ԴԱՐՅԱՆԻ ԴԱՐՅԱՆԻ ԴԱՐՅԱՆԻ

Ս. ԾՆՈՒՆԴԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 5-ի երևոյան, հավարտ ժամերգոյան, Հայոց եկեղեցիներում մատուցվեց ճրագալոյցի Ս. Պատարագ: Ս. Էջմիածնի Մայր Տաճարում պատարագիչն էր Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը:

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնեց Սուրբ Ծննդյան և Աստվածածնայտնության հրաշափառ տոնը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ:

Պատարագի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական իր պատգամն ուղղեց եամայն հայ մողովորին (տես էջ 3):

Հավարտ Ս. Պատարագի Հայոց Հայրապետը կատարեց Զրօրհնեցի արարողություն՝ որպես Զրիստոսի Մկրտության խորհրդանիշ: Խաչի կնքահայրն էր Բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը:

Ս. Պատարագին և Զրօրհնեցի արարողոյթանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Զոհրաբյանը, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավաքարմագրված օտարերկրյա դիվանագետներ, գիտության ու մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավաքացյալներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԳՐԵՍ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ
ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐԾՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ**

**ՔՐԻՍՏՈՍԱՄԲՆԴ ՄԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆՅ
ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՎԱՆԱՅԻՅ
ԵՒ ՄԱՐԿԱՒԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՄԻՐԵՑԵԱՆ ՀԱՄԱՅՆ
ՀԱՄԱՏԱՅԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ**

*«Յիշեալս գմեզ Տէր եւ օրհնեալս գմեզ»:
(Սղմ. ԵԺԳ. 12):*

Միրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց.

Շնորհն Աստուծոյ եւ երկնային ողորմութիւնը այցելեցին ազգիս եւ Հայաստան աշխարհիս Հայ Գրերի երեւելի զիւրով, որի 1600-ամեակը փոխախմբելու շնորհընկալներն ենք այսօր: Աղօթք բարձրացնենք երկինք, քանզի «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ», պարգեւելով

անձինք պատկառու՝ «որք զարդարեցին Կոնստանդնուպոլսի քաղաքը և անհոգի քաղաքացիները զգուշացան»:

Պայծառ ու պանծալի են յիշատակները, որ պիտի ոգեկոչեն:

16 դար եկեղեցի մեր հոգու առջև պարգում է հայոց կեանքի այն երջանիկ օրը, երբ Մաշտոց Վարդապետը վերադառնում էր Վաղարշապատ՝ հայերենի նորագիտ Տառերը սեղմած սրբին՝ Հայաստանի համար, իր ազգի համար ցուցող սրբին: Հնուադարձ ամփոքրությունից ուրախ էր վերադառնում, Աստուծոյ ունկնդիր էր եղել նրա անդադրում աղօթքներին և օրհնել էր նրա քաջամարտիկ աշխարհները, օրհնել էր նրա ամառանքները: «Այր» եւ «Քէ»՝ սկիզբն Արարիչ ու վերջը՝ Քրիստոս իմաստով ծնունդ էր առել 36 նշանագիր այբբենաշարը, որպէսզի հայ ժողովուրդը մայրենի լեզուով ընթերցի Աստուծաշունչը. «եւ բոլոր մարդկանց հասնի ջրհատոսաբեր փրկութիւնը», ճանաչելի լինեն իմաստութիւն եւ խրատ, իմանալի՝ հանճարների խօսքը:

Ճանապարհի կայաններն անցնում էր յուսատաք, քանզի գիտէր, որ հայրենի երկրում սպասում են իրեն՝ ընդունելու իր քանքերի արգասիքը: Մովսէսն անգամ այնպէս ուրախ էր, որ երբ Մաշտոցի աշակերտ ու վարձագիր Կորիւնը, որովհետեւ երբ բազմակնքին առած աստուծագիր տախտակները, իջաւ Սինա լեռից, ժողովուրդը ռկեծոյլ կոմքի էր երկրպագում: Մինչ Մաշտոցին անհամբերութեամբ սպասում էին Սահակ Պարթեւ Կաթողիկոսը, Վաղարշապատի Թագաւորը, նախարարագունդ ասագանին, աշխարհահեղ զասը եկեղեցականաց, ու երբ լսեցին, թէ մօտեցել է մայրաքաղաքին, ժողովրդի բազմութեամբ կան ընդառաջ: Եւ Արաքսի ջրերը ականապետ նշան հանդիպման խնդրութեանը, օրհնութեան երգերին, փառաբանական ու գոհաբանական աղօթքներին:

Աստուծոյ անանց խօսքը լսելի դարձնելու համար սկզբնաւորութեան հայերէն դպրութիւնը: Հայոց աշխարհի բոլոր գաւառներում Թագաւորի հոգածութեամբ եւ Հայրապետի խնամքով բացուեցին դպրոցներ, կրթութեան մանուկներ, ազատագունդ բանակը, եւ ժողովուրդն ինքը գալիս էր դէպի «աստուծալիս գիտութեան բացումը աղբիւրը»: Մաշտոցեան տառերը դարձան կենդանագիր խօսքի ծառայութեան մարտականքը, «հայաբարբառ, հայրենախօս դարձան օրէնստույց Մովսէսը՝ մարգարէական գնդի հեղ, եւ առաջադէմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակնցոյց Անտառաքի հեղ միասին»: Ու բացուեցին հոգու անսպառ վտակները, աշակերտները ուսուցիչներ դարձան, թարգմանիչներ, մեկնիչներ, շարականագիր, պարամիչ ու իմաստասէր: Իմանալի լոյսի կամարով միաւորութեան Հայոց բաժանումը հողը ու երկաթաւորած ազգային կեանքը: Աստուծոյ խօսքը յարդարեց ու զարդարեց հոգիները, հայրենի մեր երկրում ապրեցրեց փրկութեան յոյսն ու յարութեան հաւատը: Տէրը օրհնեց իր ժառանգութիւնը, որը իրենց վկայութեան կեանքով վաստակել էին Տիրոջ սուրբ առաքելները եւ առաքելապալի հաւատի մեր հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը: Արդարեւ, «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ»: Հայաստանի համար զմուտքին ժամանակում տէրեր նշան ազգին եւ առաջնորդ հաւատարիմ հոգեւորական ու աշխարհական իշխանաւորները մեր, «որք զօրութեամբ Հօր իմաստութեան էին անհոգի հաստատութեան զարթոյց սրբոյն Գրիգորի՝ թարգմանութեամբ նշանագրութեան»:

Սահակ-Մարտապետն իր քաղաքի օրհնեալ սերունդը կերպեց 5-րդ դարը հայոց պարմութեան՝ մոլոր ու հոգու զարթոյցով պայծառ ու հանճարագործ, նուիրումով ու հաւատարմութեամբ յաղթական եւ նախապաշտով լուսազգեստ: Հոգով կրթութեանը հոգի կրթեց: Մեր պարմութեան յետագայ բոլոր-դարերն առաջնորդեց հայ մշակութիւնը ունի: Խոնձրի սերունդը՝

Քրիստոսասեր ու հայրենապաշար, ազնուահոգի, լուսավորեալ ու մրաւորական այն սերունդը, որը փորձութեան ժամին զվարանեց կեանքով պաշտպանել հաւաքն ու հայրենին: Տայդը ու որդիները, ովքեր անցողիկի մէջ յաւիտենականի ճանաչումով, մեր Տիրոջ սրբազնասուրբ անունը իրենց շուրթերին, անցան ճանապարհը Արարչից Նուարամբ: «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ», շնորհելով դար երկունքների, դար հերոսացումի, երբ քցեցի համեմատ առաքինի գրնութեան շարերը, «որը գերկրաւոր մեծութեան փառաց խաւար հոգեցին, ապաւինելով ի յոյս անմահ փեսային՝ անճառ բանին արժանի եղին»: «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ»: Ծողաց արեւը Ծաւարշանի դաշտից վեր եւ առյաւել միաւորեց հայոց հաւաքն ու հայրենիքը: Հայաստանի հողը պաշտպանուած եղաւ, թէ ուրնակոյ, կանգուն եղաւ հայոց պետականութիւնը, թէ կործանուած, երեսունվեց տառերով, Գրով Կենդանի միշտ պաշտպանուած մնաց հայ հողին, բանգի Մաշտոցեան նշանագրերը մագաղաթին շարտելով, հողինեւում էին գրի առել մեր ժողովրդի գոյութեան իմաստն ու խորհուրդը:

Մաշտոցեան Գրով անմահացել է մեծասրբանչ հայոց լեզուն, ու ոսկեհունդ արժապից բարձր բարձրացել է կանաչագարդ ծառը հայ մշակոյթի, որոնցով ընդմիշտ մէկ ու միասնական է աշխարհասփիւռ ազգս հայոց, իր քրիստոնէական ինքնութեամբ, իր հաւաքաւոր, սրբեղծող ու առաջադիմութեան ձգտող հոգեւոր ներաշխարհով: 16 դար ինչ որ սրբեղծել է մեր ժողովուրդը, այնպեղ ներկայ են հայերէնի առաջին ուսուցիչները՝ Սուրբ Սահակ ու Սուրբ Մաշտոց մեր մեծ ու երանելի Վարդապետները, ու բանի դեռ անմար է նրանց լուսեղէն յիշատակը եւ հայ գրերի ոգեղէն խորհուրդը, պիտի ապրեն ու գործեն՝ ապրումային խաւարացի լուսի ու աննուն գանձերի բաշխումով շարունակելով կրթել միւրք անյաղթ եւ հոգի ազապ ու հաւաքարիմ:

Միրելի ժողովուրդ հայոց, սրբիդ սեղմած պանպանիդ Մաշտոցեան գիրը մեր հարագապ, եւ միշտ նուիրական պիտի մնան մեր հայրենիքն ու Սուրբ Եկեղեցին: Միրիդ մեր մայրենին, ու պիտի գովերգուեն փառքերը նախնեաց, շնորհը ծաղկի, տեսիլքը ազնիւ ու մաքուր եւ ձգտումը վսեմ՝ հայրենեաց կեանքում: Լուսաւոր ու պայծառ պանիդ հայոց դարոցը, եւ մեր զաւակների հետ յաւերժի մասին պիտի գրուցեն Ազապն Արարապ, Մայր Արաքս ու Մայր Տաճար, որ ընդմիշտ յիշում են այն երջանիկ օրերի խնդութիւնը, երբ պապտական մեր ուսուցիչները հայերէն հնչող Աստուծոյ խօսքով երանելի, ցանկալի ու սքանչելի դարձրեցին հայոց աշխարհը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յորդոր ենք կարդում մեր Նուիրապետական Աթոռներին, թեմակալ առաջնորդներին, ուխտապան հոգեւոր դասին եւ համայն հաւաքաւոր մեր ժողովրդին՝ հայաստանում եւ Սփիւռքի մեր գաղթօջախներում 2005 թուականին համագգային հանդիսութեամբ ու շուքով տօնել հայ Գրերի աստուածօրհնեալ Գիտի պանծալի յիշատակները: Աշխարհի չորս ծագերում թող մեր խնդագին հոգու աղօթքը բարձրանայ երկինք, բանգի «Յիշեց մեզ Տէրն ու օրհնեց մեզ»՝ պարգեւելով անձինք պսակաւոր, «որը գարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին, հաստաւորելով յերկրի գգի կենդանի»:

Թող Աստուծոյ խաղաղ ու արդար հայեացքը շողարձակի հայոց կեանքին՝ ազապ ու վերածննդ մեր հայրենիքում եւ հայ Սփիւռքի թուր կողմերում:

Իջման Սուրբ Մեղանի առջեւ աղօթք ենք բարձրացնում երկինք՝ հայցով, որ Աստուած, բարեխօսութեամբ լուսաբնակ մեր թարգմանիչ վարդապետների, շնորհ եւ առաւել շնորհ բաշխի հաւաքաւոր մեր ժողովրդին, որպէսզի յարապուն լինեն սէրը եւ նուիրումը առ հայրե-

և ինչ ու մեր Սուրբ Եկեղեցին, և աներեր՝ մեր հաւաքը, որ «Տէրը բարութիւն պիտի գործի, իսկ մեր երկիրն իր պտուղը պիտի փայ» (Սղմ. 2Գ. 13):

«Շնորհք, ուրորմութիւն, խաղաղութիւն Մարությոյ ի Տօրէ և ի Տեսունէ Թիսուէ Բրիստուէ Ողորտյն Տօր. ճշմարտութեամբ և սիրով եղիցին ընդ Ձեզ»: Ամէն:

ԳԱՐԵԳՐԸ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Կոնգակս ի 29-ն Թունուարի
յամի Տեսան 2005 և ի թուին Նայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Արքայ Էջմիածնի
ընդ համարաւ 283



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԱՐԹՈՒՐՈ ԳԱՐԱԿՈԶԼՈՒՄԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱՎ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐՈ ԳԱՐԱԿՈԶԼՈՒ,
ՈՐ Ի ԲՈՒՔԻՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱ**

Նամագգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանատու զաւակիդ, Նայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու ջերմ բարեմաղթանքները:

Սիրելի պրն Գարակօզյու,

Արգենտինայի հայոց թեմ կալարած Նովուայետական Մեր այցելութեան ընթացքին առիթ ունեցանք ի մտոյ ճանաչելու Ձեզ եւ աստուածաւաճոյ բազում գործերով վաստակեալ յարգանք ու հեղինակութիւն վայելող Ձեր ծնողներին՝ սիրելի Գեորգ եւ յուսահոցի Վէրա Գարակօզյուններին: Արդարեւ, ազգային-եկեղեցական մեր կեանքում Գարակօզյու ընտանիքի իրազօրծումները բարի վկայութիւններ են ներշնչեալ հուսալարուր ոգու, իրաւ ազգասիրութեան ու հայրենասիրութեան, որի հերթական դրսեւորումը եղաւ Ձեր ծնողաց սրբաբաշխ յանձնառութիւնը՝ հովանաւորելու Գիւմրիի Սուրբ Աստուածածին եկեղեցու վերանորոգումը՝ մեծ աւանդ բերելով Մայր Նայրենիքում հոգեւոր կեանքի վերազարթոնքին:

Գարակօզյու ընտանիքի բարի աւանդները այսօր ծաղկում ու արգասաւորում են նաեւ զաւակների գործերով: Նովուայետական այցի օրերին մայրաքաղաք Բուէնոս Այրէսի «Արմենիա» հրապարակում Մենք մասնակցեցինք հայկական խաչքարի զեւրեղման արարողութեանը, որը կեանքի կոչուեց Ձեր եւ Ձեր ընտանիքի զեղեցիկ նախաձեռնութեամբ՝ իբրեւ խորհրդանիշ հայ-արգենտինական բարեկամութեան: Երկար տարիներ Դուք ծառայել էք որպէս Վիսենթէ Լուիսի Սուրբ Գեորգ եկեղեցու եւ Նայ դպրոցի հոգաբարձուների խորհրդի արքեպիսկոպ, հոգեւոր զասի հեզ միասին ներդնելով Ձեր ջանքերը, որպէսզի մայրենի լեզուն շարունակի ապրել հայ մանուկների շուրթերին եւ յարապետի հայ կեանքը Արգենտինայում, գորաւոր լինի մեր ժողովրդի զաւակաց որդիական սէրն ու նուիրումը հանդէպ Մայր Եկեղեցին եւ յուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Յարգարժան պրն Գարակօզյու, բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր Եկեղեցուն, սիրով ընդառաջում ենք Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադեանի ազնիւ խնդրանքին եւ Նայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեայն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հույցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւաքոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշապութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առաքապէս շնորհագարդի մեր Եկեղեցու բոլոր բարեպաշտ հաւսարացեալներին:

Ողբ յերոս Ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Նոգոյն եւ յսէշ օրհնեալ Ի Մէնջամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ**

Տուա Կոնդակս ի 12-ն Յունտարի
յամի Տնտոն 2015 եւ ի թուին հայոց ՌՆՇՂ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ հիւմարաւ 279

ՆԱՅԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2005 թ. հունվար ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց եպիսկոպոսի Սրբա-
պատ Կանդակով՝

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Խորխե Հուարդո Վարդպարտյան (Արգենտինայի հայոց թեմ)

Էդուարդո Գարսայան (Արգենտինայի հայոց թեմ)

Անի Խլեպնիցյան (Արգենտինայի հայոց թեմ)

Օրհնության գիր է պրվել

Սուրբ Գևորգ եկեղեցու ծխական համայնքին (Եթովպիա)

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց Բանակի օրվա առիթով Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին և Մեր բարեմաղթանքներն ու շնորհավորանքները՝ մեր բաջարի բանակի զորավարներին և մարտիկներին:

Փառք Բարձրալին, որ խաղաղ երկների ներքո, մեր բանակի պաշտպանությամբ ապահով՝ մեր ժողովուրդը շարունակում է իր ստեղծարար կյանքը՝ վերածնվող Հայաստանի ու Արցախի վաղվա նոր օրը կառուցելու լուսավոր հույսով ու հավատով:

Մեր դժվարին պատմության վճռական պահերին՝ հայոց բանակը միշտ դրսևորել է ազատագրելից ու քաջակորով ոգի և մեծ հաղթանակների հասել առ Աստված հավաքելով, ամենաանաղթ արիությամբ ու խիզախությամբ: Այսօր մենք հիշում ենք հայ զենքի փառքը կերպած մեր պանծալի զորավարներին ու անմահ հերոսներին, ովքեր նվիրվեցին Հայրենիքի ազատության ու անկախության վեհ և նվիրական գործին:

Հայրենիքի սիրտ և Հայրենիքին ծառայության խորհուրդը մեր հոգում՝ աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով, որ Ամենակալ Տերը Իր Ամենախնամ Աջի հովանին տա՝ րաձյալ պահի հայոց գորաց ու զորականաց վրա, միշտ զորեղ պահի բազուկը ու հաղթական՝ ոգին հայ զինվորի:

Թող Տերը անվրդով պահպանի երկնառաք խաղաղությունը աշխարհում համայն, հայրենի մեր եզերքներում՝ ի Հայաստան և ի Արցախ:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,

27 հունվարի 2005 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ- ԿՈՆԴԱԿԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ

Հունվարի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսարանությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պապարագ: Պապարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Կյուրեղ արքեպիսկոպոս Կարդուկյանը:

Հընթացա Սուրբ Պապարագի մեծ հանդիսավորությամբ, «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո, Ս. Խորան բարձրացվեց Ամենայն հայոց հայրապետի Սրբապառ Կոնդակը՝ նվիրված հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակին, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

«...Սահակ-Մեսրոպյան դպրոցի օրհնյալ սերունդը կերպեց 5-րդ դարը հայոց պատմության՝ մարքի ու հոգու զարթոնքով պայծառ ու հանճարագործ, նվիրումով ու հավատարմությամբ հաղթական և նահապետությամբ լուսազգեստ: Հոգով կրթվածը հոգի կրթեց: Սեր պատմության հեղափոխություն դարձրեց առաջնորդեց հայ մշակույթի ոսկե հունձրի սերունդը՝ Քրիստոսասեր ու հայրենապաշտ, ազնվահոգի, լուսավորյալ ու մարավորական այն սերունդը, որը փորձության ժամին չվարանեց կյանքով պաշտպանել հավատն ու հայրենին: Հայրեր ու որդիներ, ովքեր անցողիկի մեջ հավիտենականի ճանաչումով, մեր Տիրոջ սրբազնաստուրբ անունն իրենց շուրթերին, անցան ճանապարհը Ավարայրից Նվարսակ: «Հիշեց մեզ Տերն ու օրհնեց մեզ»՝ շնորհելով դար երկուցների, դար հերոսացումի, երբ բերի համեմատ առաքինի գտնվեցին շափերը, «որք գերկրաոր մեծութեան փառաց խաւար կոչեցին, ապաւինելով ի յայս անմահ փեսային՝ անճառ բանին արժանի եղեն»: «Հիշեց մեզ Տերն ու օրհնեց մեզ»: Շողաց արևը Շավաղջանի դաշտից վեր և առհավել միավորեց հայոց հավատն ու հայրենիքը: Հայաստանի հողը պաշտպանված եղավ, թե ուրնակոխ, կանգուն եղավ հայոց պետականությունը, թե կործանված, երեսունվեց տարեկան, Գրով Կենդանի միշտ պաշտպանված մնաց հայ հոգին, քանզի Մաշտոցյան նշանագրերը մազուցաթին շարվելով, հոգիներում էին գրի առել մեր ժողովրդի գոյության իմաստն ու խորհուրդը» (տե՛ս էջ 14):

Հայրապետական այս կոնդակով Ամենայն հայոց Կաթողիկոսը հորդորում է Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռներին, թեմակալ առաջնորդներին, ուխտապառ հոգևոր դասին և համայն հավատավոր ժողովրդին՝ հայաստանում և Սփյուռքի գաղթաթափանքում 2005 թվականին հանգագային հանդիսությամբ ու շուքով տոնել Հայ Գրերի աստվածորհնյալ Գյուտի պանծալի հիշատակը:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՆՈՔԵՆՄԵՆԳԻՄՏ՝ ՆԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԶՈՆՎԱԾՆԵՐԻ ՆԱՄԱՐ

Նոնվարի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանը: Սուրբ Պատարագի ընթացքում կատարվեց եղեռնազստյան հատուկ արարողություն՝ Նեոավոր Արևելքում ահավոր արհավիրքից զոհվածների հոգիների հանգստության համար:

Սրբազան արարողությունից առաջ հավուր պաշտածի քարոզ խոսեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: Սրբազան հայրը Ամենայն հայոց Կաթողիկոսի, ողջ եկեղեցական ղասի և բարեպաշտ ժողովրդի անունից ցավակցական խոսք ուղղեց Նեոավոր Արևելքում բնական աղետի պարճառով փոշածների հարազատներին և աղոթեց անմեղ զոհերի հոգիների խաղաղության և հանգստության համար (տե՛ս էջ 43):

Փառեն Սրբազանը հպարտությամբ շեշտեց, որ ինչպես հայաստանի հանրապետությունը, այնպես էլ աշխարհասփյուռ հայությունն իր հոգեկան և նյութական աջակցությունն են ցույց տվել փոշածներին:

Ս. Պատարագին ներկա էին ՏՏ ԱԳ փոխնախարար Արմեն Բալթուրդյանը, հայաստանում հավատարմագրված օտարերկրյա ղեկավարներ ու դիվանագետներ, մշակույթի գործիչներ և բազմաթիվ հավատացյալներ:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ**

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՆՈԳԵՏԱՆԳԻՍԻ Ի ՆԻՇԱՏԱԿ ԲԱԲՎՈՒՄ 1990 Թ. ԶՈՆՎԱԾ ՆԱՅՈՐԴԻՆԵՐԻ

Նունվարի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Սուրբ Պատարագի ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ 1990 թվականի հունվարին Բաքվում տեղի ունեցած ռդբերգական դեպքերի հեղանգով զոհ գնացած անմեղ հայորդիներին:

Սրբազան արարողությունից առաջ միաբանությանը և ներկա հավատացյալներին իր խոսքն ուղղեց Մայր Աթոռի ղեկավարապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը՝ մտախնայաբար և անկողմնորոշված քննադատությամբ քննադատելով 1990 թվականի հունվարին Բաքվում տեղի ունեցած ռդբերգական դեպքերի հեղանգով զոհ գնացած անմեղ հայորդիներին և ազատություն տալով իրենց հարազատներին:

«Յիշատակն արդարեւ օրհնութեամբ կոչիցի»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ԱՐԶԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ ՀՌՈՄԻ Ս. ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՐՄՆԱԽՈՐՀԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ ԵՎ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒՆ

2005 թ. հունվարի 19-ին տեղի ունեցավ Վաղիկանի Սուրբ Պետրոս Մայր Տաճարի արքիպեպիսկոպոսի օրհնության արարողությունը՝ Հռոմի Սրբազան Բախանայապետ Հովսեփոս-Պողոս Բ Պապի նախագահությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի փնտրիքներով, որպես Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, այդ միջոցառմանն իր մասնակցությունը բերեց Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաքելաշավիղ Հայրապետը, որ Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի մեծագույն սրբերից մեկն է, ընդունվում է նաև Կաթողիկե և Ուղղափառ Եկեղեցիների կողմից: Սուրբ Գրիգոր Լուսավորիչի տունը Կաթողիկե Եկեղեցում տոնվում է սեպտեմբերի 30-ին:

Արարողությանը մասնակցում էր նաև Հայ Կաթողիկե Ներսես Պետրոս ԺԹ Թադևոսի Պատրիարքը, որի Աթոռը գտնվում է Լիբանանում: Վերջինս առաջնորդում է քրիստոնյա կաթողիկե հայերի շուրջ 10 տոկոսին, որոնք ապրում են Սփյուռքում, և որոնք հաղորդության մեջ են Հռոմեական կաթողիկե Եկեղեցու հետ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ (ով հայտնի է նաև որպես Գրիգոր Հայ) արձանը բաժնակել է լիբանանահայ քանդակագործ Խաչիկ Ղազանչյանը:

2001 թ. հոկտեմբերին Վաղիկանը և Հայ Կաթողիկե Պատրիարքությունը կազմակերպեցին քանդակագործների միջազգային մրցույթ՝ որպես առաջադրանք ունենալով քանդակել Ս. Գրիգոր Լուսավորիչի մարմարյա արձանը: 2002 թ. ապրիլին, հաղթող ճանաչվելով այդ մրցույթում, Խաչիկ Ղազանչյանը ձեռնամուխ եղավ այդ գործին: Արձանը, որ պատրաստված է Կարրարայի մարմարից, ունի 5.64 մ. բարձրություն և 18-տոնա կշիռ:

Ս. Գրիգորի աջ ձեռքում քանդակված է հայկական խաչ, իսկ ձախ ձեռքում՝ Ավետարան՝ զարդարված չորս Ավետարանիչների խորհրդանշաններով: Խույրի վրա պատկերված է Սուրբ Հոգու խորհրդանշիչ հանդիսացող աղավին, իսկ պանակեն ներկայացնում է



Նարեկի Տիրամոր և Մանուկ Տիսուսի պարկերը: Պատվանդանի վրա հայերենով և լատիներենով գրված է «Մուրր Գրիգոր Լուսավորիչ, 301»:

Նոնվարի 19-ից 21-ը Նոոմում Կեղի ունեցավ նաև Ս. Գրիգոր Նարեկացուն նվիրված միջազգային գիտաժողով, որը կազմակերպվել էր Հայ Կաթողիկե Պապրիաքոսության ջոնքերով: Գիտաժողովին մասնակցեցին գիտնականներ Հայաստանից և Սփյուռքից, ինչպես նաև մի շարք արքայասահմանյան հայագետներ: Գիտաժողովին իրենց մասնակցությունը բերեցին և քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Հայոց Եկեղեցին այս գիտաժողովում ներկայացնում էր Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը: Սրբազան Հայրը ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրենության խոսքը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՋՍԱՆՅԱՆ

Միջնկիդիցական հաշտաբեղությունների գրասենյակ

Տ. ԶԱՎԵՆ ԱՐԵՂԱ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 հունվարի 2005 թ.)

Նախ հոգուս պարտքն եմ համարում Նոր տարվա այս առաջին օրվա առիթով իմ շնորհավորանքները հղել ի մասնավորի, Վեհափառ Տեր, Ձերոց Սրբությանը և մաղթել կյանքի արևշատ և երջանիկ օրեր: Թող առավել արգասաբեր դառնա ձեր հովվական ծանր, միաժամանակ բազմաթիվ լուծը: Ինչպես նաև իմ շնորհավորանքները և բարեմաղթանքները հղում եմ ձեզ, սիրելի հոգևոր հայրեր և եղբայրներ, ի մասնավորի ձեզ, սիրելի հավատարմացյալներ, որ, թողնելով փոսական սեղանները, նախ եկել եք ձեր ուխտը նորոգելու և աղոթք բարձրացնելու առ Աստված: Եվ ես, իբրև պատրաստակա սպասավոր, մեր բոլորի աղոթքները, իբրև մի-մի ծաղիկներ հավաքելով և ի մի բերելով, պիտի վերընծայեմ առ բարձրյալն Աստված:

«Արդարև ասեմ ձեզ, զի այդին ոյն աղբար սուկի ուրկ քան գամնենսին»:

«Եշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ աղբար այդին ավելի զցեց, քան բոլորը»:

(Դուկ. ԻԱ 3)

«Յանուն Հօր ևս Որդոյ ևս Հոգւոյն Սրբոյ, ամեն»:

Այս խոսքերը քիչ առաջ հնչեցին այս Սուրբ Խորանից, և այս խոսքերը շուրջ երկու հազար տարի առաջ արտասանեց մեր Տերը՝ դիմելով իր առաքյալներին: Եվ ես այս պահին մտածում եմ, թե մեր սուրբ հայրերը որքան պատշաճ և ինքնօրինակ ավելարարանական ընթերցում են սահմանել Նոր տարվա առաջին այս օրվա համար, որը ինքնաբերական և վերարթնության հույզեր է արթնացնում մեր հոգիներում:

Նույնպես ավելարարանիչը պատմում է, թե մի անգամ Տիմոս, մտնելով տաճար, կանգնում է գանձանակի մոտ և փնտրում, թե մոռոպուրդը, այդ թվում և մեծահարուստներ մտնելով տաճար՝ բազում լուծանք են գցում գանձանակի մեջ, ոսկյա, արծաթյա դրամներ են գցում գանձանակի մեջ, և այդ պահին նկատում է նաև մի աղքատ այրի կնոջ, որ ընդամենը երկու լուծա է գցում: Երկնավոր Վարդապետն ասում է, որ այդ աղքատ այրի կինն ավելի է զցել, քան բոլոր մեծահարուստները, որովհետև նրանք իրենց կուտակած գանձերից են գցում Աստծուն ուղղված նվերների մեջ, իսկ այդ աղքատ և այրի կինը՝ իր ամբողջ ունեցածը:

Որպեսզի առավել հաստ լինենք Ջրիսպոսի խոսքերին և առավել հաղորդ դառնանք ավելարարանական իրողությանց, եկեք մի պահ մտովի փնտրելու մեր Տիրոջ երկրալի կյանքի ժամանակները: Հին Հրեաստան, փարիսեցիներ, մաքսավորներ, մեծահա-

րուսպներ, որոնք մտնում էին Աստված Կառնի իրենց հաղորդակցությունը գեղարվեստով և ուսկյա ու արժաթյա դրամներ էին գցում գանձանակի մեջ՝ ի տես բոլորի. և հաղորդակցությունը արժանիք չէր ունենում ի տես բոլորի. և նայում էին երկինք ու կարծես փառավորվում էին: Այս դրամները ամբողջությամբ միտումնավոր շեշտադրում է կնոջ աղքատ լինելը և երկու լուրջ գցելը, որը չգնաց, որովհետև ոչ ոսկի էր և ոչ արծաթ. և ոչ էլ նկատելի եղավ այլոց համար. բայց Տերն անմիջապես նկատում է: Ինչո՞ւ համար էր փառավորվում դրամը գանձանակը սրանից երկու հազար փարի առաջ և այսօր էլ, կամ ինչո՞ւ համար մեր Տերը առանձնացրեց հաղորդակցության այդ կնոջ լուրջը:

Ողորմությունը Աստված կողմից հոգևոր օրենք է. նվիրաբերությունը, ողորմածությունը հոգևոր ներքին փրկաբերություններ են: Ողորմած մարդն արտաքին ունեցվածքի հետ իր սիրտն ու կամքը պիտի մաքուր և ողորմական ողորմությունը և ընծան այնքան է ընդունելի, երբ սրտի ձեռքով է բաշխվում, քանզի Աստված ողորմությունը կամ ընծան չի ընդունում, եթե ձեռքը տալիս է, իսկ սիրտը ափսոսում է: Աստված ոչ թե տվածին է նայում, այլ տվողի սրտին: Ողորմությունը և նվիրաբերությունն Աստված արդար բարիքների բաժանման միջոց է և, ինչպես Պաղոս առաքյալն է ասում, «Ձեր առաքելությունը թող լցնի նրանց պակասությունները և նրանց առաքելությունն էլ թող լցնի Ձեր պակասությունը»: Եվ, ինչպես գրված է Հին Օրենքում, «Ով շատ հավաքեց, ոչինչ ավելի չունեցավ, և ով քիչ, նրան երբեք չպակասեց»:

Իրապես, նվիրաբերությունը և ողորմությունն այն առաքելություններից են, որոնցով մարդիկ գանձեր են ամբարում երկնքում, ուր ոչ գողն է մերժեցնում և ոչ ցեցն է ապականում: Մի հին արևելյան առած պատմում է, որ այս աշխարհի վրա մի շատ մեծահարուստ մարդ էր ապրում, և երբ այս մարդը մահանում է, հրեշտակը նրան ուղեկցում է: Ճանապարհին նրանք շատ մեծ տներ են տեսնում, և հանկարծ մի շատ շքեղաշուք տուն է տեսնում այդ մեծահարուստը, որը նաև նման էր իր տանը, և ակամայից հարցնում է հրեշտակին, թե ով է ապրում այս տանը: Եվ հրեշտակի պատասխանից պարզվում է, որ ճիշտ այս մեծահարուստի ծառաներից մեկն է ապրում այդ տանը: Եվ մեծահարուստն իր մարմնով տեսնում է, «Եթե իմ ծառային այսպեղ այսպես պաշտում են, ապա որքան առավել իմը կլինի»: Եվ քիչ առաջանալով, հրեշտակը ցույց է տալիս նրան մի փոքրիկ խրճիթ և ասում է, որ այստեղ դու պիտի ապրես:

Հարուստը երբ գաղմատում է, հրեշտակը նրան պատասխանում է, «Այստեղ մենք տները կառուցում ենք ձեր իսկ ուղարկած նյութերով, որոնք են ողորմությունը, բարեգործությունը և սրանց նման շատ բարի և առաքինի գործեր, բայց հարուստ լինելը բնավ էլ վատ բան չէ, եթե Աստված փրկված այդ բարությունը գնահատել գիտես և կարողանում ես բաժնեկից դարձնել կարողություններին և նրանց պակասությունները լցնել թո՛ւ առաքելությամբ և դրանով հոգևոր անանց գանձեր ձեռք բերել երկնքում, այլապես ամեն ինչ ունայն է դառնում, ինչպես բանաձևում է իմաստուն Սողոմոնն իրեն փորձելով ամեն ինչի մեջ, այդ թվում նաև՝ հարստության»:

Իրապես, որևէ ձեռքբերում դատարկ է և ունայն, եթե այնտեղ չկա ընդհանուրի կյանքը բարեխաղիչ և մարդկության կյանքը լավացնելու աստվածային պատվիրանը: Մարդու կյանքում խորհրդատուներ շատ են լինում, բայց ամենամեծ խորհրդատուն՝ օրն է, քանզի ամեն օրն իր խորհուրդն ունի:

Այսօր Ամանոր է: Ի՞նչ է այսօրվա խորհուրդը, ի՞նչ է հուշում մեզ Ամանորը: Այս օրերին մենք զանազան հանդիսությունների, բազում խրախճանքների ենք մասնակցում, իսկ ի՞նչ հուշ է մնում մեր սրտերում, ի՞նչ նորություն է ծնվում մեր հոգում: Անա կարևոր հարցադրումներ, որոնց պատասխանները եթե չունենանք, ապա ապարդյուն պիտի անցնեն մեր բոլոր փորձերը նորություն գտնելու 2005 թ. կրող այս տարում: Անցյալ տարեմուտին «Ահապահա Վայրապետի» իր պարզամի մեջ այսպես բանաձևեց. «Այս օրերին բոլորդ մեկմեկու նվեր ենք փոխանցում, բայց դուք փոխանցեք ամենաազնիվը սերը և հույսը»:

Իրավամբ, Ամանորի և Սուրբ Շենդյան հանդիսությունների և խոհերի մեջ հավիտենականության և հավերժի շունչը կա: Այսպիսի սրտագին խոհերով և հոգևոր զգացումներով է, որ հայը դիմավորել է իր Նոր տարին և Սուրբ Շնունդը: Աղոթում եմ, որ Նոր տարվա այս առավոտը և Սուրբ Շենդյան հուսաբեր լույսը հավերժ պայծառ մնան մեր Հայրենիքի, մեր ժողովրդի և մեր Եկեղեցու մեջ: Թող 2005 թ. լինի բովանդակ աշխարհի և ի մասնավորի՝ հայ ազգի համար խաղաղության, համերաշխության, միասնության և անվտանգության տարի: Թող նորաբաց այս տարին լինի մեր Սուրբ Եկեղեցու համար հոգևոր նոր ձևափոխությունների, խաղաղ և հոգեշահ աշխատանքի արգասաբեր տարի, որպեսզի կարողանանք հայ ժողովրդի հոգևոր և ազգային զանձանակի մեջ մեր լուսնի զգել, որովհետև այսօր Քրիստոս կրկին կանգնած է զանձանակի մոտ և նայում է, թե մեզկից յուրաքանչյուրն ինչ է զգում այնպե՞ս և ինչ սրտով է զգում:

Թող Աստծո սերը, մեր Տիրոջ խաղաղությունը և Սուրբ Հոգու շնորհը միշտ մեզ բոլորիս հետ լինեն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

Տ. ՆԱՐԵԿ ԱՔԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 հունվարի 2005 թ.)

«Եւ Ես ուխտիւմ ձեզ, որպէս եւ Հայր Իմ ուխտեաց Ինձ գաղթայություն»:

«Եվ Ես խոստանում եմ ձեզ, ինչպես եւ Իմ Հայրը Ինձ խոստացավ փառս արքայությունը»:
(Ղուկ. ԻԲ 29)

Միրելի հավատացյալ բույրեր և եղբայրներ, ահավասիկ մի նոր փարի էլ բացվեց մեր կենսոնթացության հավերժագնաց ճամփի վրա, որ իր խորհրդով պետք է լիցքավորի մեր կյանքի մի նոր հանգրվանը՝ գալիք 365 օրերը դրոշմելով Աստծո՝ մեզ հետ լինելու գաղափարով:

Մաքդ արարածն արդյունք չէ սխալի և ոչ էլ պարտահալանության, նա արդյունք է սիրտ, Երկնային Արարչի անսպառ սիրտ, ուստի Աստծո սիրտ արդյունք հանդիսացող մարդը թեպետ մեղքի պարճատով հեռացավ Աստծուց, բայց Զարեհար Աստված նրանք չհեռացավ մարդուց, այլ, ինչպես Ավետարանն է ասում. «...մինչև իսկ իր միածին Որդուն փվեց, որպեսզի ով Նրան հավատում է, չկորչի» (Ղուկ. Գ 6), իսկ իր միածին Որդու միջոցով արքայության խոստում փվեց մեզ. «Եվ Ես խոստանում եմ ձեզ, ինչպես եւ Իմ Հայրը Ինձ խոստացավ փառս արքայությունը» (Ղուկ. ԻԲ 29):

Պետք է իմանալ, որ ոմանք չեն փնտրում Աստծո արքայությունը, այլ փախչում են նրանից, ոմանք փնտրում են, բայց չեն գտնում, ոմանք փնտրում և գտնում են, սակայն չեն պահում, իսկ ոմանք էլ փնտրում, գտնում և պահում են:

Ովքեր չեն փնտրում Աստծո արքայությունը, այլ փախչում են նրանից, իրենց կյանքի բոլոր օրերում չեն դադարում սխալվելուց: Այս փորձության մեջ ընկնում են նրանք, ովքեր թեև հավատացյալի անուն են կրում, սակայն բարի գործերից հեռացած են: Նրանք թեպետ լեզվով հավատում են, սակայն սրտով հեռացած են և գործով ուրանում են Աստծուն՝ ըստ Տիրոջ հեղեղյալ խոսքի. «Զուր են Ինձ պաշտում, լեզվով են երկրպարում, իսկ սրտով հեռացած՝ մեկուսի են ինձանից» (Հմմտ. Եսայի ԻԲ 13):

Ուրիշներ փնտրում են Աստծո արքայությունը, բայց չեն գտնում: Սրանք սնափառներն ու մարդաբաններն են, ովքեր պերճանում են փառասիրության հողմով, բարիք են գործում, սակայն փառամոլության պարճատով կորցնում են իրենց վարձքը, մարմնով մեռնում են, սակայն հոգով չեն ապրում, չարչարվում են, սակայն չեն հանգստանում, փանջվում են, բայց պսակի չեն արժանանում: Սրանց մասին Ավետարանը շար հստակ և կարճ ձևով ասում է. «...այդ իսկ է նրանց վարձը» (Մատթ. Զ 2, 5, 16): Այսպիսիների մասին Տերն

ասաց. «Միմյանցից եք փառք ստանում, իսկ միակ Աստծո փառքը չեք փնտրում» (Նովի. Ե 44): Սրանց մասին էլ ասում են Դավիթ մարգարեն. «Տերը կցրի մարդահաճների ոսկորները» (Մադմ. ԾԲ 6):

Ոմանք փնտրում են ու գտնում, սակայն չեն պահում: Այդ նրանք են, ովքեր միառժամանակ հավատում են, բայց փորձության պահին ընկերկում են և այս անցավոր կյանքի պատճառով զրկվում անանց կյանքից. մի փոքր ժամանակ վայելում են երկրի վրա և հավիտենապես փանջվում դժոխքում: Հիրավի, այսպես է, քանզի տրանում են Փրկչին ու Տիրոջը և կորցնում առանց արժանանալու Քրիստոսի խոստումին: Սրանց մասին Քրիստոս ասաց. «Ով ուրանա ինձ մարդկանց առջև, ես էլ նրան կուրանամ իմ հոր և հրեշտակների առջև» (Մատթ. Ժ 33, Ղուկ. ԺԲ 9):

Ոմանք էլ փնտրում են Աստծո արքայությունը, գտնում են այն և պահում: Նրանք այնպիսի սիրով են միավորվում Աստծո հետ, որ աշխարհի բոլոր վայելքները ոչինչ են համարում, և որևէ դժվարություն չի կարող նրանց բաժանել Աստծո սիրուց, ըստ Պողոս առաքյալի հետևյալ խոսքի. «Արդ՝ ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց, քառապանքը, թե՛ անձկությունը, վտանգները, թե՛ սուրբ» (Հռոմ. Ը 35):

Պետք է այսպես փնտրենք Աստծո արքայությունը՝ անսասան հավատքով, անմարելի հույսով և կատարյալ սիրով, որպեսզի կարողանանք գտնել այն և պահել: Ուստի Քրիստոսի կողմից մեզ ուղղված փարեսկզբի այս հրավերը մեծ խորհուրդ ունի իր մեջ. «Եվ ես խոստանում եմ ձեզ... տալու արքայությունը» (Ղուկ. ԼԲ 29):

Աստծո արքայություն փանդո ճանապարհը դժվարին է, քանի որ այն պահանջում է գոհարերություններ՝ մեր նսից ու անձնականից, եյութից ու աշխարհայինից, նաև փշոտ է, քանի որ ենթադրում է դժվարություններ, որովհետև պետք է ծառայություն ու նախանձախնդրություն ունենալ, և որտեղ որ թուլանա մեր նախանձախնդրությունը, այնտեղ կտաթաքենք, և այդ ժամանակ կլսենք Տիրոջ հետևյալ խոսքը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում» (Մատթ. ԻԵ 12):

Աստծո արքայությունը մարդուս համար այն անկողոպտելի երջանկությունն է, որ նրա կյանքը դարձնում է իմաստավոր ու նպատակապաշտ և ոչ ինքնանպատակ ու, բնականաբար, նաև ինքնավախճան:

Սիրելիներ, անուրանալի է այն փաստը, որ կյանքի խղական վազքը դեպի Աստծո արքայության փնտրությունն և դեպի այն գտնելու երջանկությանն է ձգտում: Եթե երբեք ինստավոր լինեք, որ համաշխարհային հոգեբանական անդամայործության ազդեցության ներքո բոլոր զգացմունքները մարեին մարդկային կրճքի տակ, ապա երջանկության զգացումը նրանցից միակ վերապրողը պիտի լինեք, որովհետև այն սկիզբ է առնում ոչ թե երկրից կամ մարդկանցից, այլ երկնքից, այսինքն՝ Աստծուց:

Աշխարհի վրա տարբեր ժողովուրդներ և անհատներ տարբեր տեղերում և տարբեր ձևերով փորձեցին փնտրել իրենց երջանկությունը, որի փնտրությունը, սակայն, բյուրավոր կյանքեր խլեց ու դեռ խլելու է ոչ ճիշտ փնտրությունի պարագային:

Աշխարհի խաչադրված ճանապարհների վրա մարդկային ստվերներն անցնում ու դառնում են. ծիծաղի բրբիջները, լացի կոճերը, գոհունակության ժպիտները, պարտության հեկեկանքներն ու հազթանակի աղաղակները միմյանց տեղն են զբաղեցնում: Ոմանք ոսկուց,

ոմանք տիրումից, ոմանք սիրուց են փորձում խմել երջանկության փափագած շիթերը: Դա-
հիճները՝ նախապակաների արյունից, իսկ Ֆարսիքոսները՝ փառապանքներից ու կամովին
հանձն առած փանջանքներից են խմում այն: Եվ չկա մեկը, որ փառապանքը սիրում լինի
ենց փառապանքի համար:

Կյանքի նպատակը երջանկությունն է ու պիտի մնա այդպիսին: Այն կերպ ասած՝ մարդու
նպատակն այդ երջանկությունն է, այսինքն՝ Աստծո արքայության ժառանգորդ դառնալն է,
քանզի միայն Աստծո արքայություն մեջ մարդ կարող է մշտամյա ու հարազակարճ երջան-
կություն վայելել:

Այո՛, սիրելիներ, երջանկություն գտնելու փափագը տիեզերական է, իսկ նրան տիրելու
համար գործառնված միջոցների կիրառումը, ավաղ՝ համամարդկային ընդգրկմամբ սխալ,
քանզի Տիտու շապ պարզ և հստակ ասաց. «Աստծո արքայությունը ձեր մեջ է» (Տմար,
Ղուկ. ԺԷ 21):

Աշխարհի մեծագույն ապերջանիկները նրանք են, ովքեր իրենց երջանկությունն ապ-
րում են արտաքին պարագաների, արտաքին ազդեցությունների թելադրանքով, փոխառակ-
այն իրենց ներսում փնտրելու: Աշխարհի ապերջանկության մեծագույն պատճառն այս սխա-
լի մեջ է: Մենք երևի թե շատ ավելի ծանոթություն ունենք արտաքին աշխարհի մասին, քան
մեր անձի: Մարդկանց մի մասն ինքն իր հետ օտար ապրելու դժբախտ վիճակին է ենթար-
կել իրեն: Իզուր տեղը չէ, որ դնենս հին աշխարհի փիլիսոփաներից մեկը՝ Սոկրատը, պատ-
գամել է. «Ծանեա գեեզ»:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, բացվող այս նոր տարին մեզ առիթ և հրավեր է,
որ հայենք դեպ մեր ներքին աշխարհը, այնտեղ գտնենք Աստծո պատկերով ու նմանությ-
յամբ ստեղծված մարդու անաղարտ պատկերը, ապա զգեստավորվենք նրանով, քանզի
Աստված խոստացավ՝ հավատով լցված, եույսով ապրող և սիրով գործող մարդուն դարձնել
իր արքայության ժառանգորդը:

Ուտի եկեք հավաքելով, եույսով և սիրով ապրենք ու գործենք, որպեսզի այս ժամանա-
կավոր կյանքում ապրելով կարողանանք ծանրացնել անժամանակի նժարը, որպեսզի
Քրիստոս մեզ էլ դիմի՝ ասելով. «Եվ ես խոստանում եմ ձեզ, ինչպես և իմ Հայրը ինձ խոս-
տացավ փայլու արքայությունը» (Ղուկ. ԻԲ 29):

Շնորհք, սէր և խաղաղություն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենահասնաւ տմէն:

Տ. ԿՏՐԻՃ ՔԱՆՄԵԼԱ ԴԵՎԵՃՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 հունվարի 2005 թ.)

«Ցանուն Տօր եւ Որդոյ եւ Տոգոյն Սրբոյ. ամէն»:

Երբ Զրիստոնեոյան մեծագոյն հալածիչը՝ Սողոս Տարսոնացին, ճանապարհ ընկավ ղևայի Դամասկոս, ողջ աշխարհը ստրկութեան մեջ էր: Կար մի պետություն՝ Հռոմը: Այն ուներ մեկ տիրակալ՝ Տիբերիոս կայսրը:

Ամենուր կարգուկանոն էր տիրում, քանի որ ամենքը Հռոմի խստագոյն օրենքի տակ էին գտնվում: Ամենուրեք՝ և՛ պետությունը, և՛ հասարակությունը կայուն էին հարյուրապետների հսկողության պարճառով: Սակայն այդ ամենի հետ մեկտեղ ԱՆ-արդարություն էր տիրում, ճնշման և հալածանքների էին ենթարկվում նրանք, ովքեր կայսրի կողմնակիցները չէին: Կյանքը՝ ծանր ու դժվարին, ավարտվում էր մահվամբ:

Կային մարսավորներ, որ արքերից հավաքում էին բերքը և աղքատներից խլում իրենց վաստակածը՝ կայսրի յեզեռները կերակրելու և գանձարանը լցնելու համար, որտեղից կայսրն առաքուրեն պարգևատրում էր ընտրյալներին: Կային ստրկատերեր, ովքեր մասնակիցներ էին ընտրում մարտախաղերի համար: Իսկ դահիճները ոչնչացնում էին նրանց, ում կայսրը մահվան էր դատապարտում: Արդ՝ կայսրին ծառայելուց ավելի ինչ նպատակ կարող էր մարդու կյանքն ունենալ:

Հայածվում էին մարդիկ, ովքեր համարձակվում էին այլ կերպ մտածել: Ստրկացվում էին նրանք, ովքեր Հռոմից չէին սերում, անտեսվում էին անձինք, ովքեր տարբեր էին կերպարանքով, լեզվով և մշակույթով: Սակայն ամենից առավել ամենուր արժեզրկվել էր մարդկային կյանքը: Ինչ արժեք ուներ մարդու կյանքը իշխանավորի համար բազմամարդ այդ աշխարհում: Եվ կյանքն ավարտվում էր մահվամբ:

Եվ հանկարծ ողջ աշխարհով մեկ Լույս ծագեց. սուրբ կույս Մարիամից Բերդեհեմում ծնված Գալիլիացին, Հորդանան գետում աղավաակերպ Սուրբ Հոգու վկայության միջոցով, իբրև Աստծու Միածին Որդի հայտնվեց աշխարհին՝ ասելով. «Գնացէ՛ք, տվե՛ք կայսրինը՝ կայսեր, և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. ԻԲ 21):

Գալիլիայից հնչող ձայնը, որ հակասում էր կայսրին, խոսում էր նոր Թագավորության մասին, ուր յուրաքանչյուր մարդ կարող էր գլուխը բարձր քայլել և խոնարհվել միայն Աստծուն: Այդ ձայնը մարդուն առաջարկեց կյանքի մի նոր արահետ և նոր ապագա: «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգևածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28): Չայնն ասաց, «Որովհետև մարդու Որդին եկավ փրկելու կորածը» (Մատթ. ԺԸ 11): «Միրի բո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. ԻԲ 39): «Միրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիմոռներին, բարություն արեք ձեզ ատրողներին» (Մատթ. Ե 44): Նաև ասաց «Մի՛ վախեցիր, սյլ միայն հավատա՛» (Մարկ. Ե 36): Եվ այս Ավետարանը Նա

առաքեց աշխարհի բոլոր ծայրերը: Եվ պատմության մեջ առաջին անգամ կյանքը չափարվեց մահվամբ:

Ի Քրիստոս՝ կլինեի հեղմահու կյանք:

Այսպիսով՝ ողջ աշխարհը ողողվեց Լույսով, և մարդիկ, որ ասլորում էին խավարի մեջ, սարսափեցին: Եվ նրանք փորձեցին բողարկել ճշմարտությունը, որպեսզի մարդկությունը շարունակի հավատալ, որ փրկությունն այս խավար աշխարհի փրկակարների ձեռքում է:

Եվ չնայած խավարում բնակվող մարդիկ զայրացած էին և փորձում էին վերադնել այդ Լույսը, շարժվեցին մարդիկ ընդունեցին, որ ճշմարտությունն ազատում է մարդուն, ինչպես կապարվեց Նայաստանի մեր ժողովրդի կյանքում: Եվ ծայրն ասաց բոլոր ժողովուրդներին, ինչպես նաև մեր հայ ազգի զավակներին, «Թեպետև մի ժամանակ խավար էիք, հիմա լույս եք ի Տեր, ընթացե՛ք ինչպես լուսո որդիներ» (Եփես. Ե 8):

Դամասկոսի ճանապարհին Լույսը պայծառ էր շողում: Սակայն հեպո Պողոս Տարսուսացին՝ Քրիստոսի առաքյալը, նույնպես սարսափեց: Նա վախենում էր, որ ասլագայի կայսրեր ու մարգարեներ մի օր կհամոզեն մարդկանց, որ մարդ արարածը ոչ այլ ինչ է, քան իրենց ծառան, և մարդիկ մի բոս ալլուրի համար կհրաժարվեն Աստուծոց և այլևս չեն ընթանա լույսի ու ազատության մեջ: Նա մտածող էր, որ մի օր ողջ աշխարհում նորից խավար կտիրի, և մարդիկ կմտածեն միմյան, թե ինչ պիտի ուրեն, ինչ պիտի խմեն, թե ինչ պիտի կրեն, գնեն և վաճառեն և կենտեն նոր կայսրերի և սուր մարգարեների: Օրերից մի օր մարդիկ այլևս չեն փորձի ձմեռվա գիշերային երկնքում տեսնել Արևելքի աստղը, և Լույս երբեք չի լինի խավարում: Կզա ժամանակ, երբ մարդիկ կրկին կսկսեն հավատալ, որ ծանր, ողբերգություններով լի կյանքն ավարտվում է մահվամբ:

Մարդու Որդու առաքյալը՝ Պողոսը, խոսելով իր թեստոնիկեցի եղբայրների հետ, արտասանեց այն խոսքերը, որոնք մենք դեռ երկար կհիշենք, «Եղբայրներ, չեմ ուզում, որ անգեպ լինեք ննջեցյալների մասին, որպեսզի չտխրեք, ինչպես ուրիշները, որոնք հույս չունեն: Եթե հավատում եմք, թե Հիսուս մեռավ և հարություն առավ, այդպես էլ Աստված, Հիսուսի միջոցով, ննջեցյալներին նոր կյանքի պիտի բերի Նրա հետ» (Ա Թեսալ. Դ 12-13):

Միեւնիներ, երեկ հրեշտակաց դասերը ավելեցին ողջ աշխարհին, մեզ բոլորիս՝ գինվորայ Եկեղեցուն, որ Քրիստոս «Ծնաւ և յայտնեցաւ», որ Լույսը լուսավորեց խավարը: Այսօր՝ մեռելոց հիշատակի օրը, մեր պարտականությունն է՝ տրախությամբ հայտնել այդ բարի ավելիսը հաղթական Եկեղեցուն, որ սպասում է Նրա վերադարձին, ի Քրիստոս ննջող մեր սիրելիներին, հարազատներին, բոլոր նրանց, ովքեր ապրել են մեզանից առաջ, ուսուցանել են մեզ և դավանել են Առաքելական մեր Մայր Եկեղեցու սուրբ հավատը:

Մենք նաև պարտականություն ունենք աղոթելու մեր ննջեցյալների համար: Դա Քրիստոսի Երկրորդ գալստյանը հավատալու մեր դավանությունն է և մեր հավատն ու հույսը մեզայների հարության: Երբ ազդրում ենք ննջեցյալների համար, ինքներս մեզ հիշեցնում ենք, որ այս կյանքը ժամանակավոր է և անցողիկ, հետևաբար, լցվում ենք հույսով, քանզի հավատում ենք, որ մահը ևս այդպիսին է: Եվ քանի որ Աստված մեր հանդեպ առավելաբար ողորմած է, քան արդար դատավոր, աղոթում ենք, հավատում ենք և հույսն ունենք հավերժական կյանքի:

Ինչպես սահմանել են մեր Եկեղեցու հայրերը, և ինչպես սովորեցնում է մեզ մեր ավանդությունը, այսօր, երբ գնում ենք գերեզմանապոսներ՝ այցելելու համար մեզանից հեռացած մեր հարազատներին ու սիրելիներին, եկե՛ք աղոթքով ու վեհությամբ հարգենք նրանց հիշատակը, հիշենք նրանց կյանքն ու այն դասերը, որ սովորել ենք նրանցից, հիշենք նրանց կյանքի նպատակն ու ցանկությունները, հիշենք նրանց բարի գործերն ու սերը մեր հանդես և, ողջունելով նրանց անուն առ անուն, ավերենք նրանց երկնքից ճառագող ուրախ, սքանչելի, օրհնյալ խոսքերով:

Քրիստոս Ծնաւ ևւ Յայտնեցաւ, Օրհնեայ է Յայտնութիւնը Քրիստոսի:

«Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը՝ ձեզ հետ լինեն, ույժն և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն» (Բ Կորնթ. ԺԳ. 13):

Տ. ՀՈՎԱԿԻՄ ԱՔԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 հունվարի 2005 թ.)

«Այսուհետև չես ծառայ, այլ որդի եթե որդի ես ժառանգ Աստուծոյ»:

«Այլևս ծառայ չես, այլ՝ որդի ես եթե որդի ես, ուստի ե՛ս ժառանգ Աստուծո»:

(Գաղ. Դ. 7)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Այս օրերին Ամանորի մեր խնդությունը, բերկրանքն ու ուրախությունը կրկնապարկվում է, երբ շարունակաբար հաղորդ ենք դառնում Ս. Ծննդյան և Աստվածահայտության տոններին:

Ահա չորս օրեր են անցել, ինչ մենք, միասնաբար, հետևելով այս լույս կամարների ներքո հնչող ավերմանը, մեր Մայր Եկեղեցու բոլոր խորաններից ի լուր աշխարհի ազդարարում ենք. «Քրիստոս ծնւաւ եւ յայտնեցաւ»:

Աստծո՝ մարդկանց հանդեպ ունեցած հոգածության ու սիրո մեծագույն դրսևորում էր Նրա քայլը, Իր Միածին Որդու առաքումն աշխարհ՝ մեկընդմիջար ազատագրելով մեզ Աստծո հետ մեր հարաբերություններում խոչընդոտ հանդիսացող բոլոր տեսակի մեղքերից ու կապանքներից:

Այս եղելության հավաքական գիտակցության դրսևորման մի փաստ է և այսօր մեր այսօրնեղ գտնվելը: Նույն այս պատճառով է, որ Ամանորի այս օրերին հազարավոր հայորդիներ իրենց քայլերն ուղղում են դեպի Մայր եկեղեցի՝ այն վստահությամբ ու գիտակցությամբ, որ Աստված սիրում է մեզ, որ Աստված մշտապես օրհնություն ու երջանկություն է պարգևում մեզ, որ Աստված մշտանորոգ բարօրության պարգևատրու է, ընտանեկան երջանկության և հաջողության աղբյուր:

Սիրելի հավաքաքյաններ,

Յուրաքանչյուր քրիստոնյայի անհատական, ընտանեկան, հասարակական և ազգային կյանքը դարերով սնած, խնամած, հույս և երջանկություն պարգևած մարդեղության այս խորհուրդն այսօր ես գորացնում է մեզ՝ այս անգամ առաքելական խոսքով. «Այլևս ծառայ չես, այլ՝ որդի ես, եթե որդի ես, ապա ե՛ս ժառանգ Աստուծո»:

Պողոս առաքյալի այս խոսքը մեր առջև բացում է վաղ քրիստոնեական համայնքների կյանքից ուսանելի մի դրվագ:

Ինչ դեր ունի Հին Կտակարանի օրենքը Քրիստոսի լույս հավաքքի խորհրդի ներքո: Այս հարցի շուրջ փարակարծություններ կային, որոնց լուծումն է առաջադրում սիրո ավե-

լրարանը բարոգող առաքյալը. քրիստոնյաներն Աստծո որդիներն են ու ժառանգները և ոչ ծառաներ:

Աստծո Որդին դարձավ մարդու Որդի՝ մեզ իրեն ժառանգակից դարձնելու: Քրիստոսի միջոցով մեր հարաբերությունը Աստծո հետ դարձավ Հոր և Որդու հարաբերություն: Քրիստոսով հավատացյալները ձեռք են բերել որակական մի նոր հատկություն ու զարմում են մի նոր վիճակում: Ահա այս մասին է հայարարոեն ու վստահությամբ քարոզում Պողոս առաքյալը:

Հավատարյով առաքյալի խոսքին՝ կցանկանայի ավելացնել, որ մեր հանդեպ ունեցած Աստծո հարաբերության այս որակը անհրաժեշտ պայման է մեր փրկության ողջ ճանապարհին:

Սա մեր փրկության ուղին է ոչ թե օրենքով, այլ որդեգրության շնորհով: Իսկ Հովհաննես Ավետարանչի խոսքերով այս շնորհին արժանանում են նրանք, ովքեր ընդունում են Քրիստոսին: Քանի որ, ըստ ավետարանչի՝ «Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները նրան չընդունեցին: Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծո որդիներ, նրանց, որոնք իր անվանը կհավատան: Նրանք ոչ արյունից, ոչ մարմնի կամքից և ոչ էլ մարդու կամքից, այլ Աստծուց ծնվեցին» (Հով. Ա 11 - 13):

Միևեկի հավատացյալներ,

Որդեգրությունը մեզ համար երկնային Աստվածաբուր պարգև է: Աստծո զավակներ լինելու շնորհը, նույն Հովհաննես Առաքյալի խոսքերով, աստվածային կյանքից մեզ տրված այն բարիքներն ու իշխանությունն են, որոնք մեզ համար իրականություն են դարձել պատմական այն վայրկյանից, երբ լմեր հայրերն իրենց կյանքը փառեցին Քրիստոսի լույս Ավետարանին ու կյանքի պարգևին: Ահա ավելի քան 1700 տարիներ մենք, որպես այս ժառանգության կրողներ, քայլում ենք պատմության մեջ թե՛ մեր հաղթական Արարաբով և թե՛ չարչարանքի Գողգոթայով:

Այնուամենայնիվ, որդեգրության համընդհանուր գիտակցությունն ունենալուց բացի, մենք տակավին անդու աշխարհաւքի կարիք ունենք, որպեսզի այս հավաբքը դառնա մեր յուրաքանչյուրիս համոզումը, կյանքի անջնջելի մասը և մեր գոյության էական հատկանիշը, որ մենք դառնանք ոչ միայն այս ամենի լոկ կրողները, այլև հարստացնողներն ու պաշտպանողները:

Արդիականության ներկա ձեռքբերումների պայմաններում, երբ աստվածապարգև նվաճումների հետ մարդուն մատուցվում են բազում անակնկալներ, որոնցից լավն ու բարին գանազանելը մեծ ճիգերի ու ջանքների արդյունք է, միգուցե այս ամենն իրականացնելը դժվար թվա:

Բայց ընթերցեք Սուրբ Գիրքը:

Աստծո և մեր հարաբերությունները, որպես Հոր և Որդու հարաբերություններ, նաև Հին Կտակարանի պարզամտերից են: Միթե այս ճշմարտության արտահայտությունը չէր այն ուխտը, որ կնքվեց Աբրահամի և Աստծո միջև: Միթե Հոր և Որդու հարաբերությունների պարմություն չէ սուրբգրային պարմների այն շարքը, որոնցով նա ուղղում ու դաստիարակում է մեզ: Օրինակները բազում են: Բայց հիշեք մեկ բան. եթե նույնիսկ մենք եեռացել ենք Աստծուց, Տերը որպես ծնող միշտ սիրում ու սպասում է մեզ:

Տեսեք, թե ինչպիսի գեղեցիկ խոսքերով է արտահայտում Ավետարանիչն այս հարաբերությունը, երբ խոսում է անառակ որդու վերադարձի մասին, երբ նույնիսկ որդին հեռանալուց, օգրաբության մեջ դեղերելուց, իր ունեցվածքը վաճառելուց ու անօրեն կյանքով ապրելուց հետո գոջում և վերադառնում է Հոր մոտ:

Որդեգրության շնորհը մեկ վայրկյանում չի կախելի ձևից բերել: Այն մեր ամբողջ կյանքի վարձարությունն է. որ մեզ թելադրում է անել և գորանալ Քրիստոսով: Սա մեզ մղում է անդրադառնալու Աստծո փառքին:

Տե՛րն է ասում՝ եղի՛ր սուրբ, ինչպես քո երկնավոր Հայրն է սուրբ: Ահավասիկ մեր ուխտի ճանապարհին մի պայման. անձնապես մաքրվելն ու կապարելության հասնելը որպես հիմք և նպատակ այն առաքելության, որ մենք սկսել ենք այս սուրբ վայրից՝ Եկեղեցուց: Եվ այս Մրբությունը ոչ միայն մեզ համար է, այլև մեր մարերիմի, բարեկամի ու շրջապատի:

Սիրելի հայրերի՛ք,

Նոր ենք մտաք գործել 2005 թվական: Այս պահին բոլորս լցված ենք ոգևորությամբ ու խնդությամբ: Որպես գավակներ Աստծո, մենք աղոթում ենք, որ Աստված իմաստություն պարգևի մեզ բոլորիս՝ այս Կրդի ևս խաղաղությամբ և երջանկությամբ անցկացնելու:

Այս պահին լցված գոհունակությամբ նաև մտաբերում եմ մեկ այլ առաքելական խոսք՝ այլաբանորեն մեկնելով, եթե այսօր մենք ընկալում ենք որդի լինելու մեր հանգամանքը, ապա նախ և առաջ մեր հավատարմությունը պետք է սկսվի մեր ընտանեկան սուրբ հուրկերից:

Խոսելով Աստծո հանդեպ սիրտ մասին, Հովաննես առաքյալն ասում է, որ ի՞նչպես կարող ես սիրել Աստծուն, որին չես տեսնում, եթե չես սիրում դիմացինիդ՝ քո ընկերոջն ու բարեկամին: Այսօր մենք ևս չենք կարող վստահեցնել, որ սիրում ենք Աստծուն, եթե չսիրենք մեր ծնողներին: Ուրեմն եկեք հիշենք պատվիրանը, որ ասում է՝ պատվիր քո հորն ու մորը:

Ընտանիք է նաև մեր Սուրբ Եկեղեցին, որ մեզ համար ծնող է դարձել: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ուր միշտ մեր քայլերն ենք ուղղում հայցելու այն բլուր օրհնությունը, որ բխում է այս սուրբ վայրից և Հայոց Հայրապետի աղոթքներից:

Ընտանիք է նաև մեր սուրբ Հայրենիքը՝ Հայաստան աշխարհը, որին պետք է սիրել ու ծառայել անաչառ ու անկեղծ նվիրումով:

Ուրեմն, եկեք վերանորոգենք մեր ուխտը և մեր հավատարմությունը, որպես գավակներ մեր Մայր Եկեղեցու, որ որն է ուժ չկարողանա հեռացնել ու վանել մեզ մեր սուրբ հավաքից, մեր Սուրբ Եկեղեցուց ու հայրենի սիրուց:

Այս մտածումներով ու խոհերով աղոթենք ու հայցենք Տիրոջ օրհնությունը, որպեսզի մեզ ուժ պարգևի՝ օրհնությամբ շարունակելու մեր ընթացքը, որպես արժանի գավակներ ու որդեգիրները մեր երկնավոր Հոր, որ «օրհնեալ է ընդ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն ալժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն»:

**Տ. ՄՈՒՇԵՂ ԱՔԵՂԱ ԲԱԲԱՅԱՆԻ ԶԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՆԻՍՈՒՍԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(13 հունվարի 2005 թ.)

*«Է՛ս իբրև լցուն սաուրք ութ թլփալուկ զնա,
և կոչեցաւ ւսնուն ևորա Յիսուս, որ կոչեցեալ
էր ի Նրեշարակէն»:*

(Ղուկ. Բ 21)

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոցոյն Սրբոյ. Ամէն»:

Միրելի հավաքացյալներ,

Ս. Եննդան և Աստվածահայրնության պարզեաւ հոգևոր ուրախությունն ու ցնծությունը շարունակվում է, քանի որ ութ օր առաջ ծնված մանուկը, Ում հովիվները ճանաչեցին որպէս Օծյալ Տիրոջ, Ում հրեշտակները փառաբանեցին որպէս Փրկչի և Ում մոգերը երկրպագեցին որպէս թագավորի, անուն ստացավ:

Այսօր մեր Նորածին Տիրոջ անվանակոչության օրն է, երբ, ըստ մովսիսական օրենքի, «ութ օրերը լրացան, և Նա թլփալվեց, Նրա անունը Նիսուս դրվեց, ինչպէս հրեշտակի կողմից կոչվել էր...» (Ղուկ. Բ 21): Նախանշական է, որ միայն այս մեկ քաղն է ընտրված որպէս ավերարանական ընթերցում, որն էլ մեր բնաբանն է: Սակայն ով լսելու ականջ ունի, այս քիչն էլ բավական է՝ հասկանալու այն ամենը, ինչ ամփոփված է ավերարանական այս քրդում:

Այսօր անունների հեք կապված սովորությունները և նրանցում ամփոփված իմաստները շար բանով են փարբերվում ենու՞մ ընդունված կարգից: Այսօր անունը միայն միջոց է, որով կարող ենք ինչ-որ մեկին զանազանել իր նման շար-շարերից, իսկ ենու՞մ անունը ոչ միայն զանազանության միջոց էր, այլ նաև արքահայտում էր այն կրող անձին բնորոշ հատկությունները, առաքելությունը և բնավորության գծերը: Նուց՝ մարդկության պատմության հենց առաջին օրերից տրվում էին անուններ, որոնք ունեին որոշակի իմաստներ: Օրինակ՝ առաջին մարդու անունը՝ Ադամ, նշանակում է «մարդ կարմիր հողից», այսինքն՝ կավից, իսկ Եվա՝ «կյանք», որովհետև նա մայր դարձավ բոլոր ապրողների համար, և նմանօրինակ իմաստներ ունեն գրեթե բոլոր աստվածաշնչյան անունները:

Մեր Նորածին Տեղն էլ, որպէս մարդ, ունեցավ մարդկային անուն: Տիրոջ անունը դրվեց Նիսուս, որ նշանակում է Փրկիչ, և հրեական Նեսու անվան հունարեն համապատասխան ձևն է, որ «Աստված Փրկիչ» կամ «Աստծո Փրկություն» իմաստներն ունի, այսինքն՝ Նիսուս նշանակում է մեր փրկությունը: Նա մեր Փրկիչն է:

Մարթոսի Ավերարանն սկսվում է «Գիրք ծննդյան Նիսուսի Զրիստոսի» խոսքերով: Նիսուս անվանը մի նոր անուն է ավելանում՝ Զրիստոս, որ հունարեն նշանակում է Օծյալ և

Մեր կանգնում որևէ մեկի անունը տալ, կրել կամ օգտագործել՝ մեծ պատասխանա-
վորություն է ենթադրում: Առավել ևս մեր՝ քրիստոնյաներիս պարագային, որ Հիսուս-Քրիս-

փոսի անունն ենք կրում, այդ պատասխանատվությունն էլ ավելի մեծ է: Մակայն արդյոք գիտակցում ենք այդ մեծ շնորհի ու պատվի արժեքը: Արդյոք ունենք պատասխանատվության այն մեծ զգացումը և գիտակցությունը, որ մեզ վրա ենք վերցրել որոշակի պարտականություններ:

Չնայելով մեր հանցանքներին, Աստված մեզ թույլ է տվել այդ անունն օգտագործել և այդ անվանն ապավինել, որն ապացույցն է հայրական այն մեծ սիրո, որ Նա տաժում է մեր՝ Իր արարածների հանդեպ, այն նշանն է հայրական այն հոգաբարության, որով Նա շրջապարեւ է մեզ: Ուրեմն մենք պարտավոր ենք ու պատասխանատվություն ունենք զգուշորեն և նրկյաղածությամբ կրելու այդ անունը, այնպես որ՝ մեզ վնաս չլինի, այնպես, որ չլինի, թե գուր քեզն Աստծո անունը փանք:

Մեր կապը Տիսուսի հետ սկսվում է մեր մկրտության պահից, երբ մկրտվելով Քրիստոս ենք զգենում: Մկրտությունից հետո մեր Փրկչի անունը և Նրա նշանը՝ խաչը, մեզ վրա է լինում, և մենք կարող ենք այն օգտագործել ինչպես մեր սեփականը: Աստված այս Մուրբ անունով շարքան է թույլ տվել մեզ կատարելու, հաղթելու անբասանելի թշնամուն, հաղթելու մահին և խոսելու Իր՝ մեր Երկնավոր Հոր հետ: Տիսուս Քրիստոսի անունն անձնավորում է հենց Իրեն: Ասել կամ որևէ բան կատարել Նրա անունով, նշանակում է, որ սուս կամ կատարել է Ինքը՝ Տիսուս, և դա մեծ պատասխանատվություն է: Իրոք, Տիսուս Քրիստոսի անունն իշխանություն ունի մեծ փոփոխություններ իրականացնելու: Իր անվան այդ յուրահատկությունը շեշտում է հենց Ինքը՝ Տիսուս, երբ Իր աշակերտներին ասում է, թե «ինչ Իմ անունով Իմ Հորից ուզեք, պիտի տա ձեզ» (Հովհ. ԺԶ 24): Ավետարաններում հաճախ ենք հանդիպում Նրա անվամբ կատարված հրաշագործությունների: Տիսուսի համբարձումից հետո առաքյալները Նրա անվամբ էին բժշկություններ կատարում, Նրա անվամբ էին դնել հալածում և Նրա անվանն էին ապավինում հեթանոս աշխարհներում Ավետարանը քարոզելիս:

Նրա համար էլ մենք պարտավոր ենք արժեքավորել այն, զնահապել և պահպանել անապական ու մաքուր: Մեր երկրորդ պարտականությունն է ուրեմն, ինչպես հստակորեն պարզվիլված է մեզ Տասնաբանյալում, Տիրոջ անունը չհարաշահել, որովհետև «Տերը արդար չի համարում նրան, ով Իր անունը գուր քեզն է արդասանում» (Ելից Ի 7)՝ սրանով մեկ անգամ ևս ցույց տալով, որ սուրբ է Իր անունը և մեզանից համապատասխան վերաբերմունք է պահանջվում:

Տիսուս, Ով ասում է՝ Ես և Հայրս մի ենք, մեզ աղոթել սովորեցնելիս պարզվիրում է, որ ասենք, «Հայր մեր, որ նրկնրում ես, սուրբ թող լինի Քո անունը» (Մաթթ. Զ 9): Մի՞թե մենք, ուսուցանված և պարզվիրան ստացած լինելով, իրավունք ունենք Երկնավոր մեր Հոր Մուրբ անունը անարգել: Մի՞թե Նրան, Ով չխնայեց Իր Միածին Որդուն մեր փրկության համար, կարող ենք փոխել ուրիշների հետ: Արդյոք չպիտի միաձայնենք Կորնթի որդիներին և ասենք, «Մի՞թե մոռացել ենք մենք մեր Աստծո անունը կամ ձեռք ենք մեկնել օտար աստվածների, չէ՞ որ Աստված դա կիմանա, բանի որ Նա քննում է գաղտնիքները մեր սրտի» (Մաղմ. ԽԳ 21-22): Նրանք քաջ գիտակցում էին, որ Աստված նախանձախնդիր է Իր անվան սրբությանը, ուստի չէին համարձակվում իրենց շուրթերը պղծել այլ աստվածների անուններով: Այսպեղից էլ մեր երրորդ պարտականությունը՝ սուրբ պահել Տիրոջ անունը:

Մենք նույնպես անուններ ունենք և մեր աչքի բիբի նման հոգ ենք տանում նրանց մասին: Թույլ չենք կուպիս. որ այն անպարզվեն. արտոբացեն. չարախոսեն ու վարկաբեկեն: Որքան առավել ապա Աստված. Ով մեծ է մեզանից: Մի՞թե Նա անգարբեր պարք է մնալ, թե ինչպես են ժարդիկ վերաբերվում Իր անվան հետ: Մի՞թե թույլատրելի է, որ մենք, որ հոգ ենք տանում մեր անվան համար, թեթևամտությամբ ու անհոգությամբ վարվենք այդպիսով չարժեքով Տիրոջ բարկությունը:

Ե՛րեսք քրիստոնյա ենք կոչվում Նրա անունով, Նրան աշակերտած լինելով, ինչպես առաջին անգամ քրիստոնյաներ կոչվեցին Աստվածի հավատացյալները (հմմտ. Գործք ԺԱ 26): Նա, ում երկյուղած երկպագում են հրեշտակները և ումից սարսափում են դևերը, միայն մեզ է թույլ տվել կրելու Իր անունը: Հիսուս Քրիստոս՝ մեր Օծյալ Փրկիչը միայն մեզ է շնորհ տվել Իրենը լինելու: Թերանալով քրիստոնյայի մեր պարտականություններում՝ չարժենք Տիրոջ բարկությունը:

Քիչ հեքո բոլորս, որ Հիսուս Քրիստոսի անունն ենք կրում, ալիքի մոտենանք և հաղորդվենք Նրա կենարար Մարմնին ու Արյանը: Կրկնելով ծածուկ աղոթքը, որ նաև մկրտության ժամանակ է ընթերցվում, հայցենք Տիրոջից ու ասենք.

Ո՛վ Տեր Աստված մեր, որ մեզ՝ Հո Միածին Որդու անունով քրիստոնյաներ կոչեցիր, որ մեղքերի թողության համար հոգևոր ավագանով մկրտություն շնորհեցիր և արժանի դարձրիր Հո Միածնի Սուրբ Մարմնին ու Արյանը հաղորդվելու, այժմ աղաչում եմ քեզ, Տե՛ր, արժանի արա մեզ այս սուրբ խորհուրդը՝ մեղքերի թողության համար ընդունել Հեզ Որդուդ և Սուրբ Հոգուդ հետ ու գոհությամբ փառավորել, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

**Տ. ՓԱՌԷՆ ԵՊԻՄԿՈՊՈՍ ԱԲԵՏԻՔԵԱՆԻ ՔԱՐՈԶՐ՝
ԽՕՍՈՒՄԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՈՒՄԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(16 Յունուարի 2005 թ.)

*«Ուրախ լերուք երկիրք եւ ցեծասցէ երկիր,
զոյնացին լերիք գցնծութիւն եւ բլուրք զար-
դարութիւն, զի ողորմեցաւ Աստուած ժողո-
վըրդեան իւրում, եւ գխոնարիս ժողովրդեան
իւրոյ մխիթարեաց»:*

(Եսայի Խմբ. 13)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը որոշած է ի մի բերել մեզ բոլորս այսպեղ, այս Սուրբ Տաճարին, Հայաստանեայց Եկեղեցւոյ Սրբութիւն Սրբոցին մէջ, միասնաբար վերլիշելու, խոկալու, ոգեկոչելու եւ խնդրելու հոգւոց խաղաղութիւն, զոհերուն համար Հնդկական Ովկիանոսի Ձունամիին, որ պատահեցաւ 2004 թուականի դեկտեմբեր 26-ին, ինչպէս նաեւ աղօթելու բարօրութեան եւ վերականգնման համար անոնց, որոնք աղէտին ճողոպրեցան:

Դժբախտութեան ծաւալը եւ տարողութիւնը մարդ արարածի չափելու, նկարագրելու եւ արձանագրելու կարողութենէն գերիվեր է, նոյնիսկ համայնապարկերը ներընդգրկելու ընդունակութեամբ օժտուած նկարչական գործիքներ. ծախողեցան փորձաքննութիւնը, որուն ենթարկուեցան: Բայց աւելի քան երկրի աւերումն ու կործանումը, մարդու հոգին է տուժած, ձեռողներու կամ զաւակներու կորուստին եւ սարսափի յիշողութեան պալտճառաւ, որոնք ամէնքը անջնջելիօրէն արձանագրուած են չափացած եւ գգայուն մաշկին վրայ աեռոր սըր-պին:

Ողբալէս ժողովուրդ մը որ իր կարգին վերապրած է բազում արհաւիրքներ եւ ճաշակած շատ մը կործանումներու դառնութիւնք իր պատմութեան ընթացքին, հայ ժողովուրդը ձեռք է բերած հակումը եւ խառնուածքը, կիսելու սուզը եւ կորուստը բոլոր այն ժողովուրդներուն, որոնք Ձունամի բնական աղէտի հետեւանքներէն ազդուած են: Վերջապէս, շատ հեռու անցեալի մը մէջ չէր, երբ մեր ժողովուրդը դիմագրաւեց զրեթէ ամբողջական անհիւրում եւ բնաջնջում, Օսմանեան Թուրքերու ձեռքով, կամ փասնեօթ տարիները այնքան երկար չեն, որպէսզի ժողովուրդ մը իր յիշողութեան գիտակցութենէն ջնջէ արհաւիրքը Երկրաշարժին, որ զրեթէ հողին հաւասարեցուց ամբողջ Հիւսիսային Հայաստանը: Մեր երկիրը տակաւին կը ճաշակէ հետեւանքները ցնցումին եւ տակնուվրայութեան, որ տեղի ունեցաւ իր տարածքին վրայ: Ծաօք, երկար պիտի տեւէ անոր ամբողջական վերականգնումը:

Մեր պատմութեան, ուստի ձեռք բերած մեր նկարագրի գիծին պատճառաւ, որ մեզ ըրած է օժտուած ուրիշներու հանդէպ համակրանքով, մենք մեղմօրէն կը մատուցենք մեր ուսը, թէ՛ որպէս յենարան եւ թէ՛ որպէս փափուկ ապաստան, հանգչեցնելու համար գլուխը

և արդաստուծու բոլոր անոնց, որոնք կարիքն ունին ողբալու: Փորձում եմ վարահ կերպով, կ'երկարենք ամբօրէն միւր ձեռքը բարեկամաբար, հաւաստելով անոնց, որոնք փութում են, թէ վերականգնումը թեւ դանդաղ, բայց անպայման եւ ապահովաբար փնդի պիտի ունենայ: Եւ մենք ամենայն բացարկութեամբ կը բանանք մեր գիրկը հայրական եւ եղբայրական գրկախառնումի մը համար, անոնց, որոնք գրկուած են այդ գողտրիկ եւ գորովալի փորձառութենէն, սիրելիներու կորստեան կամ մահուան պարտաւորութիւնէն:

Անկախ այս ոգեկան սրտակցութեան արտայայտութիւններէն, անոնց հանդէպ, որոնք կը տառապին, մենք նաեւ կը նշենք մեզմ բաւարարութեամբ իրողութիւնը թէ, հաւստակ մեր երկրին մէջ փրկող պայմաններուն, Հայաստանի Կառավարութիւնը որոշած է իր լուծման ձգել յարաճուն հանգանակութեան պնակին մէջ, գոր համաշխարհային ընկերութիւնը հովանաւորած եւ կարգաւորած է, ի նպաստ վերադարձ ժողովուրդի եւ ազգութեանց, որոնք վաճառուած եւ կարգաւորուած է, ի նպաստ վերադարձ ժողովուրդի եւ ազգութեանց, որոնք փութած են Հնդկական Ովկիանոսի Չունամին: Մենք նաեւ կ'սրճանագրենք մասնաւոր հպարտութեամբ այն իրողութիւնը, թէ մեր ժողովուրդի զաւակները, որոնք կ'ապրին աշխարհով մէկ զանազան վայրերու, առաւել ունեւոր ընկերութիւններու մէջ, ցուցաբերած են հոգեկան առաւելածեղութիւն, մասնակցելով իրենց կարողութեանց չափով, աշխարհասփիտ այն ջանքերուն, որոնք նախաձեռնուած են կառավարութեանց եւ միջազգային նպաստաւորող կազմակերպութեանց կողմէ:

Չունամին, ինչպէս բոլոր բնական աղետները, կը յարուցեն բազում հարցադրումներ, թէ աստուածաբանական, թէ՛ երկրաբանական, թէ՛ բնակլիմայական եւ թէ՛ բնապահպանական: Այս պարահարներուն պարճառաւ, մարդուն հաւաքը Աստուծոյ եւ իր ստեղծագործութեան բարի ըլլալուն նկատմամբ, կրնայ խախտիլ: Մենք կարող ենք մեր ստեղծագործութեան արժանիք, դեցերելու ինչպէս եւ կամի, առանց յուսալու որ կը հասնինք տրամաբանական, բայց նաեւ հաւաքի վրայ խաբսխուած, բացարկութեան: Բայց անկախ այն բանէն թէ ինչ կ'ըլլան պարտախանները, առանց վարանելու նշենք, թէ բնական աղետները Աստուծոյ պարտաւորութիւն չեն: Որովհետեւ մենք կը հաւատանք Աստուծոյ եւ բարիի համագործակցութեան, Աստուծոյ բնածին բարութեան, ինչպէս նաեւ մարդուն հետ Աստուծոյ կնքած ուխտի, երբեք չպարտել մարդը դարձեալ քրիստոնէական կամ այլ բնական աղետով: Այլ կողմէ դիտուած, մենք մեր ամբողջական հաւանութիւնը կուտանք այն տեսութեան, առաջադրուած իմաստաստէր Էմմանուէլ Քանդի կողմէ, թէ մարդը դաս կ'առնէ, պէտք է դաս առնէ իր յիմարտութենէն: Վերջ ի վերջոյ, իմացականութիւնը եւ իմաստութիւնը Աստուծոյ կողմէ մարդ էակին շնորհուած մեծագոյն փութութիւններն են: Մարդուն հնարամտութիւնը, դիմագրաւելու իր միջավայրին ստեղծած բոլոր խնդիրները, Աստուծոյ պարգեւն է մարդուն, ինչպէս նաեւ է միաժամանակ, պարտականութիւն եւ իրախանգ:

«Ձի ամենայն փութք բարիք եւ ամենայն պարգեւ կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի Քն, որ եւ Հայր լուսոյ...» այն գովաբանութիւնն է գոր մենք կը գտնենք Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Պարտապահին մէջ, որ այսօր կուգայ դարձեալ յուշելու մեզի, թէ մարդը աշխարհի մէջ, Աստուծոյ բարին իրագործելու գործիքն է: Մենք ենք որ կը կիրարկենք եւ կ'իրագործենք Աստուծոյ նպատակները այսօր, այս աշխարհի վրայ: Եթէ մեր եղբայրը կարիքի մէջ է, անկախ անոր կրօնական համոզումներէն, կարեկցութեան ալիքը որ կը ծա-

լալի մեր սրտերուն մէջ, կը ձեւափոխուի հոգածու խնամքի, սաղարումի կերպին փակ, փնսակի, գոմարի եւ ծառայութեան ձեւերով:

Ննդկական Ովկիանոսի Ձունամին, հակառակ այն իրողութեան, որ ան անսահման փարողութեան աղէտ մըն էր, ի լոյս աշխարհ բերաւ մարդուն մէջ, նոյնքան անսահման կամեցողութիւն մը, ըլլալու իր եղբօր հանդէպ հոգածու եւ պահապան: Անոր սաղար կանգնիլ, փրկել գայն յաւելեալ աւերածութենէ եւ փառապանքէ, օգնել անոր բուժելու իր վէրքերը, վերակառուցել անոր խորփակուած կեանքն ու բնակարանը եւ փրամաղել անոր միջոցները պարտաստուելու, կանխաբանելու եւ խափանելու համար յաւելեալ կործանումներ, փեղադրելով Ձունամիի զգուշացման յառաջանկալ համակարգ, եղաւ արծազանքը մարդկութեան:

«Ուրախ լերուք երկինք եւ ցնծացէ երկիր, գոչեսցեն լեռինք գցնծութիւն եւ բլուրք զարդարութիւն, զի ողորմեցաւ Աստուած ժողովրդեան Իւրում, եւ զխոնարհս ժողովրդեան Իւրոյ մխիթարեաց»: Այս է Եսայի մարգարէի օրհներգութիւնն ու խոսքումը մեզի:

Թող Տէրը օրհներգոյի մարդուն փութած Իր բազում պարգևներուն համար:

Թող Տէրը օրհներգոյի Իր մարդը ընտրած ըլլալուն համար, որպէս Իր գործակալարը, մարդոց միջեւ բարի կամեցողութիւն հաստատելու նպատակով:

Թող Տէրը օրհներգոյի Իր գթասրտութեան, Իր ողորմածութեան եւ Իր հոգածութեան համար անոնց հանդէպ որոնք կը փառապին Ննդկական Ովկիանոսի Ձունամիի հետեւանքներուն պարճառաւ:

Թող Տէրը օրհներգոյի Իր յաւիտենական հոգածութեան համար Իր ծառաներու հոգիններուն հանդէպ, որոնք մահացան Ննդկական Ովկիանոսի վայրագ Ձունամիին պարճառաւ:

Եւ թող Տէրը օրհներգոյի Իր մշտնջենական բարութեան համար, յաւիտենա յաւիտենից: Ամեն:

Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՄԱՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԵՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(23 հունվարի 2005 թ.)

Սիրելի եղբայրներ, այսօր ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնավոր փնտրիներով մեր Պապարագի սրբազան աղադողության ընթացքին կատարելու ենք հոգեհանգստյան արարողություն՝ ի հանգիստ 1990 թ. Բաքվում գոհված հայերի հոգիներին, և ահա նախախնամական է, որ մեր Հայրերի իմաստուն փնտրիներով մտրեգրային այսօրվա ընթերցվածում Եսայի մարգարեի շրթներով փնտրիներով մտրեգրային այսօրվա ընթերցվածում Եսայի մարգարեի շրթներով Տիրոջն ուղղված խոսքում ասվում է. «Դու ես մեր Աստվածը, Դու ես մեր Տերը: Ոչ Արքայա-մը, ոչ Իսահակը չհասկացան ու չճանաչեցին մեզ, այլ Դու, Դու միայն ճանաչեցիր մեզ և կարող ես փրկել մեզ բոլոր փեսակի փորձություններից, քանզի Զո անունն է մեզ վրա»:

Քանի՜ քանի անգամներ մեր ժողովուրդը որպես հավաքականություն, այլևս հոգեկենտրոն և հուսախաբ լինելով մարդկանց շարքերում Աստծուն փնտրելուց, վերստին դարձել է դեպի ճշմարիտ աստվածաճառագողություն, վերստին դարձել է դեպի Աստված և իր հոգսերը, իր ցավերը, իր տառապանքներն ու ռեպրեզիտությունները պարմել Նրան՝ վերստին հաստատելու, որ Աստված է իր Տերը: Ոչ ոք, նաև նրանք, ովքեր որ սրբեղծեցին ազգերի կարծնցյալ եղբայրության ներքո մի հսկա բռնապետություն, ի գործու չէին ազգերի և ժողովուրդների միջև առաջացնել եղբայրության, բարեկամության իրական համագործակցության ոգի:

Ահա այդպիսին էր այն համակցությունը, բռնի համակցությունը, որ կոչվում էր Սովետական Միություն, որի լույսից հայացքի ներքո տակավին 1988 թվականից, երբ մեր ժողովուրդը հերոսական ջանքերով, հերոսական մաքառումների գնով գնում էր այն ճանապարհով, որի բարձունքն անկախության ու ազատության լույսն էր, ահա այդ տարիներին բռնիորեն, ռեպրեզիտ ճանապարհներով փորձ արվեց կասեցնել մեր ժողովուրդի ընթացքը:

Համառոտ թվարկումն իսկ այն ռեպրեզիտությունների, այն հալածանքների, որոնք տեղի ունեցան մեր ժողովուրդի գավազների հետ, բավական է, որպեսզի ցանկացած թերահավատ, ցանկացած փարակույս ունեցող անձ խոնարհեցնի իր գլուխը կամքի և տոկունության առջև այն ժողովուրդի, որի գավազները լինելու պատվերներն են, պատվիր և կոչումը ունենք մենք ամենքս: 1988-ի ահռելի երկրաշարժ, Սումգայիթի, Կիրովաբադի ռեպրեզիտություններ և ահա այս ռեպրեզիտական շղթայի օղակում ևս մեկ ոչ պակաս ջարդանքի, ոչ պակաս սահմանեցուցիչ մի տեսադաշտ՝ Բաքվի ջարդերը, ջարդեր, որոնց ցավն արդեն տասնհինգ տարիներն ուղեկից է մեր ժողովուրդին, որոնց վերքերը տակավին սպիտակ են:

Այնպիսիների վկայությամբ, այդ օրը՝ հունվար 13-ի գիշերը, հարյուրավոր անձներ, հարյուրավոր հայեր ենթարկվեցին սոսկալի տանջանքների ու չարադրանքների ու նախապաշարական պատկերներին: Մի ամբողջակալի դիվանագետ պատմում է, թե ինչպես ծերանոցի տանջանքներն ուղղակի կենդանիորեն, ողջ-ողջ թաղվեցին, ուրիշներ պատմում են, թե ինչպես խուժանը կրակի շուրջը հավաքված տաքանում էր հաջորդ իր ջարդն ու կո-

դուպլորն սկսելուց առաջ: Եվ ահա՝ ինչպես չհամեմատել այս երևույթը հրեշավորության հետ. ինչպես չաղերսել 1915 թվականի սոսկալի Ցեղասպանությանը, ինչպես վերստին այն չորակել որպես Ցեղասպանություն:

Մեզ սպանում էին ոչ թե մեր կրոնական պարկանելության համար և ոչ թե նրա համար, որ մենք նղբայրասպան ենք իբրև Կայսեր և ոչ լ. Տիրասպան՝ որպես Ղուղան, այլ մեզ սպանում էին մեկ բանի համար. որովհետև մենք հայ ենք, քրիստոնյա ենք, և ոչ ոք չէր կարող մեզ վրա դադապարություն կնիք դնել որպես դավաճանի և որպես Տյառնասպանի և կամ եղբայրասպանի:

Մեր դադապարությունը մեկն էր: Այն էր, որ մենք պարկանում էինք մի ժողովրդի, որին կոչում են հայ: Եվ ահա այսօր մենք, համախմբված այս սուրբ տաճարում, Վեհափառ Նալրապետի բարձր հովանու ներքո, կոչված ենք աղոթելու, կոչված ենք մեր հայացքները դեպի վեր բարձրացնելու՝ հանգստություն հայցելու հոգիներին այն նահապակաց, ովքեր որ այդ օրերին իրենց հոգին ավանդեցին: Մենք հավատում ենք, որ Վազգեն Վեհափառի խոսքերով՝ մահը դառնում է նախերգանքը եպիփանական կյանքի, մենք հավատում ենք, որ մահը ամենասարսափելին չէ, որ կարող է կարարվել քրիստոնյայի հետ, բայց նաև հավատում ենք, որ այն ձեռքերը, որ ի գործ են կրել Մսրժո կողմից պարգևված կյանքի թելը, այդ ձեռքերը շատ շուտով պիտի չորանան:

Մենք հավատում ենք նաև, որ Մսրված, որ Իր հովանին տարածում է ինչպես արդարների, այնպես և մեղավորների վրա, տեր պիտի լինի ինչպես մեզ՝ ապրողներին ու ողջերին, այնպես և մահացածներին, և մենք մի օր վերստին պիտի հանդիպենք մեր նահապակված, գոհված, սպանդի ենթարկված բույրերի, եղբայրների, մանուկների ու ձեռքերի հետ: Թող Մսրժո ամենախնամ Աջը մշտապես հովանի լինի ամենքիս, մխիթարություն բերի մեզ հավաքաբար, և թող մեր պաշտության դամբ փորձառությունը վկայություն լինի մեզ, որ մենք պետք է համախումբ լինենք, պետք է տարակույսներ չունենանք դեպի հաղթանակ գնալու մեր ճանապարհին, չարժեքրկենք այն բոլոր հալածանքներն ու դժբախտությունները, որոնք որ բաժին հասան մեզ դեպի անկախություն և ազատություն մեր հաղթարշավի ճանապարհին: Թող Մսրված ամենաողորմ իր սիրով, ամենագութ Իր Աջով մեզ ամենքիս մխիթարություն պարգևի և հանգստություն բերի գոհված հոգիներին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի ամէն»:

ԵԿԵՂ ԵՅԱԳԻՏԱԿԱՆ

ԴՐ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Կենտրոնական Երուսալի Հայրապետական Պատրիարխ.
Հայագիրութեան դասախօս Վիեննայի Համալսարանի

ՀԱՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒԻ ՀԱՐՅՈՒՆ

Ներածական

Վերջին տարիներուն եւ յատկապէս վերջին ամիսներուն՝ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայ Եկեղեցւոյ շրջանակներուն մէջ կարծարծուի Ս. Պատարագը անգլերէն լեզուով մատուցանելու հարցը։ Վերջին շրջանին խնդիրը ստացած է լուրջ կերպարանք. թեր ուղի՞ն կարծիքներ՝ ճամակով կամ յօդուածներով կը յայտնուին եւ ամուսնացանկեր կը թրատարակուին ի նպաստ այս կամ այն տեսակէտին։ Եթէ այսպէս շարունակուի պայքարը, ես վախ ունիմ որ Արեւելեան թեմի մէջ երկպառակտում կրնայ ստեղծուիլ, որու հետեւանքները անմախատեանի վնասներ կարող են պատճառել։ Ուրեմն անհրաժեշտ է օր առաջ հարցը բարձրագոյն իշխանութեան միջոցաւ եզրակացութեան մը եւ եզրափակման բերել, որպէսզի ապագային չդատապարտուինք Պատմութեան Դատաստանի առջեւ։

Հարցի էութիւնը

1930-ական թուականներէն ի վեր մերթ ընդ մերթ խօսուած եւ գրուած է Հայ Եկեղեցւոյ մէջ ժողովրդական հասկանալի լեզուի գործածութեան մասին։ Թատկապէս օրինակ բերւած է կամ կը բերուի Բողոքական Եկեղեցւոյ պարագան, բայց մարդիկ կը մոռնան որ Բողոքականութիւնը Հայոց մօտ ազգային կրօն կամ Եկեղեցի չէ։ Ըիշդ է որ ժողովուրդը զրաբար Հայերէնը առհասարակ չի հասկանար, սակայն վստահօրէն Հայ Առաքելական Եկեղեցւոյ արարողութեանց ներքին իմաստը և ոգին լաւ կը հասկանայ։ Ինչ կը վերաբերի Ս. Պատարագին, ընդհանրապէս ոեւէ հայ երբ Եկեղեցի յաճախելու սովորութիւն ունի, տարին գոնէ 20-25 անգամ կ'երթայ։ Եթէ այս թիւը բազմապատկենք տարիներու վրայ, կը տեսնենք թէ ամէն հայ հաւատացեալ իր կեանքին մէջ որքան անգամներ Եկեղեցի կը յաճախէ։

Արդ, եթէ մեկը զրաբար չի հասկանար, բարեբախտաբար կան Ս. Պատարագի թարգմանութիւններ թէ՛ աշխարհաբար եւ թէ՛ երոպական բազմաթիւ լեզուներով։ Բաց աստի, հոգեւոր հովիւներ եւ առաջնորդներ պարտականութիւն ունին Ս. Պատարագը բացատրելու եւ մեկնաբանելու՝ Եկեղեցւոյ մէջ քարոզի պահուն եւ կամ Եկեղեցիէն դուրս՝ դասախօսութիւններու միջոցաւ։ Բայց բնականօրէն հովիւները իրենք պարտաւոր են աշխարհաբար եւ զրաբար լեզուները լաւ իմանալ, հասկանալ եւ խօսիլ (գոնէ արեւմտաճայերէն կամ արեւելաճայերէն) եւ ապա՝ երոպական կամ այլ լեզուներով արարողութիւնները բացատ-

րել հաւատացելոց:

Ողբերգութիւնը կը սկսի այն պահում՝ երբ հոգեւորականը հայ լեզուին լաւ չի տիրապետեր եւ մաս կը կազմէ օտարալեզու հաւատացեալ Հայոց խմբին: Սոյն տարուան ապրիլ ամսու սկիզբը երբ Հայագիտական Համաժողովի մասնակցելու առաքելութեամբ Ամերիկա կը գտնուէի, քաջատեղեակ անձինք ինձ յայտնեցին թէ խնդրոյ առարկա երկու քառանգները, որոնք Ս. Պատարագի լեզուի հարց կը յարուցանեն, ատենին այնպիսի մի ժամանակ ուսում ստացած են՝ երբ տակաւին Ս. Ներսէս Դպրեւանքը լաւ կազմակերպուած չէր եւ այդ պատճառաւ իրենց հայերէնագիտութիւնը թերի եւ անընդունելի մնացած է: Բնականօրէն այս խնդրի մէջ պատասխանատուութեան բաժին ունին նաեւ այն եպիսկոպոսները՝ որոնք հայագիտութեան եւ եկեղեցագիտութեան մէջ տկար անձերը քառանգաւ կը ձեռնադրեն:

Եթէ Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ հոգեւորականներ կան՝ որ հայերէն լաւ չեն գիտեր, շախարհաբար կամ գրաբար, անմիջապէս պէտք է թողուին իրենց պաշտօնը, երթան մի ուրիշ Դպրեւանք, Ս. Ներսէսի կամ Երուսաղէմի կամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճեմարանը, մայրենի լեզուն կանոնաւոր սովորին եւ ապա վերադառնան իրենց պաշտօնին:

Հայերէնը հիմնական նկարագիր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ

Հայ Առաքելական Եկեղեցւոյ հիմնական նկարագիրը հայ լեզուն է. այդ յատկութիւնն է որ ազգային կերպարանք եւ ոգի կու տայ Եկեղեցիին: Բնականօրէն լեզուին հետ անմիջականօրէն կապուած է այբուբենը. եթէ վերացնենք հայերէնը եւ մաշտոցեան գիրը Հայ Եկեղեցիէն, ինչով Եկեղեցին հայկական կրնայ ըլլալ: Վաճառ թեքէեան իր ծանօթ բանատեղծութեան մէջ կ'ըսէ. «Եկեղեցին Հայկական հայ հոգիին եւ մարմնոյն գրահանդերձն է փայլուն»: Այդ գրահանդերձը արդարեւ եւ իրաւ 1600-1700 տարի հայ հոգիին եւ նկարագրին պահապանը համդիսացած է. հրաժարիլ լեզուի եւ գրի մոզական գործիքէն՝ կը մշակուէ հրաժարիլ ինքնապաշտպանութեան մեծագոյն գրահէն: Աշխարհականները այնքան մեղադրելի չեն անշուշտ՝ որքան հոգեւորականները, որոնց պարտականութիւնը միայն պարզ ծիսակատարութիւն չէ, այլ հոգողութիւնը եւ բուժումը հոգիներու եւ յաւիտեանական պահպանութիւնը հայ հոգիի:

Յստակ է որ անգլիախօս Հայեր անգլերէն Ս. Պատարագը աւելի լաւ պիտի հասկանան եւ սկզբնական շրջանին մեծ թուով ոչ-հայախօս հաւատացեալներ Եկեղեցի պիտի յաճախեն, բայց մորութեան հմայքը որոշ ժամանակ ետք պիտի անհետանայ եւ մարդիկ պիտի մախրմտորեն երթաւ մօտակայ ուրիշ եկեղեցի, մասնաւորաբար օրթողոքս կամ հռովմէական-կաթողիկէ: Վերջաւորութեան վնասը առաւել մեծ (եւ անդարմանելի) պիտի լինի քան օգուտը: Հարցը տրամաբանական լուծում կը գտնէ՝ եթէ հոգեւոր հովիւներ նախ իրենք լաւ հայերէն եւ հայագիտութիւն սովորին, եւ երկրորդ՝ ժողովուրդին բացատրեն Ս. Պատարագի թնագիրը եւ իմաստը. այդ ժամանակ բոլոր կողմերը գոհ կը մնան: Չմոռանանք նաեւ՝ որ Եկեղեցւոյ մէջ ժողովրդական լեզուի գործածութեան հակառակորդները աւելի բազմաթիւ են քան կողմնակիցները:

Մոսկուայի Պատրիարքության արտաքին յարաբերությանց պատասխանատու Մետրոպոլիտ Կիրիլ-Կիլբեդ՝ Նիւ Եորքի ոռոսերէն ձայնասփիտի մը մէջ յայտարարեց թէ Ռուս Օրթոդոքս Եկեղեցից Բացարձակապէս մպատաւ չունի Քից սլաական լեզուն փոխելու: «Այդպիսի մի քայլ, մերկայիս ոչ իմաստ ունի եւ ոչ եւս այժմէական է», հաստատեց մա եւ այն կարծիքը յայտնեց՝ թէ ոռոսական խօսակցական լեզուի մերմուծումը ծէսերու մէջ՝ ամ-խոսապիտի կերպով իր հետ պիտի բերէ աշխարհայնացում կամ ռամկացում (profanation), ինչ որ ժողովուրդի մեծամասնութեան կողմէ պիտի մերժուի: Հետաքրքրականօրէն Մետրոպոլիտ Կիրիլ ամհրամեշտ համարեց ծիսական բնագրերու վերամայումը կամ խմբագրումը՝ ըստ այժմէական մտայնութեան, առանց Քից սլաական լեզուն ոեւէ չափով փոփոխութեան ենթարկելու:

Եզրակացութիւն

Երկու տարի առաջ երբ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը քննարկեց ամերիկահայ մի-երկու եկեղեցիներու փորձառական մպատակով Ա. Պատարագի անգլերէն լեզուով մատուցումը, երկու կետեր յստակօրէն վերահաստատեց այսպէս.

Առաջին, ոեւէ առաջնորդարան կամ ծխական եկեղեցի իրատունք չունի ինքնագլուխ կերպով Ա. Պատարագի լեզուն փոխելու կամ փոփոխութեան փորձարկութեան (experiment) ենթարկելու: Լեզուի խնդիրը համազգային լուրջ եւ ծանր հարց է եւ ոեւէ եպիսկոպոս իրատունք չունի առ այդ առանձինն որոշումներ տալու՝ առանց վերին իշխանութեան հրամանին: Առաջնորդարան մը միայն իրեն շրջանին յատուկ խնդիրներու լուծումը կրնայ քննարկել կամ փորձարկել. համազգային հարցեր կը կարօտին համազգային խորհրդակցութեան եւ որոշման:

Երկրորդ, Ա. Պատարագի գրաբար լեզուն իբր սրբութիւն՝ մնան Հայ Եկեղեցւոյ վարդապետական ուսուցման, հիմնականօրէն կը մնայ անփոփոխ: Ամերիկայի մէջ Ա. Պատարագի կարգ մը հատածներու - Հայր մեր, Հաւատոյ հանգանակ, Խոստովանանք, Տէր ողորմեա, քարոզ,- անգլերէն լեզուով կատարումը, որ տարիներէ ի վեր կը գործադրուի՝ լիով բաւական է եւ բաւարար: Կը յուսանք թէ Արեւելեան Թեմական ժողովը, որ յատուկ յանձնախմբի մը միջոցաւ հարցը բազմակողմանի կերպով պիտի ուսումնասիրէ, միեւնոյն եզրակացութեան կը յանգի:

Վիեննա, 5 Մայիս 2004 թ.

ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԱՅԻՆ

ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դոկտոր Աստվածաբանության

ՆԱԽԱԾԵՐԵՆՑՅԱՆ ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԱՅԻՆ
ԽՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հայագիտության մեջ ընդունված է խոսել Հայսմավորքի չորս ընդարձակ և մեկ համա-
ռոտ խմբագրությունների մասին՝ ըստ հետևյալ դասակարգման.

ա. Տեր Իսրայելի խմբագրություն¹, որի բնորոշիչ հատկանիշն այն է, որ սկսվում է
հունվարի 1-ից և ավարտվում դեկտեմբերի 31-ով:

բ. Կիրակոս Արևելցու Ա (1252 թ.) և Բ (1269 թ.) խմբագրություններ², որոնց բնորոշ
հատկանիշն այն է, որ սկսվում են մավասարդի 1-ով (օգոստոսի 11) և ավարտվում ավել-
յաց 5-ով (օգոստոսի 10):

գ. Գրիգոր Ամավարդեցու խմբագրություն³, որի բնորոշ հատկանիշն այն է, որ ունի

* Այսուհետև ամսագրի համարներում հաջորդաբար կներկայացնենք Հայոց եկեղեցու ամիսամաստ քիչ
ուսումնասիրված ծիսական ժողովածուներից «Յայսմաուրք»-ին մվիրված եզմիկ եպիսկոպոս Պետրոս-
յանի հոդվածները, որոնց արդյունք են Սրբազան Հոր տարիների ուսումնասիրության (խմբ.):

¹ Մկրտիչ Վ. Արևելյան, Լիսվարտ վարդ և վկայաբանության սրբոց, Յանյուած, Վենետիկ, 1814, 1 ք հգ-հն; Մ. Ղևոնդ Վ. Մ. Այլիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, 1 ք 107; Մ. Ե-Բ: Շուգակ հայերև ծնուագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Մ. Ներսես Վ. Այլիշան, 1914, ք. Ը: Շուգակ հայերև ծնուագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Մ. Ներսես Վ. Այլիշան, 1961, 1 ք 12; Մ. Ամառյան, Հայոց անձնատուները ըստ տարեաց, հր. Բ, Երևան, 1944, 1 ք 393; Մ. Ա. Անասյան, Հայկական մարտնչություն, Ե-ԺԸ դդ., հր. Ա, Երևան, 1959, 1 ք XXXIII, ծանոթ. 1; Մայիս Ավդայրեզյան, «Յայսմաուրք» ժողովածուները և երանց պատմագրական աղբյուրը, Երևան, 1982, 1 ք 54-55; Նորայր արք. Պողարևան, Միսաղիպություն, Նի Եորք, 1990, 1 ք 55-56; Արտաշես Մարտնչյան, Սևդա Մա-
րարյան, Գրիգոր Մերենց հայերեցի, Երևան, 2000, 1 ք 75-77:

² Մ. Մկրտիչ Վ. Արևելյան, ԼՎՎՍ, հր. ԺԱ. 1 ք հն-հգ; [Մ. Գարեգին Զարրիանայան], Պատմություն Հայ
հին դարերեան (Դ-ԺԳ դդ.), Վենետիկ, 1865, հր. Ա, 1 ք 604; Վենետիկ, 1932, 1 ք 753-754; Մ. Ղևոնդ Վ. Մ. Այլի-
շան, Հայապատում, 1 ք 472; Մաղարիա արք. Օրմանյան, Ազգապատում, հր. Բ, Պյոլոս, 1960, 1 ք 1696; Մ.
Ներսես Այլիշան, Նիսրտ հայ վկայաբանության ուսումնասիրության համար, Վենետիկ, 1914, ք. Ը: Շուգակ
հայերև ծնուագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Մ. Ներսես Վ. Այլիշան, 1 ք 11-13:

Մ. Ամառյան, Հայոց անձնատուները ըստ տարեաց, հր. Բ, 1 ք 624-625; Մ. Ա. Անասյան, Հայկական մարտնչ-
ություն, 1 ք XXXIII, ծանոթ. 1; Մայիս Ավդայրեզյան, «Յայսմաուրք» ժողովածուները և երանց պատմա-
գրական աղբյուրը, 1 ք 67-79; Նորայր արք. Պողարևան, Միսաղիպություն, 1 ք 56-57; Արտաշես Մարտնչյան,
Սևդա Մարարյան, Գրիգոր Մերենց հայերեցի, Երևան, 2000, 1 ք 76-77:

³ Մ. Ղևոնդ Վ. Մ. Այլիշան, Սիստան, Վենետիկ, 1885, 1 ք 241; գ; [Մ. Գարեգին Զարրիանայան], Պատ-
մություն Հայ հին դարերեան (Դ-ԺԳ դդ.), հր. Ա, Վենետիկ, 1932, 1 ք 774-775; Մաղարիա արք. Օրմանյան,
Ազգապատում, հր. Բ, 1 ք 1752-1753; Մ. Ներսես Այլիշան, Նիսրտ հայ վկայաբանության ուսումնասիրության
համար, Վենետիկ, 1914, ք. Ը-Բ: Մ. Ամառյան, Հայոց անձնատուները ըստ տարեաց, հր. Ա, Երևան, 1942, 1 ք 586-587:

արևմտյան Եկեղեցիների տոնակարգերից զանազան նորամուծություններ, սկսվում է սեպտեմբերի 1-ով, Ա. Մանուկյան տոնը դրված է դեկտեմբերի 25-ին, Տյառնը միապաշտօն փետրվարի 2-ին, Ամենայն Արքեպիսկոպոսի տոնը՝ Գեորգիոսի 1-ին, և այլն:

դ. Գրիգոր Մեղեմիսի խմբագրությունը⁴, սկսվում է նախասարգի 1-ով, ամենաձախայունը է և ամենատարածվածը: Միայն Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են 257 ամբողջական ձեռագիր օրինակներ, մինչ մնացյալ բոլոր խմբագրությունների ձեռագրերի ընդհանուր թիվը մույն Մատենադարանում 18-ն է:

Համառոտ խմբագրությունը⁵ պահպանվել է միայն մեկ՝ 1319 թ. գրված ՄԼ՝ 3658 ձեռագրով:

Չպետք է անտեսել նաև Երեմիա Չելեպի «Էռմիրճեանի» (+1695) տաճկերեն համառոտ Հայսմավուրքը Երուսաղեմի Արքեպիսկոպոսի վանքի Մատենադարանի (= Երուս.) թիվ 988 ինքնագիր ձեռագրում՝ գրված 1685 թ.:

Հայագիտության մեջ հիշվում են նաև լատինաձեռն⁶ Հայսմավուրքային օրինակներ:

Հ. Մկրտիչ Աղբյուրանը⁷ և Հ. Ն. Ակիմյանը⁸ ցույց են տվել Ռուսարենից կատարված մի թարգմանություն՝ ձեռամբ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու, 991/992 թթ.: Այն սկսվում է սեպտեմբերի 1-ով: Այդ թարգմանության մեջ ծանոթ միակ օրինակն է Վիեննայի Մխիթարյան Միաբանության Մատենադարանի (= Վիեննա) թիվ 1048 ձեռագիրը:

Իրականում Հայսմավուրքների խմբագրությունների հարցն այնքան էլ պարզ չէ և դեռ կարիք ունի տքնաջան ուսումնասիրության և քազմաթիվ ճշտումների:

Այս ուղղությամբ արված շուրջ հինգ տարիների մեր փնտրտույքների ամփոփումն է, որ ցանկանում ենք մերկայացնել սույն մյուսով հետաքրքրվողներին՝ միաժամանակ շեշտելով, որ այս ընդամենը Նախածերենցյան Հայսմավուրքների ուսումնասիրության սկիզբն է:

Տե՛ր Խորայելի անուճով երկու հայսմավուրքային Քրատարակություն է եղել:

ա. Առաջինը տպագրվել է 1834 թ. Կ. Պոլսում, Գրիգոր դպիր Փեշտիմալյանի աշխատանքով:

Հ. Գր. Մարգարեան, Գրիգոր կթղ. Անտարգեսի մատենագիր, Բազմավ.պ., 1949, մարտ-ապրիլ, 19 55-66; Մայիս Ավդալյեզյան, «Թայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմադրական արժեքը, 19 79-82; Նորայր սրբ. Պողարեան, Միսագիտություն, 19 57-58; Արքաշես Մաթևոսյան, Սեղա Մարարյան, Գրիգոր Մերենց կայսրեցի, Երևան, 2000, 19 76:

⁴ Հ. Մկրտիչ Վ. Աղբյուրան, ԼՎՎՍ, հր. ԺԱ, 19. հի-ծ; Հ. Նևսկի Վ. Մ. Այիշան, Հայապատում, 19 560; Հ. Նևրոս Ակիմյան, Նիթեր հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914, թ. Ե, Ժ-ԺԱ; Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հր. Ա, 19 609; Հ. Ս. Անառյան, Հայկական մատենագիտություն, 19 XXXIII, ծանոթ. 1; Մայիս Ավդալյեզյան, «Թայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմադրական արժեքը, 19 82 - 85; Նորայր սրբ. Պողարեան, Միսագիտություն, 19 58-59; Արքաշես Մաթևոսյան, Սեղա Մարարյան, Գրիգոր Մերենց կայսրեցի, Երևան, 2000, 19 74 - 82:

⁵ Հ. Ս. Անառյան, Հայկական մատենագիտություն, 19 XXXIII, ծանոթ. 1; Մայիս Ավդալյեզյան, «Թայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմադրական արժեքը, 19 69:

⁶ Մ. Ավդալյեզյան, «Թայսմաուրք» ժողովածուները և նրանց պարմադրական արժեքը, (19 54, 73):

⁷ Հ. Մկրտիչ Վ. Աղբյուրան, ԼՎՎՍ, հր. ԺԱ, 19. հի-հզ:

⁸ Հ. Ակիմյան, Յովսեփ Կոստանդնուպոլսեցի թարգմանիչ Թայսմաուրքի, ՀԱՄԻՆԱՍՏՈՐԵՆՑ, 1957, լուստար-փետրուար, 19 1-12:

տասնորոշյալով:

Ինչպես ցույց են տվել Նիկողայոս Ադոնցը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Հ. Գր. Սարգսյանը և Հ. Ներսես Ակիմյանը⁹, այդ հրատարակությունը ոչ մի կապ չունի Տեր Խորազմյանի Հայսմավուրքի հետ. այն հիմնված է Գրիգոր Անավարզեցու խմբագրության վեցերորդ տպագրության վրա, որի համար վաճառքի ձեռագրատաճ (= վեճ.) թիվ 710 (1310-1320 թթ.) ձեռագրի վրա, չափակամին շատ և ծավալուն կրճատումներով, հավելումներով և աղավաղումներով:

Բ. Եռնրորդ հրատարակությունը կատարել է G. Bayan-ը. ֆրանսերեն թարգմանությանը հանդերձ. 1910-1930 թթ. PO-ում¹⁰: Այս հրատարակության մեջ իբրև հիմնական մուր ղրված է Փարիզի Ազգային Գրադարանի (=Փարիզ) թիվ 180 (1316 թ.) ձեռագրի տեքստը, որը ոչ այլ ինչ է. եթե ոչ Կիրակոս Արևելցու Ա խմբագրությունը, իսկ միջանկյալ փակագծերի մեջ ղրված են հոդվածներ 1834 թ. Կ.Պոլսյան հրատարակությունից:

Այսպիսով, աջաքանից հետո, Տեր Խորայելի խմբագրությունը մնում է անտիպ և չուսումնասիրված:

ՏԵՐ ԻՍՐԱՅԵԼԻ խմբագրության ձեռագրերը

Հ. Ներսես Ակիմյանը¹¹ հիշատակում է Տեր Խորայելի Հայսմավուրքի հետևյալ ձեռագրերը.

Վիեննա 7 (1439 թ.),

Վիեննա 219 (1591 թ.),

Վիեննա 228 (ԺԶ դ.),

Անկյուրայի Կարմիր վանք 157 (ԺԴ-ԺԵ դդ.),

Անկյուրայի Կարմիր վանք 158 (ԺԴ-ԺԵ դդ.):

Նորայր արք. Պողոթյանը¹² հիշատակում է Տեր Խորայելի Հայսմավուրքի հետևյալ ձեռագրերը.

Վեճ. 631 (1427 թ.),

ՄՄ 6283 (1437 թ.),

Էջմիածին 62 (1471 թ.),

Հալեպ 149 (ԺԵ-ԺԶ դդ.),

Ստանիսլավ 10 (1579 թ.).

⁹ Նիկողայոս Ադոնցի 10 օգոստոս 1898 թ. նամակը Վենետիկի Նիկողայոս Մառիև, տպ. ԼՐԱԲԵՐ, 1975, հմր 11, էջ 85: Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայկական, ԺԶ, ԱՐԱՐԱՏ, 1900, էջ 260: Հ. Գր. Սարգսյան, Գրիգոր կթ. Անտարգեղի մատենագիր, ԱՄՋՄԱՎԷՊ, 1949, մարտ-ապրիլ, էջ 55-66: Յուրակ հայերեն ձեռագրայ Նիկայիայի ի Կիպրոս, կազմեց Հ ՆԵՐՍԵՍ Վ. ԱԿԻՄԵԱՆ, Վիեննա, 1961, էջ 12: Հ. Ներսես Ակիմյան, Նիսիսեր հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914, թ. 6:

¹⁰ Patrologia Orientalis, tomus Vicesimus Primus, Paris, 1930.

¹¹ Հ. Ներսես Ակիմյան, Նիսիսեր հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914, թ. 6:

¹² Նորայր արք. Պողոթյան, Մեսագիրտություն, Նիսիսեր, էջ 59:

Էջմիածին (1500-1511 թթ.),

ՄՄ 7365 (ԺԳ. դ.):

Մայիս Ավդալբեգյանն իր «Պայամաուրք» ժողովածուները՝ աշխատության մեջ մըշում է. «Հատ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաց ցուցակի, Տեր Իսրայելի խմբագրությանն են պատկանում 15 ձեռագիր՝ 1339, 2695, 4512, 4730, 4737, 4741, 4747, 4755, 4758, 4762, 4873, 6283, 7361, 7463, 7464: Նշված ձեռագրերի ուսումնասիրությունը որևէ խմբագրության բնորոշ գիծ չի հայտարարում՝ բացի ծավալի չափավորությունից... Մավալից բացի, այս 15 ձեռագրերը մյուս խմբագրություններից տարբերակման այլ կովան չեն տալիս: Ավելի՛մ՝ մշվածներից մեկը՝ 7463 ձեռագիրը, որոշակիորեն կիրակոս Արևելցու խմբագրությանն է պատկանում, ինչպես հավաստում է ձեռագրի մեջ պահպանված կիրակոսի հիշատակարանը,

7361-ը և 7464-ը լատինադավան Հայսմավուրքի հետքեր են կրում իրենց մեջ և ավելի մոտ են Անավարդեցու խմբագրությանը,

մյուսներից 1339, 2895 (իմա 2695-Ե. եպս. Պ.), 4512-ը մեղաշնչակ են կիրակոսյան խմբագրության, միջնորդ դուրս է մնացել 7365 ձեռագիրը, որ Տեր Իսրայելի խմբին է պատկանում,

այնպես որ Տեր Իսրայելի անվան տակ գնացող ձեռագրերի այս խումբն ամբողջությամբ վերանայելի է և մեծ շտկումների կարոտ»¹³:

Ապասելի էր, որ այդ շտկումները պիտի արվեին Մ. Ավդալբեգյանի կողմից, սակայն նրա աշխատության մեջ այս մասին ուրիշ ակնարկություն չկա:

Փորձենք վերանայել վերոհիշյալ ցանկերը և անել անհրաժեշտ շտկումներ:

ա. Հ. Ներսես Ակիմյանի հիշատակած Վիեննա 7 և Վիեննա 219 ձեռագրերը մույց գիտնականը հետազայում կարգում է կիրակոս Արևելցու ձեռագրերի շարքին, այնպես որ ինչպես այս երկու, այնպես էլ Վիեննայի 228 ձեռագրի մասին կխոսենք կիրակոս Արևելցու ձեռագրերը քննելիս:

բ. Հ. Ներսես Ակիմյանի հիշատակած Անկյուրայի Կարմիր վանքի 157 և 158 ձեռագրերը կորել են Մեծ եղեռնի տարիներին, իսկ այդ ձեռագրերը նկարագրող Բաբգեն եպս. Կյուլեսերյանը չի տալիս դրանց բովանդակությունը¹⁴, այնպես որ որևէ հաստատում դրանց խմբագրային պատկանելության մասին չենք կարող անել:

գ. Նորայր արք. Պողարյանի հիշատակած ՄՄ 7365-ը իրականում, ինչպես նկատել են արդեն ՄՄ ձեռագրացուցակի կազմողները, մի ուրույն խմբագրություն պարունակող ձեռագիր է և կապ չունի Տեր Իսրայելի Հայսմավուրքի հետ:

դ. Նորայր արք. Պողարյանի կողմից Էջմիածնի երկու ձեռագրերի հիշատակությունը պարզ թյուրիմացություն է: Երկու դեպքում էլ խոսքը ՄՄ 1511 (1471 թ., Կուքի գյուղ) ձեռագրի մասին է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Ծերեմցի Հայսմավուրքի մի օրինակ, թեև պահպա-

¹³ Մ. Ավդալբեգյան, «Պայամաուրք» ժողովածուները և նրանց պարամպրական արվերք, 19 54-55:

¹⁴ Բաբգեն Աթոռակից կաթողիկոս, Յուզակ Ձեռագրաց Անկյուրի Կարմիր վանուց և շրթակայից, Անթիլիս, 1957, 19 779-788:

մել է մահ Տեր Իսրայելի հիշատակարանը:

Ե. Նորայր արք. Պողարյանի կողմից հիշատակված Հալեպի թիվ 149 ձեռագիրը, որ-
քան որ թույլ է տալիս եզրակացնել Արտալուսիդ արք. Սյուրմեյյանի գկարագրությունը¹⁵,
կառող է լինել կիրակոս Արևելցու խմբագրությունների մախաբիմքը:

Զ. Նորայր արքեպ. Պողարյանի կողմից հիշատակված Ստանիսլավ 10 ձեռագիրը
(1579 թ.) կորել է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այդ ձեռագրի մա-
սին մեծ կարող ենք տեղեկություններ քաղել միայն Հ. Ներսես վրդ. Ակիմյանի կողմից
առված գկարագրությունից: Այն անվանվում է «Պատմությունը մախատակութեան ճգնա-
տան և սրբոց մարտիրոսութեան»: ըմդօրինակվել է 1579 թ. «ի յաշխարհս ֆռանգաց. որք
րաք և սրբոց մարտիրոսութեան Ստեփանոսի քարեպաշտ և երկիւղած և խաղաղասէր
կոչին իլախք. ի թագաւորութեան տէր Թադէոսի և ի արքեպիսկոպոսութեան յայսմ մա-
խագատրին. ի հայրապետութեան տէր Թադէոսի և ի արքեպիսկոպոսութեան յայսմ մա-
խագիս տէր Պարսամին Պոնտացոյ... ի քաղաքս Կամենց, ընդ հովանեաւ սուրբ Աստ-
ածածնին և ի յար ուսմ սքանչելագործող սուրբ հայրապետ Նիկողայոսի»:

Դժբախտաբար Հ. Ներսես վրդ. Ակիմյանը չի տալիս ձեռագրի բովանդակության ման-
րամասն գկարագրությունը, (հունվարի 1-ին դրված է «Տօմ ութօրեայ թլփատութեան Տեառն
մերոյ Յիսուսի «Քրիստոսի», Տյառնըմդառաջի տոմը դրված է փետրվարի 2-ին)¹⁶, որով
չենք կարող հստակ եզրակացության հանգել այդ ձեռագրի այս կամ այն խմբագրության
պատկանելու վերաբերյալ:

Է. ՄՄ 4755 (1457 թ.) ձեռագիրը իրականում Ծերեմցի Հայսմավուրքի օրինակ է: Հե-
տաքըքրականն այն է, որ այն պարունակելով հանդերձ Ծերեմցի Հայսմավուրքը, պահ-
պանել է մահ Տեր Իսրայելի հիշատակարանը¹⁷ (թ. 325թ), ինչը և, հավանաբար, շփոթու-
յան մեջ է գցել ինչպես ՄՄ Ձեռագրացուցակի կազմողներին, այնպես էլ Մայիս Ավդալ-
բեգյանին (էջ 145-146):

Ը. Գրիգոր Ծերեմցի խմբագրության օրինակներ են մահ ՄՄ 4730 (ԺԶ դ.), ՄՄ 4747
(ԺԷ դ.), ՄՄ 4758 (ԺԷ դ.), և ՄՄ 4762 (1686 թ.) ձեռագրերը, որոնցից վերջին երեքը սկըս-
վում են սահմի 30-ից և ավարտվում Ավետման տոմով՝ ապրիլի 7-ով:

Թ. Մ. Ավդալբեգյանի կողմից իբրև թե ճշտված ՄՄ 2695 ձեռագիրը իրականում տե-
րիսրայելյան խմբին¹⁸ պատկանող ձեռագիր է և կապ չունի կիրակոսյան խմբագրության
հետ: Նույն ձեռագրին հար և մահ է ՄՄ 4873-ը, որը սխալմամբ Մայիս Ավդալբեգյանի
կողմից համարվել է Գրիգոր Անավարզեցու խմբագրության ձեռագիր¹⁹:

Ժ. Մ. Ավդալբեգյանի կողմից իբրև թե ճշտված ՄՄ 4512 ձեռագիրը, արտաքինից մահ
լինելով կիրակոսյան խմբագրության ձեռագրերին (սկսվում է մավասարդի 1-ով), իրակա-

¹⁵ Ծուցակ հայերեն ձեռագրաց Հայկաի Ա. Ջառասուն մասկոսք եկեղեցոյ ն մասնաւորապ. հպ. Ա. Երուսա-
ղւմ. 1935, էջ 280-290:

¹⁶ «Ծուցակ հայերեն ձեռագրաց Էվովի համայնաբանի, Արրեսյիսկոպոսարանի և Սպանիսյավի» աշխատու-
բյան մեջ, Վիննա, 1961, էջ 53-54:

¹⁷ Տեր Իսրայելի հիշատակարանը պահպանվում է նաև Բնրեկի խմբագրության ՄՄ 1511 (1471 թ.) ձեռագիրը:

¹⁸ Այս անվանումն օգտագործում ենք պայմանականորեն, այն թույլ ձեռագիր Հայսմավուրքների համար,
որոնք սկսվում են հունվարի 1-ով:

¹⁹ Մ. Ավդալբեգյան, «Յայսմաւորք» ժողովածուներ և երանց պատմագրական արժեքը, էջ 82:

նում ոչ մի կապ չուի այս խմբագրության հետ և բովանդակության առումով գրեթե նույնակա՞ն է ՄՄ 2695 և ՄՄ 4873 ձեռագրերի հետ:

ծա. ՄՄ 4512 ձեռագրի՞ ազգակից են նաև ՄՄ 4737 և ՄՄ 4741 ձեռագրերը:

ժք. Մ. Ավդալբեգյանի կողմից ճշտված մյուս երկու՝ ՄՄ 1339 և ՄՄ 7463 ձեռագրերի վրա, իբրև կիրակոսյան²⁰ խմբագրության ձեռագրեր, պիտի ավելացնել նաև ՄՄ 7464 ձեռագիրը, որ Մ. Ավդալբեգյանի կողմից համարվել է լատինադարձ:

ձգ. ՄՄ 7361 ձեռագիրը, որ արտաքինից Տեր Իսրայելի խմբագրության տպավորություն է թողնում, քանի որ սկսվում է հունվարի 1-ից, իրականում պատկանում է Գրիգոր Առավարզեցու խմբագրության խմբին:

Հետևաբար, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակում Տեր Իսրայելի անվամբ հիշված 15 ձեռագրերից միայն ՄՄ 6283-ն է, որ պարունակում է Տեր Իսրայելի Հայսմավորքը:

Սույնից պիտի ավելացնել նաև Վենետիկի 631 (1427 թ.) ձեռագիրը:

Մինչ այժմ արված մեր փնտռությունների արդյունքում միայն վերոհիշյալ երկու ձեռագրերն են, որ պահպանել են Տեր Իսրայելի խմբագրությունը: Երկու ձեռագրերն էլ հար և մամն են իրար, պահպանել են Տեր Իսրայելի հիշատակարանը, երկու ձեռագրերն էլ զրվել են նույն վայրում. «Յաճապատո Տրապիզոնու, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս և սուրբ Յովանիսիս», տասը տարվա տարբերությամբ: Կա՛մ մեկը արտագրվել է մյուսից, կա՛մ երկուսն էլ՝ միևնույն ձեռագրից:

Ամփոփելով, ասենք, որ Տեր Իսրայելի խմբագրությանն են պատկանում միայն Վենետիկի 631 և ՄՄ 6283 ձեռագրերը:

ԿԻՐԱԿՈՍ ԱՐԵՎԵԼՑՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐ

Հ. Ներսես Ակինյանը²¹ հիշում է Կիրակոս Արևելցու Հայսմավորքի հետևյալ ձեռագրերը.

Նիկոսիա 2 (1310 թ.),

Բեյրութի Կափուչիներների վանք 1 (1313 թ.),

Փարիզի Ազգային Գրադարան 180 (1316 թ.),

Վենետիկ 2 (1435 թ.) (պիտի լինի Գ.),

Երուսաղեմ 75 (1439 թ.),

Վիեննա 7 (1439 թ.),

Ա. Քյուրքչյանի ի Կյումուշխան,

Հովհ. Գրիգորյան Արծրունու (1441 թ.),

Վիեննա 219 (ԺԳ-ԺԴ դդ.):

²⁰ Այս անվանումն «պարագործում ենք պայմանականորեն, այն թույլ տալու ձևապիր Հայսմավորքների համար, որոնք սկսվում են նավասարդի 1-ով:

²¹ Զուլալի հայերեն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Ֆ. Ներսիս Վ. Ակինյան, Վիեննա, 1961, էջ 13:

Նորայր արք. Պողարյանի²² ցանկում նշված են նաև հետևյալները.

Անթիմիաս 1 (1310-1311թթ.).

Երուսաղեմ 1822 (1316 թ.).

ՄՄ 3658 (1319 թ.):

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Ձեռագրացուցակում կիրակոս Արևելցու անվան ճեղքը դրված են հետևյալ Հայսմավուրք ձեռագրերը.

ՄՄ 3817 (1668 թ.).

ՄՄ 4683 (ԺԷ դ.).

ՄՄ 4684 (1407 թ.).

ՄՄ 7433 (1467 թ.).

ՄՄ 7529 (1326 թ.).

ՄՄ 7530 (ԺԳ դ.).

ՄՄ 9585 (ԺԴ դ.. 1316-1335 թթ. միջև):

Այս ցանկի վերաբերյալ Մ. Ավդալբեգյանը փորձում է անել հետևյալ ճշտումները. «...ձեռագրերի քննությունը պարզում է, որ դրանք ավելին են. հենց իբրև տերիտորիայում նշվածներից 7464, 4512, 1339 ձեռագրերը պատկանում են կիրակոսյան խմբին, նշվածներից 7529-ը որոշակի Գրիգոր Անավարզեցու խմբագրությանն է պատկանում... ցանկից պետք է հանել նաև 3717 (պիտի լինի 3817 - Ե.Ե.Պ.) ձեռագիրը, քանի որ այն... մասն է խլաթեցու Հայսմավուրքի: Որով կիրակոսի անվամբ պետք է մնան 7433, 7463, 9585, 7530, 4512, 1339 Հայսմավուրքները և 3658 ձեռագիրը, որը... ոչ այլ ինչ է, քան 4512 և 7463 կիրակոսյան Հայսմավուրքների ուղղակի համառոտումը»²³:

Հիմնվելով կիրակոս Արևելցու երկու տարբեր Ռիշատակարանների վրա, Մ. Ավդալբեգյանը խոսում է Արևելցու երկու խմբագրությունների մասին, որոնցից առաջինը աշխատասիրել է 1253 թ., որի մեջ կիրակոսն ավելացրել է 112 մոր մյուս, երկրորդը՝ «գրված Սսում 1269 թ., որտեղ խոսում է աղյծն ավելացրած 170 մյուսների մասին»²⁴, թեև Բ խմբագրության որևէ ձեռագիր չի մատնանշում:

Այժմ փորձենք վերանայել վերոհիշյալ ցանկերը և անել անհրաժեշտ շտկումներ:

ա. կիրակոս Արևելցու Ա (1253 թ.) Ռիշատակարանը պահպանված է ՄՄ 7433 (1467 թ.) և ՄՄ 7463 (1413 թ.) ձեռագրերում:

Անվերապահորեն սույն խմբին են պատկանում նաև ՄՄ 1339, ՄՄ 7530 և Փարիզի 180 ձեռագրերը:

բ. կիրակոս Արևելցու Բ (1269 թ.) Ռիշատակարանը պահպանված է Նիկոսիայի 2, որ է այժմ Անթիմիասի թիվ 1 (1310 թ.), Բեյրութի Կափուչիների վանքի 1 (1313 թ.), Վենետիկի Գ (Ջ) (1435 թ.), Երուսաղեմի 75 (1439 թ.) և 1822 (1316թ.) ձեռագրերում:

գ. ՄՄ 4683 ձեռագիրը Գրիգոր Անավարզեցու Հայսմավուրքի մի ամբողջական օրի-

²² Նորայր արք. Պողարյան, Միջագիտություն, Նիւ Բորք, էջ 59:

²³ Մ. Ավդալբեգյան, անդ, էջ 69:

²⁴ Մ. Ավդալբեգյան, անդ, էջ 70:

նակ է:

դ. ՄՄ 4684 ձեռագիրը ներկայացնում է ուրույն մի խմբագրություն:

ե. Մի ուրույն խմբագրություն է ներկայացնում նաև Վիեննայի 7 (1439 թ.) ձեռագիրը, որի ձեռքը կիրակոս Արևելցու Հայսմավուրքը լինելով հանդերձ՝ սկսվում է հունվարի 1-ից, բազմաթիվ մոտ՝ հիմնականում ճառախոսական և ճգնալեցա-հայրախոսական հոդվածներ է պարունակում: Մի շարք սրբերի հիշատակման օրերն էլ տարբեր են կիրակոս Արևելցու Հայսմավուրքի օրերից: Այս առանձնահատկությունները, սակայն, չեն արտահայտված ձեռագրի՝ Հ. Հակովբոս վ. Տաշյանի նկարագրության մեջ²⁵: Հավանաբար այդ է պատճառը, որ Հ. Ներսես Ակիմյանն այն դասում է կիրակոս Արևելցու խմբագրության ձեռագրերի շարքին:

զ. Վիեննայի 219 (1591թ.) ձեռագիրը նկարագրելիս Հ. Հակովբոս վ. Տաշյանը գրում է. «Մատենան է Յայսմաուրք, գրեթե ճիշտ նույն թ. 7 ձեռագրին հետ կարգաւ ու բովանդակութեամբ, միայն քիչ մը անելի համառօտ շատ մը մանր վարքեր եւս չունենալով»²⁶: Գրեթե նույն է գրում նաև Վիեննայի 228 ձեռագրի մասին. «Մատենան է Յայսմաուրք... կը համընթացայ ընդհանրապէս թ. 7 ձեռագրին՝ բայց անելի համառօտ է, շատ բան չունենալով»²⁷: Ինչպես նշեցինք արդեն, Վիեննայի 7 (1439 թ.) ձեռագիրը ներկայացնում է ուրույն մի խմբագրություն: Արդյո՞ք նույն խմբագրությանն են պատկանում նաև Վիեննայի 219 և 228 ձեռագրերը: Հ. Թակովբոս վ. Տաշյանի նկարագրությունը քավարար չէ ճշտելու դրանց խմբագրային պատկանելության հարցը:

է. ՄՄ 7529 և ՄՄ 9585 ձեռագրերը թեև զգալիորեն տարբերվում են միմյանցից, սակայն մոտ են ՄՄ 2695-ի ձեռագրախմբին՝ այն տարբերությամբ միայն, որ ծավալուն հոդվածները համառոտված են:

ը. ՄՄ 3817-ը, ինչպես ճիշտ նկատել է արդեն Մ. Ավդալբեգյանը, պատկանում է Ծերենցի խմբագրությանը:

թ. Նորայր արք. Պողարյանի հիշատակած ՄՄ 3658 ձեռագիրը իրականում համառոտ մի խմբագրություն է:

ժ. Առայժմ ոչինչ չենք կարող ասել Հ. Ներսես Ակիմյանի հիշատակած Ա. Քյուրքչյանի ի կյումուշխանն և Հովհ. Գրիգորյան Արծրունու (1441 թ.) ձեռագիր Հայսմավուրքների մասին:

ժա. Հալեպի 149 ձեռագիրը կարող է լինել կիրակոս Արևելցու նախահիմք խմբագրությունը (սկսվում է Հունվարի 1-ից, Ավետյաց տոնը դրված է մարտի 25-ին, Տյառնընդառաջը՝ փետրվարի 2-ին): ԺԵ-ԺԶ դդ. գրված այս ձեռագրի մասին Արտավազդ արքեպիսկոպոսը գրում է. «...շատ զեշ պահուած: Ծնորթիւ դիւրակեր և յոռի թուղթիւ. հատորիւ մէկ չորրորդը վնասուած, վերին արտաքին շրթունքէն դէպի վեր ահագին և տգեղ խոռչ մը բացուած... թէ սկիզբէն և թէ վերջէն խիստ բազմաթիւ թերթեր ինկած ու կորսուած են և երկու դար առաջ, բարի ձեռք մը ուզելով կորուստէ փրկել մնացածները, վերստին կազ-

²⁵ Ծուցովի իսյերթ և ձեռագրայ Մարնադարանին Միխայրեանցի Վիեննա, իդր. Ա. Վիեննա, 1895, էջ 24-51:

²⁶ Անդ, էջ 559:

²⁷ Անդ, էջ 587:

մած է. առանց ուշադրություն ընելու գլխակարգերում²⁸ Ավելացնենք, որ բազմաթիվ էջեր ընկած են մահ միջին մասերից, ինչպես, օրինակ, փետրվար ժա-ից մարտ ժգ, մարտ իգ-լա Ռատվածները, և այլն:

Ամփոփելով, Հայ Եկեղեցու մախածերենցյան Հայտնավորք ձեռագրերը կարելի է սխտեմավորել ըստ Ռեռկայի:

Ա - Հովսեփ Կ.Պոլսեցու թարգմանությունը - (991-992 թթ.),
Վիեննա 1048 (1302 թ.):

Բ - Անանուն Ա խմբագրություն

ա. եմթախմբագրություն (սկ. Ռումվարի 1-ից),

ՄՄ 2695 (ԺԴ դ., մագաղաթ),

ՄՄ 4873 (1427 թ.),

բ. եմթախմբագրություն (սկ. մավասարդի 1-ից),

ՄՄ 4512 (ԺԵ դ.),

ՄՄ 4737 (1410 թ.),

ՄՄ 4741 (ԺԵ դ.),

գ. եմթախմբագրություն (սկ. մավասարդի 1-ից, համառոտ),

ՄՄ 7529 (1326 թ.),

ՄՄ 9585 (ԺԴ դ. 1316-1335 թթ. միջև):

Գ - Անանուն Բ խմբագրություն

ՄՄ 7365 (ԺԳ դ.):

Դ - Անանուն Գ խմբագրություն

ՄՄ 4684 (1407 թ.):

Ե - Տեր Իսրայելի (+1249) խմբագրություն - (ԺԳ դ. Ա կես)

Վենետիկ 631 (1427 թ.),

ՄՄ 6283 (1437 թ.):

Զ - Կիրակոս Արևելցու Ա խմբագրություն - (1252 թ.)

ՄՄ 7433 (1467 թ.),

ՄՄ 1339 (ԺԶ դ.),

ՄՄ 7463 (1413 թ.),

ՄՄ 7464 (1579 թ.),

ՄՄ 7530 (ԺԳ դ.),

²⁸ Զուգակ հայերեն ձեռագրաց հալևյի Ա. Զառասուն մանկունք եկեղեցույ և մասնաորաց, հր. Ա, Լք 280:

Փարիզ 180 (1316 թ.),
Հալեպ 149 (Նախաճիւղ?):

Է - Կիրակոս Արևելցու Բ խմբագրություն - (1269 թ.)
Նիկոսիայի 2, որ է այժմ Անթիլիասի թիվ 1 (1310 թ.),
Բեյրութի Կափուչիների վանք 1 (1313 թ.),
Վենետիկ Գ (Ջ) (1435 թ.),
Երուսաղեմ 75 (1439 թ.),
Երուսաղեմ 1822 (1316 թ.):

Ը - Անանուն Գ խմբագրություն (սկ. հունվարի 1-ից)
Վիեննա 7 (1439 թ.):

Թ - Գրիգոր Անավարզեցու խմբագրությունը (ԺԳ դ. վերջ, 1290-ական թթ.)
ՄՄ 7361 (ԺԷ դ.),
ՄՄ 4683 (ԺԷ դ.),
Վենետիկ 710 (1310 – 1320 թթ.),
Մորգան 622 (1348 թ.),
Վենետիկ 402 (1664-1691 թթ.):

Ժ - Համառոտ խմբագրություն
ՄՄ 3658 (1319 թ.):

ՀԻՄՆՏԻՆ ԼԻԿՈՂԱՅՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅԿԵԿԱՆ ՆՈՐ ԴԻՆԱՍՏԻԱ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՈՒՄ

Ուրարտական պետության պարբերացումն ունեցել է չորս գլխավոր փուլեր:

Առաջին փուլը սկսվել է ուրարտական պետության քաղաքական ասպարեզ գալու արշալույսից, երբ այդ պետության գլուխ կանգնած էր նրա առաջին թագավոր Արամեն (859-832 թթ.)¹: Առաջին փուլի բնորոշ գիծն այն էր, որ նրա ընթացքում ուրարտական պետությունը սահմանափակված էր իր բուն տարածքի ու բնակչության շրջանակներում և ամեն կերպ ձգտում էր պաշտպանվել ասսուրական կործանարար արշավանքներից: Այդ փուլը տևում է մինչև ուրարտական պետության կողմից կազմակերպվող նվաճողական արշավանքները: Առաջին փուլում ուրարտական պետության տարածքը սկսվել է Արածանի գետի միջին ավազանի հարավային սահմաններից, ձգվել Վանա լճի արևելյան երկարությամբ և տարածվել մինչև Ուրմիա լճի արևմտյան կողմերը:

Այդ փուլում ուրարտական պետության հիմնական բնակիչներն են եղել Վանա լճից դեպի հարավ տարածված և Քաղիթթ ու Ջերմ գետերի միջև գտնվող Ուրուրատրի ցեղամիության հետնորդները՝ ուրարտները և Արածանի գետի հյուսիսային կողմում տարածված Նաիրի ցեղամիության հետնորդները՝ արմենները կամ հայերը: Ժամանակի ընթացքում, սկսած մ.թ.ա. XIII դարից, ասսուրական պետության ճնշման տակ ուրարտները Քաղիթթ և Ջերմ գետերի միջև գտնվող տարածքից շարժվել են դեպի հյուսիս և հաստատվել Վանա լճի հարավ-արևելյան ափերին, իսկ նաիրցիները, այսինքն՝ արմենները կամ հայերը, շարժվել են Արածանից դեպի հարավ և հաստատվել Վանա լճի և Արածանի միջև ձգվող տարածքում, ինչպես նաև Վանա լճի հյուսիսային և արևելյան կողմերում:

Մ.թ.ա. IX դարի սկզբին ասսուրական ճնշումը ստիպում է այդ ցեղերին համախմբվել ընդդեմ Ասորեստանի: Այս ցեղերի համատեղ ջանքերով, մասնավորապես նրանցից հայերի ցեղերի, այսինքն՝ արմենների կամ հայերի գլխավորությամբ ստեղծվում է պետություն, որի թագավոր է հռչակվում արմենական կամ հայկական ծագում ունեցող Արամեն: Նա, փաստորեն, հիմնադրում է հայկական դինաստիա սկսած մ.թ.ա. 859 թվականից: Ասորեստանցիներն իրենց երկրից սահմանակից Ուրուրատրի ցեղամիության անուժով այդ պետությունն իրենց լեզվով գրած արձանագրություններում կոչում են Ուրարտու, իսկ իրենց՝ ուրարտական թագավորները, ասսուրերեն լեզվով գրած արձանագրություններում այդ պետության հիմնադիր նաիրյան ցեղերի անուժով կոչում են Նաիրի (միայն հետագայում Ռուսա I-ը (735-713 թթ.) իր ասսուրերեն լեզվով գրած արձանագրությունում կոչում է Ուրարտու):

Առաջին փուլում ուրարտական պետությունը բաղկացած էր վարչա-տարածային չորս

¹ АВНИУ, №№ 27, 29.

միավորներից, որոնցից ամեն մեկը կազմված էր մի քաղաքից և նրա շրջակա բնակավայրերից: Դրանք էին՝ Արգաշքուն, Արամալից, Զանգիունան, Սուգունիան: Դրանցից առաջին երկուսը՝ Արգաշքուն և Արամալից, տարածված էին երկրի հյուսիսային մասում, ուր ապրում էին նաիրյան էթնիկական աշխարհին պատկանող արմենները կամ հայերը և, բնականաբար, վարչա-տարածքային այդ միավորներն ունեին հայկական բնակիչներ: Դա հաստատվում է հետևյալ փաստերով: Փաստերից առաջինն այն է, որ Արամալի վարչա-տարածքային միավորի հիմքում ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը: Դա թույլ է տալիս ասելու, որ Արամալի վարչա-տարածքային միավորի բնակիչները եղել են արմենները կամ հայերը (Պ. Ն. Սարգսյան, Ուրարտական պետության կազմավորման գլխավոր փուլերը, ՄՄԱԵԺ, հ. 23, Երևան, 2004, էջ 462): Արմեններով կամ հայերով է բնակեցված եղել նաև Արգաշքուն վարչա-տարածքային միավորը, քանի որ նրա անունն էլ ստուգաբանվում է հայերենի լեզվաթիվով (այն կազմված է հայերենի «առնուլ» բայով, «գ» նախդիրով, «աչք» (հմտ. «աչք») արմատով (սեպագրերում «չ» տառ չի եղել, այն արտահայտվել է «շ» տառի տակ) և ամբողջ բառը նշանակում է «Աչքի զարնող» (Արգաշքուն եղել է նաև Արամեն թագավորի արքայական քաղաքը)):

Ի տարբերություն դրանց, Ուրարտուի մյուս երկու վարչ-տարածքային միավորները՝ Զանգիունուն և Սուգունիան, գտնվում էին երկրի հարավային մասում, ուր ապրում էին Ուրուառիի ցեղամիության հետնորդները՝ ուրարտները: Բնականաբար վարչա-տարածքային այդ միավորների բնակիչներն ունեցել են ուրարտական ծագում: Ուրարտական ծագում են ունեցել և վարչա-տարածքային այդ միավորների անունները:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ երկրի առաջին թագավոր Արամենի անվան հիմքում նույնպես ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, ինչպես որ էր Արամալի վարչա-տարածքային միավորի դեպքում, որը ցույց է տալիս ոչ միայն այն, որ Արամեն թագավորն ունեցել է հայկական ծագում, այլև այն, որ հայկական ծագում են ունեցել Արամենի ստեղծած արքայական դինաստիան, ինչպես նաև նրա գլխավորած պետությունը (Պ. Ն. Սարգսյան, Ուրարտական պետության հայկական ծագման հայտնաբերումը ըստ սեպագիր արձանագրությունների և բարձրաքանդակների, Նորք, Երևան, 2003, № 3, էջ 174-187):

Արամենի մահից հետո, երբ դեռ չարձանակում էր ուրարտական պետության պարբերական առաջին փուլը, երկրի թագավոր է դառնում Սարդուրի I-ը (832-822 թթ.), որն ուներ ուրարտական ծագում և մ.թ.ա. 832 թվականից հիմնադրում է Արմենիայի կամ Հայաստանի ուրարտական արքայական դինաստիան²: Այս ենթադրությունը հաստատվում է հետևյալ փաստերով, որոնցից առաջինը վերաբերվում է Սարդուրի I-ի, նրա արքայական դինաստիայի անդամների և նրա հոր Լուրիպրիի անունների ուրարտական ծագմանը: Այսպես՝ Սարդուրի անունը կազմված է ուրարտական աստվածների պանթեոնի «Սարդի» դիցուհու անունով, Սարդուրի I-ի հոր՝ Լուրիպրի անունը կազմված է ուրարտերենի «լուրու» (կից) և «էվրի» (տեղ) արմատներով և ամբողջ բառը նշանակում է «Տեղը կանառացի» (խոսքը արքայական կանառացի մասին է. երևի Լուրիպրին եղել է Արամենի արքայական

² YKH №№ 1-3, 319-325.

կամանոցի տնօրենը, իսկ նրա որդին էլ, որ եղել է երկրի գորահրամանատարը, Արամեի կամանոցի հետո, մ.թ.ա. 832 թ., Արամեի ճակատամարտում աստվածական զորքի միջոցով հաղթելով իր թագավորին, հռչակվել է երկրի թագավորը)։ Սարգստի I-ի մամբ համոզեա բերելով իր ղեկավարությունը, հռչակվել է երկրի թագավորը)։ Սարգստի I-ի որդի իշխուհիի անունը կազմված է ուրարտերենի «իշխուհի» (երջանիկ) արմատով և որդի իշխուհիի անունը կազմված է ուրարտական սեպագիր արձանագրություններից։ Փաստերից երկրորդը վերաբերում է ուրարտական սեպագիր արձանագրություններից։ Փաստերից երկրորդը վերաբերում է հայերենից և համապատասխանում է ուրարտերենին։

Թեև հայկական դիմաստիան Արամեի մահից հետո (մ.թ.ա. 832 թ.) անկում է ասլորում, բայց արմենները կամ հայերը տարածվում են այդ պետության մեջ։ Արամեի վարչա-տնտեսական միավորի հիմքի վրա ձևավորվում է ուրարտական պետության կենտրոնական շրջանի Արմարիի-Արմարիայի կամ Արմիրայի մարզը, որի բնակիչները եղել են արմենները կամ հայերը (Գ. Ն. Սարգսյան, Ուրարտական պետության կազմավորման գլխավոր փուլերը, ՄՄԱԵԺ, հ. 23, Երևան, 2004, էջ 462)։ Այս ենթադրությունը հաստատվում է այն փաստով, որ այդ մարզի անվան հիմքում նույնպես ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, ինչպես դա ասվեց Արամեի վարչա-տնտեսական միավորի հետ կապված։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ այդ մարզի քաղաքանունները ստուգաբանվում են հայերենի լեզվահիմքով։ Օրինակ՝ Արբու քաղաքանվան հիմքում ընկած է հայերենի «արփ» (արև) արմատը, իսկ Արմի քաղաքանվան հիմքում՝ հայերենի «արմ» (հաստատուն, անընկճելի) արմատը և այլն։

Մեր կարծիքով՝ օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունները ծագում են ուրարտական պետության կենտրոնական ու արքունի այդ Արմիրայի (Արմարիի, Արմարիայի) (հմտ. Արամեի) մարզի անունից։ Այսպես՝ այդ մարզին տրվող Արմիրայի (Արմարիի, Արմարիայի) անվան «րի»-ն կամ «րա»-ն ցեղ մատնանշող ածանց է, որն Արամեի քաղաքանվան համեմատությամբ ավելացել է այդ ցեղային երկրի անվան մեջ և ընդգծում է, թե այդ երկրի կամ մարզի բնակիչներն «արմեններն» են։ Իսկ Արմիրայի տեղանվան վերջում դրված «ի» մասնիկն ուրարտերենի հոգնակի ուղղական հոլովի վերջավորությունն է, որը տեղանուններում կարող է փոխվել «նա» վերջավորությամբ։ Օրինակ՝ Բիայնիի երկրանունը հիշատակվում է նաև Բիայնա ձևով, Լուպիհիի երկրանունը՝ Լուպիհնա ձևով։ Հետևաբար Արմիրայի երկրանվան ցեղ մատնանշող «րի» կամ «րա» ածանցն անջատելուց և «ի» ածանցը «նա» ածանցով փոխարինելուց հետո ստացվում է «Արմինա» ձևը, որով կոչվել է Արմենիա երկիրը, երբ առաջին անգամ հիշատակվել է Բեհիստունյան արձանագրության մեջ՝ որպես Ուրարտու (Ուրաշտու) անվան համարժեքություն (այստեղ Արմինա անունը վերաբերում է ամբողջ Հայկական լեռնաշխարհին, ուր կային բազմաթիվ ցեղեր, այլ ոչ թե մի ցեղին, թեև նրա հիմքում շարունակվում է մնալ «արմեններ» ցեղի անունը)։

Փաստորեն ուրարտական պետության կենտրոնական ու արքունի Արմիրայի (Արմարիի, Արմարիայի) (հմտ. Արամեի) մարզի հետ են կապված ոչ միայն արմենների ծագումը, այլև այդ ցեղի և նրա երկրի անունները։ Այս փաստը հերքում է Արմե-Օուրբիա տեսությունը, որ հորինել են որոշ տեսաբանները և դրել հայ ժողովրդի ակադեմիական պատմագրության հիմքում, ըստ որի արմեններ ցեղը և նրա երկրի անունը ծագել են ուրարտական պետության բուն սահմաններից դուրս գտնվող խորրիական ծագում ունեցող Օուր-

րիա և արամեական ծագում ունեցող Արմե երկրներից, որոնցից Արմեն անկում է ապրել Ուրարտուի թագավոր Սարգուրի II-ի (764-735 թթ.) նվաճումից հետո ու այլևս չի հիշատակվել քաղաքական ասպարեզում, իսկ Ծուրքիան էլ անկում է ապրել մ.թ.ա. 673 թ. Ասորեստանի թագավոր Ասարխադդոնի (680-669 թթ.) նվաճումից հետո ու երկուսն էլ չեն հասել հայ ժողովրդի կազմավորման փուլին (մ.թ.ա VI դ.):

Ուրարտական պետության պարբերացման երկրորդ փուլը, ինչպես արդեն ընդգծվեց, սկսվել է այն ժամանակաշրջանից, երբ ուրարտական պետությունը կազմակերպել է նվաճողական արշավանքներ, որոնց շնորհիվ նվաճել է շուրջ 130 երկրներ, հրանցից ձեռք բերել մեծ քանակությամբ կողոպուտ, ռազմագերիներ, հարկ ու տուրք, բարձրացրել իր քաղաքական հեղինակությունը արտաքին աշխարհում ու Ասորեստանից իր ձեռքը վերցրել Առաջավոր Ասիայի առաջնությունը (հեզեմոնիան): Երկրորդ փուլը հասնել է Ուրարտուի թագավորներ Իշպուինիի (822-810 թթ.), Մենուայի (810-786 թթ.), Արգիշթի I-ի (786-764 թթ.) և Սարգուրի II-ի (764-735 թթ.) կառավարման ժամանակաշրջանի հետ³: Դա Ուրարտական պետության վերելքի փուլն էր:

Երրորդ փուլը սկսվել է մ.թ.ա. 735 թվականից, երբ ուրարտական պետությունը Սարգուրի II-ի կառավարման վերջում պարտություն է կրել Ասորեստանի թագավոր Թիգլաթ-պալասար III-ից (745-727 թթ.)⁴: Այդ պարտությունից հետո ուրարտական պետության քաղաքական հեղինակությունն ընկնում է արտաքին աշխարհում և Առաջավոր Ասիայի առաջնությունը (հեզեմոնիան) Ուրարտուից անցնում է կրկին Ասորեստանին: Ուրարտական պետությունը բռնում է վայրէջքի ուղի: Այդ գործընթացն ավելի է խորանում մ.թ.ա. 714 թվականից սկսած, երբ ուրարտական պետությունն իր թագավոր Ռուսա I-ի (735-713 թթ.) կառավարման վերջում պարտություն է կրում Ասորեստանի թագավոր Սարգոն II-ից (722-705 թթ.)⁵: Դրանից հետո ուրարտական պետության վայրէջքը դառնում է անկասելի:

Եթե որոշակի է ուրարտական պետության պարբերացման երրորդ փուլի սկիզբը, որն սկսվել է մ.թ.ա. 735 թվականից, երբ Ուրարտուն պարտություն է կրել Ասորեստանից, ապա անորոշ է, թե մինչև երբ է տևել այդ փուլը, քանի որ ուրարտական պետության վերջին թագավորներ Սարգուրի IV-ի, Էրիսմեայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի կառավարման թվականներն անորոշ են: Հայտնի է միայն Սարգուրի IV-ի կառավարման սկիզբը, որը հասնում է մ.թ.ա. 635 թվականի հետ, երբ ավարտվել է Սարգուրի III-ի (645-635 թթ.) կառավարումը: Բայց թե մինչև երբ է տևել Սարգուրի IV-ի կառավարումը, անորոշ է:

Ուրարտուի թագավորների ժամանակագրությունները որոշվում են աստուրական թագավորների տեղեկությունների, հրանց ժամանակագրությունների օգնությամբ: Սակայն Սարգուրի IV-ի թագավորության ավարտի, ինչպես նաև Սարգուրի IV-ին հաջորդող ուրարտական Էրիսմեա, Ռուսա III և Ռուսա IV թագավորների մասին աստուրական աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ աստուրական պետությունն իր ուշադրությունը շեղել էր Ուրարտուից և զբաղված էր կիմերասկյութական ցեղերով և Առաջավոր Ասիայում հանում առաջնության (հեզեմոնիայի) պայքարի եղած Մեդիա ու Նոր-Բաբելոնյան պետություններով: Փաստորեն Սարգուրի IV-ի,

³ УХН, №№ 4-263 (допол. 14-442).

⁴ АВВИУ, №№ 41-45.

⁵ АВВИУ, №№ 46-55.

Էրիմենայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի կառավարման թվականները համընկել են ասսուրական պետության անկման փուլի և անմիջապես նրան մախորդող ու հաջորդող ժամանակաշրջանների հետ:

Հայկական լեոնաշխարհի այս ժամանակաշրջանի թագավորների ժամանակագրության մասին տեղեկություններ են պահպանել ավամդությունները, որոնք տեղ են գտել Հեթանոսական «Պատմություն ինը զրքից» աշխատությունում, Քսենոփոնի «Կյուրոպեդիայում» և խորենացու «Հայոց պատմությունում»: Այդ կապակցությամբ զգալի դեր ունեն պարսկական թագավորների սեպագիր արձանագրությունները և մեդիական ու պարսկական թագավորների ժամանակագրությունները: Այդ հարցում ինչ-որ չափով օգտակար են նաև բաբելոնական սեպագիր ժամանակագրությունների, ինչպես նաև Աստվածաշնչի տեղեկությունները:

Հստ Բաբելական սեպագիր ժամանակագրությունների, Աստվածաշնչի, ինչպես նաև պարսկական թագավորների սեպագիր արձանագրությունների և Հեթանոսական, խորենացու և Քսենոփոնի հասած ավամդությունների տվյալների, ասսուրական պետության անկման փուլում (մ.թ.ա. 612-609 թթ.) և նրան անմիջապես մախորդող ու հաջորդող ժամանակաշրջանում Հայկական լեոնաշխարհում գոյություն է ունեցել միայն մի պետություն, որին ենթարկվել են այդ լեոնաշխարհի մյուս թուրքերը ու ցեղամիությունները:

Բաբելական սեպագիր ժամանակագրությունները, որոնք գրվել են սեմական ծագում ունեցող բաբելոնյան լեզվով, այդ պետությունը համարում են Ուրաշտում (^{KUR}Urašû)⁶, որը համապատասխանում է սեմական ծագում ունեցող ասսուրերեն լեզվով գրված սեպագիր արձանագրությունների Ուրարտու (^{KUR}Urarṣu) պետությանը (Գ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատ երկիրը» ըստ սեպագիր արձանագրությունների և ժողովրդական ավամդությունների, ՊԲՀ, 2003, N 4, էջ 254-260): Հստ բաբելոնական ժամանակագրությունների, այդ պետությունը մնում է Բաբելոնի թագավոր Նաբուասալուսուրի կամ Նաբուասալուսարի և Մեդիայի թագավոր Ումաքիշթարի (Հեթանոսական մոտ՝ Կիաքսար (625-585 թթ.), խորենացու մոտ՝ Վարբակես) մվաճումների սահմաններից դուրս, այսինքն՝ այն շարունակում է կանգուն մնալ ասսուրական պետության կործանվելուց հետո:

Խորենացուն⁷ հասած ավամդությունները, որոնք գրվել են հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվով, այդ պետությունը անվանում են Արմենիա անունով: Այդ ավամդությունները նաև տեղեկացնում են, որ Վարբակեսը (Ումաքիշթար-Կիաքսար) Արմենիայի այդ ժամանակվա թագավոր Պարուրիմ, որն օգնել էր իրեն ասսուրական պետության տապալման գործում (մ.թ.ա. 612-609 թթ.), թագ է ուղարկում, այսինքն՝ ճանաչում է նրա թագավորությունը:

Աստվածաշունչը⁸, որը գրվել է սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով, տեղեկություն է պահպանել այն մասին, որ 'RRT կամ Ararat կոչվող թագավորությունը, որը համապատասխանում էր ասսուրական սեպագիր արձանագրությունների Ուրարտու (Մարֆս) և բաբելոնական սեպագիր արձանագրությունների Ուրաշտու (Մաֆս) պետությանը, այդ

⁶ C. J. Gadd, *The fall of Nineveh*, London, 1923, p. 36, lin. 72; АВИИУ, N 82.

⁷ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I (ԺԲ. ԺԳ, ԺԴ, ԻԱ, ԻԲ):

⁸ Աստվածաշունչ, Գիրք Տիև և Նոր Կտակարանաց. Վիեննա, 1957; Библия (Книга ветхого и нового завета), Вена, 1957, LI, 27; АВИИУ, N 83.

ժամանակ գոյություն ունեւր և իր գործով օգնել է Պարսկաստանի թագավոր Կյուրոս Ա- ծին (550-529 թթ.) մ.թ.ա. 539 թվականին Բաբելոնի վրա արշավելիս (Ն. Ադոնց, Հայաս- տանի պատմություն, Երևան, 1972, էջ 282-283): Խորենացուն⁹ հասած ավանդությունները, որոնք, ինչպես ասվեց, գրվել են հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվով, 'RRT- Ararat-Urartu-Urashtu թագավորությունը համարում են Արմենիայի (Armenia) թագավորու- լուն (Դ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատ երկիրը» ըստ սեպագիր արձանագրու- լւոնների և ժողովրդական ավանդությունների, ՊՐՀ, 2003, N 4, էջ 254-260):

Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ը (522-485) իր Բեհիստունյան եռալեզու սեպագիր արձանագրությամբ¹⁰ բաբելոնեւ տարբերակում հիշատակում է իր դեւ ապստամբած Ուրաշտու (աստուրեւեւ՝ Ուրարտու) երկրի և նրա բնակիչների՝ ուրաշտներին (աստուրե- րեւ՝ ուրարտներ) մասին, որոնց հնագաւնդեցնելու համար իրար հաջորդող հինգ արշավաւն- ցներ է կազմակերպում նրանց վրա իր գորավարներ Դադարշիշի և Վահումիսայի գլխավո- րությամբ, հինգ արյունահեղ ճակատամարտեր է տալիս այդ երկրի Զուգա ավանում, Տիգ- րա, Ուհիամա բերդերում, աստուրական իգալա մարզում և վերջում Ուրաշտուի կամ Ուրարտուի Աուդիյարա գավառում: Այդ բոլորից հետո նոր Ուրաշտու կամ Ուրարտու եր- կիրը եւթարկում իրեն: Դարեհ I-ի այդ նույն արձանագրության պարսկերեն տարբերա- կում Ուրաշտու կամ Ուրարտու երկրի և ուրաշտացիներ կամ ուրարտացիներ բնակիչների փոխարեն հիշատակվում են Արմինա (հունարեն՝ Արմենիա) երկիրը և արմիներ (հունա- րեն՝ արմեններ) բնակիչները, որոնք ապստամբել են Դարեհ I-ի դեւ և տվել հինգ արյու- նահեղ ճակատամարտեր: Այս փաստը ցույց է տալիս, որ սեւական ծագում ունեցող բա- բելոններեն լեզվով երկիրը կոչվել է Ուրաշտու կամ Ուրարտու, նրա բնակիչները՝ ուրաշ- տացիներ կամ ուրարտացիներ, իսկ հնդիրաւական ծագում ունեցող պարսկերեն լեզվով երկիրը կոչվել է Արմինա կամ Արմենիա, նրա բնակիչները՝ արմիներ կամ արմեններ աւնուններով:

Հույն պատմիչ Հերոդոտոսն¹¹ իր «Պատմություն ինը գրքից» երկում, որը գրվել է հնդեվրոպական ծագում ունեցող հունարեն լեզվով, տեղեկություն է պահպանել այն մա- սին, որ Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ը (522-485 թթ.) իր թագավորության սկզբին, այսինքն՝ մ.թ.ա. 522 թ., Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող բոլոր երկրների թագավորությունները վերացրել է, այդ երկրները դարձրել պարսկական սատրապու- լւոններ, որոնց վրա իրենց թագավորների փոխարեն որպես կառավարիչներ է նշանակել պարսկական սատրապներին: Ընդ որում, Դարեհ I-ը Արմենիայի վրա որպես սատրապ է նշանակել իր փեսա Արտոքսմեսին:

Հնդեվրոպական ծագում ունեցող հունարեն լեզվով գրված Հերոդոտոսի պատմության սույն հատվածի Արմենիա երկրաւնուը պետք է ընկալել նաև որպես սեւական լեզուներով ավանդված Ուրաշտու կամ Ուրարտու երկրաւնում այնպես, ինչպես Դարեհ I-ի Բեհիս- տունյան եռալեզու սեպագիր արձանագրության հնդիրաւական ծագում ունեցող պարս- կերեն լեզվով տարբերակի Արմինա կամ Արմենիա երկրաւնուն է ընկալվել որպես սեւա- կան ծագում ունեցող բաբելոնեւ լեզվով ավանդված տարբերակի Ուրաշտու կամ Ուրար-

⁹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I (ԻՊ):

¹⁰ F. H. Weissbach, Die Keilinschriften der Achameniden, S. 8-75.

¹¹ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, III, § 89, VII, § 7:

տու երկրամուկ: Այդպես պետք է ըմկալել մահ Քսենոփոնի հնդեվրոպական ծագում ունեցող հունարեն լեզվով և խորենացու հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն լեզվով գրված աշխատությունների Արմենիա երկրամուկը: Այդ եմ հաստատում խորենացում հազարավոր Արամեի կամ Արամի հետ, որին այդ ավանդությունները համարում են Արմենիայի թագավոր՝ արմատական կապ տեսնելով Արամեի կամ Արամի անվան և Արմենիա երկրանվան միջև:

Հերոդոտոսի պատմության վերոհիշյալ հատվածից հասկանալի է, որ Դարեհ I-ի թագավորության սկզբին, այսինքն՝ մ.թ.ա. 522 թ. Ուրարտու-Արմենիա երկիրն ապստամբել է Պարսկաստանի դեմ այն պատճառով, որ Դարեհ I-ը Ուրարտու-Արմենիային զրկել է սեփական թագավորությունից, այդ երկիրը վերածել պարսկական սատրապության, որի փական թագավորի փոխարեն որպես կառավարիչ է նշանակել պարսկական վրա սեփական թագավորի փոխարեն որպես կառավարիչ է նշանակել պարսկական սատրապ Արտոքսեսին: Աճշուշտ սա է այն արմատական պատճառը, որ Ուրարտու-Արմենիան, ինչպես ընդգծվեց վերևում, կենաց ու մահու պայքարի է դուրս եկել Պարսկաստանի դեմ, ինչն արյունահեղ ճակատամարտեր է տվել, որոնք տեղի են ունեցել երկուտանի դեմ, ինչն արյունահեղ ճակատամարտեր է տվել, որոնք տեղի են ունեցել երկու փուլով: Առաջին փուլում տեղի են ունեցել երեք ճակատամարտեր, երբ պարսկական զորքի գլուխ կանգնած էր ուրարտու-արմենական ծագում ունեցող զորահրամանատար Դադարշիշը, իսկ երկրորդ փուլում տեղի են ունենում երկու ճակատամարտեր, երբ պարսկական զորքի գլուխ կանգնած էր պարսկական ծագում ունեցող Վահումիսան: Առաջին փուլի երեք ճակատամարտերն էլ տեղի են ունենում Ուրարտու-Արմենիա երկրի ներսում, իսկ երկրորդ փուլի երկու ճակատամարտերից առաջինը տեղի է ունենում ասսուրական իզալա ամրոցում, երկրորդը մոտ միայն Ուրարտու-Արմենիա երկրի ներսում: Առաջին փուլում Ուրարտու-Արմենիայի զորքը հաղթանակի է հասնում: Այս ենթադրությունը հաստատվում է երկու փաստով: Առաջինն այն է, որ Դարեհ I-ը ստիպված մոտ զորք է ուղարկում Ուրարտու-Արմենիա երկրի վրա մոտ զորահրամանատար Վահումիսայի գլխավորությամբ: Երկրորդ փաստն այն է, որ Վահումիսան իր առաջին ճակատամարտը տալիս է ոչ թե Ուրարտու-Արմենիա երկրի ներսում, այլ մոտ սահմաններից դուրս՝ ասսուրական իզալա ամրոցում: Դա նշանակում է, որ առաջին փուլում իրոք Ուրարտու-Արմենիայի զորքը հաղթել է պարսկական զորքին, դուրս քշել երկրի սահմաններից, ամրացել ասսուրական իզալա ամրոցում և այնտեղ էլ մախապատրաստվել դիմակայելու պարսկական մոտ արշավանքին, իսկ վերջինիս զորահրամանատար Վահումիսան էլ հենց այնտեղ է տալիս իր առաջին ճակատամարտը: Առաջին ճակատամարտում Վահումիսան հաղթանաբար ձեռք է բերում առավելություն, ապա մտնում է Ուրարտու-Արմենիա երկրի սահմաններից ներս, տալիս իր երկրորդ ճակատամարտն այդ երկրի Առտիյարա գավառում և ամեն ինչ ավարտում իր օգտին: Ուրարտու-Արմենիան վերածվում է պարսկական սատրապության՝ զրկվելով իր սեփական արքայական զանից, իր պետությունից:

Սխալվել են հետազոտողներ Լեֆման-Հաուպտը¹² և Գ. Ա. Մելիքիշվիլին¹³, որոնցից առաջինի կարծիքով ուրարտական պետությունն անկում է ապրել մ.թ.ա. 585 թվականին, իսկ երկրորդի կարծիքով՝ մ.թ.ա. 590 թվականին: Հաշվի առնելով, որ ինչ արևելքի առա-

¹² C. F. Lehmann-Haupt, *Armenien einst und jetzt*, II (2), S. 81.

¹³ Г. А. Меликишвили, *Найри-Урарту*, стр. 320.

քից հզոր պետությունը, այն է՝ Ասորեստանը, պայքարել է իր պետության անկման դեմ շուրջ չորս տարի՝ մ.թ.ա. 612-609 թվականներին, ուստի Ուրարտուն էլ, որպես հիմ արևելքի երկրորդ հզոր պետություն, պիտի հայտնի պայքար մղեր իր պետության անկման դեմ: Սակայն պատմությունը մ.թ.ա. 590 և մ.թ.ա. 585 թվականներին չի արձանագրում նման պայքարի մասին որևէ փաստ: Պատմությունը նման պայքարի մասին է արձանագրում մ.թ.ա. 522 թվականին, երբ նման պայքար է մղում Ուրարտու-Արմենիան Պարսկաստանի դեմ հաճուն իր պետությամբ:

Ուստի կարելի է եզրակացնել, որ ուրարտական պետությունն իր գոյությունը պահպանել է մինչև մ.թ.ա. 522 թվականը: Դրանով պարզվում է նաև այն, որ Ուրարտուի վերջին թագավոր Ռուսա IV-ը կառավարել է մինչև մ.թ.ա. 522 թվականը:

Եթե մինչև հիմա հայտնի էր Ուրարտուի վերջին թագավորներից Սարգուրի IV-ի կառավարման սկիզբը, որը համապատասխանում էր մ.թ.ա. 635 թվականին, այժմ պարզ դարձավ այդ թագավորներից Ռուսա IV-ի կառավարման վերջը, որը, ինչպես ընդգծվեց վերևում, համապատասխանում է մ.թ.ա. 522 թվականին: Փաստորեն Ուրարտու-Արմենիայի թագավորներ Սարգուրի IV-ի, Էրիմենայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի կառավարումը տևել է մ.թ.ա. 635 թվականից մինչև մ.թ.ա. 522 թվականը: Հիշյալ ժամանակաշրջանում խորենացում և հսկողությունից հասած ավանդությունները հիշատակում են նույն երկրի, նույն պետության թագավորներին, քայքայող շանոններով:

Հստ խորենացում¹⁴ հասած ավանդությունների, Մեդիայի թագավոր Վարթակեսի (բաբելոնական սեպագիր ժամանակագրություններում՝ Ումաքիշթար, Հերոդոտոսի պատմությունում՝ Կիաքսար) (625-585 թթ.) օրոք, երբ կործանվում է ասսորական պետությունը մ.թ.ա. 612-609 թվականներին, «մեր երկրի», այսինքն՝ Ուրարտու-Արմենիայի թագավորն էր Պարուր Ակայորդին:

Հստ Հերոդոտոսին¹⁵ հասած ավանդությունների, Մեդիայի ու Լյուդիայի (Լիդիայի) միջև մղվող քառամյա պատերազմից հետո մ.թ.ա. 585 թ. կնքված պայմանագրով Հալիս գետից դեպի արևմուտք ձգվող երկրներն անցնում են Լյուդիայի գերիշխանության տակ, իսկ նույն գետից արևելք ձգվող երկրները՝ Մեդիայի գերիշխանության տակ, որի մեջ է մտել, բնականաբար, նաև Ուրարտու-Արմենիա պետությունը: Ուրարտու-Արմենիան, անցնելով Մեդիայի գերիշխանության տակ, դառնում է նրան հարկատու երկիր: Այդ ժամանակից սկսվում է Ուրարտու-Արմենիա պետության անկման փուլը, որը տևում է մինչև Դարեհ I-ի թագավորության սկիզբը, այսինքն՝ մինչև մ.թ.ա. 522 թվականը, երբ Ուրարտու-Արմենիան զրկվում է իր պետությունից և վերածվում պարսկական սատրապության:

Խորենացում¹⁶ հասած ավանդություններից կարելի է ենթադրել, որ Մեդիայի գահին Վարթակես-Ումաքիշթարին (Հերոդոտոսի մոտ՝ Կիաքսար) հաջորդող Աժդահակ-Աստիագեսի (585-550 թթ.) թագավորության ժամանակ Ուրարտու-Արմենիայում թագավորում էր Տիգրանը, որի քույր Տիգրանուհին ամուսնացել էր Աժդահակ-Աստիագեսի հետ: Տիգրանը քրոջից իմանում է, որ Աժդահակ-Աստիագեսը դավեր է լարում, որ իրեն սպանի,

¹⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I (ԻԱ, ԻԲ):

¹⁵ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, I, § 72:

¹⁶ Խորենացի, Հայոց պատմություն, I (ԻԳ-ԼԱ):

բայց ինքը նախաճաշակ է լինում և սպանում նրան: Քսենոփոնի¹⁷ հասած ավանդություններից հասկացվում է, որ Տիգրանը եղել է Արմենի (խորենացում հասած ավանդությունում՝ Երվանդի) հայրը, որը ունեցել է շատ զանգեղ:

Ըստ Քսենոփոնի¹⁸ հասած ավանդությունների, Արմեն-Երվանդը Ուրարտու-Արմենիա երկրում թագավորել է Պարսկաստանի թագավոր Կյուրոս Մեծի (550-529 թթ.) ժամանակ: Ըստ Քսենոփոնի¹⁹ հասած ավանդությունների, Երվանդի որդի Տիգրանը եղել է նաև: Ըստ Քսենոփոնի²⁰ հասած ավանդությունները վկայում են, որ Կյուրոս Մեծի որսընկերը՝ Քսենոփոնի²⁰ հասած ավանդությունները վկայում են, որ Կյուրոս Մեծի ժամանակ Տիգրանը եղել է Ուրարտու-Արմենիայի գորահրամանատարը:

Ըստ խորենացում²¹ հասած ավանդությունների, Տիգրանը թագավորել է Ուրարտու-Արմենիայի վրա Դարեհ I-ից (522-485 թթ.) առաջ և Կյուրոս Մեծից հետո, այսինքն՝ 529-522 թվականներին: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Պարսկաստանում թագավորում էր Կամբյուսեսը (529-522): Խորենացում հասած ավանդությունները հաղորդում են, որ Երվանդ-Արմենի որդի Տիգրանից հետո Ուրարտու-Արմենիայում այլևս թագավորներ չեն եղել, Տիգրանը եղել է այդ պետության վերջին թագավորը²²:

Ավանդել է, որ, ըստ ավանդությունների տվյալների, Ուրարտու-Արմենիայի արքա Տիգրանի թագավորությունը հասել է մինչև մ.թ.ա. 522 թվականը, երբ այդ երկիրը Դարեհ I-ի իշխանության սկզբին գրկվում է իր գահից. վերածվում պարսկական սատրապության, թափառվում, ինչպես ընդգծվեց վերևում, ըստ Հերոդոտոսի²³ հասած ավանդությունների, թագավորի փոխարեն կառավարիչ է նշանակվում պարսկական սատրապ Արտաշեսը: Վերևում էլ իմացանք, որ, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների (խոսքը Դարեհ I-ի սեպագիր արձանագրությունների մասին է), Հայկական լեռնաշխարհում գտնվող Ուրարտու-Արմենիա պետության վերջին թագավորի (այստեղ պետք է նկատի ունենալ Ռուսա IV-ին) իշխանությունը նույնպես հասել է մինչև մ.թ.ա. 522 թվականը: Փաստորեն Ուրարտու-Արմենիա պետության անկման ժամանակի հետ կապված սեպագիր արձանագրությունների և ժողովրդական ավանդությունների փաստերն ամբողջովին համընկնում են:

Գրեթե համընկնում են նաև սեպագիր արձանագրություններում հիշատակված մեզ հետաքրքրող թագավորներից առաջինի՝ Սարգուրի IV-ի և ավանդություններում հիշատակված մեզ հետաքրքրող թագավորներից առաջինի՝ Պարուրի քաղաքական ասպարեզ գալու ժամանակաշրջանը: Իհարկե, որոշ տարբերություն կա: Դրա պատճառն այն է, որ Պարուրի թագավորության սկիզբն ավանդական է և պայմանական, իսկ Սարգուրի IV-ին ավանդված է սեպագիր արձանագրություններով և ավելի հավաստի է:

Փաստորեն սեպագիր արձանագրություններում հիշատակված Սարգուրի IV-ը, Էրիմեման, Ռուսա III-ը, Ռուսա IV-ը և ավանդություններում հիշատակված Պարուրը, «Երվանդ-Արմենի հայր Տիգրանը», «Երվանդ-Արմենը», «Երվանդ-Արմենի որդի Տիգրանը» թագավորել են մինևույն տարածքում, մինևույն ժամանակաշրջանում և մինևույն պետությամբ:

¹⁷ Քսենոփոն, Կյուրոսյան, III, §§ 1-2:

¹⁸ Լույսը:

¹⁹ Լույսը:

²⁰ Լույսը:

²¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I (ԻԲ):

²² Լույսը:

յունում: Մինճույն տարածքում, մինճույն ժամանակաշրջանում և մինճույն պետությունում թագավորելու հանգամանքը թույլ է տալիս սեպագիր արձանագրություններում հիշատակված Սարդուրի IV, Էրիմենա, Ռուսա III, Ռուսա IV թագավորներին համապատասխանաբար համադրել ավանդություններում հիշատակված Պարույր, «Երվանդ-Արմենի հայր Տիգրան», «Երվանդ-Արմեն», «Երվանդ-Արմենի որդի Տիգրան» թագավորներին (Ռ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատի թագավորությունը» ըստ սեպագիր արձանագրությունների, Նոր-Ռար, 2003, N 4, էջ 258-259): Այստեղ տարբերությունը նրանց անունների մեջ է: Իսկ այդ տարբերությունը թխում է նրանից, որ դրանցից առաջինները հիշատակվել են սեպագիր արձանագրություններում²³, իսկ երկրորդը՝ ավանդություններում:

Ի հարկե, զարմանք չպետք է հարուցի տարբեր անուններ կրող թագավորների այդպիսի համադրությունը, քանի որ փաստեր կան, որ Ուրարտու-Արմենիայի ուրիշ թագավորներ էլ կրել են կրկնակի անուններ: Այսպես, օրինակ՝ Ռուսա I թագավորը կրել է նաև Ուեդիարի («Uedipri»)՝ 23 անունը, իսկ Ռուսա II-ը՝ Թայա («Ja-ja-a»)՝ 24 անունը:

Ինչպես վերևում ասվեց, խորենացում և Քսենոփոնին հասած ավանդությունները վկայում են, որ Պարույրը թագավորել է Վարբակես-Ումաքիշթար-Կիաքսարի ժամանակ, այսինքն՝ 625-585 թթ., «Երվանդ-Արմենի հայր Տիգրանը»՝ Աժդահակ-Աստիագեսի ժամանակ, այսինքն՝ 585-550 թթ., «Երվանդ-Արմենը»՝ Կյուրոս Մեծի ժամանակ, այսինքն՝ 550-529 թթ., «Երվանդ-Արմենի որդի Տիգրանը»՝ Կամբյուսեսի ժամանակ, այսինքն՝ 529-522 թթ.: Այդ մույմ ժամանակագրությունները կարելի է վերագրել նաև սեպագիր արձանագրություններում հիշատակված Ուրարտու-Արմենիայի թագավորներ Սարդուրի IV-ին, Էրիմենային, Ռուսա III-ին, Ռուսա IV-ին՝ միայն այն տարբերությամբ, որ Սարդուրի IV-ի թագավորությունը, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների, սկսվել է մ.թ.ա. 635 թվականից (անշուշտ այդ մույմ ժամանակաշրջանից է թագավորել նաև Պարույրը, քանի որ Սարդուրի IV-ի թագավորության սկիզբը, ինչպես ընդգծվեց վերևում, հիշատակված է սեպագրերով և ունի է, իսկ Պարույրինը՝ ավանդական է ու պայմանական): Ուստի կարելի է ասել, որ Սարդուրի IV-ը թագավորել է 635-585 թթ., Էրիմենա՝ 585-550 թթ., Ռուսա III-ը՝ 550-529 թթ., Ռուսա IV-ը՝ 529-522 թթ.²⁵ (Ռ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատի թագավորությունը» ըստ սեպագիր արձանագրությունների, Նոր-Ռար, 2003, N 4, էջ 259):

Մատնանշված փաստերը ցույց են տալիս, որ ուրարտական պետության պարբերացման 3-րդ փուլը տևել է մինչև մ.թ.ա. 585 թվականը, որին հաջորդել է ուրարտական պետության պարբերացման այն փուլը, երբ Ուրարտուն կորցնում է իր անկախությունը և անցնում Մեդիայի գերիշխանության տակ, դառնում նրան հարկատու երկիր: Ուրարտական պետության պարբերացման երրորդ փուլը համընկնում է Ուրարտուի թագավորներ Ռուսա I-ի (735-713 թթ.), Արգիշթի II-ի (713-685 թթ.), Ռուսա II-ի (685-645 թթ.), Սարդուրի III-ի (645-635 թթ.), Սարդուրի IV-Պարույրի (635-585 թթ.) կառավարման ժամանակաշրջանի հետ: Այս փուլն ուրարտական պետության վայրէջքի փուլն էր:

Թեև այս փուլի ուրարտական որոշ թագավորներ փորձում էին նվաճողական արշա-

²³ YKH, N 267, стр. 5.

²⁴ J. Kaudtze, Assyrische Gebete und den Sonnengott, Leipzig, 1893, I, & 48; АВИИУ, N 68 (a).

²⁵ Ռ. Ն. Սարգսյան, Բիբլիական «Արարատի թագավորությունը» ըստ սեպագիր արձանագրությունների (Նոր-Ռար, Երևան, 2003, N 4), էջ 257-260:

վանքներ կազմակերպել և բարձրացնել իրենց անտուռան քաղաքական հեղինակությունն արտաքին աշխարհում (օրինակ՝ Ռուսա I-ը, Արգիշթի II-ը, Ռուսա II-ը), բայց իզուր, ժամանակն իր վճիռը կայացրել էր, և Ուրարտուի վայրէջքը անդառնալի էր:

Ուրարտական պետության պարբերացման 4-րդ փուլը սկսվում է. ինչպես ընդգծվեց վերևում, Մեդիայի ու Լյուսիայի (Լիդիայի) միջև մ.թ.ա. 585 թվականին կնքված պայմանագրի ժամանակաշրջանից, որը Ռարարտու-Արմենիան անցնում է Մեդիայի գերիշխանության տակ՝ կորցնում իր քաղաքական անկախությունը, դառնում Մեդիային հարկատու երկիր, թուլանում, բռնում անկման ճանապարհ: Թեև Լյուրոս Մեծի ժամանակ երվանդ-Արմենը և Դարեհ I-ի ժամանակ ժողովուրդը պայքարի են եղնում անկախության համար, բայց հրաճեց չի հաջողվում վերանվաճել անկախությունը:

Չորրորդ փուլը համընկնում է Ուրարտու-Արմենիայի թագավորներ Էրիմեմա-Երվանդ-Արմենի հայր Տիգրանի (585-550 թթ.), Ռուսա III-Երվանդ-Արմենի (550-529 թթ.) և Ռուսա IV-Երվանդ-Արմենի որդի Տիգրանի (529-522 թթ.) կառավարման ժամանակաշրջանի հետ: Դա ուրարտական պետության անկման փուլն էր:

Ուրարտու-Արմենիա պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորների կամ այդ պետության վերջին երեք թագավորների՝ Էրիմեմայի (585-550 թթ.), ճրա որդի Ռուսա III-ի (550-529 թթ.) և վերջինիս որդի Ռուսա IV-ի (529-522 թթ.) թագավորության սկզբից, այսինքն՝ մ.թ.ա. 585 թվականից, երբ ավարտվում է Մեդիայի ու Լիդիայի միջև մղվող քառամյա պատերազմն ու կնքվում հաշտության պայմանագիրը, որով Հալիս գետից դեպի արևմուտք գտնվող երկրներն անցնում են Լիդիայի գերիշխանության տակ, իսկ այդ գետից դեպի արևելք գտնվող երկրները, որոնց թվում նաև Ուրարտու-Արմենիան, անցնում են Մեդիայի գերիշխանության տակ, դառնում ճրա հարկատուները, փոխվում է Ուրարտու-Արմենիայի արքայական դինաստիան:

Այս ենթադրությունն ամենից առաջ հաստատվում է այն կարևոր փաստով, որ Ուրարտու-Արմենիայի արքաների ցուցակում Էրիմեման հիշատակվում է Սարգուրի IV-ից հետո, այսինքն՝ Էրիմեմայի հայրը պետք է լինե՛ր Սարգուրի IV-ը, բայց Էրիմեմայի սեպագիր արձանագրությունում, ուր աղարտված է ճրա հայրանվան վերջին մասը և պահպանված է միայն ճրա առաջին մասը, այդ հայրանունը սկսվում է ոչ թե «Սար» վանկով, այլ «Ար» կամ «Ռու» վանկով.

«(Երեսի կողմ) - 1) LUGAL-še a-li ti-i-e 2) ^DHal-di-ERUM-di ^L0 KUG ^{MEŠ} 3) A-lu-a-ni-ni ^L0 MU ^{MEŠ} 4) za-ni-da-bi TI DINGIR 5) ^{SAL}si-la-a 6) Mu-i-da-a-i ^L0 MU 7) MIN-e ma-nu-ú-bi 8) E.GAL-ni bi-ni-e 9) LUGAL-še bi-du-ú-ni 10) A-lu-a-ni-gi ^L0 MU 11) mi-i a-lu-šá-i-ni.... (հակառակ կողմ) - 1) bi-di a-r-i-e-e 2) a-li-ú-ni

(Կճիք)

'E-ri-me-na-ni 'A[r...](կամ 'R[u...])²⁶

«(Երեսի կողմ) - Ահա ինչ է (ասում) թագավորը՝ ասա խաղիքուրային՝ «փողի մարդուն», Ալուանի «հացթուխի» («խոհարարի») մասին. սիրելի լինի քո կյանքը աստծու իսկությանը: Մի աղչիկ, որը Մուդիա «հացթուխին» («խոհարարին») էր, ես թույլ տվեցի ճրան կին դառնալ: Պալատից այժմ թագավորը ճրան ետ վերադարձրեց Ալուանի «հացթուխին»:

²⁶ И. М. Дьяконов, УПД, N3; Г. А. Меликишвили, УКН, N457.

(«խորհարարից»): Ա.Գեորգիյան (Հակառակ կողմ)՝ վերադարձրու. տուր:

(կնիք)

Էրիմենա Ա[ր ...] (կամ Ռ[ու ...]):

Սեպագիր տեքստում տեղ գտած այս շատ կարևոր փաստը հաստատում է, որ Էրիմենայի հայրը ոչ թե Սարգսի IV-ն է, այլ մի ուրիշ անձնավորություն, որը արքա չի եղել, և նրա անունը չի հիշատակվել Ուրարտու-Արմենիա պետության արքաների ցուցակում: Փաստորեն Էրիմենայով սկսվել է Ուրարտու-Արմենիա պետության բոլորովին նոր արքայական դինաստիա:

Ի դեպ, մեծ երևույթ անցյալում էլ տեղի է ունեցել Ուրարտու-Արմենիա պետության արքայական դինաստիայի հետ կապված: Նախորդ շարադրանքից մեզ հայտնի է, որ դա տեղի է ունեցել Ուրարտու-Արմենիայի առաջին թագավոր Արամենի (859-832 թթ.) հետ ջաղաքական ասպարեզ եկած Սարգսի I-ի (832-822 թթ.) հետ կապված, որն իր սեպագիր տեքստերում հիշատակում է, թե իր հայրը ոչ թե Արամեն է, այլ Լյութիպրին, որը թագավոր չի եղել: Հետևաբար Սարգսի առաջինով սկսվում է արքայական նոր դինաստիա:

Փաստերը հաստատում են, որ Ուրարտու-Արմենիա պետության պարբերացման չորրորդ փուլում առաջացած վերոհիշյալ նոր արքայական դինաստիան ունեցել է հայկական ծագում: Այդ փաստերից մեկը կապված է Ուրարտու-Արմենիա պետության վերջին երեք թագավորների կամ այդ պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորների հետ, որոնք հիշատակված են ոչ միայն սեպագիր արձանագրություններում, այլև ավանդույթներում, այդ թվում՝ Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատության մեջ տեղ գտած ավանդույթում²⁷: Այդ ավանդական թագավորներն են՝ Արմենը (550-529 թթ.), նրա որդի Տիգրանը (529-522 թթ.) և Արմենի հայրը (585-550 թթ.), որի անունը չի հիշատակվել Քսենոփոնի «Կյուրոպեդիայում»: Այստեղ ուշագրավ է այն, որ Արմեն անվան հիմքում ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, որով ընդգծվում է, թե այդ անունը կրող Արմեն թագավորն ունեցել է հայկական ծագում: Բնականաբար հայկական ծագում են ունեցել նաև նրա հայրը և նրա որդին: Հավանաբար Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» մեջ տեղ գտած ավանդույթում հիշատակված Ուրարտու-Արմենիա պետության վերջին երեք թագավորների մեծ սեպագիր արձանագրություններում հիշատակված այդ պետության վերջին երեք թագավորները կամ այդ պետության պարբերացման չորրորդ փուլի թագավորները մուլմպես ունեցել են հայկական ծագում: Թերևս դա է պատճառը, որ որոշ հնչյունափոխությամբ հանդերձ սեպագիր տեքստերում հիշատակված Էրիմենա անվան հիմքում ակնհայտաբար ընկած է օտարների կողմից հայ ժողովրդին տրվող «արմեն» և նրա երկրին տրվող «Արմենիա» անունների «արմ» արմատը, ինչպես դա նկատվեց Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատության մեջ տեղ գտած ավանդույթում հիշատակված Արմեն անվան մեջ: Սրանով ընդգծվում է, թե ավանդական Արմենի մեծ սեպագիր արձանագրությունների Էրիմենան էլ ունեցել է հայկական ծագում:

Փաստերից հաջորդը մատնաձշում է, որ «արմ» արմատով կազմված անուն Էրիմենա-

²⁷ Քսենոփոն, Կյուրոպեդիա, III, I, 33:

ՏԵՍԱԿԵՏ

ԶԱՐՈՒԴ՝ ՆԱԿՈՐԹԱՆ

ԵՊՆ Նայ արվեստի պատմության և արևմտյան ամբիոն

ՕՁՈՒՆԻ ԿՈԹՈՂԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՆԱՐՑԻ ՀՈՒՐՋ

Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի արվեստը հարուստ է ճարտարապետական, քանդակագործական և գեղանկարչական հուշարձաններով, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում արվեստը ուսումնասիրողների համար:

Քանդակագործությունը բավականին հարուստ ավանդույթներ ունի Հայաստանում: Միջնադարում այն հանդես է եկել որպես տաճարի հարդարանքի մաս կամ որպես ինքնուրույն հուշարձան, որոնցից առանձին խումբ են կազմում քառակող կոթողները: Այս հուշարձանները, որոնք բավականին մեծ թվով հայտնաբերվել են Հայաստանի տարածքում, թվագրվում են 5-7-րդ դարերով և որից հետո այլևս չեն կանգնեցվում: Այս փաստն արդեն իսկ խոսում է տվյալ հուշարձանների կարևորության մասին, որոնք մեծ նպաստ են ունեցել Հայաստանում քրիստոնեական մշակույթի ձևավորման և հաստատման գործում: Հետաքրքիր է, որ թեմատիկ և խորհրդանշական պատկերներով քարե կոթողներ հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլև արևելաքրիստոնեական աշխարհի այլ երկրներում՝ Եգիպտոսում, Սիրիայում, Վրաստանում, և նույնպես թվագրվում են 5-7-րդ դդ.¹. որը ևս վկայում է Հայաստանի և այդ երկրների միջև եղած մշակութային սերտ կապերի մասին:

Հայկական քարե կոթողների շարքում առանձնակի տեղ է գրավում Օձունի հուշարձանը, որին բազմիցս անդրադարձել են գիտնականները²: Հուշարձանը հետաքրքիր է նրանով, որ այստեղ կանգնեցված է ոչ թե մեկ, այլ երկու կոթող, և ի տարբերություն մյուս կոթողների, ներկայացված է բավականին ընդարձակ պատկերաշար: Սակայն Օձունի հուշարձանը, ինչպես և մյուս քառակող կոթողները, դեռ բավարար չափով չեն ուսումնասիր-

¹ Պատկերաքանդակներով քարե խաչեր հայտնի են մաս ինչում: Ձմայան որ դրանք թվագրվում են 7-10-րդ դդ., սակայն իմաստով շատ մոտ են արևելաքրիստոնեական հուշարձաններին, որտեղից էլ. ըստ Էռլսթամ, սերում են (Մուսի խաչը 7-րդ դ., Մուկեդդախիճը 9-10-րդ դդ.): Sbu' H. Richardson, *Observation on Christian Art in Early Ireland, Georgia and Armenia. // Irland and Insular Art A.D. 500-1200. Dublin, 1987; idem: The Concept of high Cross. // Irland und Europa: Die Kirche im Frühmittelalter. Stuttgart, 1984.*

² J. Strzygowski, *Die Baukunst der Armenier und Europa. Viena, 1891; Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները 4-7-րդ դդ. Եր., 1949; Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ. Նյու Յորք, 1944; Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Եր., 1975; Զույգի՝ Օձունի և Բրդաձորի կոթողները // Պատմա-քանդակական հանդես, հ. 4, 1965; Մ. Դյրոնո, Очерки изобразительного искусства Армении. М., 1979; Հայկական միջնադարյան կոթողային հուշարձանները. 9-13-րդ դդ., խաչքարեր: Եր., 1984; Ս. Լժնգակաճյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները: Եր., 1982 և այլն:*

ված, դեռ չեն հատկացված հուշարձանի ծագման, ֆունկցիոնալ նշանակության և թվագրման հետ կապված սի շարք հարցեր:

Օձունի կոթողը գտնվում է Գուգարքի շրջանում, կանգնեցված է համաճում տաճարի հյուսիս-արևելյան մասում և, ինչպես ինքը տաճարը, թվագրվում է 6-րդ դ. կեսով³: Հուշարձանը բաղկացած է երկու կոթողներից, որոնց բարձրությունը կազմում է 2,90 մ, իսկ պատվանդանի հետ միասին՝ 4 մ: Ստեղաններն ունեն քառակյում մույթի ձև, անկյունները հատված են. միտները զառդարված են պատկերաքանդակներով: Կոթողի միտները փոքր-ինչ ճեղքանում են քեպի ներքև, իսկ վերևի մասում առանձնանում է խոյակը և պսակվում տաճարի մոդելով: Կոթողն ամբողջությամբ զարդարված է պատկերաքանդակներով, հյուսիսային և հարավային կողմերում կան բուսական և երկրաչափական զարդաքանդակներ: Ստեղաններն առնված են կամարների ներքո, և արևմտյան կողմից դեպի հուշարձանն է տանում բարձր սանդղաշարը:

Ուսումնասիրողները եկել են այն եզրակացության, որ Օձունի պատկերաքանդակները ներկայացնում են մի ամբողջական ցիկլ, որն սկսվում է արևմտյան և վերջանում՝ արևելյան կողմում: Պատկերաշարն սկսվում է քրիստոնեական Տոներով և շարունակվում Հայոց դարձի պատմությամբ⁴: Համաձայն ուսումնասիրողների մեկնաբանության, այստեղ պատկերված են Գրիգոր Լուսավորիչը, Բարդուղիմեոս և Թադեոս առաքյալները, Ս. Սարգիսը, Գայանեն և Հռիփսիմեն կույսերը, Տրդատ թագավորը և ճրագ քույր Խոսրովիդուխտը: Ըստ գիտնականների, Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմության արտացոլումն Օձունի հուշարձանում այն դարձնում է բացառիկ և խոսում Հայ Եկեղեցու անկախության մասին (վերաբերվում է նաև պատկերագրական ինքնատիպությանը)⁵:

Սակայն ծանոթությունը համաժամանակյա արևելաքրիստոնեական հուշարձաններին, բազմակի համեմատությունները և համադրությունները մեզ հնարավորություն են տալիս փոքր-ինչ այլ տեսանկյունից քննել և մեկնաբանել տվյալ պատկերաշարը: Ընդ որում, ուզում ենք առանձնակի ուշադրություն դարձնել հուշարձանի պատկերների գեղարվեստական կարևոր առանձնահատկության վրա՝ պատկերաքանդակների խորհրդանշական, այլ ոչ թե պատմողական բնույթին, ինչպես ընդունված էր տեսնել: Հենց այս տեսանկյունից էլ փորձենք ներկայացնել Օձունի պատկերաշարը:

Հայաստանի տարածքում հայտնաբերված քարե կոթողների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ունենել են համընդհանուր զաղափարական և ֆունկցիոնալ նշանակություն՝ արտահայտված հորինվածքային, պատկերագրական և թեմատիկ ընդհանրության մեջ: Ակնհայտ է նաև Օձունի կոթողի հորինվածքային և ոճական ընդհանրությունները հարևան Վրաստանի մամատիպ հուշարձանների հետ, որը, թերևս, պայմանավորված է նաև տարածքային մոտիկությամբ⁶: Բացի այդ, ակներև է Օձունի պատկե-

³ Մասնագետների կարծիքները տարբեր են. ոմանք թվագրում են տաճարը, հետևաբար նաև կոթողը, 6-րդ դ. կեսով (Վ. Հարությունյան, Լ. Ազարյան), մյուսները՝ ավելի վաղ շրջանով (Լ. Դուրմուշ, Մ. Հասրաթյան):


⁴ Թ. Առաքելյան, Հայական պատկերաքանդակը... էջ 36-38, 44-47; Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան..., էջ 92-113; Ս. Մանգականյան, Հայկական մեմորիալ..., էջ 120-125, 165:


⁵ Ս. Մանգականյան, Հայկական մեմորիալ..., էջ 125:

⁶ Ն. Թիերիոն առաջ է քաշել Գուգարանի զաղափեսական դպրոցի առկայության հարցը: Sbr N. Thierry,




ՕԶՈՒՆԻ ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈԹՈՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԷՐԵԱՆԸ





Ա



Բ

Ա. ՀԱՐՍԱՎԱՅԻՆ ԿՈԹՈՐԻ ՍՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԵՄԱ.

ՎԵՐԵՎԻՑ ՆԵՐՔԵՎ՝ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՈՂԵԼԸ, ԵՐԵՔ ՄԱՆՈՒՎՆԵՐԸ ՀՆՈՓՈՒՄ, Ս. ԶԻՆՎՈՐ

Բ. ՀԱՐՍԱՎԱՅԻՆ ԿՈԹՈՐԻ ՍՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԵՄԱ.

ՎԵՐԵՎԻՑ ՆԵՐՔԵՎ՝ Ս. ՆԱԴՆԱԿ, Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ ԻՐ ԳՈՐԾԱԿՑԻ ՀԵՏ, Ս. ԶՈՒՍՏՈՓՈՐ

րաքանդակների որոշ ընդհանրությունները վաղ քրիստոնեական հուշարձանների՝ որմնակարների, մանրակարների և սրբապատկերների հետ: Չնայած քարի մշակման արվեստը և քարե կոթողների կանգնեցման ավանդույթը Հայաստանում հայտնի է դեռ վաղ ժամանակներից⁷, այնուամենայնիվ, Օձուցի կոթողի կանոնիկ պատկերները, ավելի ստույգ՝ դրանց պատկերազրույթունը, մեծ աղերս ունեն բյուզանդական հուշարձանների հետ, որ Հայաստան են թափանցել կայսրության արևելյան շրջաններից՝ հին արևելյան և հելենիստական քաղաքակրթության խոշոր կենտրոններից⁸:

Ինչպես նշեցիք, պատկերաքանդակները գտնվում են կոթողի գլխավոր՝ արևմտյան և արևելյան ճիստերին, պատկերված են դրվագների տեսքով և եզրավորված դեկորատիվ շրջանակով: Դրվագները քանդակված են ուղղահայաց շարքով, մեկը մյուսի հետևից:

Արևմտյան կողմ. Ինչպես Օձուցի կոթողն ուսումնասիրողները, մենք նույնպես գտնում ենք, որ կոթողի պատկերաշարն սկսվում է արևմտյան կողմի հյուսիսային կոթողից՝ ավետարանական Տոներով⁹: Ենթադրվում է, որ խոյակին պատկերված է եղել «Քրիստոս-Ամենակալը»¹⁰: Այս դրվագը եղծված է և տեսանելի է ֆիգուրի միայն մի փոքր մասը: Հիմ լուսանկարների¹¹ և սխեմատիկ պատկերների մանրակրկիտ զննումը ցույց է տալիս, որ այստեղ պատկերված է կանգնած ֆիգուր, որը, մեր կարծիքով, Գաբրիել հրեշտակն է: Եթե հաշվի առնենք, որ «Ամենակալը» տրված է նույն երեսի հաջորդ կոթողի վրա, և եթե ընդունում ենք, որ կոթողները հորինվածքային առումով փոխկապակցված են, ապա նշանակում է, որ «Ամենակալը» չէր կարող պատկերված լինել երկու անգամ, մանավանդ նույն՝ արևմտյան կողմում: Գաբրիել հրեշտակի այստեղ պատկերված լինելն ավելի հավանական է¹², քան որ իմաստային առումով այն կապվում է պատկերաշարի հաջորդ դրվագների հետ:

Երկրորդ դրվագում պատկերված է Տիրամայրը մանկան հետ՝ Օղիգիդրիայի տեսքով, նրան հաջորդում են Տոները՝ «Ծնունդ», «Ավետում» և «Մկրտություն»: Համոզված ենք, որ «Մկրտություն» տեսարանից հետո էլի են եղել Տոներ (հավանաբար երկուսը), որոնք չեն

Essai de définition d'un atelier de sculpture du Haut Moyen Age en Gogarene // *Revue des études Georgiennes et Caucasiennes*. N1, Paris, 1985.

⁷ Հայաստանի տարածքում հայտնաբերվել են մեզալիթյան շինություններ, վիշապներ, որոնց քարձրությունը հասնում է 4 մ, և որոնց նրբեմն ունենում են պատկերաքանդակներ, հայտնի են նաև ուրարտական ժամանակաշրջանի քարե սակերը և անտիկ շրջանի կոթողները պատկերաքանդակներով: Տե՛ս՝ Декоративное искусство Армении. Составители Н. Степанян, А. Чакмакчян. JL, 1971. стр. 10-11.

⁸ Степанян Н. С., Культура поздней античности – составная часть культуры средневековой Армении. // «Советское искусство» (Армения), т. 75, М., 1976 г.

⁹ Սյրիհամոներն պետք է մշել, որ պատկերաշարը կարելի է դիտել ցանկացած ուղղությամբ, ցանկացած հատվածից սկսած: Այն կարգը, ըստ որի պատկերները մեծկաթամվում են, պայմանավորված է պատկերների հիերարխիկ բնույթով:

¹⁰ Լ. Ազարյան, Օձուցի և Բողաձորի կոթողները, էջ 212:

¹¹ Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., մկ. 16, 17; Ս. Մնացականյան, Հայաստանի մեծորիայ..., մկ. 2, 3:

¹² Կանգնած հրեշտակի պատկերներ կան հայկական մի շարք կոթողների խոյակներից: Օրինակ, Թալիճի կոթողը, որտեղ խոյակին պատկերված հրեշտակին հաջորդում է գաթիմ մատած Տիրամայրը: Տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., մկ. 25:

պահպանվել: Գիտնականները ուշադրություն են դարձրել այն փաստին, որ Տոմերի շար-
պահպանվել: Գիտնականները ուշադրություն են դարձրել այն փաստին, որ Տոմերի շար-
քը Օձուհի կոթողում տրված է ոչ ճիշտ հաջորդականությամբ. «Ավետումը» գալիս է
«Ծննդից» հետո¹³: Իսկապես որ, ավետարանական տեսարանների «պատմական» հաջոր-
դականությունը խախտված է: Սակայն ելնելով Օձուհի կոթողի գեղարվեստական մեկնա-
բանում առաջնահատկությունից, կարող ենք պնդել, որ վերջիցներիս հերթականությո-
ւունքն սկզբունքային բնույթ չի կրում, քանի որ պատկերները և դրանց միջոցով արտա-
հայտված գաղափարները սիմվոլիկ բնույթի են¹⁴: Վերը նշված Ավետարանական տեսա-
րաններում արտահայտված են քրիստոնեության կարևորագույն գաղափարները. գահին
նստած Տիրամայրը մանկան հետ խորհրդանշում է Քրիստոսի մարդեղությունը, «Ծնուն-
դը» հանդիսանում է Քրիստոսի ներկայից կյանքի սկիզբը, «Ավետումը»՝ որպես Ա. Խոսքի
Աստվածային Բանի մարմնավորումը և Փրկչի գալստյան խորհրդանշանը, «Մկրտությունը»,
որպես քրիստոնեական ուսմունքի տարածման սկիզբ և Փրկության սպասում: Եվ որպես
այդ գաղափարների շարունակություն, հաջորդ՝ հարավային կոթողին տեսնում ենք օրհ-
նող Քրիստոսին և Նրա աշակերտներին, որոնք Աստծո խոսքը տանում են համայն աշ-
խարհին:

Երկրորդ՝ հարավային կոթողի խոյակին, ինչպես նշեցինք, պատկերված է «Ամենակա-
լը», որը միևնույն ժամանակ մեկնաբանում է «Համբարձման» հորինվածքի կրճատ տար-
բերակը: Այդ իմաստով կարևորում ենք կողմնային միտի վրա պատկերված թռչող հրեշ-
տակին, որ ուղղված է դեպի Քրիստոսը, բացի այդ, նույն խոյակի արևելյան կողմում,
«Երեք մանուկները հնոցում» տեսարանում, պատկերված է թռչող հրեշտակ, համաձայն
աստվածաշնչային պատմության համապատասխան հատվածի և հորինվածքային առու-
մով նույնպես ուղղված է դեպի «Ամենակալը»: Պատահական չէ, որ մեծատիպ հորին-
վածքային լուծում ունի Խանդավազի կոթողը¹⁵, որը խոսում է տվյալ հորինվածքի կանոնիկ
բնույթի մասին:

«Ամենակալից» հետո գալիս են առաքյալների զույգ պատկերները: Կասկածից դուրս է,
որ դրվագները եղել են վեցը՝ ըստ առաքյալների թվի, թայց պահպանվել են միայն չորսը:

Արևելյան կողմ, Արևելյան կողմի պատկերաքանդակները, որոնց մեկնաբանումն ա-
ռավել վիճելի է, կարիք ունեն մանրամասն քննարկման: Եթե ավանդաբար այս հատվա-
ծում տեսնում են Հայաստանում քրիստոնեության ընդունման հետ կապված իրադարձու-
թյունների արտացոլումը, ապա համաձայն մեր մեկնաբանության, այստեղ պատկերված են
Հայաստանում և քրիստոնյա Արևելքում կանոնացված սրբեր: Քննենք այդ շարքը:

¹³ Լ. Ագարյան, Օձուհի և Բրդաձորի կոթողները, էջ 212 (տեսարանների հերթականության խախտման պատճառը հեղինակը տեսնում է հուշարձանի հմտության և պատկերազրության դեռևս չձևավորված լինելու մեջ):

¹⁴ Օձուհի պատկերաքանդակների հաջորդականության մասին իր մեկնաբանության մեջ Ն. Թիերինո նույն-
պես առաջնորդվում է վերջիցներիս խորհրդանշական, այլ ոչ թե պատմական բնույթով: Այդ մասին տե՛ս ըստ
Պ. Տոմապետյանի հոդվածի: P. Donabedian, *Thèmes bibliques et sculpture prenathe // Revue des études*
Arménienes, Vol. 22, 1990-91.

¹⁵ Мавроганов К., Каменное кресты Грызюм. Тб., 1998. стр. 50, ил. 2.

Հարավային կողմի պատկերաշարն սկսվում է «Երեք մանուկները հնոցում» տեսարանով, որտեղ պատկերված են միմյան գոտկատեղը, ֆրոնտալ դիրքով ֆիգուրներ, որոնց վերևում ճախրում է հրեշտակը: Քրիստոնյա Արևելքում լայն տարածում գտած աստվածաշնչյան այս պատմությունը (Ղամ. Գ 6) հրաշալի փրկության խորհրդանշն է և այդ իսկ պատճառով պատահական չէ, որ հենց այդ սիմվոլիկ պատկերով է սկսվում սրբերի շարքը, որոնց հաստատական են եղել հավատի մեջ:

Շարքի առաջին ֆիգուրը ներկայացնում է Ս. Զինվորին: Ե՛վ հյուսիսային, և՛ հարավային կողմերի պատկերաշարերն սկսվում են Ս. Զինվորի ամբողջ հասակով կանգնած ֆիգուրով, զինվորական հագուստով, վահանով (հյուսիսային կողմ) և սրով (հարավային կողմ): Եթե հարավային կողմում շարքը շարունակվում է մյուս սրբերի պատկերներով, ապա հյուսիսայինում՝ պատվիրատուների ֆիգուրներով: Եվ քանի որ հյուսիսային կողմի Ս. Զինվորի պատկերը նախորդում է պատվիրատուների ֆիգուրներին, ապա վերջինս մեկնաբանվում է որպես իշխանական տան ներկայացուցիչ կամ հայտնի զորավար¹⁶: Մեր կարծիքով, երկու կողմերի վրա պատկերված զինվորները դասվում են նույն սրբերի և նահատակների շարքին, որոնց զբաղեցնում են հարավային կողմը:

Ամենայն հավանականությամբ, երկու այս ֆիգուրները ներկայացնում են շատ հեղինակավոր սրբերի՝ Ս. Գևորգին և Ս. Սարգսին, որոնց պաշտամունքը լայն տարածում ուներ թե՛ Հայաստանում¹⁷, թե՛ Քրիստոնյա Արևելքում: Սակայն եթե հայկական հայտնի Ռուշարձաններում վերջիններս ներկայացված են հեծյալների տեսքով, ապա Օձուցի կոթողում՝ կանգնած դիրքով, որը պատկերազրական մի տարբերակ է և հայտնի է վաղ քրիստոնեական մի շարք Ռուշարձաններից, օրինակ, Ս. Թեոդորոսի սրբապատկերը (Կահիրեի թանգարան) (6-րդ դ.)¹⁸: Հայաստանում Զինավոր սրբերի պաշտամունքի տարածման մասին են վկայում վաղ քրիստոնեական մի շարք եկեղեցիներ, որոնց նվիրված են եղել Ս. Գևորգին, Ս. Սարգսին և Ս. Թեոդորոսին¹⁹:

Հարավային կողմի երկրորդ դրվագում պատկերված է ողջ հասակով կանգնած մեկ ֆիգուր՝ քրիստոնյա սուրբ կամ նահատակ, քանի որ ունի խաչգավազան: Երրորդ դրվագում պատկերված են արդեն զույգ ֆիգուրներ, որոնցից մեկը հոգևորականի հագուստով է, խաչգավազանով և լուսապսակով, իսկ մյուսը՝ փոքրը, երկար հագուստով, բայց առանց լուսապսակի: Ուսումնասիրողներն այստեղ տեսնում են Գրիգոր Լուսավորչին և Տրդատի քույր Խոսրովիդուխտին: Ավելի քան հնարավոր է, որ այստեղ պատկերված է Գրիգոր Լուսավորիչը, քանի որ հենց նրա գործունեության հետ է կապված Հայաստանում քրիստոնեության տարածումը: Սակայն ինչ վերաբերվում է մյուս ֆիգուրին, ապա կարծում

¹⁶ Պետք է նշել, որ հայ միջնադարյան Ռուշարձաններին նվիրված ուսումնասիրություններում Յկատեի է որոշակի միտում՝ տեսնել առանձին ֆիգուրներում կամ պատկերներում իրական պատմական դեմքեր, ինչպես, օրինակ, Աղթամարի կամ Զվարթնոցի պատկերաքանդակներում:

¹⁷ Այդ մասին են վկայում Ս. Գևորգի և Ս. Սարգսի պատկերները Թալինի և Լժբատի որմնանկարներում (7-րդ դ.), Աղթամարի Ամսաչ եկեղեցու պատկերաքանդակներում (10-րդ դ.) և այլն:

¹⁸ Zibawi M., *Oriens Chrétiens*, Paris, 1995, p. 159.

¹⁹ Асрабян М., *Армянская архитектура раннего христианства...*, М., 2000.

սրբապատկերի հետ (Աթենքի թանգարան)²⁵, ապա նկատելի է այդ պատկերների արտաքին նմանությունը:

Ս. Քրիստոփորը ըստ ավանդության եղել է նոր հավատքի քարոզիչ և մահվանից հետո սրբացվել: Հետևաբար և՛ հայկական, և՛ բյուզանդական հուշարձաններում նրան պատկերել են լուսապսակով և խաչազավազանով: Եթե ընդունենք, որ Օձուցի կոթողի վրա պատկերված է խոզազուխ Տրդատը, ապա այդ դեպքում անհասկանալի է դառնում, թե ինչո՞ւ նա, իր խոզակերպության այս շրջանում, պատկերված է լուսապսակով և խաչազավազանով: Ս. Քրիստոփորի պատկերագրության կարևոր մանրամասնությունն է հանդիսանում վերջինիս երկար մազերը²⁶, ինչպես դա երևում է Թալիմի կոթողի վրա, ման՝ բյուզանդական հուշարձաններում (Օձուցի կոթողի վրա հստակ չէ մասնակի վնասվածության պատճառով):

Ս. Քրիստոփորի, ինչպես և մյուս սրբերի պատկերագրությունը Հայաստան է թափանցել Բյուզանդիայի արևելյան շրջաններից: Համաձայն վարքի, Ս. Քրիստոփորը քարոզում էր Ասորիքում և Լիկիայում²⁷, որտեղից էլ հավանաբար նրա պաշտամունքը և պատկերագրությունը թափանցել են Հայաստան: Այն, որ այս սրբի պաշտամունքը տարածում է ունեցել Հայաստանում, խոսում են Օձուցի և մյուս քարե կոթողների վրա տեղ գտած պատկերները²⁸, բացի այդ, Ներքին Թալիմում պահպանվել է 6-7-րդ դդ. եկեղեցի՝ նվիրված Ս. Քրիստոփորին²⁹: Ս. Քրիստոփորի վարքը, մյուս հեղինակավոր սրբերի վարքերի հետ, տեղ է գտել միջնադարյան հայկական ձեռագիր մատյաններում³⁰:

Ծարունակելով շարքը՝ կանգ առնենք հաջորդ դրվագի վրա, որտեղ ներկայացված է մի ճարտարապետական կառույց՝ կից աստիճանով: Այս ճարտարապետական կառույցը համարվում է առաջին վկայարան-մատուռը, որը կառուցվել է Ս. Հովհաննիսի մահատակության տեղում³¹: Ս. Մնացականյանը նույնացնում է վեդարածածկ այս կառույցը իրական դամբարանի հետ և գտնում, որ այստեղ պատկերված աստիճանը միայն հաստատում է վերջինիս իրական կառույց լինելու փաստը³²: Այդ իմաստով կարևոր ենք համարում մեկ անգամ ևս մշել, որ կոթողը զարդարող բոլոր պատկերաքանդակները նախ առաջ հանդես են գալիս իրենց խորհրդանշական իմաստով: Հետևելով այս սկզբունքին՝ կարող ենք պնդել, որ պատկերված աստիճանն ունի որոշակի խորհուրդ և հանդես է գա-

²⁵ Չմայած բյուզանդական սրբապատկերն ավելի ուշ շրջանի է. քան Օձուցի կոթողը, այն ճշտությամբ վերարտադրում է այդ սրբի՝ դեռ վաղ քրիստոնեական շրջանում կամոնացված պատկերգրական տիպը:

²⁶ Գ. Հովսեփյանը կենդանակերպ պատկերի ուսումնասիրության ժամանակ ուշադրություն է դարձրել վերջինիս երկար մազեր ունենալու փաստին և եմթադրել, որ պատկերված է կին: Տե՛ս Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, արակ Գ., Նյու Յորք, 1944, էջ 61-63:

²⁷ Микенцов Е. И., Одред Христофора Кинокефала, стр. 76-89 // Древний Восток. Сб. I, М., 1975 г.

²⁸ Այդ կոթողներն են. երկու կոթող Թալիմից, վանք-խաղաղայից և Ագարակից:

²⁹ Асратян М., Армянская архитектура..., М., 2000.

³⁰ Ս. Գևորգյան, «Վարդ Պապ» սրբապատկերը հայկական Ավետարանում // «Խոսք» (Հայ Առաքելական եկեղեցու Արքայի թեմի պաշտամարտեր), հ. 2, 1996:

³¹ Ս. Մնացականյան, Հայկական մեմորիալ..., էջ 89-90:

³² Минацкая С., Об одном неизвестном типе сооружений древнесармянской архитектуры. // Вестник АИ АССР, № 7, 1952 г., стр. 90.

լիս իր սիմվոլիկ-պատկերագրական իմաստով, այլ ոչ թե որպես իրական ճարտարապետական տարր:

Համաձայն քրիստոնեական ավանդության, մարդու կյանքը մեամեցվում է աստիճանի, որն ընդունվում է որպես հոգևոր վերելքի ճանապարհ՝ երկրայինից դեպի երկնայինը: Այս իմաստով շատ հետաքրքրական է Լուվրի թանգարանում պահվող 6-րդ դ. սիրիական մի ստելայի դրվագը³³. որտեղ պատկերված է Օծուհի օրինակին շատ մոտ աշտարակաձև մի կառույց, որին մույնպես կցված է աստիճանը և որով բարձրանում է, ինչպես ենթադրվում է, Ս. Սիմոն Սյունակույսը: Հետաքրքիր է և ոչ պատահական այն, որ աշտարակաձև կառույցը և որան հենվող աստիճանը պատկերված են խոշոր պլանով. մինչդեռ աստիճանով բարձրացող ֆիգուրը համարյա անկատելի է: Հասկանալի է դառնում, որ ընդգծված են հենց աշտարակաձև կառույցը և աստիճանը, որոնք համդես են գալիս իրենց խորհրդանշական իմաստով:

Հայկական միջնադարյան արվեստում մեամատիպ կառույցի պատկեր հայտնի չէ: Այնպե՞ս այդպիսիք հայտնի են քուզանդական արվեստում: Աշտարակաձև ճարտարապետական կառույցը, որ խորհրդանշում է Ս. Սիմոն, հայտնի է. օրինակ, խլուտովյան 9-րդ դ. Սաղմոսագրքի մանրամակարենքում³⁴, որ շատ մոտ է Օծուհի դրվագին³⁵:

ճարտարապետական կառույցը, որ մի քանի անգամ է հանդիպում խլուտովյան Սաղմոսագրքի էջերին, մեամվում է քաղաք-աշտարակի, որին անպայմանորեն կցված է աստիճանը: Համադրելով այս հուշարձանների վեղարաձև կառույցները, հանգում ենք այն եզրակացության, որ Օծուհի կառույցը խորհրդանշում է մույն Ս. Սիմոն՝ երկնային երուսաղեմը³⁶: Աստիճանը, որը մատնանշում է «քաղաքի» երկնային բնույթը, հիշեցնում է Եզեկիել մարգարեի խոսքերը խորհրդանշական յոթ աստիճանների մասին, որ տանում են դեպի երկնային երուսաղեմ (Եզ. Խ 22)³⁷: Օծուհի կոթողի վրա պատկերված աշտարակաձև կառույցի այսպիսի մեկնաբանումը լիովին բացահայտում է արևելյան կողմի պատկերաշարի թեմատիկան. ըստ էության, այստեղ պատկերված են քրիստոնեյա մահատակները, գիմվորները և սրբերը, որոնք լիցելով հավատի մվիրյալ շատագովներ և անցնելով հոգևոր վերածննդի ճանապարհը՝ հասել են երկնային երուսաղեմին:

Արևելյան կողմի հաջորդ երեք դրվագները, որ շարունակում են պատկերաշարը, մերկայացնում են կանգնած ֆիգուրներ: Դրվագի վառ պահպանվածության պատճառով ան-

³³ Оширин В. О., Символическое изображение «адна» на египетских // Реликви в искусстве и культуре восточнохристианского мира, М., 2000 г., кн. 3, стр. 33.

³⁴ Щелкина М. В., Министоры Художественной Псалтири, М., 1977, листы 51, 61-6, 86-6.

³⁵ խլուտովյան Սաղմոսագրքից ունի արևելյան ձաղում, որի մասին խոսում է վերջինիս մաքրամկարների պատկերաբանությունը: Հետաքրքիր է, որ միա էջերում հանդիպում են այնպիսի տեսարաններ, ինչպիսիք են «Երեք մանուկները ձողում», «Արարհամի գոհաբերությունը», «Դամիելը աղոթքների գրում», որոնց համդիպում են արևելյան հուշարձաններում և հաճախ են պատկերվում հայկական կոթողների վրա:

³⁶ Երկնային երուսաղեմի խորհրդանշական կերպարն արտահայտված է մաև թուն հուշարձանի մեջ. երկու քարե ստեյամներ ընդգրկված են երկկամար ճարտարապետական դրվագի մեջ և դեպի այն ուղղեցնում է սանդղաշարը:

³⁷ Лидов А. М., Небесный Иерусалим в восточнохристианской иконографии. // Иерусалим в русской культуре, М., 1994 г., стр. 18.

հնար է ստույգ ասել, ինչ ֆիգուրներ են՝ կնոջ, թե տղամարդու: Առաջին երկուսը լուսապսակով և խաչզավազանով են, երրորդը՝ օրանտայի դիրքով և առանց լուսապսակի: Անկասկած է, որ առաջին երկու ֆիգուրները սրբեր են և զալիս են լրացնելու քրիստոնյա սրբերի շարքը, իսկ երրորդը հնարավոր է, որ պատկանում է դոմատորական շարքին:

Եվ, վերջապես, արևելյան կողմի հյուսիսային կոթողը: Օարքն սկսվում է մեղալիոնի մեջ առնված հավասարաթև խաչի պատկերով և որին հաջորդում է Ա. Զինվորը, որի մասին արդեն նշել ենք: Հաջորդ երեք դրվագները ներկայացնում են պատվիրատուների գույզ ֆիգուրներ՝ կնոջ և տղամարդու, առանց լուսապսակի, աղոթողի դիրքով: Դոմատորների պատկերաքանդակները, իհարկե, բավականին ընդհանրացված և սիմվոլիկ բնույթի են, որն անշուշտ պայմանավորված է հուշարձանի գեղարվեստական արտահայտչականության միջոցներով: Լիովին համաժողով ենք ուսումնասիրողների այն կարծիքին, որ այստեղ պատկերված են Օծուհի տաճարի, հավանաբար նաև կոթողի, պատվիրատուները: Իրենց աստվածաբան գործով՝ տաճարի կառուցմամբ, պատվիրատուներն ակնկալում են հոգու փրկություն և հավերժական կյանք: Հենց հոգու փրկության գաղափարն է, որ դառնում է հույժ կարևոր Օծուհի հուշարձանի գաղափարական կոնտեքստում:

Պատկերաշարի վերջին դրվագում երեք ֆիգուրներ են՝ ներկայացված ամբողջ հասակով, յուրաքանչյուրն ընդգրկված կամարի ներքո: Ավելին հնարավոր չէ ասել դրվագների մասին, քանի որ պատկերը եղծված է:

Աղոթողի պատկերը բավականին հաճախ է հանդիպում հայկական քարե կոթողներում (Թալին, Բրդաձոր): Դրանք լավ հայտնի են նաև վաղ քրիստոնեական հուշարձաններում՝ կատակոմբների որմնագրերում³⁸, դատական կոթողներում³⁹ և այլն: Աղոթող դոմատորների պատկերները հայտնի են նաև Սալոնիկի Ս. Գևորգի տաճարի խճանկարներում (5-րդ դ. երկրորդ կես): Համեմատության դեպքում նկատելի են որոշակի ընդհանրություններ Օծուհի և Ա. Գևորգի տաճարի պատվիրատուների պատկերների միջև, հատկապես վերջիններիս գաղափարական իմաստով: Համաձայն Ա. Լիդովի մեկնաբանության, Ա. Գևորգի տաճարի պատվիրատուները, որ ներկայացված են ձեռքերը վեր պարզած՝ աղոթողի դիրքով, խորհրդանշում են Զրիստոսի երկրորդ գալուստը և ակնկալում Փրկությունը⁴⁰:

Հենց այս փրկության գաղափարը, որը քրիստոնեության կարևոր հասկացություններից է, հանդիսանում է Օծուհի հուշարձանի գեղարվեստական-գաղափարական իմաստը և որ մարմնավորումն է ստանում սիմվոլիկ տաճարի մոդելում: Ինչպես արդեն նշել էինք, Օծուհի կոթողներից յուրաքանչյուրը պսակված է երկհարկանի ճարտարապետական կառույցով՝ բազիլիկայի մոդելով, որն ունի կիսակլոր ծածկ, կամարաշար արտաքին սրահ և խուց:

³⁸ Пессельштраус Ц. Г., Искусство раннего средневековья. СПб., 2000, ил. 3, 4.

³⁹ Стела из Саккары с изображением св.Пахома (6-7 вв.), группа фаянсовых стел 5 в. и т.д. см: L'art Copt en Egypte. 2000 ans de christianisme. Gallimard, 2000, pl. 11, 101-104.

⁴⁰ Лидов А.М., Образ небесного Иерусалима в восточнохристианской иконографии. // Иерусалим в русской культуре. М., 1994 г., стр. 16.

Ճարտարապետական մոդելը ներսում ունի խորշ, որը, ինչպես ենթադրում են, ծառայել է սուրբ մասունքների համար⁴¹: Օտտ հավանական է, որ այս տաճարիկում պահվել են սուրբ մասունքներ, քանի որ հայտնի է, որ վաղ քրիստոնեական շատ սարկոֆագներ և սալաձև տաճարներ ունեցել են բազիլիկ տաճարի տեսք⁴²: Բայց և այնպես, դա պարտադիր մասնատուփեր ունեցել են բազիլիկ տաճարի տեսք⁴³: Ինչպես նաև վրացական քարե կոթողներ⁴⁴: Նաև միշտ չէ, այլև մի շարք այլ հայկական⁴⁵, ինչպես նաև վրացական քարե կոթողներ⁴⁶: Նաև միշտ չէ, որ այդ տաճարիկներն ունեն այդ նպատակին ծառայող խորշ: Օձունի ստելաները պատկերով տաճարիկները հանդիսանում են ոչ միայն դեկորատիվ հարդարանքի մասեր և հորինվածքային տարրեր, այլ նախ և առաջ մարմնավորում են գլխավոր քրիստոնեական խորհրդանշանը՝ Տիրոջ գերեզմանի տաճարը⁴⁵: Տիրոջ գերեզմանի տաճարը, որպես գլխավոր հրեշտակները մուտք են: Կանգ առնենք առավել կարևորների վրա:

Օձունի կոթողում մեծ տեղ է հատկացված նաև դեկորատիվ հարդարմանը: Բոլոր զարդամոտիվները՝ բուսական, երկրաչափական, հանդիսանալով ընդհանուր հարդարման մաս, միևնույն ժամանակ հանդես են գալիս իրենց խորհրդանշական իմաստով: Դեկորատիվ հարդարանքը ներդաշնակորեն ներթույլանում է կոթողի ընդհանուր հորինվածքի մեջ՝ հաղորդելով դրան ամբողջական և ավարտուն տեսք (երկու կոթողների դեկորատիվ լուծումները մույցն են): Կանգ առնենք առավել կարևորների վրա:

Քարե կոթողների անկյունային մասերն անպայման դեկորատիվ մշակում ունեն, որը հանդես է գալիս կա՛մ կիսապուրների, կա՛մ որմնասյուների ձևով (մույցն սկզբունքն առկա է վրացական կոթողներում): Որոշ դեպքում կիսապուրներն ունեն հարթ մակերես, իսկ որոշ դեպքերում ինչպես Օձունի, Արդվիի, Կողեսի, Դեզի, Նանդիսի օրինակներում՝ հյուսված⁴⁷:

⁴¹ Ս. Մնացականյան. Հայկական մեմորիալ..., էջ 143: Օձունի կոթողի այս ֆունկցիան մույնանում է Ջվարթնոցի տաճարում եղած պանոսի, որտեղ, ըստ Ս. Ս. Մնացականյանի, պահվում էին Ս. Գրիգորի մասունքները: Տես՝ Мнацаканян С. Х., Звартноц М., 1971, стр. 29.

⁴² Саркофаг в соборе Сан-Франческо в Равенне (хонед 4-нмч.5 в), Саркофаг са. Барбаттануса (ср.5 в.). см: Восточное Средиземноморье и Кавказ 4-16 вв. Л., 1988 г., стр.13, рис.3, 4.

⁴³ Կոթողներ, որոնք պահվում են տաճարիկով, գտնվել են, օրինակ, Թալիմից, Օձունից (ստելայի դրվագ) և այլն:

⁴⁴ Վրացական ստելաներից են. Նանդիսի, Դիդի Գովարեսի, Զվիլի Մուխի:

⁴⁵ Կ. Մաչարեի վրացական քարե կոթողներին մվիրված իր աշխատության մեջ մույնպես մեկնաբանում է տաճար-մոդելները, որպես Տիրոջ գերեզմանի տաճարի մարմնացում: Այդ կարծիքին է նաև Հ. Ռիչարդսոնը: Տես՝ Мачабелли К., Каменные кресты Грузии. Тб., 1998, стр. 57: Richardson H., Observation on Christian Art in Early Ireland, Georgia and Armenia//Ireland and Insular Art, Dublin, 1987, p. 134.

⁴⁶ Տիրոջ գերեզմանի տաճարը կամ Ս. Հարություն ռոտոնդան իր սիմվոլիկ արտահայտությունում է գտել Ջվարթնոցի ճարտարապետության մեջ, այն համախափ է հանդիպում ձեռագիր մատյաններում տաղավարիկի տեսքով:

⁴⁷ Հյուսված սյան մոտիվը շատ լայն կիրառում ունի միջնադարյան ճարտարապետության մեջ և հայտնի է տաճարների արտաքին հարդարման մեջ. շքամուտքները և պատուհանները եզրավորող կիսապուրներ, քիվեր և այլն:

Հյուսված կիսասյան մոտիվը շատ հայտնի է միջնադարյան ճարտարապետության պատկերազրության մեջ: Ըստ Տիրոջ գերեզմանի վրա կոտանդին կայսեր կողմից կառուցված բազիլիկի վերականգնության, այդպիսիք էին Ս. Հարության Տաճարի ոտտոնդայի սյուները⁴⁸: Վերը նշված մոտիվի կիրառումն Օձունի կոթողի հարդարման մեջ պատահական բնույթ չի կրում և սերտորեն կապվում է հուշարձանի սիմվոլիկ-գաղափարական քովանդակության հետ: Կարևոր ենք համարում նշել, որ հյուսված պան մոտիվը հանդիպում է և՛ հայկական, և՛ վրացական քարե կոթողներում, և դրանով իսկ հաստատում վերջինիս կանոնիկ բնույթը:

Օձունի կոթողի կողմնային ճիւղերը զարդարված են տարբեր զարդամոտիվներով, շրջանակներից կազմված շղթա, իրար հատող կորեր, որ պսակված են եռատերև քուսական տարրերով, շուշան ծաղիկից կազմված ուղղաճառյալ շղթա և, ամենակարևորը, խաղողի գալարվող որթը՝ խաղողով և շուշանածաղկով⁴⁹: Խաղողի որթի խորհրդանշիչը քաջ հայտնի է և ունի լայն կիրառում քրիստոնեական արվեստում: Մյուս զարդամոտիվները դեռևս թողնում ենք առանց մեկնաբանության, քանի որ մեզ համար մինչև վերջ պարզ չէ դրանց սիմվոլիկ նշանակությունը⁵⁰, չնայած որ՝ ակնհայտ է:

Մեր պատկերացումներն Օձունի կոթողի մասին ամբողջական չի լինի, եթե չանդադառնանք վերջինիս գունային լուծմանը: Օձունի վարպետները, որ հուշարձանի մեջ արտահայտել են կարևորագույն քրիստոնեական սիմվոլները և գաղափարները, չեն անտեսել դրա գունամշակումը: Հայտնի է, որ Օձունի կոթողը պատրաստված է ֆիլզիտային տուֆից, որը բնականից ունի կանաչավուն երանգ: Սակայն կոթողների մակերեսն ամբողջությամբ ներկված է եղել կարմիր գույնով, որը մասամբ դեռ պահպանվում է: Գունային ֆոնի ակտիվացումն օժտված էր և՛ գեղագիտական, և՛ խորհրդարանական իմաստով: Կարմիր գույնի սիմվոլը և դրա կիրառումը արևելաքրիստոնեական արվեստում բավականին հայտնի է: Այն հանդիսանում է կյանքի և, միևնույն ժամանակ, զոհաբերության ու գալիք Փրկության սիմվոլը⁵¹: Քարի գունամշակումն ուժեղացնում է պատկերաքանդակների գաղափարական իմաստավորումը և պատկերները դարձնում ավելի արտահայտիչ⁵²:

Սակայն վերադառնանք պատկերաքանդակներին: Արդեն նշեցինք, որ Օձունի պատկերները մեծ աղերս ունեն արևելաքրիստոնեական հուշարձանների հետ, որ արտահայտվում է ոչ միայն պատկերազրական, խորհրդարանական և դեկորատիվ, այլ նաև գեղագիտական և գաղափարական լուծումների մեջ: Պատկերների մեկնաբանման հիմնական սկզբունքներն են ֆրոնտալությունը, հարթացությունը: Այստեղ չկա պատմողականություն, գեղարվեստական լեզվին հատուկ է հակիրճությունը և գերարտահայտչականությունը:

⁴⁸ Wilkinson J., The tombs of Christ. An Outline of its Strucutral History // *Levant*. L., 1972, vol. 4, fig. 4.

⁴⁹ Կոյնմախ զարդամոտիվներ կամ վրացական խաղիսի կոթողի վրա:

⁵⁰ Այս զարդամոտիվները փորձել է մեկնաբանել Կ. Մաչաբեիմ: Տե՛ս Կ. Մաչաբեիմ, Каменные кресты Грузии..., стр. 57-58.

⁵¹ Бычков В. В., Эстетическое значение цвета в восточнохристианском искусстве. // Вопросы истории и теории эстетики. МГУ, 1975.

⁵² Նշենք, որ հայկական միջնադարյան տաճարների արտաքին հարդարման մեջ ճարտարապետական առանձին տարրեր ճուշակաբ ընդգծվել են կարմիր գույնով:

⁵⁶ История иконописи..., кн. 6.

Երկրային եկեղեցիների միասնության գաղափարն այն սկզբունքով, ինչպես դա կանոնացված էր արևելաքրիստոնեական տաճարի ներքին հարդարման համակարգում⁵⁷:

Պետք է ավելացնել, որ, այնուամենայնիվ, դեռ մինչև վերջ պարզաբանված չեն քարե կոթողների հետ կապված մի շարք կարևոր հարցեր, մանավանդ կապված դրանց ֆունկցիոնալ նշանակության հետ: Կարևոր է այն խնդիրը, թե ինչն⁵⁸ հայկական (նաև վրացական) կոթողները կանգնեցվել են տաճարի կողքին, այլ ոչ թե ներսում: Ելնելով Օձունի քանդակների «սրբապատկերային» բնույթից, կարելի է միայն ենթադրել, որ քրիստոնեության վաղ շրջանում աղոթել են նաև թաց երկնքի տակ, մանավանդ որ հայտնի են առանձին պատմական թիշատակումներ այն մասին, որ Արևելքի որոշ շրջաններում աղոթել են տաճարից դուրս⁵⁹, մի ավանդույթ, որն անշուշտ ժառանգվել է հեթանոսական շրջանից:

Ամփոփելով ասվածը, ցանկանում ենք շեշտել հետևյալը. Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի արվեստը հանդիսանում է քրիստոնյա Արևելքի մշակույթի անբաժան մասը, քրիստոնյա աշխարհը, հատկապես վաղ շրջանում, ավելի միասնական էր, առավել շոշափելի էին կրոնական և մշակույթային ընդհանրությունները, նույնանում էին գեղարվեստական և գեղագիտական ըմբռումները⁵⁹: Համոզված ենք, որ Օձունի և մանաստիպ Ռուշարձանների համալիր ուսումնասիրությունը կարող է հանգեցնել կարևոր գիտական հարցերի լուսաբանմանը⁶⁰:

⁵⁷ Лазарев В. Н., Система живописной декорации византийского храма 9-11 вв. // Византийская живопись. М., 1971., стр. 100.; Демус О., Мозаики византийских храмов. М., 2001, стр. 34-54.

⁵⁸ Павлова А. В., Архитектурные мотивы в памятниках сирийской агнографии. // Кавказ и Византия. 1988, № 6, стр. 194.

⁵⁹ Այս տեսանկյունից կարելի է թացադրել այն ընդհանրությունները, որ կամ Հայաստանի, Վրաստանի, Եգիպտոսի և հետավոր իդումեդիայի միջև:

⁶⁰ Լժում է միայն ափսոսալ, որ Օձունի Ռուշարձանը եմթարկվում է պարբերական քայքայման, հատկապես դա զգալի է վերջին թիսում տարվա ըմթացքում, և ոչինչ չի արվում Ռուշարձանի կոմսերվացման և պահպանման համար:

ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Բանաւիրական գիրությունների թեկնածու

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Բայական անդեմ նախադասությունները դասական գրաբարում համեմատաբար հազվադեպ հանդիպող միակազմ կառույցներից են և գերազանցապես հանդես են գալիս բարդության կազմում ստորադաս կամ համադաս բաղադրիչ նախադասությունների դերով (Օղ կրօնս Պիտագորաս՝ *զընչաւորաց միս չճաշակել՝ և ի գինւոյ ժուծկալել՝* /Եզն., 142/): Սակավադեպ վկայված են նաև որպես բարդ ստորադասականի գերադաս բաղադրիչներ կամ նախադասություններ՝ անկախ կիրառությամբ (*Մի՛ անկողոթ առնել շնորհացդ*, որ ի քեզ են /Կոր., 124/: *Օտարասէրք լինել ընդ միմեանս առանց տրտնջելոյ* /Ա. Պետր. Գ 9/): Այսպիսի անդեմ նախադասությունները, որոնց գերադաս անդամն անորոշ դերբայն է՝ առանձին կամ իր լրացումների հետ, սովորաբար հրամայական, երբեմն նաև բացականչական կամ հարցական հնչեղանցով արտահայտում են «գործողության կատարման անհրաժեշտություն, կարելիություն, անկարելիություն, պարտադրանք, ցանկություն, կամք, ձգտում և այլն»¹:

Բայական անդեմ նախադասություններն իրենց ոչ միայն իմաստային, այլև ձևային², այդ թվում նաև շարադասական առանձնահատկություններով ավելի մոտ են դիմավոր բայով միակազմ նախադասություններին: Երկուսում էլ, իբրև շարադասական միավոր, պարտադրաբար առկա է բայական բաղադրիչ, որը կարող է հանդես գալ ինչպես մեծակ, այնպես էլ իր խնդիր և պարագա լրացումների հետ: Երկուսում էլ կարող են առկա լինել նաև այլ միավորներ (կոչականներ, ձայնարկություններ, վերաբերականներ, միջանկյալ բառեր և այլն): Այս ամենով հանդերձ՝ բայական անդեմ նախադասությունները շարադասության տեսակետից նաև նկատելիորեն առանձնանում են դիմավոր բայով միակազմներից: Դրա հիմնական պատճառն այն է, որ բայական անդեմ կառույցներում գերադաս բայական բաղադրիչը, որի դերում կարող է հանդես գալ միայն անորոշ դերբայը, անհրաժեշտորեն ունի առանձնահատուկ հնչեղանցային ընդգծվածություն: Վերջինս, որ սովորաբար դրսևորվում է հրամանի, կարգադրության, կոչի, հարցման, ցանկության կամ բացականչության ձևով, իրոք անհրաժեշտություն է այնքանով, որքանով նախադասության այս տեսակը ձևավորող միակ գործոնն է և ինքնին քերականական ստորոգումն իրականացնող դեր ունի, այն է՝ առանձին վերցրած անորոշ դերբայը կամ անորոշ դերբայական բառակապակցությունը վերածում է նախադասության: Ավելին, Գ. խաչատրյանի բնութագրմամբ՝ «հնչեղանցն այս տիպի նախադասությունների մեջ կատարելի գործողության քե-

¹ Տե՛ս Գ. Խաչատրյան, Գրաբարի միակազմ նախադասություններ, Եր., 2002, էջ 175:

² Տե՛ս Վ. Հայրապետյան, Անդեմ և տեմանական նախադասությունների քերականական կառուցվածքը, «Լեզվի և ոճի հոսքեր», հ. 6, Եր., 1982, էջ 109-120: Գ. Խաչատրյան, Լեզվ. աշխ., էջ 179-180:

րակաճական կարգ է մտցնում: Օրինակ՝ *Չխոսել* նշանակում է *Չի կարելի խոսել*³:

Հնչերանգը մաս էապես պայմանավորում է վերոհիշյալ մախադասությունների շարադասությունը: Հնչերանգակիր շարադասական բաղադրիչը սովորաբար ձգտում է զբաղեցնել մախադասության սկիզբը: Հիմնականում դա անորոշ դերբայով արտահայտված գերադաս անդամն է: Հաշվումները միանգամայն պարզորոշ ցույց են տալիս, որ, ի տարբերություն սովորաբար չեզոք հնչերանգով բնութագրվող դիմավոր միակազմ մախադասությունների, որոնցում դիմավոր բայով գերադաս անդամը քիչ թե շատ ամրակայված դիրք չունի, բայական անդամ միակազմ մախադասություններում ակնհայտ իրողություն է հատուկ հնչերանգը կրող գերադաս անդամի՝ անորոշ դերբայի սկզբնային դիրք զբաղեցնելը:

Օր.՝ *Մանաչել* զիմաստութիւն և գխրատ, *իմանալ* զբանս հանճարոյ: *Ընդունիլ* զդարձուածս բանից, *ի միտ առնուլ* զարդարութիւն ճշմարիտ, և *ուղղել* զիրաւունս Առակ. Ա. 2-3/: *Սիրել* զԱստուածութիւն յամենայն սրտէ և յամենայն անձէ և զօրութեամբ Ագաթ., 320/:

Երբ անորոշ դերբայի հետ գերադաս անդամի կազմում հանդես են գալիս *մի՛* արգելականը կամ *ո՛չ* ժխտականը, ապա հնչերանգի ուժն ամբողջությամբ վերցնելով իրենց վրա, դրանց փոքր բացառություններով ամրակայվում են մախադասության սկզբում: Նման դեպքերում անորոշ դերբայը սովորաբար անմիջապես հաջորդում է դրանց, և հատուկ հնչերանգը, թեև համեմատաբար թույլ, բայց տարածվում է մաս մերս վրա. *ինչպես՝* Եւ *մի՛ ելանել* ի մուրոյն տառապանս /Բուզ., 64/: *Մի՛ անփոյթ առնել* շնորհացդ /Կոր., 124/: *Ո՛չ երանել* զբարեբախտութիւն մարդոյ մինչև ի վախճան /ՄԽՊՀ, 125/: *Ո՛չ ուտել* միս և *ո՛չ ըմպել* զգինի /Եզե., 285/: Այսպիսի մախադասություններն ունեն շեշտված հրամայական բնույթ, այստեղ է, որ հրամանը, ինչպես զրույն է վ. Առաքելյանը, առավել կտրուկ ու անառարկելի է⁴:

Մինչդեռ երբ անորոշ դերբայը հեռանում է ժխտական մասնիկից, երբեմն նույնիսկ հեռանալով մինչև մախադասության վերջը, ապա այդ դիրքում վերածվում է տրամաբանորեն անճշմանակ բաղադրիչի, մանավանդ, երբ մախադասությունը եզրափակվում է վերջադաս դիրքում քիչ հանդիպող կոչականով: Նկատելի է, որ մախադասությունների համեմատությամբ այսպիսի միակազմ մախադասություններում հրամանի ուժը շատ ավելի թույլ է, և սրանք առավելապես հորդոր կամ խնդրանք են արտահայտում. *Մի՛ իբրև պատրուակ չարութեան ունել* զազատութիւն Ա. Պետր. Բ 16/: *Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել* /նույն տեղ. Գ 9/: *Մի՛ թագում վարդապետս լինել*, եղբա՛րք իմ/ Ծակ. Գ 1/⁵:

Այսպիսի կառույցներում արգելական մասնիկն ու անորոշ դերբայը կարող են ընդմիջարկվել վերջինիս ինչպես խնդիր, այնպես էլ պարագա լրացումներով՝ *Մի՛ բնաւ ելանել* ըստ իւրաքանչիւր դուրս /Բուզ., 64/: *Մի՛ հնչ առնել* աչառանօք Ա. Տիմ. Ե 21/: *Մի՛ չար փոխանակ չարի* հատուցանել Ա. Պետր. Գ 9/: *Մի՛ թագում վարդապետս* լինել, եղբա՛րք իմ /Ծակ. Գ 1/ և այլն: Սակավ դեպքերում *մի՛* արգելականը թողնում է մախադասության

³ ՏՆՆ Գ. Խաչատրյան, ելվ. աշխ., 19 171:

⁴ ՏՆՆ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2, Եր., 1964, 19 40:

⁵ Այդ մասին տե՛ս նաև Օ. Հայրապետյան, Հայտուկ ինքերակով մախադասությունների շարադասական կաղապարները գրաբարում, ԳԱԱ ԵՏՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, 19 42:

սկիզբը, որտեղ կարող են հայտնվել տրամաբանորեն ընդգծում այլ բաղադրիչներ: Այդպիսիք կարող են լինել գերադաս անդամի լրացումները, կոչականը և այլն: Միտելի՞ք, մի՛ օտարօտի համարել գեղանկը ինչ /Ա. Պետր. Դ 12/:

Ի դեպ, այսպիսի շարադասական մասնակադասարով դրսևորվող բայական անդամ նախադասություններն ունեն իրենց սկզբնամասի ոչ միայն բարձր, այլև տևական հնչե-րանգ, որովհետև տրամաբանական շեշտի տակ են ինչպես առաջադաս կոչականը կամ բայական լրացումը, այնպես էլ հաջորդող մի՛ արգելականը: Հնչեղանգն ունի նույնպիսի բնույթ նաև այն դեպքում, երբ առաջադաս խնդրին կամ պարագային հաջորդողը ոչ թե մի՛ արգելականն է, այլ նախադասության գերադաս անդամի գործառույթ ունեցող անորոշ դերբայը. *Ի ծառայն չճաշակել /Ազաթ., 145/:* *Ջընչաւորաց միս չճաշակել և ի գինոյ ծուծ-կալել /Եզն., 142/:*

Հանդիպում է այս մասնակադասարի ավելի ծավալուն՝ «Լրացում - գերադաս անդամ-լրացում» տարբերակը, որում առկա է նաև գերադաս անդամին հետադասվող՝ նախադասությունը եզրափակող խնդիր կամ պարագա՝ նախադասության ավարտին բնորոշ թույլ արտահանությամբ. *ինչպես՝ Մարմնով հանդերձ, ասէ, կրել զբարիս և զչարիս /Եզն., 292/:* Միաբան հասանել ի չափ հասակին Բրիստոսի /Կոր., 82/:

Սրան հակառակ՝ մեկ այլ ծավալուն տարբերակում («Լրացում - լրացում - գերադաս անդամ» շարադասական մասնակադասար) նախադասության վերջում հայտնված անորոշ դերբայի բոլոր առաջադաս լրացումները տրամաբանորեն ընդգծված են. *Եւ ի լուսնոյ ի վեր զամենայն ...ամմա՛հ հա-մարել /Եզն., 142/:*

ՆԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազաթ. - Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914:

Բուզ. - Փառատոսի Բիզանդացույ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912:

Եզն. - Եզնկայ վարդապետի Կողբացույ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:

Կոր. - Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

Մեսի՛ - Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, Տիֆլիս, 1913:

Ա. Գրքի (Աստուածաշունչ մատենան Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ. Պոլիս, 1895) համառոտագրություններից՝ Առակ. - Առակք Սողոմոնի, Ա. Պետր - Թուղթ երանելոյն Պետրոսի առաքելոյ առաջներորդ: Ա. Տիմ. - Թուղթ երանելոյն Պետրոսի առաքելոյ առ Տիմոթեոս առաջներորդ: Յակ. - Թուղթ կաթողիկեայն երանելոյն Յակոբոս առաքելոյ:

ՄԼՆԱ ՄԱՍՋՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ

Հայոց բառարանագրության կոթողային ցվածումներից է Մխիթար Սեբաստացու «Հայկազեան լեզուի բառգիրքը» /ՌՌ. Ա. և Բ. 1749, 1769/, որ բովանդակում է շուրջ 100000 բառ: Սա մի՞չ այդ հրատարակված ամենահարուստ ու ճոխ բառարանն էր և դարձավ հետազայում կազմված բոլոր բառարանների առաջին և կարևորագույն սկզբնաղբյուրը:

Սեբաստացու գրչին է պատկանում «Դուռն քերականութեան Աշխարհաբար լեզուին հայոց» աշխատությունը՝ թուրքերեն և հայերեն լեզուներով: Առաջին մասը, որ գրված է թուրքերեն, հրատարակվել է 1727 թ. Վենետիկում, երկրորդը՝ հայերեն գրված մասը, ցարդ մնում է անտիպ:

Սա գրական աշխարհաբարի արևմտահայ տարբերակի առաջին քերականությունն է: Հայտնի է, որ Օրյոդների քերականությունը վերաբերում էր արևելահայ տարբերակին:

1730 թ. Սեբաստացին Վենետիկում տպագրում է գրաբարի քերականությունը՝ «Ջերականութիւն գրաբարի լեզուի Հայկազան սեռի», որի երկրորդ՝ ետմահու հրատարակության մեջ խորագրի «Հայկազան սեռի» արտահայտությունը փոխվել էր «Հայկազեան սեռի» /1770/:

Այս աշխատության առաջաբանում նա ընդգծում է իր նպատակադրումը՝ գրելու *այնպիսի քերականություն*, որ զերծ լինի ազդեցություններից և հիմնված լինի զուտ դասական շրջանի ձեռագիր մատյանների նյութի վրա: Այս ցանկությունը, ավա՛ղ, մնաց անկատար: Նա ևս մեծապես տուրջ տվեց լատինաբան դպրոցի սկզբունքներին:

Մ. Չամչյանն անդրադարձել է այս հարցին և ցավով գրել, որ Սեբաստացին «կամեցաւ շարադրել զնոր իմն քերականութիւն և նովին վերածել յառաջին ուղղութիւն գրաբար լեզուս Հայոց: Բայց քանզի յայնմ ժամանակի նորոգ հանդիսացեալ էին բազում քերականութիւնք բազում հեղինակաց, որք բազում ինչ նոր և օտար խառնեալ էին ի լեզու մեր, և ո՛չ էր հմար հակառակ նոցին աւանդել կանոնս ըստ բուն մախնի ուղղախօսութեան: Նմին իրի ջանացաւ Հայրն մեր այնպէս կարգել զքերականութիւն իւր, զի մի՛ ներհակ երևեսցի նոր հեղինակաց: .../ Այլ սակայն եթէ զոր գիտէր՝ յայտնապէս գրէր, և զամենայն կանոնս իւր ըստ այնմ կարգէր, թշնամի յարուցանէր գրութեան իւրում զբազումս ի նորոց, որով ո՛չ ժամանէր այնմ, զոր գիտէր»¹:

Եվ, իսկապես, այդ շրջանում հրապարակի վրա արդեն կային մի շարք հայազգի և օտարազգի հեղինակների՝ հիմնականում լատինաբան ուղղվածություն ունեցող քերականություններ /Ֆր. Ռիվոլա, Կ. Գալանոս, Ոսկան Երևանցի, Հովհ. Կոստանդնուպոլսեցի Հովով, Ս. Ջուղայեցի, Խ. Էրզրումեցի, Օրյոդեր և այլք/, որոնցից շատերը դեռ ապրում.

¹ Մ. Չամչյան, Ջերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1979, 193: Ընդգծումը մերն է. - Ա. Ա.:

ձևակազմության միջև: Կան և ուրիշ կարգի պակասավոր արտահայտություններ: Նշենք մի քանի սկզբունքային այլ դիտարկումներ ևս:

1. Տրականը սեռականից տարբերակում է *մ* խոլով /սեռ. *ազարակի, հաւի, ազարակներու, հաւերու, տր. ազարակից, հաւից, ազարակներուն, հաւերում*: Սա շատ կարելիոր սկզբունք է, որ հեղինակը կիրառել է հիշյալ երկու խոլովների տարբերակման համար: Այս սկզբունքը գիտականորեն ճիշտ է և արդարացված է արդյոք, դա այլ հարց է: Այնով միայն ընդգծենք, որ այս սկզբունքը հետագայում ընդունվեց շատերի կողմից: Այն որդեգրեցին Ար. Ղարիբյանը, Գ. Սևակը, Աշ. Աբրահամյանը, Ալ. Մարգարյանը, Վ. Ջոսյանը և ուրիշներ: Այսպիսով՝ Սեբաստացին հայ քերականագիտության մեջ առաջինն էր, որ *մ/ը/* խոլից հատկացրեց լրացուցիչ գործառույթ՝ այն ընկալելով *ճան որպես հոլովակերտ տարր*:

2. Հոգնակի բացառականը կազմում է տրականի մեման /տր. - *ազարակներուն, -հաւերուն*, բաց. - *ազարակներուն, - հաւերուն*!:

Միջին հայերենում արդեն իսկ ձևավորված էր բացառականի էձևությոն, որը կցվում էր կա՛մ ուղղականի բառաբանին, կա՛մ սեռական-տրականի բառաձևին /հմտ. *ամսէ, մահունէ* կամ *մահէ, տիրոջէ*: Միջին հայերենում հոգնակի բացառականը կարող էր ճան ձևով մուծանալ հոգնակի սեռական-տրականի հետ: Այդ դեպքում տարբերակիչ ձևությոն դեր էր կատարում *ի/յ/* նախդիրը /հմտ. սեռ. - տր. - *աղջկներու /ոյ/, գիշերներու /ոյ/* և բաց. *ի/* աղջկներու /ոյ/, *ի/* գիշերներու /ոյ/:

Սեբաստացին միջինհայերենյան կազմությունները սովորության ուժով մուծում է նոր հայերենի մեջ, մինչդեռ այստեղ բացառականն այլևս չէր կարող ձևով մուծանալ սեռական-տրականի հետ՝ իր սեփական ձևակազմությունը՝ *է* և *ից* վերջավորություններն ունենալու պատճառով:

3. Հայցականը թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում աճող է: Մնում է աճհասկանալի, թե այդ հողը ի՞նչ դեր ունի. տարբերակում է հայցականը ուղղականի՞ց, ինչպես տրականը՝ սեռականից: Այդ դեպքում հողը, ինչպես տրականի դեպքում, վերածվում է հոլովակերտ ձևությոն: Եթե սոսկ առկայացման կարգի ցուցիչ է, ապա ինչո՞ւ մուծ ցուցիչը չունեն եզակի և հոգնակի ուղղական խոլովները: Երկու դեպքում էլ հարցերը մնում են անպատասխան և լուծման կարոտ:

4. *Ով* դերանվան եզակի տրականի համար տալիս է *ուն* ձևը, իսկ սեռականի տեղը թողնում է թափուր /մշում է գծիկով՝ -/, այնինչ միջին հայերենում *ուն* ձևը հաստատապես ձևավորվել էր ճան որպես սեռականի արտահայտություն: *Որ* դերանվան եզակի բացառականի տեղը մուծպես թափուր է թողնում, մինչդեռ *որով* ձևը վաղուց կար վկայված միջին հայերենի մատենագրության մեջ և չէր կարող աճեցնել չլինել նոր հայերենին:

5. *Որ* դերանվան սեռականի և տրականի դիմաց դնում է *օրու* ձևը, փոխարեն՝ *որու*: *Օրու*-ն ակնհայտորեն բարբառային երանգ ունի:

Այս և մեման ձևերը վկայում են, որ Սեբաստացին դեռևս վերջնականապես չէր կողմնորոշվել համեմատաբար ընդհանուր տարածում ունեցող խոսակցական լեզվի, տարածական առավել մեծ ընդգրկում ունեցող բարբառների և նոր-նոր ձևավորվող ու քայլ առ քայլ գրական մշակման ենթարկվող աշխարհաբարի կառուցածների տակավին չհամակարգ-

ված խառն ու երեքում երևալների միջև: Այնուհանդերձ, նա մնում է առաջին հայ քերականը, որ հատուկ քննության օրոք դարձրեց աշխարհաբարի արևմտյան տարբերակի քերականությունը, ընդհանուր գծերով ճիշտ ներկայացրեց նրա հոլովման /նաև խոնարհման/ համակարգը, որը մասնակի բարեփոխումներով պահպանվում է մաս այսօր:

Ինչ վերաբերում է քաբարին, հեղինակն այստեղ հետևել է լատինաբան դպրոցի մշակած տեսությանը և ճանաչել 10 հոլով՝ բացառությամբ դերանունների այն մասի, որոնք կոչական չեն ստացում: Վերջիցներիս հատկացրել է 9 հոլով: Ստորև ներկայացնում ենք խաչ և ոմն բառերի եզակի և հոգնակի թվերի հոլովական հարացույցները՝ Սեբաստացու անվանակարգով և հերթականությամբ:

Եզակի

Անվանական /ուղղական/ - խաչ, ոմն

Սեռական - խաչի, ուրումն

Տրական - խաչի, ի խաչ, ումեմն, առ ումեմն

Հայցական - զխաչ, զոմն

Բացառական - ի խաչէ, յոմեմնէ

Գործիական - խաչիւ, ոմամբ

Պարտական - զխաչիւ զոմամբ

Ներգոյական - ի խաչի, յոմեմն

Կոչական - ո՛վ խաչ

Հոգնակի

խաչք, ոմանք

խաչից, ոմանց

ի խաչս, առ ոմանց

զխաչս, զոմանս

զխաչից, զոմանց

խաչիք, ոմամքք

զխաչիք, զոմամքք

ի խաչս, յոմանս

ո՛վ խաչք

Մ. Սեբաստացու հոլովական հարացույցի շարակարգը գրեթե նույնն է Հովհ. Կոստանդնուպոլսեցու /Հոլովի/ շարակարգի հետ. միայն ներգոյականի և պարտականի տեղերն են փոխված: Հովհ. Հոլովը ներգոյականը դնում է 8-րդ տեղում, Սեբաստացին՝ 9-րդ: Հոլովականության տարբերություններ չկան:

Սեբաստացին ևս հոլովները տարբերում է իմաստի և ձևի սերտ միասնության սկզբունքով և ավելի մանրամասն է բնութագրում հոլովները: Նա հատուկ ընդգծում է, որ հոլովները պետք է քննել նրանց արտահայտած նշանակությունների և ունեցած ձևակազմական հատկանիշների հաշվառմամբ: Հոլովը պետք է ունենա ձև, իսկ ձևը պետք է ունենա քերականական, տվյալ դեպքում՝ հոլովական իմաստ: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ նա գրում է. «Տասն կերպիս լինի շրջաբերում միոյ և նոյնոյ անուան, ի հարկէ և *նշանակութիւն մորիւն տասն* կերպիս պէսպիսանայ»⁴:

Սեբաստացին ավելի հանգամանորեն է տվել հոլովների իմաստային բնութագրերը, քան Հովհ. Հոլովը, թեև նախորդի պես շեշտը դրել է հոլովական առավելապես ռիմնական իմաստների մեկնության վրա: Նա ևս նախորդների պես ելակետ է ընդունում բառի ուղիղ ձևը՝ ուղղականը, և թեք հոլովները բնութագրում է ուղղականի ձևի և իմաստի հակադրությամբ: Այսպես. «Երկրորդ ասի *սեռական*, վասն զի անունն մինչ ուղղակի ոչ նշանակէ զէութիւն իրիւն, ըստ որում է էութիւն, այսինքն՝ ոչ նշանակէ *զմարդն* ըստ որում է

⁴ Մ. Սեբաստացի, Զերականութիւն պարտի լեզուի հայկազան սեռի, Վենետիկ, 1730, Լք 243:

մարդ, այլ ըստ որում է ունեղ իրաց իմչ, ասի սեռական /.../ վասն որոյ եթէ սեռական անուոնս այս մարդոյ ասիցի միայնակ, ո՛չ հանգուցանէ զմիտ մեր, այլ տայ որոնել և ասել զի՞նչն մարդոյ: Եւ յորժամ ասիցի լեզուն *մարդոյ* կամ ձեռն *մարդոյ* և այլն, յայն ժամ հանգչի ի միտ մեր: /.../ Երրորդն կոչի *տրական*, վասն զի անուոնն մինչ ո՛չ նշանակէ անմիջապես զէութիւնն իրին, ըստ որում է էութիւն, այլ ըստ որում է իմն ըղծալի կամ դիմելի և կամ նմին իր իմչ տալի, ասի տրական⁵:

Մխիթար Աբբան ընդհանուր առմամբ դավանում էր լատինաբան քերականական դպրոցի սկզբունքները, բայց և շատ հարցերում խախտել է այդ դպրոցի ավանդույթները: Նրա «ավանդախախտությունը» ունի հետևյալ արտահայտությունները:

Ա. Թեև ընդունում է նախորդների կողմից գրաբարի մեջ մուծված *ը* և *ըն* նախամասնիկները՝ որպես ներգոյական հոլովի ցուցիչներ, բայց և նեղացնում է դրանց կիրառության ոլորտը՝ ռեական արժեք տալով դրանց՝ «Բառնայ զհամեղութիւն շարադրութեանց»⁶:

Բ. Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, «ներգոյականի *ուս* և *ոք* վերջավորությունները գործածելի է համարում *ո, ո-ա* և *ու* հոլովումների համար, թեև նշում է, որ մեր քերականներից ունանք դրանք կիրառում են նաև *ի* և *ի-ա* հոլովումների դեպքում՝ բայանքների հետ չշփոթելու համար: Ինքը փորձում է տալ մի այնպիսի ռացիոնալ միջոց, որ չխախտի հենքի գործածության կանոնները, այն է՝ առաջարկում է վերջավորությունները չփոխել, բայց տարբերել հաստատում շարադասությամբ»⁷:

Գ. Անձնանիչ հասարակ անունների ներգոյականը կազմում է 2 ձևով՝ բուն ներգոյականի պես և նախդրիվ տրականով՝ *ի հօր* և *ի հայր*, *ի մօր* և *ի մայր*:

Դ. Նախադաս ածական որոշիչը ներգոյական հոլովով դրվելիս ստանում է անհրաժեշտ վերջավորություն, ինչպես՝ *ի մեծի* Հոսմ և ոչ թե *ի մեծն* Հոսմ⁸:

Ե. *-ի* վերջնահնչյուն ունեցող որոշ բառերի /հոգի, որդի և այլն/ և *-ցի* ածանցով բաղադրված բառերի ներգոյականը կազմվում է *-ւով*, *ւոց* վերջավորություններով, փոխանակ *-եաւ*, *-եաց* ձևայինների⁹:

Դեբառմվան հոլովման հարցում Մխիթար Սեբաստացին նույնպես հիմնականում ընդունում է Հովհ. Կոստանդնուպոլսեցու տեսությունը, բայց և որոշակի հստակություն մտցնում հոլովման տեսակների տարբերակման մեջ:

Նա ընդգծում է, որ՝

1) որոշ դեբառնունները հոլովվում են՝ սեռականում և տրականում լրիվ փոխելով հիմքերը.

Անուանական /ուղղ/ - ես, մեք, դու, դուք

Սեռական - իմ, մեր, քո, ձեր

Տրական - ինձ, մեզ, քեզ, ձեզ և այլն:

2) Որոշ դեբառնունների հիմքերը մասամբ են փոխվում, բայց և այնպես անուններից տարբեր ձևերով են հոլովվում, ինչպես՝

⁵ Նույն տեղում:

⁶ Նշվ. աղյւ., Լք 248:

⁷ Գ. Ջահուկյան, Նշվ. աղյւ., Լք 220-221:

⁸ Մ. Սևրասյան, Նշվ. աղյւ., Լք 448:

⁹ Նույն տեղում: Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Ջահուկյան, Նշվ. աղյւ. Լք 320:

Անուանական – սա, դա, նա, այս, այդ

Սեռական – տղա, դուրա, մորա, այսորիկ, այդորիկ և այլն:

3) Որոշ դերանունները հիշվում են անունների պես՝ ստանալով նույն վերջավորությունները, ինչպես՝

Անուանական – իմ, քո

Սեռական – իմոյ, քոյոյ և այլն:

Միևնույն Սեբաստացու լեզվաբանական ժառանգությունը մեծապես նպաստեց հայ լեզվաբանական մտքի զարգացմանը: Նրա «Դուռն քերականության աշխարհաբար լեզվին հայոց» աշխատությունն արևմտահայ աշխարհաբարի առաջին քերականությունն էր. իսկ «Քերականություն գրաբարի լեզուի Հայկազան սեռի» աշխատությունը հանրագումարն էր մինչ այդ եղած բառարանագրական նվաճումների: Չի կարելի չհամաձայնել Հր. Աղայանի այն բնութագրին, թե «Միևնույն Սեբաստացին իրեն նախորդող ամբողջ շրջանի զարգացում է հանդիսանում, իր քերականություններով ու հատկապես բառարանով նա մի կողմից փակում է հին շրջանը՝ ի հարկե, ունենալով դեռևս այդ շրջանի որոշ հատկանիշներ /.../, մյուս կողմից բացում է մի նոր շրջան՝ գիտական լեզվաբանության երախայրիքի շրջանը»¹⁰:

¹⁰ Հր. Աղայան, նշվ. աղյուս., էջ 131:

ՎԱՐՈՒԺՄՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Պարմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԻԵՌ ՔԻՅԵԱՌԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Պիեռ Քիյեառը (1864-1912 թթ.), մինչ իր վաղաժամ մահը լինելով «Պրո Արմենիա» երկշաքաթաթեթի անփոփոխ գլխավոր խմբագիրը, Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների մասին իր տեղեկությունները պարբերաբար ստացել է գլխավորապես Արևմտյան Հայաստանից և ըստ այդմ՝ նրա ուսումնասիրությունների գերակշռող մասը ձեռք է բերում նաև սկզբնաղբյուրի նշանակություն:

XIX դարի 90-ական թվականների կեսերին զանազան քաղաքական կողմնորոշում ունեցող եվրոպական մի շարք գործիչներ անկողմնակալորեն լուսաբանել են հայկական զանգվածային կոտորածների ընթացքը, խարազանել Թուրքիայի հայաբնակ քաղաքականությունը, ինչպես նաև մեծ տերությունների՝ հայ ժողովրդի հանդեպ դրսևորած անկարելիք վերաբերմունքը: Քիյեառը, սակայն, ի տարբերություն այլոց (Ժ. Կլեմանսո, Ժ. Ժորժես, Դ. Կոշեն և ուրիշներ), իրադարձությունների եվրոպացի եզակի ժամանակակիցներից է. որն այդ ամենից զատ անդրադարձել է նաև հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին և փորձել, սկզբնաղբյուրների ընձեռած ճնարկությունների սահմաններում, հավուր պատշաճի արժեվորել հայ ֆիդայիների ծավալած պայքարի մանրամասները:

«Հայերին հաճախ մեղադրել են արիության բացակայության մեջ, — գրում է նա, — և շատերը զարմանում են, որ երեք հարյուր հազար մարդիկ թույլատրել են իրենց սպանել «ինչպես ոչխարների»՝ առանց դահիճների դեմ դիմադրություն կազմակերպելու: Սակայն մոռանում են ասել, որ թե՛ Կոստանդնուպոլսում և թե՛ մահաճգմեքում կատարելապես անզեն հայերը գտնվում են կանոնավոր զորքերի, ոստիկանների և համիդիների կամ գերազանց զենքերով զինված ոչ պաշտոնական, սովորական մարդասպանների դեմ հանդիման... Փոխարենը, ամենուր, որտեղ հայերը գեճը ունեն՝ այնպես, ինչպես հելլեն պալիկարներն ու արմատիները և սերբ կամ բուլղար հայդուկները, գիտեն, թե ինչպես պաշտպանվեն»¹:

Ազատագրական պայքարի օրինաչափությունը Քիյեառը հիմնավորում է օսմանյան ռոնտալիության պայմաններում օրինականության կատարյալ բացակայությամբ: Նրա համոզմամբ՝ կայսրության տարածքում, ուր գոյություն չունի օրինական ճանապարհով հասարակական կարծիքի դրսևորման որևէ եղանակ, ուր չկան մամուլի ազատություն կամ նույնիսկ «խորհրդակցական ժողով» և որտեղ ամեն ինչ կախված է գահակալի հայեցողությունից, հարկ է, որ հրաշք տեղի ունենա, որպեսզի վերջինս կամովին հրաժարվի անսահմանափակ իշխանությունից: «Հրաշքի բացակայության պարագայում, — նշում է նա, — միակ ազդու միջոցը մնում է ազատամիտ մարդկանց կամքը, որոնք նախապես ան-

¹ P. Quillard. Pour l'Arménie. Mémoires et dossier, Paris, 1902, p. 83.

մնացորդ մվիրաբերել են իրենց կյանքը»²:

Իրատեսական այս մոտեցումն իր արտացոլումն է գտել «Քիյեառի» Հայոց ցեղասպանության մասին դեռևս առաջին՝ 1894 թ. Սասունի կոտորածներին մվիրված հոդվածում. որը լույս է ընծայվել Մորիս Լևեյր կեղծանունով³: Այստեղ «Քիյեառը, հպանցիկ անդրադառնալով արևմտահայության կացությանն Օսմանյան կայսրությունում XIX դարում, իրավամբ մատնանշում է, որ հայերը դարեր շարունակ «ուժի դեմ ուժով գործելու» ցանկություն չեն դրսևորել, թեև քառորդ դարից ի վեր, նրա կարծիքով, «գիտակցել են տարրական, այդ թվում, կոդուպոտիս և կոտորածին դիմակայելու իրավունքներ ունենալու անհրաժեշտությունը»⁴:

1894 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սասունի տարածաշրջանում հայերի՝ իրենց ամուրդաբար կողոպտող հարստահարիչների հետ զինված ընդհարումների մեջ մտնելը «Քիյեառը մեկնաբանում է այն անելանելի կացությամբ, որում գտնվում էին տարեկան վեց կամ յոթ անգամ կեղեքիչ հարկեր վճարելու անկարող սասունցիները»⁵: Ինչպես տեսնում ենք, «Քիյեառն» ի սկզբանե հայ ժողովրդի ազատագրական պայքարը պայմանավորում է օսմանյան վարչակարգի ծավալած հարստահարություններով:

Հաջորդ եղույթներում, իրադարձությունների զարգացմանը զուգընթաց, թուրք ելուզակների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը «Քիյեառը դիտում է իբրև հարկադրաբար կյանքի կոչված ինքնապաշտպանություն: 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում հնչակյանների մախաձեռնությամբ կազմակերպված ցույցի առիթով, օրինակ, նա ընդգծում է ցուցարարների հիմնական նպատակը, այն է՝ օսմանյան «վերնախավին տեղեկացնել բարեմորոգումների իրականացմանն առնչվող՝ Կոստանդնուպոլսի հայերի ցանկություններին»: «Քիյեառը ցավով է նշում, որ բռնությունների տեղիք տված՝ միանգամայն խաղաղ նպատակ հետապնդող այս գործողության ընթացքում ոստիկանությունը, զինված մահմեդական բնակչության օժանդակությամբ, «կոպտորեն ետ է մղել» ցուցարարներին: Միայն դրանից հետո են հայերն ապաստանել եկեղեցիներում և, ինչպես նա նշում է, նրանցից շատերը, ովքեր «գնեք ունեին»՝ վճել են պաշտպանվել յուրաքանչյուր նոր հարձակումից»⁶:

Հայերի՝ ընդամենը պաշտպանվելու, այլ ոչ թե մախահարձակ լինելու մեծ կարևորություն ունեցող հանգամանքը «Քիյեառը քննարկում է բազմիցս, վկայակոչում 1895 թ. Զեյթունում, 1896 թ. Վանում և այլուր արձանագրված՝ ազատագրական պայքարի այլևայլ դրվագներ»⁷: 1901 թ. ի վեր, կապված Արևմտյան Հայաստանի զանազան վայրերում սուլթանի հայահալած քաղաքականությանն սատակացման հետ, «Քիյեառը պարբերաբար անդրա-

² P. Quillard, *La Quinzaine* // "Pro Armenia", 1er novembre 1905, N 121.

³ M. Leveyre, *Les massacres des Sassounkî* // "Revue de Paris", livraison du 1er septembre 1895. Այս հոդվածի մասին մանրամասն տե՛ս «Լ. Պողոսյան, Համիդյան կոտորածները և Պիևռ «Քիյեառը», «Էքսիանիս», 2004, Դ, էջ 55-67:

⁴ M. Leveyre, *Ելվ. աղխ.*, էջ 75:

⁵ Լույս տեսնում, էջ 79-80:

⁶ P. Quillard, *Diplomatie secrète du sultan* (novembre 1897 - octobre 1898) // "Revue de Paris", livraison du 15 juin 1899, p. 883.

⁷ Տե՛ս օրինակ P. Quillard, *Pour l'Arménie. Mémoire et dossier*, p. 83-88.

դառնում է այս հարցին. «Այսօր նրանք (հայերը — Վ. Պ.) պաշտպանվում են, ինչպես արդեն պաշտպանվել են Զեթունում, Սասունում, Օսմանյան բանում,— գրում է նա 1901 թ.: — Արդեն նույնիսկ այն տարածաշրջաններում, ուր կայսրական կամքի կատարածությունը ամենադաժան ձևով ավերածություններ են սփռել, հայտնվել են վրիժառուներ, որոնք ուժին դիմակայում են ուժով և սպանում իրենց ազգության դաժիճներին»⁸: «Զենարկելով 1904 թ. ապրիլի 10-ից մայիսի 5-ը Սասունում տեղի ունեցած դեպքերը՝ նա առանձնացնում է նաև «հայերի հերոսական դիմադրության» իրողությունը⁹:

Զբաղարարվելով, սակայն, ընդհանուր բնույթի դիտարկումներով, «Ինչեառը համակողմանի վերլուծության է ենթարկում ֆիդայական շարժման հետ կապված զանազան մանրամասներ: Նախ՝ նա հայ վրիժառուներին զերծ է պահում արյունալի իրադարձությունների հետևանքով նրանց վրա բարդվող փոքր-իսկ պատասխանատվությունից, իրադարձություններ, որոնք «վերստին տեղի են ունենում և ամբողջապես շարունակվում հայկական վիլայեթներում... Այստեղ և այլուր ժողովված ամհամար վկայություններն ապացուցում են, որ թվում է, թե ցանկացած բնույթի հարստահարումների և տառապանքների ենթակա այս դժբախտների համար, որոնք շրջապատված են թշնամիների վերածված հարևաններով, մահն ազատագրում է»¹⁰:

Այս պայմաններում, «Ինչեառը ֆիդայական շարժման առաջ գալը համարում է միանգամայն օրինաչափ»¹¹:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ ի սկզբանե լայն տարածում է գտել, այսպես կոչված, «հայկական ապստամբության» հետ կապված տեսակետը, ըստ որի՝ զանգվածային կոտորածների պատճառ են դարձել հայերի «խռովությունները»: Այս հարցի շուրջ 1904 թ. բանավեճի մեջ մտնելով 1898-1906 թթ. Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Թեոֆիլ Դելկասեի (1852-1923 թթ.) հետ, «Ինչեառը գրում է. «Երբ ամենավաղագ բռնակալությանը ենթակա մարդիկ զենքի են դիմում և պաշտպանում յուրալիների պատիվն ու կյանքը, դա բռնություն չէ. այդ կոտորածն է, որը բռնագրվում է իբրև գերալույս իշխանության գործողություն և հեղված արյան համար հարկ է հաշվետվություն պահանջել միայն սուլթան Աբդուլ Համիդից»¹²:

Հենվելով զանազան սկզբնաղբյուրներից քաղված տեղեկությունների վրա, «Ինչեառը իմնավորապես բացահայտում է Աբդուլ Համիդի նեղ գործելամիջոցները, հերքում հակոյան պաշտոնյաների, մասնավորապես՝ Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպան Մուհիթ փաշայի՝ 1904 թ. Փարիզում տարածած ստահող լուրերը, համաձայն որոնց՝ Սասունի իրադարձությունները կարող էին վաղուց ի վեր հրաժարած լինել հեղափոխականների»¹³:

Ընդհանուր առմամբ «Ինչեառը գտնում է, որ «երկարատև ու ճարպկորեն հղացած ծրա-

⁸ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 10 septembre 1901, N 20.

⁹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er juin 1904, N 86.

¹⁰ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 novembre 1904, N 98.

¹¹ Նույն տեղում:

¹² P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 juin 1904, N 87/88.

¹³ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er juillet 1904, N 89.

դարից ի վեր, խոստացել էր նրանց հայրենակիցներին¹⁹:

Ինչ վերաբերում է ֆիդայիների նպատակներին, ապա դրանք, ըստ Քիլեանի, հանգում էին սուկ հայ ժողովրդի ոտնահարված տարրական իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորման պահանջին: Անդրադառնալով Խրիսյան Հայրիկի՝ եվրոպական տերություններին 1904 թ. հղած մամակներից մեկին, որով Հայոց Հայրապետը պահանջում էր ոչ թե ազգային ամկախություն, այլ միայն բարենորոգումների իրականացում և ժողովրդի գոյության պահպանության նվազագույն երաշխիքներ, ինչպիսիք են բռնագրավված ունեցվածքը կողոպտված հայերին հանձնելը, վտարանդիներին հայրենիք վերադառնալու թույլտվության ընձեռումը, հայերի ազատ տեղաշարժը թե՛ երկրի ներսում և թե՛ դրանցից դուրս, համընդհանուր ներսում շնորհումը, քրդերից և չերքեզներից պաշտպանվելու իրավունքը²⁰, Քիլեանը գրում է. «Արդյո՞ք ֆիզիկական և բարոյական տառապանքներից վհատված ֆիդայիները... չարացած սարսափելի պայքարից, որը մղում են հազար անգամ գերազանցող ուժերի դեմ, լուրաքանչյուր պահի հալածվում են և զտնվում մահվան սպառնալիքի տակ, կբավարարվեն նման ողջախոհ և չափավոր պահանջներով: Այսօր դրանում կասկածներ տածելն իսկ չի կարելի: Եվրոպացի հյուպատոսներին Անդրանիկի հանձնած հուշագիրը²¹, որը վերջիններս խոստացել են փոխանցել իրենց կառավարություններին, որևէ հիմնահարցում չի զանազանվում կաթողիկոսի մամակից»²²:

Հարկ է նաև նշել, որ ազատագրական շարժման վերելքը XX դարի սկզբին Քիլեանը պայմանավորում է մասամբ նաև եվրոպական պետությունների կատարյալ անտարբերությամբ: «Եթե պաշտոնական Եվրոպան,— գրում է նա,— չկատարի իր տարրական պարտականությունը, ֆիդայիները չեն թույլատրի սպանել իրենց հայրենակիցներին, որոնց կպաշտպանեն: Սասունից և այլ վայրերից նրանք կկարողանան հասնել այնտեղ, որտեղ վտանգ ծառանա»²³: Նրա համոզմամբ «եթե եվրոպական միջամտությունը բացառվի, ապա՝ չի կարող լինել որևէ այլ գործնական այլընտրանք, քան հեղափոխական գործունեությունը»²⁴:

Արդեն բուն ազատագրական շարժման ելեքների առիթով Քիլեանը մեկ անգամ ևս հավաստում է հայ ժողովրդի հաստատակամությունը ու անկոտրում կամքը՝ շարունակելու պայքարը: «Եվրոպայում մվազ կամ ոչ այնքան հայտնի՝ համեմատաբար մոր փաստերը հայերին ներկայացնում են այլ լույսի ներքո,— գրում է նա,— և թույլ չեն տալիս նրանց դիտել իբրև մախախնամության կողմից՝ զոհերի ողորմելի կացության դատապարտված-

¹⁹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 novembre 1904, N 98.

²⁰ Կաթողիկոսի այս և այլ եամակների մեսին տնն է. Ա. Կոստանդյան, Մկրտիչ Խորիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 434:

²¹ Անդրանիկի և Սարիափի (Փնորզ Չառլ) ու Տարսնեցու ստորագրությունները կրող՝ 1904 թ. հուլիսի 5-ի պահանջալի մասին մանրամասն տնն է. Ռ. Սիմոնյան, Անդրանիկի մամանակը, հյդ. Ա, էջ 196-199: Ի դեպ, Հ. Սիմոնյանը հավաստում է, որ սույն պահանջալիր «չունեն Օսմանյան կայսրությունից անջատվելու որևէ պրամադդություն»: Նույն տեղում, էջ 198:

²² P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 août 1904, N 92.

²³ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er août 1903, N 66.

²⁴ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er novembre 1905, N 121.

ներ»²⁵։ Իբրև այս հավաստման հիմնավորում՝ Քիչեառը խոսքը կենտրոնացնում է մասնավորապես, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենացցուն դրվագներից՝ խառնատրի արշավանքի և Առաքելոց վանքում Անդրանիկի կազմակերպած դիմադրական պայքարի վրա։

Խառնատրի արշավանքի մասին Քիչեառը, ըստ իր խոստովանության, տեղեկությունները քաղել է 1897 թ. գերմանական «Ցուքուցֆտ» պարբերականում լույս ընծայված հոդվածից և ջանացել ընդհանուր գծերով ոչ միայն մեղակայացնել այդ գործողության պատկերը, այլև ամզամ բացահայտել դրա պատճառները։ 1897 թ. հուլիսի 24-ի լույս 25-ի գիշերը ՀՅԴ նախաձեռնությամբ 253 հոգուց բաղկացած ռազմարշավային մի խումբ անցնում է պարսկա-թուրքական սահմանը, ներխուժում Պարսկաստանին սահմանամերձ տարածք և խառնատրի դաշտում խիզախ հարձակում իրականացնում մազրիկ ցեղին պատկանող քուրդ հրոսակախմբերից մեկի վրա՝ հակառակորդին պատճառելով մեծ կորուստներ։ Տալով 19 զոհ, ֆիդայիները վերադառնում են Պարսկաստան²⁶։ Խառնատրի արշավանքը հետապնդում էր գլխավորապես նվիրական դիվանագիտության ուշադրությունը Հայկական հարցի վրա վերստին հրավիրելու նպատակ և համապատասխանում էր ազատագրական շարժման մոր մարտավարությանը²⁷։

Գիտակցելով խառնատրի արշավանքի կարևորությունը²⁸, Քիչեառը, չունենալով ստույգ տեղեկություններ, ուշադրություն, այդուհանդերձ, կենտրոնացնում է դրա վրա։ Նա, սակայն, արշավանքը մեկնաբանում է իբրև ինքնաբերական ծնունդ առած գործողություն և այն պայմանավորում բացառապես հայ ֆիդայիների վրեժխնդրությամբ²⁹, որը կյանքի էր կոչվել ի պատասխան 1896 թ. Պարսկաստան տեղափոխվող՝ վանի ինքնապաշտպանության մասնակիցներից շատերի կոտորածի, որոնք մահացել էին ապարհիվ պաշարվել էին մշված քրդական հրոսակախմբի կողմից և անհավասար պայքարում տվել 384 զոհ։

Քիչեառի զանազան ելույթներում բազմիցս հիշատակվում են հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ղեկավար գործիչները, մասնավորապես՝ Աղբյուր Սերոբն ու Անդրանիկը։ «Այնպիսի ղեկավարներ, ինչպիսին Սերոբն է, որին անվանել են Սերոբ փաշա, մարտնչել են երկար տարիներ՝ քուրդ և թուրք բռնակալիկների դեմ գործադրելով արդարացված բռնություններ»³⁰։ Նա ցավով է արձանագրում, թե ինչպիսի մեծ եղանակներով է իրականացվել Աղբյուր Սերոբի սպանությունը, սակայն միաժամանակ անվարանդուն ընդգծում է, որ վանում, Մուշում և Սասունում նրա սկզբնավորած պայքարը հաջողությամբ շարունակում է Անդրանիկը³¹։

²⁵ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 83.

²⁶ Խառնատրի արշավանքի մասին տե՛ս Կ. Զ. Թադոյան, ևսլ. աշխ., էջ 329-330; Վ. Գրիգորյան, ևսլ. աշխ., էջ 65:

²⁷ Լուսերամասն տե՛ս Վ. Գրիգորյան, ևսլ. աշխ., էջ 56-57:

²⁸ Խառնատրի արշավանքը, ի դեպ, հայրենական պատմագրության մեջ տեղի է տվել իրարամերձ գնահատականներով։ Եթե Վ. Պողոսյանի կարծիքով արշավանքը ընդամենը «ձախողված գործ էր», ապա Վ. Գրիգորյանն այն համարում է «անխախտ երևույթ հայոց ազատամարտի համար»։ Նման. Վ. Մ. Պողոսյան, Վասպուրականի պատմություն (1850-1900), Երևան, 1988, էջ 289; Վ. Գրիգորյան, ևսլ. աշխ., էջ 65:

²⁹ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 84.

³⁰ Լույս տեսնում է էջ 86:

³¹ Լույս տեսնում է էջ 86:

Վերջինիս մասին Քիլեանոն արտահայտվում է առանձնակի համակրանքով, նրա գործունեությանը առնչվող դրվագները քննարկում զանազան ելույթներում: Օրինակ, 1904 թ. մայիսին Քիլեանը մանրամասն վերլուծելով նրա առաջադրած պահանջները, մեկ անգամ ևս հիմնավորել է ֆիդայական շարժման գլխավոր պահանջը³²: Ներկայացնելով Անդրամիկի կենսագրությանը առնչվող համառոտ տեղեկություններ, Քիլեանը համզամանորեն անդրադառնում է 1901 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Մուշից արևելք գտնվող Առաքելոց վանքում վերջինիս կազմակերպած հերոսական դիմադրությանը, որը միայնակ ուներ դիմակայել թուրք հարստահարիչներին և մատնացույց անել հայ ժողովրդի կենսունակությունը³³: Վկայակոչելով իր տրամադրության տակ եղած՝ եկեղեցական սկզբնադրյալից բխող մի փաստաթուղթ, Քիլեանը թվարկում է այն հայտարարությունները, որոնցով ազատագրական շարժման պարագլուխը նոյեմբերին հանդես է եկել վանքում տեղի ունեցած ընդհարումների ժամանակ հակառակորդի պատվիրակների հետ վարած բանակցությունների ընթացքում և դրանք համարում է «արժեքավոր»: Նա Անդրամիկի ներկայացրած հայտարարությունները ամփոփում է վեց կետերում.

«1. Որ ինքն ու իր խումբը ապստամբներ չեն, այլ պաշտպանում են քրդերի զորք դարձած իրենց հայրենակիցների կյանքը:

2. Որ իրենք երբևէ չեն կողոպտել գյուղերը, հարձակվել բանագնացների վրա, սպանել անպաշտպան մարդկանց:

3. Որ իրենք սպանել են Բշարե խալիլին և երեք այլ քրդերի, որոնք եղել են Օուշմամերի սպանությունների հեղինակները:

4. Որ փոխարենը (և նա ներկայացնում է ամբողջական թվարկում), ինչպես Մուշի, այնպես էլ Սասունի գյուղերում քրդերն են իրականացրել անհամար կողոպուտներ, գողություններ, սպանություններ և կոտորածներ:

5. Որ իրենք ճանաչում են սուլթանի իշխանությունը, բայց որ մեկ սուլթանը բավական է և չեն ցանկանում ունենալ ուրիշների՝ հանձինս քուրդ առաջնորդների, որոնք՝ ինչպես սուլթաններ, տնօրինում են հայերի կյանքը և ունեցվածքը, նրանցից հարկեր զանձում և ըստ իրենց քմահաճույքների օրենքներ կիրառում:

6. Որ իրենք անձնատուր կլինեն, եթե նրաշխավորի իրենց և երկրի հայերի անվտանգությունը»³⁴:

Վերլուծելով «ոչ այնքան պահանջկոտ հեղափոխական» Անդրամիկի հայտարարությունները, Քիլեանը դրանք բնորոշում է իբրև «գործողության ծրագիր, որը չի կարող սարսափեցնել ոչ մեկի, նույնիսկ նորին կայսրական մեծությանը»³⁵ և ըստ այդմ՝ ևս մեկ ան-

³² P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 mai 1904, N 85.

³³ Առաքելոց վանքում Անդրամիկի խմբի մղած մարտերի մասին տե՛ս Մ. Պ. Աղայան, Ելվ. աշխ., Լք 189-196; Ն. Մ. Պողոսյան, Ելվ. աշխ., Լք 250-253; Ն. Ռ. Սիմոնյան, Ելվ. աշխ., Լք 118-130, Ա. Ա. Հաճոբյան, Ելվ. աշխ., Լք 189-191:

³⁴ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 mai 1904, N 85. Տե՛ս նաև P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 87. Հարկ է նշել, ի դեպ, որ Անդրամիկի առաջադրել է նաև քաղաքական պահանջներ, օրինակ, սպարություն շնորհել Տաթևում ձերբակալված քաղաքական հայ լուսավարականներին: Այս պահանջը վրիպել է Քիլեանի ուշադրությունից: Տե՛ս Ն. Մ. Պողոսյան, Ելվ. աշխ., Լք 252; Ն. Ռ. Սիմոնյան, Ելվ. աշխ., Լք 124:

³⁵ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 mai 1904, N 85.

զամ ընդգծում հայ ֆիդայիների առաջադրած պահանջների օրինականությունը:

Թեպետ Քիյեառն ընդունում է ազատագրական շարժման ղեկավարների պահանջներին չափավորությունը, այնուամենայնիվ չի ժխտում հեղափոխական տրամադրություններին առկայությունը հայերի շրջանում, որը սակայն հիմնավորում է Օսմանյան կայսրությունում առկա օբյեկտիվ պայմաններով: «Իրականում Թուրքիայում, ինչպես նաև Ռուսաստանում հայերն, *անհրաժեշտության դեպքում* (ընդգծումը մերն է – Վ. Պ.), հեղափոխականներ են: Ղա չի մշանակում, թե մրամք տուրք են տալիս միայն ահաբեկչությանը և ընդունում միայն խեղահեղ պայքարի անհրաժեշտությունը: Նրանք հեղափոխականներ են, և այդ այն դեպքում, երբ մրամք հպատակներից ամենահնազանդներն են, ինչը բնորոշ է մրամք գերակշռող մասին: Նրանք հեղափոխականներ են, քանզի ինքնակալական, բացարձակ անիշխանության, կրոնական և քաղաքական ճնշումների այս երկրներում ներկայացնում են արևմտյան գաղափարներն ու մշակույթը»³⁶:

Ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը Քիյեառնի տված գնահատականները միանգամայն իրատեսական են և անկողմնակալ: Նրա ամուրաանյի արժանիքներից առանձնացնենք, մասնավորապես, հայ ժողովրդի մղած պայքարին առնչվող խնդիրների քննությունը լայն կտրվածքով: Այդուհանդերձ, այս հարցին մվիրված Քիյեառնի ելույթների, ինչպես նաև մրա հայաճպաստ գործունեության ամենանշանակալից կողմերից մեկը, մեր համոզմամբ, հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի մասին հեռավոր իսկ պատկերացումներ չունեցող եվրոպացի ժամանակակիցներին, երբեմն գուցեև ոչ լիարժեք (օրինակ, Նամասորի արշավանքի պարագայում), տեղեկություններ հաղորդեն է: Հարկ ենք համարում ընդգծել նաև այս հարցին մվիրված Քիյեառնի գաճազան ելույթների այժմեականությունը, պայմանավորված թուրք պատմաբանների ձեռնարկած՝ հայ ազատագրական շարժման պատմությունը կեղծելու հանգամանքով³⁷: Այս առումով Քիյեառնի մեկնաբանությունները ձեռք են բերում առավել մեծ մշանակություն:

³⁶ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenie", 15 mars 1906, N 130.

³⁷ Այդ մասին տնն Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դնն 1850-1890 թթ., էջ 307-324:

ՍԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԸ Ն. ՄԱՌԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՄԲ

Նիկողայոս Մառի «Ժողովածույք առակաց վարդանայ» հետազոտությունը եղել է հեղինակի մագիստրոսական ատենախոսությունը, որի վրա մա աշխատել է երկար տարիներ: Սկզբում առաջադիր խնդիր է եղել հետևյալը: Ե՞րբ է հայերեն «Աղվեսագիրքը» ստեղծվել և արդյո՞ք այն եղել է թարգմանություն արաբական համանուն գրքից, թե՞ ընդհակառակը՝ արաբական «Лисья книга»-ն թարգմանվել է հայերենից: Երբ գիտնականը ձեռնարկում է «Աղվեսագրքի» ուսումնասիրությունը, պարզվում է, որ այն չափազանց տարողունակ հետազոտական բնագավառ է, և գիտական ճշմարտությունը պարզելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ հնարավորինս հարուստ ձեռագրական նյութ: Այդ նպատակով անմիջապես դիմում է աշխարհի բոլոր այն գրադարաններին, որտեղ կային կամ կարող էին լինել հայ առակագիրների երկերը պարունակող ձեռագիր մատյաններ: 1899-ի ապրիլի 1-ին գրված և գրքին կցված համառոտ խոսքում նա խոստովանում է, որ բոլոր գրադարանային հիմնարկներում աշխատող մադդիկ իր դիմումներին վերաբերվել են հավասար ուշադրությամբ, և երախտագիտության խոր զգացումը պարտավորեցնում է իրեն բոլորին հավասարապես ասել ջերմ ու սրտագին շնորհակալություն¹:

Նիկողայոս Մառի հետազոտությունը հիմնարար է և ավարտում: Ավելին, նրա գիտականությունն այնքան շեշտված է, որ հասանելի է միայն մեղ գիտական շրջանակների համար: Այս փաստն ամենից ավելի դիպուկ բնորոշել է նրա արժանավոր աշակերտը՝ Հովսեփ Օրբելին, իր «Басни средневековой Армении» գրքում: Նա շեշտում է այդ աշխատանքի նախատեսված լինելը խիստ սահմանափակ գիտնական-մասնագետների համար, որոնք պետք է լինեին բանասեր-արևելագետներ²: Հ. Օրբելին խոր ակսոսանք է հայտնում այն իրողության համար, որ իրականում այդ ժողովածուները պարունակում են այնպիսի գանձեր, որոնք դարերով սիրված են եղել հայ ժողովրդի լայն զանգվածների կողմից և գիտական համակարգման ձևով ներկայացնելը հեռացրել է գրական այդ նյութը ընթերցողների լայն շրջանակից: Հովսեփ Օրբելին Ն. Մառի հրատարակած առակների և զրույցների մեջ տեսնում է պատմական մեծ արժեք. չնայած նրանց մեջ հաճախ պահպանված չեն պատմական աճների աճումները, սակայն նրանցում կան այնպիսի նյութեր, որոնք չենք զտնում ժամանակի տարեգիրների երկերում³:

Ն. Մառի երեք ժողովածուներին անդրադարձել է նաև Մանուկ Աբեղյանը՝ իր «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորում: Թեմատիկ նյութը զետեղել է

¹ Н. Марр, Сборники притч Вормана, часть I, Исследование, СПб, 1899, стр. IV.

² Տնն И. А. Орбели, Избранные труды, т. 1, Ереван, 1968, стр. 222.

³ Նույն փոխում:

«Առակագրություն» ընդհանուր խորագրի տակ և անդրադարձել Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու ստեղծագործությանն ու առակների՝ փորձելով մաս տալ նրանց հմարավորի՞նս ամբողջական կենսագրականացնելը⁴։ Մ. Աբեղյանի համար լիովին ելակետային են ամ դրույթները, որոնք առաջադրված են Ն. Մառի հրատարակած ժողովածուներում։

Առակը հնագույն գրական տեսակ է և ինչպես վկայում է ժամանակը, ու ինչպես հաստատում են տարբեր ազգերի գրականությունների պատմությունները, այն այսօր էլ կենսունակ է որպես ժանր։ Պատահական չէ, որ վաստակաշատ գրականագետներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդ. Զորբաշյանը և բան. գիտ. դոկտոր Պիոն Հակոբյանը, ծանրակշիռ ուսումնասիրություններ են մվիրել հայ առակագրությանը՝ նոր փաստերով լրացնելով Ն. Մառի հիմնավորած գիտական տեսակետը վարդանյան առակագրության վերաբերյալ։ Էդ. Զորբաշյանի ուսումնասիրությունը կոչվում է «Հայկական մի առակի միջազգային զուգահեռներ»⁵։ Նա իր հոդվածով անդրադարձել է Ն. Մառի «Ժողովածուք առական վարդանյան» ժողովածուի երկրորդ մասում եղած թիվ 356 առակին, որն ունի «Իշխան եւ այրի» խորագիրը։ Նրա կարծիքով ո՛չ Ն. Մառը և ո՛չ էլ Հ. Օրբելին իրենց ուսումնասիրություններում չեն նշել այդ առակի ծագումը։ Մինչդեռ առակը որպես ժողովրդական պատում ներկայացրել է Հ. Թումանյանը⁶։ Այն իր բովանդակային մոտիվությամբ առկա է գերմանացի հայտնի գրող Ա. Ծաֆստյի «Ալբի կոշ աղոթքը» բանաստեղծության մեջ։ Նույն առակը գտնվում է և Հովհաննես Մործոբեցու «Քարոզգրքի» հենց սկզբամասում։

Նմանօրինակ փաստարկները միայն հաստատում են Նիկողայոս Մառի վերոհիշյալ ժողովածուի այն դրույթները, թե առակների հորիզոնները չափազանց լայն են։ Պիոն Հակոբյանն անդրադարձել է առակների տեսության խնդիրներին՝ ուրվագծելով այդ ժանրի տեսական մտքի ձևավորումը միջնադարյան Հայաստանում։ Նա գրում է. «Տակավիճ անցյալ դարի 90-ական թթ. հայագետն (խոսքը Ն. Մառի մասին է - Ա.Դ.) անհերքելի փաստերով ապացուցեց, որ միջնադարյան հայ գրականության ամենի ստեղծագործություններից ամենից ավելի առակներն էին, որ առաջին ժողովածուները կազմելու օրերից շատ չանցած՝ թարգմանվեցին ու որդեգրվեցին հարևան ազգերի կողմից և արժանացան միջազգային ճանաչման»⁷։

Պ. Հակոբյանի համար միջնադարյան առակագրության ժանրային բնութագրման ելակետեր են Ն. Աղոնցի «Діонисий Фракийский и армянские толкователи» գրքի համապատասխան հատվածը⁸ և Ստեփանոս Սյունեցու մշակած առակների ու առասպելների տեսությունը, որը որդեգրեցին Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Երզնկացին, Առաքել Սյունեցին և ուրիշներ։ Առաքել Սյունեցին «Յաղագս քերականութեան համառոտ լուծմունք» երկում ներկայացնում է այնպիսի առակներ (իհարկե՝ պատմելով խիստ համառոտ և ենթադրելով, թե դրանք գիտեն իր ժամանակի ուսյալ մարդիկ - Ա.Դ.), որոնք կան Ն.

⁴ Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատոր 2, Երևան, 1946, էջ 142-187։

⁵ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես»։ 1-2, Երևան, 1997, էջ 71-80։

⁶ Նույն վրդովմ, էջ 73։

⁷ Պ. Հակոբյան, Առակների փաստերը միջնադարյան Հայաստանում (Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», հ. 1, Երևան, 1995, էջ 169)։

⁸ Н. Адося, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 159.

Մառի ժողովածուներում⁹:

Առաքել Սյունեցի, առակի ժանրը բնորոշելուց հետո, օրինակով հաստատում է այդ գրական տեսակի կիրառական լայն շրջագիծը, որի մեջ մտնում է նաև փյոյստփայտությունը. «Բայց թե զի՞նչ է «առակ» եւ զի՞նչ «արիմակ»։ Առակն, այսինքն՝ թե սուտն է, բայց առ եւ արկ՝ եւ լիճի «արիմակ»։ Դարձեալ՝ առակն սուտ է, եւ արիմակն՝ ճշմարիտ։ Վասն որոյ իմաստասէրքն ի սուտ իրաց եւ յառասպելաց սահմանէին զառակն, իսկ Տէրն մեր զճշմարտութիւնն դնէր արիմակ։ Իսկ տեղիք սոցա այսպէս եմ. ոմանք յառաջ քան զբանն եւ է ի մէջ բանին, եւ է, որ ի վերջքն, այսինքն՝ արիմակն յառաջ քան զբանն, զի ճշմարիտ է բանն, իսկ առակն՝ ի վերջքն։ Իսկ երկուսն երբեմն ի մէջ բանին նստին։ Եւ այսոքիկ եմ առասպելախաւսութիւնք քերականիս, վասն որոյ ասէ Պրոփիլոս ի վեցերորդ գլուխն, որ վասն ծայմին ճառ է...¹⁰:

Առակի գրական տեսակի տարածական և բազմաշերտ լինելն էլ՝ Ն. Մառին թելադրել է հայկական առակագրության հիման վրա ներկայացնել Արեւելքի և Արեւմուտքի միջնադարյան գրական կապերը՝ քացելով նրանց հանգույցներից դժվարագույնները:

Առակի դաստիարակչական բնույթը գիտակցել եմ բոլոր դարերում, և պատահական չէ, որ 1878 թվականին, Բաքվում, խորեմ քահանա Միզաբեկյանցը հրատարակում է Մխիթար Գոշի, Ողոմայիանու և Եզովպոսի ընտիր առակները՝ դրանց կցելով համառոտ, սակայն բովանդակալից մի նախաբան՝ առակի կարևորության վերաբերյալ. «Այո՛, իմաստուն մարդիկը զտան այդ հնարը միմիայն առակներով։ Այն, ինչ որ առակներով էր հայտնել և զգուշացնել՝ թագավորից սկսած մինչև հետին ուսմկին, ահմարին էր հայտնել և խրատել այլապես»¹¹:

Ն. Մառի վարդանյամ առակների ժողովածուի երրորդ գիրքը՝ տեսական ծավալուն մասը, ահմար է կարդալ առանց մասնագիտական կենտրոնացման ու մտային խոր հիացմունքի։ Նախ պետք է խոստովանել, թե այն կատարյալ ընթերցելու համար պետք է կարողանալ օգտվել շուրջ տասնհինգ լեզուներից։

Օրինակ, եթե Ն. Մառը եվրոպական առակագրության մասին մեջբերումներ ունի եվրոպացի գիտնականներից, ապա ֆրանսիացուհի, անգլիացուհի, գերմանացուհի, իտալացուհի կատարում է նրանց մայրենի լեզուներով, առանց ռուսերենի կամ հայերենի թարգմանության։ Ի դեպ, նա հաճախ ռուսերեն իր խոսքում այդ լեզուներով էլ բերում է նրանց գրքերի կամ հոդվածների խորագրերը և դրանց հեղինակների անունները։ Մառը գրում է խիստ գիտական, սակայն աշխույժ ու փոքր-ինչ «չարաճճի» ոճով։ Նա երբեմն հեզմուն է որոշ եվրոպացի բանասերների փաստագուրկ եզրակացությունները և մի առանձին հաճույքով՝ կետ առ կետ (այդպես մեզանում Եզնիկ Կողբացին էր գրում իր «Եղծ աղանդոցում») հերքում է նրանց՝ ապացուցելով նրանց տեսակետների ողջ խախտությունը։ Բերենք բնորոշ մի օրինակ։ Ն. Մառն ընդդիմախոսում է անգլիացի բանասեր Jacobs-ին, ըստ որի Երեմիա վարդապետը 12-րդ դարի վերջին «Աղվեսագիրքը» արաբերենից թարգմանել

⁹ Առաքել Սյունեցի, Յաղապս բերականութեան համառար լուծմուք, Լոս Անճելոս, 1982, էջ 80-81:

¹⁰ Լույս տեսելով, էջ 81:

¹¹ Գոշ Մխիթարի, Ողոմայիանու և Եզովպոսի ընտիր առակները, թարգմանություն Խորեն Բախանայի Միրզաբեկյանց, Բազու, 1878, էջ ա:

է հայերեմի. «Однако категорическое заявление Jacobs'a о том, что Вардапет Иеремия переводил в конце XII века Лисью книгу с арабского на армянский язык, оказалась плодом фантазии»¹². Թե ինչու է սխալվել անգլիացի հետազոտողը, Ն. Մառը բացատրում է շատ հստակ: Պարզվում է, որ նա իր փաստերը բաղել է ֆրանսիացի բանասեր Դյու Մերիի մի գրքից, որը կոչվում է «La Poésies inédites du moyen âge, précédées d'une histoire de la Fable Esopique (Paris, 1854): Դյու Մերիը գրում է. «Առակը բովում է, Հայաստանում ունեցել է յուրովի ժողովրդայնություն, գրականության պատմությունը պահպանել է երեք առակագրի անուններ՝ Մխիթար՝ կոչված Գոշ, Վարդան և վարդապետ Երեմիա՝ մի անանուն ժողովածուի հեղինակ... ինչպես «Աղվեսագիրքը» («Livre du renard»)»¹³: Հետո նա ավելացնում է, թե այդ առակներից ամենահինը չի անցնում 12-րդ դարից այն կողմ, և հրաժեշտ կրկնում են չափազանց ստրկորեն եզրվապահ և Հիմնդաստանի ամենաժողովրդական առակները: Ն. Մառը բացատրում է, թե Դյու Մերիին էլ իր այդ կարծիքը կազմել է Neuman-ի գրածով, իսկ վերջինս էլ օգտվել է Ջոհրաբի և Սեն-Մարտենի կազմած «Choix de Fables de Vartan» գրքից: Առակագիր Երեմիան Դյու Մերիի գրածում թյուրիմացության արդյունք է¹⁴: Ն. Մառի համոզմամբ՝ արաբական «Աղվեսագիրքը» չի կարելի համարել դասական արաբական գրականության ստեղծագործություն, այն արաբական-քրիստոնեական գրական հուշարձան է¹⁵: Նրա կարծիքով՝ Լոխմանին վերագրվող առակների գիրքն էլ քրիստոնեական-արաբական գրական ծագում ունի¹⁶:

Չպետք է մոռանալ մի հանգամանք՝ «Ղուրանի» սուրահներից մեկը կապվում է Լոխմանի անվան հետ և իր բովանդակությամբ շատ մեծ է խիկարի խրատներին, Սողոմոնի Առակներին ու ժողովրդին¹⁷:

Նկատենք, որ քրիստոնյա արաբական գրականության ամենաակնհայտ դեմքը՝ Աբուֆարաջը, որը գիտեր նաև հայերեն, ունի խրատական մի ժողովածու, որի մեջ հավաքել է Արևելքի և Արևմուտքի՝ անտիկ աշխարհի խրատական-առակախոսական պատմությունները¹⁸:

¹² Н. Марр, Сборники притч Вардапта, СПб, 1899, стр. 2.

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 3:

¹⁵ Նույն տեղում, էջ 47:

¹⁶ Նույն տեղում, էջ 49:

¹⁷ «Ղուրանի»՝ Լոխմանի վերագրվող սուրահում կա մի պարկեր, որը հիշեցնում է Գրիգոր Նարեկացու «Մարտան ողբերգության» պոեմի համապատասխան հստակածը:

Գրիգոր Նարեկացի

Ջի կթ, պիժ մի ծովուց ի յորակութիս դեղոյ յնոյնեկից,
... եւ գլորակս յոգունց անկառուց շամրից նդեգանց
Ի հալուածս գոյութեան ցրեաց կազմեցից...

(ԲԱՆ Թ, Ա)

Լոխման

26. Եւ կթ, կրկիս վրայ կդառ ծառերը ցրիցնր լինին ևւ ծովը նրանից յնոյն եօթնապարիկ բանաքի ծով դառնար, Աստու խաքերը չիկ սպառուի. իրաւ Աստուած գորադը իմաստուն է (ՏԵՄ՝ «Ղուրան», Թարգմանեց արաբերենից հայերենի՝ Ար. Ամիրխանյան, Վատնա, 1909, էջ 391:

¹⁸ Абуль-Фарадж, Книга занимательных историй, Москва, 1957, стр. 4.

Տեսական հետազոտության առաջաբանում Ն. Մառը պատմում է, թե ինչպես է փոխվել իր ատենախոսության համեստ պլանը՝ վերածվելով ընդարձակ հիմնահարցերի խմբի: Նա պարզորոշ տեսել է Վարդան Այգեկցու առակագրական ժողովածուի նմանողությանը ստեղծված գրական կտորները և կարևորել բուն հեղինակի առակների վրայից հետամուտ շերտերի հետացումը, զսոցել Վարդանի ձեռքով գրածները, միաժամանակ պարզել նաև այդ շերտերի հեղինակային պատկանելությունն ու ժամանակային ծագումը: Նա խոստովանում է նաև, որ իր հետազոտության մեջ ստիպված է եղել հղմթացս անդրադառնալ ընդհանրապես հայ հին գրականության և պատմության զանազան հարցերին¹⁹:

Տեսական ուսումնասիրության երրորդ գլուխը կոչվում է «Просторные и краткие Вардановские сборники»²⁰: Այստեղ բացատրություններով ներկայացվում է Վարդանյան առակների կամ «Աղվեսագրքի» առաջին տպագիր օրինակները: Առաջինը տպագրվել է Ամստերդամում, 1668-ին, և կոչվել «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուեսագիրք»: Տիտղոսաթերթի հակառակ կողմում չափածո ներքող կա՝ նվիրված Մովսես Խորենացուն: Սա հասկանալի է, որովհետև տպագիր երկի առաջին գործը Մովսես Խորենացուն վերագրված Աշխարհացույցն է եղել:

Երկրորդ հրատարակությունը Մարսելիցն է՝ 1676-ին: Այն վերստին Մովսես Խորենացու Աշխարհացույցի հետ է և այդ գրքի մասին ֆրանսերենով գրված է. «L'abrégé géographique de Moyse de Khoren avec un recueil de fables, connu chez les arméniens sous le titre de livre de renard. En arménien. Marseille, 1676 (1678)»²¹:

Երրորդ հրատարակությունը վերստին Մարսելում է՝ 1683-ին, վերստին Աշխարհացույցի հետ միասին:

Չորրորդ հրատարակությունը կատարվել է Լիվոռնոյում, 1698-ին: Այդ գրքի մանրամասն նկարագրությունը կա «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ. «Մովսես Խորենացի: Աշխարհացույց: - Աղուեսագիրք: Առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության, տպագրությունը երեմիա վարդապետ Մեղրեցու, 1698»²²: Նկարագրության վերջում կարդում ենք. «Գ. Լեոնյանի («Հայ գիրքը և տպագր. արվեստը») կարծիքով գիրքը տպագրվել է Լիվոռնոյում Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի տպարանում»²³:

Ն. Մառի հետազոտության երկրորդ և երրորդ մասերը լույս են տեսել առաջինից ավելի վաղ՝ 1894-ին, և հաջեցած են գիտական աղյուսակներով ու բազմաթիվ հավելվածներով: Երրորդ մասի առաջին հավելվածն Էջմիածնի Մատենադարանի հետևյալ տասը ձեռագրերի մանրամասն նկարագրությունն է, որոնց մեջ կան նաև Վարդանյան ձեռագրերը (ՏԵՆ № № 1, 57, 453, 1631, 1636, 1637, 1639, 1711, 1722, 1755):

Թիվ 1711 ձեռագրի նկարագրության մեջ Ն. Մառը նույնությամբ, գրաբարով մեջքերում է «Վարք Վարդանայ վարդապետի» գործը, որի սկզբի մասը ձեռագրում պակասավոր է²⁴:

¹⁹ Н. Марр, Сборники иррих Вардана, стр. 8.

²⁰ Նույն տեղում, էջ 97:

²¹ Նույն տեղում, էջ 99:

²² Ն. Ոսկունյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնագրիկ գրքի մատենագիտություն, Երևան, 1988, էջ 126:

²³ Նույն տեղում, էջ 129:

²⁴ Նույն տեղում, էջ 48-49:

վեցերորդ հավելվածում ուսանելու և գրաքար զետեղում է «ԲԱՆՔ. Վասն խաբող աղուհու և չարության և Գորայ» առակավոր գրույցը. որի բնագիրը համեմատական ձևով կազմել է Փարիզի Ազգային գրադարանի Հին ֆոնդի ճ.135 գրչագրի և «Բազմավեպի» 1881 թվականի հրատարակության ձեռնագիրը:

Ն. Մառը գրում է. որ Գրանք չնչին տարընթերցվածներ ունեն: Մենք պարզեցինք. որ «Բազմավեպի» օրինակում բացակայում է Փարիզի ձեռագրում եղած բարոյախոսական ավարտը. «Ցուցանե առակս. թե կան շատ նեմզաւոր մարդիք. ևս առաւել սատանայ. որ բազում հնարիք ջանայ և զանազայն խաբէութեամբ որսայն զմարդիք և ձգեն ի յորոգայթ մեղացն և ի ընծեանք ծիծաղին ի կորուստ մեղաւորացն և յետոյ մատնին ի հոլոր գեղեցին ի յանգերծանելի տանջանս ինքեանք և արքանեակքն իւրեանց: Եւ զմեզ ազատեայ Քրիստոս Աստուած մեր ի յաներևոյթ աղուհու և. այսինքն՝ ի սատանայ և ի պատրանաց ցորայ. ամէն»²⁵:

«Բազմավեպի» օրինակի հրատարակողն իրավացիորեն նկատում է եվրոպական գրականության մեջ նման նյութերի նկատմամբ եղած բացառիկ լուրջ վերաբերմունքը. «...Եթե հայկական միջավայրում ոմանք նման գրույցը սոսկ զվարճություն են համարում. ոմանք էլ՝ չնչին բան. ապա եվրոպական գիտնականների համար ոչ սակավ հարգի են նման գրույցները որպես միջնադարյան ավանդությունը և բանահյուսությունը»²⁶: Եվրոպական բանասիրությունն այդ մտնեցումները պահպանել է առ այսօր: 1970 թվականին Փարիզում հրատարակվել է ֆրանսիական գրականության հին հուշարձաններից մեկը՝ «Աղվեսի վեպը» («Le roman de Renart»):

Բնագիրը, ինչպես երևում է ֆրանսերեն խորագրից, միջին ֆրանսերենով է և հետո է այսօրվա գրական ֆրանսերենից: Հրատարակությունը գիտական է, ունի նախաբան-հետազոտություն, բառարան, բառերի բանալի, «Աղվեսի վեպի» հրատարակությունների ցանկ: Ընդարձակ առաջաբանի հեղինակն է Ժան Դյուֆուրեն: Նա «Աղվեսի վեպի» մասին բերում է ամվանի գրականագետներ Հակոբ Գրիմի և Լեոպոլդ Սուդրի կարծիքները. ըստ որոնց՝ այդ վեպը ժողովրդական ու հին ծագում ունի և առաջին հերթին կապվում է գերմանական ակունքների հետ²⁷: Միաժամանակ Լ. Սուդրը համոզված է, որ քանավոր ստեղծագործությունը ստեղծվել և եկել է թուր հորիզոններից՝ Հնդկաստանից, ամսիկ դասականներից, միջնադարյան բանահյուսությունից, այդ պատմություններն ու գրույցները դուրս են եկել ժողովրդական միջավայրից և ձևափոխումների ենթարկվել քանավոր խոսքում²⁸:

Մատի ներկայացրած պատումի ժողովրդական համառոտ տարբերակը կա Սարգիս Հայկունու «Ժողովրդական առակներ» գրքում: Հայկունու գրքի Բ մասը կոչվում է «Աղվեսավեպ», և մեզ հետաքրքրող առակը վերնագրված է «Գել ու աղես» և ստեղծված է Ալաշկերտի քարբառով²⁹: Բնականաբար Ն. Մառը ծանոթ չէր այս առակին:

²⁵ Ն. Մառ ևս իր գրքի փոդարկում էրում է այս հավածի բացակայությունը «Բազմավեպի» օրինակում (Կրկն նույն տեղում, էջ 192):

²⁶ «Բազմավեպ», Վենետիկ, 1881, պրակ Գ, էջ 193:

²⁷ «Le roman de Renart», Paris, 1970, p.15.

²⁸ Նույն տեղում, էջ 16:

²⁹ Ս. Հայկունի, Ժողովրդական առակներ, Վաղարշապատ, 1907, էջ 32:

ի վերջո, հետևելով Ն. Մառին, կարևորագույն խնդրին անդրադառնա՞նք վերջում: Ն. Մառը խիստ գիտականորեն ապացուցում է, որ արաբերեն «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերեն համաճում ժողովածուից և այդ եզրահանգումը հաստատող բազում փաստեր է բերում: Նա նշում է, որ հայկական «Աղվեսագրքում» դասական գրաբարի կողքին կան ուսմական լեզվով գրված հատվածներ, որոնք արաբերենի միակերպության համեմատ շատ բազմաթիվ լեզու են ներկայացնում և չեն կարող թարգմանության արդյունք լինել: Բացի այդ, մա բազմաթիվ էջերով և հարուստ լեզվական օրինակներով նկատում է հայերեն բառերի հետքերն արաբական թարգմանության մեջ: Այսպես, օրինակ, թարգմանիչը երբեմն հայերեն բառը ճիշտ չհասկանալով՝ այդ բառը բոլորովին այլ բառով է փոխարինում: Օրինակ, Աղվեսի մասին պատմող առակում գլոխը բառը արաբերեն դարձել է գալ գայլուն և մույմ առակի արաբական թարգմանության մեջ ամհարկի հայտնվել է գայլը, որը գոյություն չունի մույմ առակի հայերեն թմազում³⁰:

Նիկողայոս Մառը 1894 թվականի հրատարակություններում դնում է գրաբարով գրված իր երկու հիշատակարանները, որով արտահայտում է մախ իր մեծագույն սերը հայ հնագույն լեզվի և մշակույթի նկատմամբ և երկրորդ՝ միջնադարի ողով նրանցում հաղորդում է կարևոր տեղեկություններ իր աշխատանքի գրության մասին: Առաջին հիշատակարանը գրված է 1895-ի մայիսի 26-ին, Ս. Պետերբուրգում. «Գտցես անդամաւր և ազգի ազգի տեսութիւնս ի նուստէս արարեալս և ծանօթութիւնս զանճճէ վարդանայ Այգեկցւոյ և զորոց նմին ընծային և զունակ զունակ ժողովածուք առակաց, այլ յո՛ւր զառ սոյն երկրորդ մասն ցուցակ սխալանացն, զորս աստեն ի կրկին ընթեռնուլ նկատեսցուք և սոքին երանի թէ բնաւ ոչ ելանիցեն ի դէմսս, բայց ավա՛ղ տեսանեմ ահա ուրեք զելուզակսս զոգցես զննգատոր կապս աչացն, թէպէտ և յոյժ փոքունս թուով: Իսկ կար իմ այսչափ էր»³¹:

Երկրորդ բաժնի հիշատակարանը հետևյալն է. «Փառք Աստուծոյ և Երրորդութեան: Յառաջին ամի ամենայն ոռոսաց կայսեր Նիկողայոսի Երկրորդի, ի հայրապետութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մկրտչի Առաջնոյ, որ Հայրիկ բարուք ասի, յառուսն յորս ի մայրաքաղաքիս հիւրընկալիւր հովիւ սրբազնագոյն հայկազեան ազգին, ի թուականութեան հայոց ՌՅՆԴ յամսեան մարերի յանգ հանաւ տպեցումն տառիցս, որ է մասն երկրորդ, առաւ ծախիւք Արեւելեան լեզուաց բաժնի Ս. Պետերբուրգի համալսարանի կայսերականին և քանիւք սպասատրիս հայագիտութեան Ն. Մառի, որ և աղաչեմք զհանդիպողսդ տառիցս, չարեաւ մի՛ յիշէր զիս և ակամայ սխալանացս անմեղադիր լերուք»³²:

Միջնադարյան ողով գրված այս հիշատակարանը շերտութամբ է լցնում հայագիտությանը նվիրված ամեն անհատի՝ այնպիսի գիտնականի համդեպ, ինչպիսին է Նիկողայոս Մառը, որի այս մնայուն և անգերազանցելի աշխատության մասին առավել ճշգրիտ ու տեղին է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու հետևյալ նկատումը: Նա Ն. Մառին անվանում է համհարեղ գիտնական, որը Անիի պեղումներով հարստացրեց ոչ միայն հայագիտությունը, կովկասագիտությունը, այլև Առաջավոր Ասիայի միջնադարյան պատմությունը³³:

³⁰ Н. Марр, Сборники критич. Введениа, стр. 51.

³¹ Ն. Մառ, Ժողովածուք առակապ. Վարդանայ, Պետերբուրգ, 1894, էջ 1V:

³² Նույն տեղում, էջ 344:

³³ И. А. Орбеля, Избранные труды, т. 1, стр. 223.

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՑԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ԱՆՁՐԵՎԱՅԻՆ ՍՈՆԱՏ»-Ի ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Պարույր Սևակի պոեզիան լուրջ աղերսներ ունի երաժշտական մտածողության և երաժշտական բազմաձայն կառուցումի սկզբունքների հետ: «Բնությունն ինձ վրա ազդում է՝ ինչպես երաժշտությունը»¹: գրում է Սևակը Երթապետրային գրառումներից մեկում: Լինելով բազմակողմանի հետաքրքրությունների և խոր իմացության տեր ստեղծագործական անհատականություն՝ նա քաջանամոր էր և՛ ազգային-ժողովրդական, և՛ հոստական ու եվրոպական դասական արվեստին: Ընդ որում, ոչ միայն լսում էր կոմիտաս, Բախ, Հենդել, Մոցարտ, Բեթհովեն, Վագներ, Վերդի և Չայկովսկի, այլև ուսումնասիրել և յուրացրել էր երաժշտական տեսության բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրներ: Այդ մասին են վկայում ոչ միայն բանաստեղծական և քննադատական հղումներն ու գեղարվեստական կառուցումները /գործիքային՝ սիմֆոնիա, սոնատ, պարային՝ վալս, վոկալ՝ խմբերգ, եռաձայն երգ, պատարագ, հոգևոր երգ/, այլև «Անլուելի զանգակատուն» պոեմի ձեռագրային տարբեր նշումներ, նաև այն Երթապետրայինները, որոնց իր մեծագրության մեջ անդրադառնում է Ա. Արիստակեսյանը: Երաժշտական սուր լսողությամբ և ուրիշի նուրբ զգացողությամբ, նաև երաժշտական արվեստի համակողմանի և խոր իմացությամբ են ձևավորվել Սևակի բազմաթիվ գեղարվեստական հղացումներ՝ «Մահվան Վեներա», «Անլուելի զանգակատուն», «Երգ եռաձայն», «Եռաձայն պատարագ», «Եղիցի լույս» շարքի լուսերգությունները, «Աշնանային վալս»:

Երաժշտական կառուցումի սկզբունքն է գործում նաև «Մարդը ասիի մեջ» գրքում գետնադրված «Անձրևային սոնատ»-ում: Այն գրվել է 1959 թ. դեկտեմբերի 19-ին Թիֆլիսում՝ Երբձյանցային ինքնամոռացումի ստեղծագործական բացառիկ մի հոգեվիճակում, որի ոգեղենությամբ են ծնունդ առել նաև «Ականջդ բեր ասեմ» շարքի առանձին բանաստեղծություններ, «Վերնագիրը վերջում»-ի ինքնատիպ մտահղացումը, նաև այլ գործեր: Վերնագիրն արդեն իսկ որոշադրում է ժանրը՝ սոնատ՝ բազմամաս ստեղծագործություն /հիմնականում 4-6 մասերից բաղկացած, այստեղ՝ 5 մվագից/, որի գոնե մեկ մասը /հիմնականում առաջին, այստեղ՝ եզրափակիչ. այդպես է գրված նաև Բեթհովենի «Լուսնի» սոնատը/ զարգանում է սոնատային ավելորդի /allegro/ ձևի մեջ, այսինքն՝ պատումի բոտոն և դրամատիկ ընթացքով: Անձրևի թախծանվազը և դրա հարուցած մտային ենթագիտակցական հոսքը ուրիշամասնատային պատկերների նուրբ և հոգեզգայական վիճակների ինքնատիպ փոխակերպումներով զտնում են գեղարվեստական արտահայտումի շարային ճիշտ ձևակադապարներ, որ մտաքային աղաջիտի /adagio/ տխուր ելևէջումներից ծայր առ-

¹ Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, Երևան, 1974, էջ 215:

նելով, նվագից նվագ աճել-լայնանալով՝ հանգուցալուծվում են սոնատային դիմամիկ վերջերգում: Այնն ինչ բնական հորդումի, ազատ, անճիգ անցումների և առնչակցումների շրջածիրի մեջ է՝ առաջին հայացքից անկապ, անհամատեղելի, սակայն ընդհանուր դիտումի և դրամատիկ զարգացման ամբողջականության համապատկերում՝ պատճառաբանված և համադրելի:

Սոնատը գրված է միմոր հնչականությամբ, այսինքն՝ տխուր, մեղամաղձոտ մեղեդին դրսևորման տարակերպություններով գերիշխում է նյութի տարածական ամբողջ դաշտում: Սևակն ուղղակիորեն չի քննում մեղամաղձի /split/ սոցիալ-հոգեբանական կամ փիլիսոփայական հիմքերը /ինչպես ֆրանսիացի բանաստեղծ Օ. Բոդլերն է դա անում «Չարի ծաղիկներ» գրքի «Մեղամաղձ և իդեալ» բաժնում/, այլ հնչագրում է անձրևի երաժշտությունը, զգայաշափում «թախծի երկարությունը» /հիշենք, որ «Անձրևային սոնատը» նախորդում է «Վերնագիրը վերջում» շարքի՝ բնագրի ներշնչանքով գրված խորհրդագեղումներին, որոնցում գուգորդությունների ինքնակ և անսպասելի հանգուցումներով հոգեկազմաբանական բարդ բացահայտումներ են արվում/:

Անձրևի թախծանվագ և մարդու հոգու թախծի, այս երկու թեմաները՝ փոխադարձ արտացոլումներով և անդրադարձումներով, ձևավորում են տրամադրության և զգացողությունների աստիճանական տեղաշարժերով ընդհանրացող հոգեբանական ճնշված, ապա և ջղածիգ մի վիճակ, որ գտնված սոնատային ձևի մեջ բացվում ու բացահայտվում է բնախոսական մանրամասնությամբ՝ հար և մնա 1954 թ. հոկտեմբերի 7-ին ապրած հոգեվիճակին. «Տխուր եմ, սարսափելի տխուր... Պարզապես հիմա իմ տրամադրությունն այդպիսին է, և անձրևն էլ ծեծում է տանիքը... Ես կխեղագարվեմ այս անաստված տաղտկությունից»²:

Հայ գրականության մեջ անձրևի երաժշտությունը Վ. Տերյանի ստեղծագործական տարերքն է /անձրևային թախծի հրաշալի օրինակ է Նաև Վ. Թեքեյանի «Կ'անձրևե, տղաս...» քնարական բանաստեղծությունը/. համեմատական քննումի փորձը ուշագրավ առանձնահատկություններ է արձանագրում երկու բանաստեղծների պոետական ընկալումներում: Անձրևը Վ. Տերյանի հոգու երկվորյակն է. ներքին հաշտություն և դաշնություն կա նրանց միջև, որից էլ ծավալվող մեղեդին համակերպության հանդարտ, երգեցիկ ձայներանգներով է հոսում: Սևակի համար անձրևը դաշնակից չէ, այլ ընկճված մի պահի ուղեկից, ընդ որում՝ անցանկալի և ճնշող, որից ազատվելու ջանադիր ճիգեր է գործադրում ենթագիտակցական ազդակների գործուն ուղղորդումով: Այս ներքին խռովքի ոլորմիկ գծապատկերը ներկայանում է կետգծային նյարդային հատումներով և մկանային պրկումի լարվածությամբ, հատկանիշ, որ խիստ բնորոշ է Սևակի արվեստին և, ընդհանրապես, 20-րդ դարի հոգևոր-մշակութային կենսականարագրին /ֆուտուրիստներ, Վ. Մալակովսկի, Ե. Չարենց և ուրիշներ/:

«Անձրևային սոնատ»-ի նվագները գրված են հիմնականում բարդ երկմասանի ձևի մեջ: Առաջին մասը, որ իմաստային միասնությամբ և ինքնուրույնությամբ առանձնացող պարբերություն է, ունի երկկազմ մակատեսք՝ քաղկացած բոլոր նվագներում անձնա փոփո-

² Հ. Չարխչյան, Սուրմիքս: Սևակի մեծ սերը, Երևան, 2004, 19-62:

խոթեցանք կրկնվող ութամետրեային մույն դարձվածքից /պարբերության հիմնամյուր/ և դրա հարուցած ազատ մտափոխից /պարբերության ասույթ/: Երկրորդ մասը շարունակում է նախորդից սկիզբ առած եմթագիտակցական փնտրտուքը. միևնույն ժամանակ եզրափակում մտային կարճատև սևեռումի մի օղակ:

Պատկերների և զգայությունների անկամխատեսելի անցումները հնգափուլ շարժման մեջ արվագճում են ինքնատիպ և ճյուղավոր ընթացք: Առաջին պատկերն անձրևի հարուցած թախճի առաջին մվագն է. մառ հասկում /զլխում/ խտացող սերմերի /մտքերի/ առաջին ազդանշանը.

Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից գուցե մոռացված
Ինչ-որ անձրև է թախճում ինքն իրեն,
Երբ տխրությունն է մերս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր,-

Կիսախեղագար մտքեր են զալիս
Ու խտանում են իմ խեղճ գանգի մեջ,
Խտանում, ինչպես սերմերը՝ հասկում:
/ I, 488 /

Ծիլ է տալիս ու ճյուղավորվում մտային առաջին հոսքը՝ մերքին թույլ հակադրումի երանգավորմամբ.

Ես միտք եմ անում,
Ա՛խ, եթե մեռնեմ այնպես հեշտ լիներ,
Ինչպես ծնվելը...
Բայց մի՞չա անգամ թե այդպես լիներ՝
Կշահեի՞նք մե՛նք,
Դարձյա՛լ-վերստի՛մ-կրկի՛մ-մորի՛ց մե՛նք,
Բայց ո՛չ մայրերը:

Բա մեղք չե՛մ մրանք ...

Հավելվածային վերջին արտահայտության հարցական երանգավորումից թեման մտնում է բաց և շարունակելի: Մամբրամաղ անձրևի միալար ընթացքը հուշում է դրա զարգացման փոփոխական /վարիացիոն/ տարբերակ՝ համատեղելով երաժշտական ունդոյի նշաններ /անձրևի թեման 5 անգամ դիրքային անփոփոխ տեղակայումով կրկնվում է թուր մվագներում/: Օարժումը կուտակվում-անում է փուլային մասնատումներով: Ռիթմիկ մկարագծի այդ տրոհումները սրում են լարված և իրականում անընդմեջ մտքի ընթացքը, որ ամեն անգամ զգայական-մտային սևեռումներից դեմ տոնելով խուրթի՝ շարժման մոր

ուղի է գտնում և զարգացման մոր հուն բացում:

Երկրորդ մվագը կրկնում է մախորդի մուտքային մեղեդային դարձվածքը՝ շատ մուրր, չայց էական բառիմաստային և հնչերանգային փոփոխությամբ.

Երբ աշմանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից իզո՛ւր մոռացված
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,
Երբ տխրությունն է ներս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր ...

Նախորդի խոսքային թեական որակը /«գուցե»/ այստեղ ափսոսանքի հուզական լից-
քավորմամբ է ներկայանում /«իզո՛ւր»/, որ տրամադրության և հոգեբանության մոր նրբե-
րանգ է հաղորդում շարժմանը: Բացի դրանից, այս ազդանշանով վերափոխվում են կա-
ռուցվածքային ներքին օղակները. առաջին պարբերության մակատեքստում կրկնվող փո-
փոխակից հաջորդող ասության հատվածը, որում տաղտուկի հեղձանքից ազատվելու
տենդանսին և չղային փորձեր են արվում, ընդարձակվում-ծավալվում է երկրորդ մասի
վաշվին և ամպատասխան հարցի դեմ առնելով՝ արագ ընդհատվում.

Պարապ քայլերով պատից մինչև պատ՝
Կոշիկի մոթով ու կրունկներով
Խուլ մվագում եմ հատակի վրա,
Որ տանտիրուհու ձեռքի է կարոտ.
Եվ այդ մվագին ունկ չդնելով՝
Հանկարծ միտք անում,
Թե շունն ինչո՞ւ է հաչում Լուսնյակի,
Սակայն ոչ երբեք Արևի վրա:

Մտային կենտրոնացումի հաճախանքը, որ տաղտուկի հոգևոր տարածության ճախ-
նացման վտանգով է հղի, սթափումի ճիգով ընդհատվում և ծանածուռ ժպիտի է փոխարկ-
վում հաճող հայացքը քնեռելով մոր հեռակետի.

Եվ չգտնելով հարմար պատասխան,
Ավելին՝ մույմիսկ չըորոցներով,
Զգում եմ, թե ես ո՞նց եմ կարոտել
Ա՛յն ավազակին,
Որ կոչվում է շոգ:

Առաջին մվագի կտրատված գծանկարը, որ երկրորդ մվագում անհամեմատ համա-
լսի և կայուն ռիթմապատկերով է ներկայանում, կառուցվածքային մասերի մոր դասավոր-

րությանը ու տեղաբաշխումով. չափափոխական անկայուն և ցյարդային մկարագրով և վերագործարկվում երրորդ մվագում: Փոփային զարգացումներով և մտային ընդհատումներով կուտակված հուզական լարվածությունն այս մվագում ենթարկվում է դիտումի ու վերլուծումի մի նոր փորձության. որ սկիզբ է առնում անձրևային թախծի զգացական երանգափոխումից.

Երբ աշնանային դաշտերի վրա
կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից արդեն մոռացված
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն.
Երբ տխրությունն է ներս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր ...

«Գուցե»-ի, «իզո՛ր»-ի հնչերանգափոխված տարբերակը /«արդեն»/ ցյարդային անհամ-
գրտության մշաններ է հաղորդում շարժմանը, և «զգույշ ու դանդաղ» ընթացքով, ուշադ-
րությունից չվրիպելու լարվածությամբ փրկության ելքի որոնման են մղվում այս անգամ
աչքերը.

Աչքըս, ակամա,
Ծամփորդության է դուրս գալիս հանկարծ,
Դիմացի շենքի
Ջարդաքանդակված քիվի երկայնքով
Ծամփորդում այնպես զգույշ ու դանդաղ,
Ասես մրջյուն է
Եվ ոչ թե հայացք:
Ծամփորդում է մա քիվի երկայնքով,
Եվ հասկանում եմ ես լուսնոտներին:

Ակնթարթի մեջ ապրվածը ոչ թե մկարագրվում կամ բացատրվում է, այլ բջջային բա-
ղադրությամբ տարրալուծվում: Ծայրահեղ սևեռումը վերացնում է հատվածային դադարի
ամերածեշտությունը, և դանդաղափոս, ջղաձիգ տենքստը հանկարծազդուս մտազեղումնե-
րի մի նոր երակ է քաջում.

Ու հանկարծ-
Այանքումս առաջի՛ն անգամ,-
Լուս միտք եմ ամում.
Լուսնային ախտով թիվանդներ թե կամ,
Իսկ ինչո՞ւ չկամ
Արևի ախտով տառապող մարդիկ,
Եվ դա չի՞ կապվում այն առեղծվածին,

Թե շուճ իմչո՞ւ է հաչում Հուսնյակի,
Սակայն ոչ երբեք Արևի վրա ...

Եզրափակիչ մասը, իմաստային-իրադրական մոր կենսատարածքում վերառելով առաջին միջին ամսվարտության տարրեր, ուղղորդվում է դեպի սոցիալական ավարտին մոտեցող մոր զարգացում, որ չնայած արտաքին կառուցվածքային համաչափությանը՝ Ռիստափության և անելանելության բոլորքում մտավիճակով է հատկանշվում:

Երբ աշմանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից վաղու՛ց մոռացված
Նույն այդ անձրևն է ինքն իրեն թախծում,
Երբ տխրությունը դարձյա՛լ իմ տան մեջ
Իրեն պահում է տանտիրոջ մեան,-
Գրասեղանից մի գիրք եմ վերցնում,
Որ՝ հետապնդված իմ իսկ մտքերից՝
Գեթ ապավիճեմ էջերի մերա:

Վերցնում եմ և - ի՞նչ.

Խորհում ակամա,

Որ մուգիսկ գիրքը ... Դա էլ է նեղվում՝

Ընդմիջտ սեղմված ամուր կազմի մեջ ...

Ծարժան տարափոխ ելևէջավորումներով ամբողջացող մեղեդային գիծը հասնում է ծայրահեղ ջիկացման հոգեզգայական վիճակին. լռության պատը մերքին ճնշումից ճաք է տալիս, և կուտակված հրաճեղուն լավան ժայթքում է անկանգ և ամարգել: Սոցիալական ալլեգորի փոթորկում և դրամատիկ ձևը հնարավորություն է տալիս հուզարտահայտչական քաղմակերպ հագեցածությամբ հասնել հանգուցալուծման, արտասանական մեղեդի-աղարձերը, չափադիմական ընդարձակումներն ու սեղմումները, հնչերանգային աշխույժ հերթագայումները, իմաստակիր ընդմիջումներն ու սահում անցումները ձևավորում են արտակարգ հարուստ և արագընթաց զարգացում:

Մտքի ծայրահեղ սկեռումը ասպարեզ է հանում դժվար լուծելի հարցեր. անձրևային թախիծը շարունակում է տիրաբար իշխել, տանտիրություն անել իր տանն ու հոգում: Հուսահատությունից ծնվում է ելքը, որ մույճան ժամանակավոր և անհաստատ է, որքան հենց ինքը՝ հուսահատությունը:

Ու ես, զայրագի՛ն,

Ու ես, ճարահա՛տ,

Քենըս թափում եմ իմ խոհանոցի ծորակի վրա,

Որ բաց է եղել.

ես խեղդելո՞ւ պես ծորակն եմ փակում:

Եթե անգոր եմ երկընքի Քանդեպ.

Այս յիրք ծորակը թող լռի գոցե.


Որ ... չատեմ ջուրը

Որ չկարոտեմ այն ավազակին.

Որ շոգ է կռչվում:

Այսպես, անձրևի միայառ ընթացքը, միաձուլվելով հոգին պարտուած թախծի և մտա-
յին-եմթագիտակցական հաժույմների դարձդարձիկ ելևէջումներին, ձևավորում է մասերի
միասնությամբ և ներքին կապերի ամրությամբ, ստեղծագործական լուծումների բազմա-
զանգությամբ և մեղեդային գծի դրամատիզմով ամբողջացող շարային բազմաձայն /պոլի-
ֆոնիկ/ կառույց, որը հնարավորություն է ընձեռում ներդրանային մանրամասնությամբ հե-
տևելու մարդու կողմից մեկնելի և անմեկնելի հոգեզգայական տարափոխ վիճակների ներ-
քին տեղաշարժերին և փոխակերպությանը:

Հոգնադատության կողմից ժամանակին ըստ արժանվույն չգնահատված արտակարգ
հետաքրքիր և ինքնատիպ այս մտահղացումը ստեղծագործական նյութի և դրա կառուց-
վածքային կաղապարաձևի ներդաշնակ միահյուսումի բացառիկ օրինակ է, որին Սևակը
կարողացել է հասնել համադրական բարդ մտածողությամբ, զուգորդական դիտումի փոր-
ձով և պահի ապրման հոգեկենսաբանական ճշգրտությամբ:



ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

Պատրմական գիտությունների թեկնածու

300-ԱՄՅԱ ԳԵՌԼԱ ՆԱՅԱՔԱՂԱՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻ ՈՒՇԱԳՐԱՎ ԳԻՐՔ-ԱԲՈՍ

Բուխարեստի «Արարատ» հրատարակչությունը 2002 թվականին տպագրել է մի ժողովածու՝ նվիրված Տրանսիլվանիայի Արմենոպոլիս՝ Գեռլա քաղաքի պատմությանը և մշակութային ժառանգությանը: 11-րդ դարում, հայկական պետականության անկումից հետո, Անիից բնակչությունը արտագաղթել է տարբեր ուղղություններով: Հայերի մասսայական արտադուրը Անիից կատարվել է մաև 1239 թ.: Արտագաղթածները հաստատվել են Ղրիմում և 4 դար մնալուց հետո ստիպված են եղել գաղթել Լեհաստան, այդտեղից՝ Մոլդավիա: Մոլդավիայից տեղահանված 3 հազար հայ ընտանիք 1672 թ. բնակություն են հաստատել Տրանսիլվանիայում:

Միխայիլ Ա Ապաֆիի (1661-1690 թթ.) թագավորության տարիներին շուրջ 15 հազար հայեր բնակություն են հաստատել Բիստրիցա-Նսուտ, Կեռկեն, Ֆրոմոտասա-2 ու ջ քաղաքներում: Երկրի տնտեսական զարգացման շահերից ելնելով՝ թագավորը հովանավորում էր հայերի տարբեր առևտրական ձեռնարկումները՝ նրանց տալով մեծ արտոնություններ: Ծառ չանցած հայերը Տրանսիլվանիայում տնտեսական կարևոր լծակներ են ձեռք բերում: Բնականաբար, տնտեսապես հզոր հայկական համայնքը ձգտում էր իր ներքին համայնքային իրավունքների մեծացման և միաժամանակ պայքարում էր ազգային ինքնության պահպանման համար: Այդ իրավունքների ձեռքբերմանը համարժեք՝ երկրի իշխանությունները ստիպեցին հայերին դավանափոխ լինել: Պարտադրված դավանափոխությունը համառ դիմադրության է հանդիպել: Պահանջվել է շուրջ 6 տարի (1686-1690 թթ.), որպեսզի հայազգի կաթոլիկ միսիոներ Օգսենտիուս Վերգարյանը՝ Վերգերեսկուն, Վատիկան մերկայացնի զեկուցազիր 30 հազար հայերի դավանափոխման մասին: 1690 թ. դավանափոխ եղած հայերը պահպանեցին եկեղեցական արարողությունները հայերենով կատարելու և եպիսկոպոս ընտրելու ու ամուսնացյալ քահանա ունենալու իրավունքները և այլն:

Կաթուղիկ հայերը փոխարենը ստանում էին զերազանցապես հայերով բնակեցված քաղաքներ ստեղծելու իրավունք: Դրանցից քաղաքի՝ Արմենոպոլիս-Գեուլայի շինարարությունն ավարտվել է 1700 թ., երկրորդին՝ Տումպրվենինը՝ 1733 թ.:

Հաջաբն Գեուլան ստեղծվել է հատուկ հատակագծով (ճարտ. Ալեքսանյան) նախօրոք 12 հազար ֆլորինով գնված 1 ջառ կմ տարածքում (Մարթինուզի բերդից հարավ): Կառվածքն ընդգրկում է 19-րդ դարի վերջին քաղաքում գործում էր 10 եկեղեցի, 9 դպրոց, մեկ վարժարան և մի լիցեյ: «Նոր հայրենիքում» տրամսիլվանահայերը ստեղծել են մի ուրույն քաղաքային մշակույթ, ավանդույթների մի հետաքրքիր համադրում՝ ազգային և տեղական:

Ստեղծման օրից քաղաքն ուներ իր ինքնավարությունը՝ «Ժողովրդական հավաք» օրենսդիր մարմնով, վարչական ղեկավար քաղաքապետով և իր երկզյխանի արծիվ գինեմշանով: 19-րդ դարի վերջին քաղաքում գործում էր 10 եկեղեցի, 9 դպրոց, մեկ վարժարան և մի լիցեյ: «Նոր հայրենիքում» տրամսիլվանահայերը ստեղծել են մի ուրույն քաղաքային մշակույթ, ավանդույթների մի հետաքրքիր համադրում՝ ազգային և տեղական:

Սակայն 168 տարի պահանջվեց (1841 թ.), մինչև տրամսիլվանահայերը ճանաչվեցին երկրի լիիրավ քաղաքացիներ: Երկու դարից ավելի Գեուլան ղեկավարում էր տրամսիլվանահայերի ազգային ինքնահաստատման դժվարին գործը: Այժմ այդ ավանդույթները շարունակում է Ռումինիայի Հայոց Միությունը: Այդ Միության ջանքերով և Ռումինիայի կառավարության օժանդակությամբ 2001 թ. տեղվել է Գեուլայի հիմնադրման 300-ամյակը, բացվել «Հայ մշակույթը Գեուլայի մեջ» ցուցահանդեսը և, վերջապես, ցուցահանդեսին մասնակցող գիտնականների ուժերով հրատարակվել «Գեուլայի հայկական մշակույթը և արվեստը» գիրք-ալբոմը, որում ամփոփված են Արմենոպոլսի հիմնադրման, քաղաքայինությունը, կերպարվեստին, կիրառական արվեստին, արխիվային նյութերին և այլ հարցերին նվիրված ինը հոդվածներ, որոնք ուղեկցվում են համապատասխան լուսանկարներով: Բոլոր հոդվածները գրված են անգլերենով, կից ունեն հայերեն թարգմանությունը և կարդացվում են մեծ հետաքրքրությամբ:

Տրամսիլվանահայերի՝ մասնավորապես Գեուլայի պատմությանը նվիրված առաջին լուրջ ուսումնասիրությունը (հայերենով) Վիեննայի Միսիթարյան միաբանության անդամ, ծնունդով գեուլացի, Գ. Գուրիկյանի «Դրամսիլվանի Հայոց մետրոպոլիս կամ Ոկարագիր Կեուլա հայաքաղաքի» աշխատանքն է: Մինչ այդ Լուկաշի Գրիշթովը 1859 թ. հեղինակել էր Տրամսիլվանիայի հայոց պատմությունը: Առանձին հոդվածներով Ռումինահայերի պատմության տարբեր շրջաններին է անդրադարձել նաև Ս. Քուլանջյանը¹:

Այս գիրք-ալբոմը փորձ է՝ հանրագումարի բերելու տրամսիլվանահայերի անցած դժվարին, բայց մեծագույն ձեռքբերումներով հարուստ ուղին: Գեուլայի հիմնադրման պատմությունը, նրա հետ առնչվող վավերագրերի, քաղաքի հատակագծի, Կաշեգործների եղ-

¹ Գուրիկյան Գ. Դրամսիլվանի հայոց մետրոպոլիս կամ Ոկարագիր Կեուլա հայաքաղաքի, Վիեննա, 1886 թ., Ս. Քուլանջյան. Տրամսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնությունության պահպանման համար (ԺԷԻ հոյ.), «Էքսմիանիս», 1964, թիվ 12, 1965, թիվ 1-7, 1966, թիվ 2: Գուրիկյան նաև տարալեզու, մասնավորապես ռումիներեն և իտալերեն ուսումնասիրություններ:

բայությունը փաստաթղթի. դավաճափոխման, իսկ Եպիսկոպոսարանի վերաֆաստատման (1930 թ.) և մեծորդա Ռայապաճապանության հարցերին է նվիրված Նիկոլան Կազդովիչի «Հայաքաղաք Կեռլայի պատմության էջեր»-ը՝ հոդվածը:

Քլուժի, Գեռլայի, Բիստրիցայի քաղաքապետարանների արխիվներում այսօր պահվում են Ռայերենով, իտալերենով, Ռուսգարերենով և գերմաներենով գրված հազարավոր վավերագրեր: Դրանք տարաբնույթ են և հարուստ տեղեկություններ են պարունակում քաղաքային կյանքի տարբեր ոլորտների մասին և դժբախտաբար քիչ են ուսումնասիրված: Ավելի քիչ կամ գրեթե չեն ուսումնասիրված Ռայերեն վավերագրերը: Ժողովրդագրական տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում Գեռլայի Ռայ կաթոլիկ համայնքի կոմունի, պսակի և մահվան 1857-1913 թթ. ծխամատյանների հարուստ նյութերը: Քաղաքի Ռիմնադրման, կաշեգործների ընկերության, անդամների, կանոնադրության, այլ երկրների հետ նրանց թղթակցությունների, առանձին եկեղեցիների շինարարության, հայտնի ընտանիքների երկվեզյան (լատին-հայերեն) փաստաթղթային ժառանգությանը է անդրադարձել Լ. Շերդանը «Հայերը Քլուժի գանձարանի մեջ» հրապարակմամբ: Այս քաղաքապետարաններում պահվող Ռայերեն արխիվային փաստաթղթերը կարոտ են լուրջ և համակողմանի ուսումնասիրության:

Ռումինիայում պահվող հայերեն ձեռագրերի, մասնավորապես Գեռլայի հայերեն ձեռագրական ժառանգությանը մենք ծանոթ ենք «Բանբեր Մատենադարանի» հանդեսում Ս. Քոլանջյանի հրատարակած ձեռագրացուցակից²: Հավաքածուում հետաքրքրություն են ներկայացնում 14-րդ դարում ընդօրինակված ձեռագրերը, որոնցից մեկը գրված է Ղրիմում (թիվ 13), մեկը՝ Կիպրոսում, մյուս երկուսը՝ Տարոնում և Կիլիկիայում: Ահա Ղրիմից բերված այս Ավետարանների և այլ ձեռագրերի փոխառնությանը է նվիրված պրոֆեսոր Հելմուտ Բուշհաուզենի գիտական խորությամբ աչքի ընկնող հոդվածը: Հայ միջնադարյան մանրանկարչական արվեստի գիտակ գիտնականը մեկ առ մեկ անդրադարձել է ամեն ձեռագրի մանրանկարչի նկարազարդման արվեստին, այդ Ավետարանների վրա նկարչական այս կամ այն դպրոցի, մասնավորապես Ղրիմում ընդօրինակված ձեռագրի վրա մանրանկարչության Բարձր Հայքի, որոշ ձեռագրերի դեպքում, նաև բյուզանդական դպրոցի ազդեցության հարցերին: Հելմուտ և Հայդե Բուշհաուզենները 20 տարուց ավելի զբաղվում են Ղրիմի հայ միջնադարյան մանրանկարչության և բյուզանդական արվեստի փոխազդեցության հարցերով: Այսօր հրատարակության է պատրաստ նրանց և արվեստագիտության դոկտոր Է. Կորխմազյանի՝ Ղրիմի հայ մանրանկարչությանը նվիրված մի հետաքրքիր ուսումնասիրություն:

Բուշհաուզեն ամուսինների հայագիտական գործունեությունը միայն այս համագործակցությամբ չէ, որ իրականացվել է: Հայաստանում քրիստոնեության հաստատման 1700-ամյակի առիթով հայտնի ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի հեղինակակցությամբ նրանց հրատարակեցին «Հշմիածնի Ավետարան»-ի գումավոր մամանահանությունը, որը ներկայացված է ձեռագրագիտական և արվեստաբանական հետաքրքիր ուսումնասիրությամբ

² Ս. Քոլանջյան, Համառոտ ցուցակ հայերեն ձեռագրաց Գեռլա հայաքաղաքի, «Բանբեր Մատենադարանի», 1969, թիվ 9:

(գեղմաններն, Գրաց. 2001 թ.)³։ Նրանք իրենց մասնակցությունն են բերել մաև Ս. Էշմի-
ածնի դանձերի՝ Վիեննայում 2002 թ. «Հայաստանի ոսկին» վերնագրված ցուցահանդեսի
կազմակերպմամբ՝ գրելով մաև ցուցահանդեսի կատալոգի «Հայերը Վիեննայում ու Հոֆ-
բուրգների կայսրությունում» և «Հայ արվեստը» բաժինները։

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում մաև «Արմենոլոյիս կամ Գեոլայի Բա-
րոկկո» (Նիկոլայն Սապու) հոդվածը, որը նվիրված է Գեոլա քաղաքի հատակագծին, շի-
նարարական տարբեր շրջանների, մասնավորապես ճարտարապետական ուրույն բարոկ-
կոյով ստեղծված քաղաքային շինությունների ուսումնասիրությանը։ Առանձնապես հե-
տաքրքիր են միաժամանակ քարաշեն երկու սենյակ, խոհանոցով և եռանկյուն ճակտոմ ունե-
ցող տանիքով տիպային ազգային ավանդույթներով կառուցված քաղաքի վաղ շրջանի
շինությունները։ Քաղաքաշինության զարգացման հետ, շինարարական այս կամ այն ար-
հեստներում հստակում են և մասնագիտանում հայկական շատ ըմտանքներ։ Այստեղ
մեկ առ մեկ, փաստական նյութի հիման վրա, թվարկված են արդեն անվանափոխված
շատ հայերի ամուսններ, որոնք իրենց ձեռքերով են ստեղծել այժմ մեծ հիացմունք առա-
ջացնող բնակելի շինությունները և հիմնադրել, բարոկկոյի մի մոր ուղղությամբ՝ տեղականի
և հայկականի մի հետաքրքիր սինթեզ, որ հայտնի է «Գեոլայի ոճ» անունով։

Ինչպես ցանկացած կաթոլիկ հոգևոր շինություն, Գեոլայի թվով 10 եկեղեցիներն ունե-
ցել են և այժմ էլ ունեն շքեղ հարդարանք, որմնանկարներ և տեղական արվեստով ստեղծ-
ված ոչ այնքան բարձր տեխնիկայով արված վրձնանկարներ։ Դրանք ստեղծվել են հիմ-
նականում 18-րդ դարի վերջին և 19-րդ դարում։ Այժմ, քաջառությանը Սուրբ Երրորդու-
թյան տաճարում պահվող «իջեցումը խաչից» կտավի, թվով 13 նկարներ պահվում են
Գեոլայի Պատմության թանգարանում։ 18-րդ դարի գործերի հեղինակները տեղի նկարիչ-
ներ են, որոնց մի մասի ինքնությունը հնարավոր կլինի պարզել միայն քաղաքապետարա-
նի հայերեն լեզվով գրված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո։ Կտավները հիմ-
նականում ազնվական հայերի դիմանկարներ են, հանդիպում են մաև ազգային եկեղեցա-
կան թեմաներով կոմպոզիցիոն նկարներ՝ Տրդատ թագավորն ու Գիրգոր Լուսավորչը և
քրիստոնեության հաստատումը, Գիրգոր Լուսավորչի Ելնումն Վիրապից, Մեսրոպ Մաշ-
տոցը և գրերի գյուտը, Հոսիսիմյանց կույսերի պատմությունը։

Այս բոլոր գործերը արվեստագիտական հետաքրքիր եզրահանգումներով է ներ-
կայացրել Լ. Դրկոյը «Գեոլայի հայ համայնքի հավաքածուի կտավակալի նկարները» հոդ-
վածում։ Վերջում տրվել է այդ նկարների համառոտ գիտական ցուցակը։ Դրանք առաջին
անգամ իրենց լուսանկարների հետ ներկայացվում են ընթերցողի ուշադրությանը։

Գեոլայի պատմության թանգարանում է պահվում մաև հայկական գործվածքների և
ձեռագործ աշխատանքների հավաքածուն, որոնց մեջ առանձնանում են եկեղեցական գոր-
ծածության իրերը։ Այդ իրերի, գործվածքների, մրանց վրայի ճախշերի, զարդամոտիվների
և ասեղնագործության տեխնիկայի ուսումնասիրությանն են վերաբերում գիրք-ալբոմում
գումարվող լուսանկարներով ուղեկցվող Աննա Մարիա Սեկոեի «Մանածագործական ար-
վեստի նմուշները Գեոլայի Պատմության թանգարանի մեջ» հաղորդումը։

³ Codex Etschmiadzin, kommentar, Graz, Austria, 2001.

Լուսանկարներում պարզորոշ նկատելի են, որ փորձարարների, շապիկների, խույրերի, վակասների և եկեղեցական հանդերձների մաս կազմող այլ զգեստամասերում առկա են լճոհանքական եկեղեցու վաղ շրջանի հանդերձանքի ավանդույթները: Թեպետ հայտնի է, որ քաղաքի հայ բնակչության հանդերձանքը շատ ավելի եվրոպական է եղել, քան ազգային, ցանկալի կլիմեր մաս որպես հայ բնակչության միտ ու կացի ամրաժանելի մաս հատուկ ուսումնասիրել մաս թանգարանի ֆոնդերում պահվող հանդերձանքի այդ մոտիվները և:

19-րդ դարի հումգարական նկարչական արվեստի հայտնի գործիչներից մեկի՝ Օնեմոն Հոլոշիի հայրենի քաղաքում իր կյանքի վերջին հինգ տարիների (1896-1901 թթ.) նկարչական գործունեության և վրձնած կտավների ուսումնասիրությամբ է վերաբերվում Մարտին Ենեոյի «Մարմուրեշյան բարձունքները բազմության մեջ» հրապարակումը: Մյուսինքնում իր նկարչական արվեստը կատարելագործած այս ինքնատիպ արվեստագետի երկներում հայկական արյուն է հոսել: Ծնողները Գեոլայից հումգարական հեղափոխության ժամանակ տեղափոխվել են Հումգարի, ուր և 1857 թ. Սիկեթու Մարմաքիշ քաղաքում ծնվել է Օնեմոնը: Մյուսինքնում երկար տարիներ աշխատած վարպետը կյանքի վերջում հաստատվում է ծննդավայրում և ստեղծում գեղարվեստի բարձրարժեք գործեր:

Ինչպես ցանկացած ուսումնասիրություն կամ գիրք, այնպես էլ «Գեոլայի հայկական մշակույթը և արվեստը» հոդվածների ժողովածուն գերծ չէ թերություններից: Ամենից առաջ դա հոդվածների հայերեն թարգմանությամբ է վերաբերում, որն իր հերթին պատճառ է դառնում իմաստային սխալների: Ահա դրանցից մի քանիսը. «Եւ հայերու արտագաղթը դեպի Միջին Ասիայի Կիլիկիա երկրամասը» (էջ 29): Միջին Ասիա, Մերձավոր Արևելքի փոխարեն, և կամ «1375 թ. արաբական (իմա՝ մամլուկների) արշավանքների հետևանքով, այստեղ ևս հայերը կորցրեցին պետականությունը, որը տևեց շուրջ 544 տարի» (էջ 30): Այնուհետև «Հայ եկեղեցին ստեղծեց իր սեփական դիրքորոշումը այդ հարցի կապակցությամբ, ըստ որո՞ւ Հիսուս եղած է «միակ երկրությունը» և այս բնույթի մամուլի-մակ վրիպակներ: Բացի այդ, թեև նյութերին ուղեկցող լուսանկարները խիստ շահեկան են և օգտակար նյութի ներկայացման առումով, սակայն տպագրական բավարարող որակով չեն հրատարակվել:

Այս ամենը սակայն չի մեծացնում ժողովածուի արժեքը և այն պետք է համարել հաջող փորձ տրամախիվահայերի նրեքհարյուրամյա պատմության մի հատվածի՝ 17-19-րդ դարերի պատմության ամբողջական հանրագումարը: Այն խտացված ներկայացնում է մի քաղաքի՝ Գեոլա հայաքաղաքի երբեմնի ինքնավարությունը, աշխույժ, տնտեսական, հոգևոր, մշակութային վերելքը, այն իրողությունը է, և ոչ ուրիշ հայկական ինքնություն ունեցող կյանքի:

ՄԱՐՍԻՄ ԵՎԱԴՅԱՆ

ՍՈՒՐԲ ՎԼԱՍ ՍԵՐԱՍՏԱՑԻՆ՝ ԲՈՒՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԵԾԱՐՎԱԾ ՀԱՅ

(A. Thoudadjin. Saint Blaise Evêque de Se^baste, Armeⁿie Mineure, saint du IV^e si^cle universel et populaire, Paris, L. Harmattan, 2004, 468 p.)

Փարիզի «Հարտման» հրատարակչությունը լույս է ընծայել Սուրբ Վլասի մասին նվիրված մի ծավալուն աշխատանք, որի հեղինակ Արման Թումաջյանը լոթ տարի շարունակ զբաղվել է Փոքր Հայքի Սուրբ Վլաս Սերաստացի եպիսկոպոսի՝ չորրորդ դարի ընդհանրական և համաժողովրդական սրբի կյանքի և գործունեության ուսումնասիրությամբ:

Կարելի է հաստատորեն ասել, որ աշխատությունը սկսման պատմաբանի և կամ փորձառու վարքագրի շանքերի արդյունք չէ: Ա. Թումաջյանը խոստովանում է, որ եղել է «թղթագործական միության պատասխանատու ձեռներեց»: Նա աշխատել է սկսնակիմ հատուկ եռամիտով և արդյունքն ակնհայտ է: Այս աշխատությունը, ամկասկած, առաջին կարևոր մեծագործությունն է ինչպես Հայաստանի, այնպես էլ միջնադարյան Արևմտյան կրոնական գործունեության պատմության մեջ մեծ դեր կատարած սրբի վերաբերյալ:

Ս. Վլասի հայկական ծագումը. Որոշ քննադատներ, ինչպիսիք են Փարիզի Բենեդիկտյանները և Բյուսելի Բուլանդիստները, վիճարկում են նրա հայկական ծագումը: Առաջին զլխում, առանց որևէ վճռական փաստարկի, քննադատվում է այդ մոտեցումը: Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ Փոքր Հայքն այն ժամանակ դեռևս հայազրկված չէր, ինչպես հիմնգերոդ դարից հետո: Մյուս կողմից, լավ կլինի հիշել, որ Սերաստիայի եպիսկոպոսական Աթոռի առաջին «գահակալների» մեծ մասը, որոնց անունները պահպանվել են, հայեր են: Նրանցից առաջին հերթին պետք է նշել Եվստաթեսի՝ Բարսեղ Կեսարացու հավանական ուսուցչին: Հիշատակված վիճարկումը ջատ ավելի թույլ հիմքեր ունի, եթե հաշվի առնենք, որ Վլասը հայ է համարվել հույների, լատինների, բյուզանդացիների և հետո միայն՝ հայերի կողմից: Սուրբ Վլասի հայկականացման վարկածը անհավանական է մահ այն պատճառով, որ նրա պաշտամունքը Հայաստանում տարածվեց շատ ավելի ուշ: Եվ իրոք, եթե հավատանք XIV-XVII դդ. հայկական ճարտարապետության լավագույն մասնագետին՝ Մուրադ Հասրաթյանին, կտեսնենք, որ մինչև արաբների ներխուժումը Հայաստանում ոչ մի եկեղեցի նրան չի նվիրվել¹:

Լեզենդ դարձած կյանքը. Առաջին զլխում (էջ 15-39) փորձ է արվել վերականգնել այս սրբի կյանքը՝ օգտագործելով վարքագրական աղբյուրները, ինչպես նաև մի շարք բնագրեր, որոնք հավաստում են նրա պատմական անձնավորություն լինելը: Մեր սրբի մասին առաջին հիշատակությունը կարելի է գտնել Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» մեջ (ավարտված շուրջ 325 թ.): Նրա պաշտամունքն արդեն հիշատակված է Հի-

¹ Murad Hrahtian, *Early Christian Architecture of Armenia*, Moscow, Promtey, 2000, 400 էջ: Այս գրքում նկարագրված և նկարագրված 100 եկեղեցիներից ոչ մեկը նվիրված չէ Սուրբ Վլասին:

երոմիմյան Մարտիրիոյոցում (լատիններենով գրված է դարի վկայաբանությունների ժողովածու): Իր կյանքի ճիմնական դրվագներն արդեն հայտնի են. եպիսկոպոս դարձած մախկից բժիշկ Վլասը միմյևն նախատակվելը, շուրջ 316 թ., խնամում էր մարդկանց և կենդանիների:

Հայաստանի քրիստոնեացման վերաբերյալ հեղինակը խոսում է հիմնականում հայտնի փաստերը մեքենայելով: Բայց 313, 314 կամ 315 թվականներով թվագրված Տրդատի մասին գրույցն ավելի մանրամասնորեն է քննարկված էջ 29-ում, չնայած որ ավելի ճշգրիտ ուսումնասիրությունները, որոնցից մեկը տողերիս հեղինակի մի հետազոտությունն է, թույլ են տալիս հաստատորեն դրանք հերքել²:

Այս գլխի ավարտն ավելի հետաքրքիր է: Հեղինակն այնտեղ հետազոտում է Սուրբ Վլասի հայտնաբերված գերեզմանի ավերակները, որոնք գտնվել են Սեբաստիայի ծխական եկեղեցու մոտ:

Ժողովրդական պաշտամունքը. Երկրորդ գլուխն, ամենակած, աշխատանքի ամենակարևոր հատվածներից մեկն է, քանի որ այստեղ ներկայացված են մոր մյուսեր: Իրականում, Սուրբ Վլասի պաշտամունք ասելիս ընթերցողն ունենում է ազգային կրոնական զգացողությունների հորդում, որի պատճառներն են քերմեռանդությունը, բացարձակացումը և մկիրումը:

Հետո մնալով աստվածաբանական նրբություններից՝ ժողովուրդն իր համար ստեղծում է ավելի սրտամոտ և իրեն հովանավորող կրոն: Իսկ Սուրբ Վլասն այդ կրոնի ճիմնական հովանավորն էր: Սուրբ Պետրոսը շատ ավելի կարևոր էր և պաշտպանված պապական իշխանության կողմից, իսկ տեղական սրբերն իրական և մարդասեր էին: Մինչդեռ Սուրբ Վլասը շրջապատված էր առեղծվածային լուսապսակով: Կիսաարիական այդ հայը առիթ էր տալիս տարբեր մեկնությունների, և իր բարեխոսությունների ոլորտը լայնորեն տարածվում էր: Թուրաջյանը մի ամբողջ էջ (59) է տրամադրել սրբի հովանավորությունների քննազավառի բացահայտմանը, որոնց պետք է ավելացնել նաև հավելումները. գուշակությունները և առակները (էջ 385-388), կցուրդները և աղոթքները (էջ 389-393), երգերը (էջ 394-403) և, իհարկե, խոհանոցային բաղադրատոմսերը (էջ 393-394): Այսպիսով, գտնել միջնադարյան ու ժամանակակից ազգաբնակչության աստվածապաշտության հիմքերը Դանիայից մինչև Իսպանիայի հարավ, մի հրաշք է: Ինչ վերաբերում է նրան, թե որտեղից են գալիս այս հազարավոր հովանավորությունները՝ առեղծված է, որը Վլասի անվան ծագման հետ միասին դեռ երկար ժամանակ վեճերի առիթ կդառնա:

Այս գլուխն ընդգրկում է ես մի կարևոր հարց. այն է՝ Սուրբ Վլասի վանական կարգը,

² Christianisation de l'Arménie, Retour aux sources, Maxime Yevadian, Mémoire de Maîtrise d'Histoire MM. Ph. Jockey et J. Guyon sous la direction Université de Provence Aix-Marseille I, 2003, 301 1թ և 1թ 250-ի հավելվածը:

Շուրախապուկ կերպով ուսումնասիրվել են նաև այդ շրջանի հունական սկզբնաղբյուրները և կապարվել Լ. այդ հարցի պատմագրական վերլուծություն. Yevadian M., "Christianisation of Armenia, Coming to the sources", 2003 թ. սեպտեմբերի 15-20-ին Երևանում անցած հայագիտական հնարավորությունների առաջին միջազգային համաժողովի նյութերում, նույնի "Christianisation of Armenia, Coming to the sources", Աշտարակ, հր. 4, նույնի, "La conversion de Tiridate à l'épreuve des historiens grecs" և "Quatre siècles de recherches sur la conversion de Tiridate (tradition et idéologie)", որը լույս կտեսնի պրոֆեսոր Միլեն վան Էսթրոպի հիշատակին նվիրված մոլորվածում:

որը հիմնվել է Լևոն Ա-ի՝ Կիլիկյան Հայաստանի առաջին թագավորի կողմից (էջ 66-69): Այստեղ էլ հեղինակը հասարակության դատին է ներկայացնում ոչ վավերական բնագրեր, որոնցով փաստարկվում է այդ վիճարկելի վաճառական կարգի գոյությունը:

Նոր պաշտամունքի առեղծվածային տարածումը. Այս թեմային է նվիրված երրորդ գլուխը, որը այստեղ մանրամասն քննության է ենթարկված:

Մի կողմից թվում է, որ Վլասը դեռ Ռուս հարգված էր հենդիկտյանների մոտ, ինչը հեշտացրել է նրա պաշտամունքի տարածումը Արևմուտքում: Մյուս կողմից, հեղինակն առաջ է քաշում այն վարկածը, որ նրա պաշտամունքի տարածումը կատարվում է շնորհիվ արևելիցների և հատկապես, արևմուտք եկած հայերի: Այս վարկածի վերաբերյալ հայտնի չէ որևէ սկզբնաղբյուր: Բայց ստիպված ենք ընդունել, որ Սուրբ Վլասին նվիրված վայրերի հիշատակություններ հանդիպում է այն մարզերում, որտեղ հայկական բնակչության առկայությունը հաստատված է:

Եվ, վերջապես, հեղինակը փուլ առ փուլ հետևում է Սուրբ Վլասի պաշտամունքի տարածմանը Բյուզանդիայից արևմուտք՝ Իսպանիայի և Գերմանիայի միջոցով՝ շեշտը դնելով Թեոփանոյի դերի վրա: Այդ բյուզանդահայկական արքայադուստրը, ըստ ամենայնի, աջակցել է թագմաթիվ արևելյան սրբերի պաշտամունքի տարածմանը: Անկասկած, հենց դրա համար է, որ 14 հիշատակված սրբերի մեջ կա 2 հայ՝ Վլասը և Ակակը (Արշակ):

Պաշտամունքի և մեծարման վայրերի ուսումնասիրությունը. IV-VI գլուխները (էջ 105-383) նվիրված են համայնք առ համայնք Ֆրանսիայի և աշխարհի մյուս երկրների մարզ առ մարզ ուսումնասիրությանը: Այս երկու գլուխներն աշխատության հիմքն են կազմում և զարմացնում են ներկայացվող տեղեկությունների ծավալով:

Ֆրանսիական մարզերում Վլաս անվան տարբերակները թվարկելուց հետո ընթերցողին առաջարկվում է իսկական հայագիտական շրջագայություն Ֆրանսիայով: Օրինակ, Շարտրի տաճարում կան թագմաթիվ գունազարդ ապակե պատուհաններ, իսկ Քարավային դռնակի վրա կարելի է տեսնել Սեբաստացի եպիսկոպոսի պատկերը: Սուրբ Վլասի հիվանդանոց կոչվող համայնքին է պատկանում Կոմպոստելայի ճամապարհին գտնվող մի եկեղեցի, որտեղ հայկական դրոշմը թավական լավ է արտահայտված³:

Հագարավոր վայրերի թվում են կնճեի հատկապես Բերգե-լա Վիլլի (Սառն և Լուար) Բենեդիկտյանների մատուռը, որտեղ, իր կարգի հզորության զազաթնակետին հասած, Կլոմիի վանահայրը ԺԲ դարի արևելյան տիպի զարդանախշերի վրա Քրիստոսի անվան կողքին հիշատակում է նաև Սուրբ Վլասին (էջ 132-133): Մեզ ալելի մոտ Միլի-լա Ֆորե-տը (Էսսոն) Ֆրանսիայում բուժիչ հատկություն ունեցող բույսերի օրացն է, և այստեղ բուսաբուժությունը, բնականաբար, նվիրված է այդ սրբին՝ հայ թժկին: Այդ մատուռը բարեկարգվել և զարդարվել է ամենամեծազանցական հավատացյալի՝ Ֆրանսիացի գրող Ժան Կոկտուի կողմից, որն այդ վայրն ընտրել էր հավերժ հանգստի համար:

Հինգերորդ գլուխն ապացուցում է Սեբաստացի եպիսկոպոսի ընդհանրական սուրբ լինելը: Այս հայ թժկի պաշտամունքը տարածված է կաթոլիկ Չիլիից և Բրազիլիայից մինչև ուղղափառ Ռուսաստան, Իսլանդիայից մինչև Հնդկաստան, իսկ հիշատակը ամենուր

³ Տեղին կլինեի օգտվել հնդեյայ բրոշյուրից. L'Empreinte armo'icenne à l'e'glise de l'Hôpital Saint Blaise (12-c siècle), Robert De'ze'jus, G. Barrouillet Imprimeur, 1987, 28 19:

հարգված է:


Այս օգտակար աշխատության շնորհիվ և մեր հազեցվածությունը⁴ ցույց է տալիս, թե ինչքան մեծ տեղ է զրավել և զրավում այդ սուրբը: Նա կենտրոնական դիրք է զբաղեցնում միջնադարյան Արևմուտքի ժողովրդական հավատալիքների մեջ: Այս աշխատությունը հանգամանալի տեղեկություններ է հաղորդում այդ հայ սրբի պաշտամունքի մասին, որի բուժական գործությունը ապացիցում էր հիվանդ հավատացյալներին: Օրինակ, զարմանալու ոչինչ չկա, որ Հովհաննես-Պողոս Բ Պապի կոկորդի հիվանդության սրման ժամանակ «Gemelli պոլիկլինիկայի մի քանի տասնյակ ծառայողներ (այդ հիվանդանոցում մերան խնամում էին) մասնակցել են Սուրբ Վլասին մվիրված Պատարագին⁵», որպեսզի հայ սրբի ողորմածությունն իջնի Պապի վրա, և սուրբը բուժի Հռոմեական եկեղեցու քահանայապետին:

Ես ձեռնպահ կմնամ Սուրբ Վլասին գովաբանելուց: Դա մի սուրբ էր, որի մշահաբանն էր "Plus prodessse quam process" («Ավելի շուտ լինել օգտակար, քան առաջնորդ»):

Թարգմանեց Լուսինե Բոգոյանը

⁴ Յավայի 1, որ ռապակույուն են ապելի շատ հիշատակություններ այս ինքաբերիքի փաստերի ճշտելու համար:

⁵ *Nouvel Observateur*, 2005 թ. փետրվարի 5-ի համադրում:



ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

Ձևավորված գեղեցիկ ավանդույթով, յուրաքանչյուր ամսվերջին Վեհափառ Հայրապետի բարձր հանդիսավերությամբ Մայր Աթոռի միաբանները, ճեմարանականները, դասախոսները և Մայր Աթոռի պաշտոններությունն անցնող տարուն հրաժեշտ են տալիս յուրահատուկ հանդիսությամբ: Իբրեւ քաղցր պարտականություն Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսչությանը և ճեմարանականներին է վերապահված ամանորյա հանդիսության կազմակերպումը: Ինչպես միշտ, այս տարի ևս ճեմարանականները պատվով կատարեցին իրենց գործը, որի հավաստումն էր ներկաների բարձր փրամադղությունը:

Հանդիսությունն սկսվեց «Տերունական աղոթք»-ով, ՀՀ Օրենսդրի և Հոգևոր ճեմարանի քայլերգի կատարումներով: Որից հետո բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը՝ ասելով.

«Մի քանի ժամից պատրմություն կդառնա 2004 թվականը ես:

Եթե ընդունենք, որ պատրմությունը փաստերի, կատարած-չկատարած գործերի հիշողության արձանագրումն է, ապա կարող ենք ասել, որ 2004 թվականը մեր ժողովրդի և մեր Ս. Եկեղեցու համար եղավ խաղաղ իրազդրծումների հիշարժուն տարի:

Ամանորի և գալիք Ս. Ծննդյան տոներն իրենց խորհրդով բոլորիս մեջ էլ խոհեք ու մտածումներ են առաջացնում:

Անցնող տարվան հետադարձ հայացք ներելով՝ կարող ենք արձանագրել, որ 2004 թվականը Նորին Սուրբ Օծության ղեկավարությամբ Մայր Աթոռի, մեր Սուրբ Եկեղեցու և Գևորգյան Հոգևոր ճեմարանի համար դարձավ բեղմնավոր: Տարին պսակվեց նորանոր ձեռքբերումներով՝ եկեղեցաշինության, քրիստոնեական մեր առաքելության իրազդրծման և մեր Ս. Եկեղեցին նոր ձեռնադրված սպասավորներով համալրելու առումով:

2004-ին մեծ շուքով նշվեց բոլորիս համար նվիրական այս հասարակության՝ Գևորգյան Հոգևոր ճեմարանի 130-ամյակը:

Դեկտեմբեր ամսվա 25-ին ճեմարանը տվեց իր հերթական հունձը՝ 17 շնորհունակ սարկավագների ձեռնադրությամբ: Լիստոյս ենք, որ նրանք կարդարացնեն Նորին Սրբության սպասելիքները:

Անցնող տարում տեսչական կազմի, ուսումնական խորհրդի և մեր դասախոսական խմբի օգնությամբ փորձեցինք ուսումնական գործընթացը կազմակերպել ավելի արդյունավետ, և այդ գործում հաջողություններ արձանագրեցինք՝ այն

հապուկ գիտակցությամբ, որ Ճեմարանի ամեն մի հաջողություն նպաստելու է Մայր Աթոռի շենսցանքը, հեղինակալի և մեր ժողովրդի բարձր գույքին:

Նախիրենության մեջ մեզ բաժին հասած այս ժամանակամիջոցը մեր փնտրելությանն է հանձնված, և մենք ենք այն խմաստավորողը մեր փոքր, բայց խիստ կարևոր իրադրոժումներով:

Սիրելի ներկաներ, հանդիսավոր այս առիթով ողջունելով և նստապես շնորհավորելով Ձեզ ամենքիդ՝ թույլ տվեք փարենմուրի այս երեկոյին բոլորիդ, ինչու չ՝ նաև մեր ողջ ժողովրդի անունից շնորհավորել մեր սիրելի Վեհափառին գալիք Ամանորի կապակցությամբ և հանուն Գերագույն Հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տնայության, դասախոսների, աւուների և ներկաների մտաթել, որպեսզի Բարձրյալի Աջը հովանի և պահապան լինի մեր հայրենի երկրի, Մայր Աթոռի և նրա անխնե Գահակալի վրա:

Թող մեր սիրելի, առաքինազարդ Նախապետի կյանքը լինի անվիշտ և երկար՝ ի փառս և ի պայծառություն մեր Ս. Եկեղեցու և ի բարօրություն իր սիրելի հոտի»:

Այնուհետև միաբանության խոսքը ներկաներին ուղղեց Մայրավանքի երիտասարդ միաբաններից Հոգեշնորհ Տ. Նորայր արքեպ Սիմոնյանը.

«Այսօր մենք ամենքս հավաքվել ենք այս դահլիճում, որպեսզի հրաժեշտ րուենք 2004 թվականին: Այսօր մենք ինքներս հաշվելություն ներկայացնելով Աստվծուն և մեզ՝ պետք է բնենք, փնտրենք ու գտնենք այն բոլոր թերությունները, որոնք մենք թույլ ենք տվել այս անցնող տարում: Փնտրել ու գտնել, որպեսզի նկող տարում այդ բոլոր թերությունները, սխալները աշխատենք ուղղել:

Այսուհետև, թե այս օրը ի կարգաւ են ւածվում մարդկային բոլոր ցանկությունները, ուստի այսօր առավել ևս մեր աղոթքներում հիշենք և աղոթենք առ Բարձրյալն, որպեսզի Տեղը խաղաղության մեջ պահի ազգը հայոց, Եկեղեցին Նախատանայոց, որպեսզի մեր աահմաններում խաղաղությունը տիրի:

Վեհափառ Տեղ, այսօր ինձ բախտ է փհանկվել հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության բոլոր անդամների, բոլոր իմ եղբայրների շնորհավորել Ձերոյ Սրբությանն ամանտրյա այս տոնի կապակցությամբ: Շնորհավորելով Ձերոյ Սրբությանը՝ աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որպեսզի բարձրյալն Աստված երկար տարիների կյանք և առողջություն պարգևի Ձերոյ Սրբությանը, որպեսզի Ձեր գալագանը միշտ ծաղկալու լինի և այդ գալագանով հովվեք և առաքելորեք մեր հայ ժողովրդին դեպ ապագա»:

Միաբանության խոսքին հաջորդեցին հոգեթով շարականներն ու երգերը Ճեմարանի երգչախմբի կարարմամբ, որն արդեն փարիներ շարունակ բարձր վարպետությամբ ղեկավարում է Էջմիածնի փոխբաղաբալետ արն Ռուբեն Շարբալյանը:

Գեղեցիկ կարարումներից հետո դասախոսների անունից խոսք ասաց Ճեմարանի Պարմության ամբիոնի վարիչ արն Գնել Գրիգորյանը.

«Նաշված ժամեր են մնում մինչ այն պահը, երբ մենք հրաժեշտ կրանք պարմություն դարձող 2004 թվականին և կդիմավորենք նոր՝ 2005 թվականը: Արդեն վաղուց Մայր Աթոռում բարի ավանդույթ է դարձնել Նոր տարվա շենին ի մի բերն-

յու հին տարում կատարվածը, գնահատելու արժեքներն այն և խորհրդածելու զայիք տարում նոր ծրագրերի ու մտահղացումների մասին: 2004 թվականը մեզ համար հորեյանների տարի էր: Լրացավ Ամենայն հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի զսահակության հինգ տարին: Թեև հինգ տարին կարճ ժամանակամիջոց է հետա-
հաղ ծրագրեր կազմելու, առավել ևս դրանք կյանքի կոչելու համար. սակայն մենք հիացումներով ակնանարհար հղյակը Վեհափառ հայրապետի զխաղաղությանը մեր Եկեղեցու նոր կյանք ու նոր շունչ ձեռք բերելուն:

Այսօր ամենուրեք՝ հայրենիքում կամ նրա սահմաններից շարք հեռու, ուր սփռված են հայ ժողովրդի բնկորները, վեր են խոյանում քրիստոնեական հա-
վարի կենտրոնները, հայոց եկեղեցիները, որոնց մեծ մասի հիմնարկներն ու օժու-
մը կատարվում է Ձերդ Սրբության կողմից: Անգնահատելի է Վեհափառ հայրա-
պետի ներդրումը դարերով սրբազորված ու վստիքացված հայոց Առաքելական
Եկեղեցու դավանանքն անաղարտ պահպանելու և օրտարամուր ու եկվոր տար-
րերից այն պաշտպանելու գործում: Դրա վառ ապացույցը վերջերս հայաստա-
նում սզար գործելու իրավունք ստացած աղանդներից մեկի վերաբերյալ Նորին
Սրբության հրապարակավ անգիբում ու խիստ ընդվզումն էր. որը համաժողո-
վրդական հավանության արժանացավ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ եղել և մնում է աշխարհա-
սփյուռ հայությանը հայրենիքին կապող, նրան համախմբող միակ կենտրոնը:
Ուր էլ լինի հայ մարդը, հայրենիքում, թե նրա սահմաններից հեռու, միևնույն է
ևս իր հայրցքը միշտ հառած է պահում Սուրբ Էջմիածինը:

2004 թ. մենք օրինական հպարտությամբ նշեցինք հայաստանում միակ հոգևոր
քարձրագույն ուսումնական հաստատության՝ Գևորգյան հոգևոր Ճեմարանի 130-
ամյա հորեյանը: Ճեմարանի 130-ամյա տոնակատարությամբ ոչ միայն վեր հան-
վեց հայ ժողովրդի հոգևոր ու մտավոր կյանքում այդ հաստատության անցյալում
ունեցած ակնառու դերը, այլև նախանշվեցին այն կարևոր ձեռքբերումները, որոնց
այսօր հասել է մեր հոգևոր Մայր Բուռը:

Վեհափառ Տեք. ձեր համակ ուշադրությամբ և անդույ ջանքերով Ճեմարանն
այսօր դարձել է կրթական ու գիտական կարևոր կենտրոն: Այստեղ կրթվում ու
դաստիարակվում է հայ Եկեղեցուն ծառայագրվելու պարտաւարական սպասա-
վորների մի հոծ բանակ: Ճեմարանը հայաստանի կառավարության կողմից ստա-
ցել է բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ, նորացվել ու
արմատաւաքս վերանայվել են դասավանդվող առարկաների ծրագրերը, Ճեմա-
րանում դասավանդելու հրավեր են ստացել մեր հանրապետությունում երկար
տարիների մանկավարժական ու գիտական աշխատանքի փորձ ունեցող հայրենի
և կարող ուժերը: Նրանց անունից հավաստիացնում են Ձեզ, որ պարտաւար ենք
իրականացնելու քազմաբնույթ ու քազմարտվանդակ բոլոր այն ծրագրերը,
որոնք դրվում են Ճեմարանի աղբ:

Դարեր շարունակ հայոց Եկեղեցին եղել է հայ դպրության, հայոց մշակույթի
հովանավորն ու զարգացնողը: Այսօր ոչ միայն շարունակվում են այդ սովան-

դույթները, այլև նոր բովանդակություն է հաղորդվում այդ վեհ գործին: Բացառիկ նշանակություն տալով մեր երկրի կյանքում մարավորականության դերին, Դուք Վեհափառ Տեղ, նրանց համախմբում ևք Մայր Աթոռի շուրջը: Մասնձևակի կարևորություն ունեն գիտության, մասնավորապես հայագիտության զարգացման գործում Ձեր ներդրած քանքերը: Ձեր գործուն մասնակցությամբ 2003 թ. Գիտությունների ազգային ակադեմիայի և ԵՊՀ-ի հետ կազմակերպված հայագիտական միջազգային առաջին գիտաժողովը գիտության բնագավառում դարձավ մի տեսակ ուժերի համախմբման և ազգային միասնության գաղափարի դրսևորում գաղափար, որի քարտզովը եղել և մնում ևք Դուք, Ձերդ Սրբություն:

Միջնի քարեկամներ, տոնական այս պահին թույլ տվեք շնորհավորել Վեհափառ հայրապետին, Նրան մաղթել արեւադարձություն, երկար ու երկար տարիներ, իսկ Նորին Սրբության հովված հոփին մեր հավատացյալ ժողովրդին ուժ, կարողություն ու բարեկեցություն:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Ամանորյա շնորհավորանքի ջերմ ու անկեղծ խոսքերը համեմվում էին երգչախմբի հոգեպարար կատարումներով:

Ուսանողության խոսքը ներկաներին ուղղեց Ճեմարանի Զ լսարանի սան հայկ սարկավազ Բարսեղյանը:

«Ներթափան անգամ համախմբվել ենք Նոր տարվա և Բեթեհեհեմի Սուրբ մատրի առաջ՝ խորհրդածնելու մեր անցյալի, խաղաղության, արդարության մասին, աղոթելու և գորաւնայու համար: Նոր տարին հույսի տոն է, իսկ Սուրբ Ծնունդը՝ կյանքի, և բնականաբար կասկածից վեր է, որ այս երկու հրաշալի իրադարձությունների միջև կա ներքին կապ: Պատրաստիան չէ, որ Նոր տարվա առաջին տոնը՝ Զրիստոսի Ծննդյան տոնն է, քանզի Զրիստոս Բեթեհեհեմյան մատրից համայն մարդկությանը վերաձայնեց խաղաղության պատրգամը, որպեսզի մարդիկ հասկանան, թե ինչպե՛ս պետք է կարողանան արժեվորել իրենց տարիները:

հրաժեշտ տալով 2004-ին՝ լցվում ենք նոր երազներով, նոր խոհերով դիմավորելու համար 2005-ը: Միաժամանակ յուրաքանչյուրս փորձում ենք վերյուժել և արժեվորել անցած տարին, որ իր նվաճումներով ու կորուստներով, ուզենք թե չուզենք, իր արտացոլումը գտնվ պատմության և մեր կյանքի էքերում: Մի տեսակ հաշվեկտություն ենք ներկայացնում ինքներս մեզ: Իսկուպես, սա մի հիսունայի առիթ է յուրաքանչյուրիս համար: Ամեն բանից առաջ մարդ արարածը որոշում է, թե ի՞նչ պետք է անել, և հետո վերյուժում է, թե ի՞նչ կարողացավ անել: Եվ երբեմն տարբերությունը շատ մեծ է լինում: Իրականում, իհարկե, շատ լավ կլինել, որ բոլորի իղձերը և բարի նպարտակներն իրականացած լինեին:

Ամանորը մարդկանց պարտականությունները հիշեցնելու օր է, ինքնամաքրման և բարոյական վերազարթոնքի օր: Մեր հին աշխարհի իմաստունները Նոր տարին բնութագրել են իբրև նորոգված կյանքի խորհրդանիշ, քանի որ մարդու կյանքի արժեքը սարած տարիների մեջ է, որտեղ, ինչ խոսք, պետք է դրսևորվի

լրհանում ենք, թե աշխարհում ինչպիսի դժվարին, աղետաբեր վիճակներ կան, արտերտազմական վիճակներ կան, որոնք մեր աղոթքների, մեր պաշտամունքի կուրծքն ունեն, որպեսզի պակասեն, և միաբանություն արարականությունն է առաջին հերթին ամենօրյա, հանապազօրյա աղոթքով կարողանալ հասնել թե՛ մեր ժողովրդին և թե՛ աշխարհի որևէ անկյունում տառապող ժողովուրդներին:

Այո, աշխարհի մեջ դժբախտությունները շատ են, բայց ուրախությունն էլ պետք է անպակաս լինի, և այդ ուրախությունը մենք պետք է փանք մեր ժողովրդին Վեհափառ Հայրապետի օրհնակով, թե ինչպես Նոս հասնում է Հայաստանի և արտասահմանի բոլոր թեմերին և այնպեղ իր խոսքով, իր պարզամտով և Էջմիածնի լուսավորչյան խոսքերով կարողանում է համոզել և բերել Մայր Աթոռ իբրև կապ և Մայր Աթոռի իբրև մաս և բաժին»:

Մտքեցավ ուսանողների և հաշվապես միաբանների երկար սպասված կադանդեքների և վիճակահանության արարողությունը, որն էլ ավելի բարձրացրեց ներկաների քրամադությունը:

«Էջ Միածինն ի Հօրե» շարականից հետո հանդիսությունը եզրափակեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբգին Բ Կաթողիկոսը՝ իր հայրապետական օրհնությունը բաշխելով ներկաներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍ-ԲԸ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Սիրելի Սրբազաններ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, Գևորգյան Հոգեվոր Ճնմարանի սիրելի դասախոսներ ու պաշտոնեություն և շատ սիրելի ուսանողներ:

Նոր փարվա շեմին ուրախությամբ է լեցուն ամենքիս հոգին, լեցուն է նաև նոր սպասումներով ու լավապետությամբ: Այս հուսառատ զգացումով երաժեշտ ենք ւրախ 2004 թվականին և առանձնացնում ու վերհիշում մեր ապրածը, մեր ձեռքբերումներն ու կորուստներն անցնող փարում:

Այս պահին աղոթքով ենք հիշում մեր Եկեղեցու քարձրաստիճան մի շարք եկեղեցականների, ովքեր ի Տեր ննջեցին 2004 թվականին, և վերստին Մեր հայցն ենք բարձրացնում երկինք, որ Բարձրյալ մեր Տերն իր արքայության մեջ ընդունի նրանց արդար եղբիները:

Անցնող փարում ունեցանք հաջողություններ ու ձեռքբերումներ, որոնք առավել հույս ու վստահություն են ներշնչում եկեղեցականներիս և քարեպաշտ մեր ժողովրդին, որ եկող՝ 2005 թվականը նորանոր իրագործումների և ուրախությունների է առաջնորդելու մեր կյանքը՝ ի սեր մեր Եկեղեցու պայծառության ու նրա առաքելության մեր ժողովրդի կյանքում և համաքրիստոնեական կյանքում: Պետք է ասել, որ Հայաստանի անկախությամբ ընձեռնված նախորդ փարիների ազատության պայմաններում մեր Եկեղեցու ձեռքբերումները թեպետ նկատելի ու նշանակալի են, սակայն շարունակում ենք հեռու մնալ այն ցանկալի իրավիճակից, երբ Եկեղեցին ամբողջապես ներկա լինի մեր ժողովրդի կյանքում: Մենք դեռևս շարունակում ենք առավելապես գոհացնել ծիսաարարողական պահանջները մեր ժողովրդի: Բնակա-

ԱՄԱՆՈՐԸ ՄԵՎԱՆԻ ՎԱՋԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Հունվարի 13-ին՝ Հիսուս Քրիստոսի անվանակոչության փոնի օրը, հանդիսապետությամբ Ն.Ա.Օ.Տ.Տ. Գաղեզին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի նորակառույց մասնաշենքում փեղի ունեցավ դպրանոցի ամանորյա հանդիսությունը:

Առավոտյան Սևանի Ս. Առաքելոց եկեղեցում մատուցվեց Ս. Պապարագ: Պապարագիչն էր Մայր Աթոռի միաբան և դպրանոցի նախկին սան Տ. Հովակիմ արքեպ Մանուկյանը: Հայր Սուրբը սրբազան արարողության ընթացքում հավուր պապշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով օրվա խորհրդին:

Այնուհետև դպրանոցի նորակառույց մասնաշենքում փեղի ունեցավ ամանորյա հանդիսությունը: Այն սկսվեց «Հայր մեր»-ով, Հայաստանի Հանրապետության օրհներգով և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի հիմնով: Ներկաներին ողջունեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի փեսիկ պաշտոնակատար Տ. Մկրտիչ արքեպ Պապարագ՝ անդրադառնալով Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Մենույան խորհրդին՝ հորդորելով վազգենյանցիներին՝ առավել ջանասիրությամբ ու նվիրումով լծվել մեր Եկեղեցու պայծառացման ու զորացման գործին:

Ներկաների հետ իրենց մտածումներն ու մտահոգությունները կիսեցին նաև Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրոյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը և դպրանոցի դասախոս Պետրոս Բեդիդյանը, իսկ Արագածոտնի թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ արքեպ Տոնիկյանն անդրադարձավ դպրանոցի անցած ուղուն:

Վերջում ներկաներին իր բարեմաղթանքներն ու օրհնությունը հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայոց Հայրապետն իր ուրախությունը հայտնեց, որ Վազգենյան Հոգևոր Դպրանոցն արդեն կայացած կրթական հաստատություն է, որի շրջանավարտներից շատերը, որպես ձեռնադրյալ հոգևորականներ, իրենց ծառայությունն են այսօր բերում Հայոց Եկեղեցու անդաստանում: Նա հույս հայտնեց, որ վազգենյանցիներն իրենց աներեր հավաքով, նվիրյալ ծառայությամբ ու զալիքի նկատմամբ պայծառ հույսերով շարունակողները պիտի լինեն մեր նախնիների սուրբ եավաքի՝ կերպելով մեր Եկեղեցու վաղվա օրը:

«Վստահ ենք, որ փարեցդարի այս թիվն ավելի պիտի մեծանա, և այս հաստատությունը կարևորագույն կրթական օջախներից մեկը պիտի լինի մեր Առաքելական Սուրբ Եկեղեցու: Այսօրվից պիտի հասնեն ավելի մեծ թվով եկեղեցականներ, որոնք պիտի գան լրացնելու բացը, ակախը մեր եկեղեցականաց դասի, ինչպես նաև իրենց աշխատանքով, նվիրյալ ծառայությամբ պիտի գործեն մեր Սուրբ Եկեղեցին և բավարարեն հոգևոր կարիքները մեր հավաքավոր ժողովրդի»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Ավանդույթի համաձայն, ընթերցվեցին նաև ամանորյա կաղանդեքեր: Գեղարվեստական հայտագրով հանդես եկավ դպրանոցի երգչախումբը:

Հանդիսությանը ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, դասախոսներ և հյուրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՐ Ա. ԷԶՄԻԱՇԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ս. ՍԱՐԳՍԻ ՏՈՆԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՄՈՍԿՎԱՅԻ ՆԱՅ ՆԱՄԱՅՆ-ՔՈՒՄ

Ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում Ս. Սարգսի փոքր հեջակված է երիտասարդության օրհնության օր: Նախապես արված հայտարարության համաձայն, հունվարի 22-ին, երեկոյան կիրակնամուտի հանդիսավոր ժամերգությունից անմիջապես հետո, Մոսկվայի առաջնորդանիստ Ս. Հարություն եկեղեցում փեղի ունեցավ երիտասարդների օրհնություն: Եկեղեցում հավաքված երիտասարդներն իրենց հոգեբուխ աղոթքներով առավել գեղեցկացրեցին և ջերմացրեցին երեկոյան հանդիսավոր ժամերգությունը:

Նավարտ ժամերգության կատարվեց երիտասարդների օրհնության կարգ, որից հետո երիտասարդներին օրհնության խոսք ուղղեց Տ. Արիստակես քին. Հովհաննիսյանը՝ շեշտելով, որ, գլոմվելով Մայր Հայրենիքից հեռու, այսօր առավել քան երբեք կարիքն ունենք մեր ազգային ավանդություններով ապրելու, որով էլ միայն պայմանավորված է որպես հավաքականություն և ազգ մեր գոյությունը, և ապա մաղթեց, որ Ս. Սարգիսը, իբրև հովանավոր սուրբը մեր երիտասարդության, Աստուծո առաջ իր բարեխոսությամբ հանապազ գորացնի մեր երիտասարդներին՝ մշտապես նրանց քայլերն ուղղելով դեպի մեր Մայր Եկեղեցին:

Նավարտ արարողության թեմի կողմից ներկաներին բաժանվեցին Ս. Սարգսի վարքը և օրվա խորհուրդը ներկայացնող թերթոններ, ինչպես նաև ծայներիզներ՝ Մարթոսի և Հովհաննեսի Ավետարանների ավետարանական ընթերցվածներով:

ԴԻՎԱՆ ՌՈՒՍԱՆԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ



ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՅՈՒ ԵՎ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հոռմեակաթոյիկ և Հին Արևելյան Եկեղեցիների միջև Աստվածաբանական Երկխոսության Միջազգային Համալսելի Հանձնաժողովը սույն թվականի հունվարի 26-29-ը Հռոմում ունեցավ իր երկրորդ հանդիպումը՝ համառոտագահությամբ Քրիստոնեական Միությունը հորախոսող Պապական Խորհրդի նախագահ Նորին Սրբազնություն Կարդինալ Ալպեր Կասպերի և Ղալբի Ուղղափառ Եկեղեցու Մինոդի Գլխավոր Քարտուղար, Դամիեթի Մեպրոպոլիս Նորին Սրբազնություն Ամբա Բիշոյի:

Առաջին հանդիպումը փեղի էր ունեցել 2004 թվականի հունվարի 27-30-ը Կահիրեում (Եգիպտոս):

